

ԷԶՄԻԱԾԻՆ



ԺԲ.
2025




ՉԲ. ՏԱՐԻ

ԳՆԾՏՕՆԱԿԱՆ ԱՐԱՆԻՐ
ԱՐԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԼՆ
ԱՆՅՐ ԱԹՈՒՄՅ ՄԲԻՅ ԷԶՐԻԼՏՆԻ

Դեկտեմբեր

2025

II. ԷԶՐԻԼՏՆԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրակազմ

Գլխավոր խմբագիր՝ **Գէորգ Մաղոյեան**


Գլխավոր խմբագրի տեղակալ՝ **Արման Մալոյեան**

Լեզուաոճական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Մկրտիչ եպս. Պռօշեան,
Տ. Յովնան եպս. Յակոբեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Ռուբէն վրդ. Չարգարեան,
Տ. Յուսիկ արքյ. Սմբատեան,
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան,
Ազատ Բոզոեան,
Վահէ Թորոսեան,
Կարէն Մարթնոսեան**





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**
Deputy Editor-in-Chief **Arman Maloyan**
Stylistic editor **Nare Sargsyan**
Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Bishop Mkrtych Proshyan,**
Bishop Hovnan Hakobyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Ruben Zargaryan,
Rev. Fr. Husik Smbatyan,
Fr. Ararat Poghosyan,
Azat Bozoyan,
Vahe Torosyan,
Karen Matevosyan



«Эчмиадзин»


Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**
Заместитель главного редактора **Арман Малоян**
Стилистический редактор **Наре Саргсян**
Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Епископ Мкртыч Прошян,**
Епископ Овнан Акопян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Рубен Заргарян,
Иеромонах Иусик Смбатян,
Иерей Арарат Погосян,
Азат Бозоян,
Ваге Торосян,
Карен Матевосян

ՀԱՅԲԱՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆԳՐԱԿՆԵՐ



ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԳՐԵՐ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ՍԱՐՍԵԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳԱՆՉԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՀՐԱՇԱՓԱՌԻ
ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ**

(4 դեկտեմբերի, 2025 թ.)

*Գերաշնորհ Սրբազան,
Շնորհազարդ հոգևոր հայրեր,
Ֆրանսիայի իշխանությանց պատվարժան պետական այրեր,
Մեծարգո պարոն հյուպատոս,
Սիրելի բարեպաշտ հայորդիներ,*

Գոհությու՛ն եւ փառք ենք մատուցում Բարձրյալին, որ Մեզ առիթն ընձեռեց վերստին այցելելու Ֆրանսիայի Հայոց թեմ, Մարսելի Սրբոց Թարգմանչաց Եկեղեցի՝ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը բերելու ամենքիդ եւ ձեզ հետ աղոթք բարձրացնելու առ Աստված այս հոյակերտ տաճարի նվիրական կամարների ներքո:

Մեծ մխիթարություն է Հայրապետիս համար, որ ամուր է ազգանվիրումի եւ եկեղեցասիրության ոգին Ֆրանսիայում բնակվող մեր հավատավոր զավակների, ինչի լավագույն վկայությունն է Հայոց Եկեղեցու հովանու ներքո ձեր աշխույժ ազգային, հոգևոր կյանքը: Ի սփյուռս աշխարհի հանուր հայության կյանքում Առաքելական Մեր Սուրբ Եկեղեցին է, որ տերունապատվեր առաքելությամբ համախմբում է հայ ժողովրդին եւ Աստծո օրհնաբեր Աջի ներքո անսասան պահում նրա ազգային-քրիստոնեական դիմագիծը: Դարեր շարունակ Եկեղեցին է եղել եւ այսօր էլ շարունակում է լինել մեր ժողովրդի կրթողն ու դաստիարակը, հավատով եւ ազգային արժեքներով սնուցողը: Եկեղեցին է, որ զորացնում է ամենքիս դժվարությունների ու մարտահրավերների դեմ պայքարում, քաջալերում եւ ոգեշնչում նոր արարումների՝ հանուն ազգիս

բարօր ներկայի եւ պայծառ գալիքի: Եկեղեցին սոսկ քարեղեն կառույց չէ, այլ հավատացյալ մեր ժողովրդի հավաքականությունն է: Եկեղեցին դուք եք, սիրելի հավատավոր զավակներ, բարեպաշտ ձեր կյանքով ու աստվածահաճո գործերով, առաքելական խոսքի համաձայն՝ «տաճար Հոգւոյն Սրբոյ էք, անդամները Քրիստոսի խորհրդական մարմնի»: Արդարեւ, մեր ժողովրդի դարավոր պատմությունը հար եւ նման է Փրկչի երկրավոր կյանքի ընթացքին: Եղել են շարշարանքներ, զրկանքներ ու փորձություններ, Ցեղասպանության գողգոթա, բայց հարություն հավատքի հաղթանակն է պսակել հարատեւությունը մեր ժողովրդի եւ մեր Սուրբ Եկեղեցու՝ ամրապնդելով մեր ընթացքը դեպի բարօր ու լուսավոր կյանք:

Այսօր նույնպես մեր հայրենիքը եւ Հայոց Եկեղեցին անցնում են դժվարությունների ու մեծ մարտահրավերների միջով: Անցնող հինգ տարիների ընթացքում Արցախյան պատերազմի, Արցախի հայաթափման եւ մեր հոգեւոր-մշակութային արժեքների ոչնչացմանն ուղղված Ադրբեջանի քաղաքականության հետեւանքով դեռեւս արնահոսում են ազգիս զավակների սրտերը: Շարունակում են բաց մնալ արցախահայության իրավունքների պաշտպանության, Ադրբեջանում գերության մեջ պահվող հայորդիների ազատ արձակման եւ շրնդհատվող մշակութային ցեղասպանությունը կասեցնելու հարցերը, որոնք կարոտ են ամենքիս միասնական ջանքերի եւ հետեւողականության: Հայրենիքում տիրող դժվարին իրավիճակում խիստ մտահոգիչ է նաեւ իշխանությունների որդեգրած հակաեկեղեցական քաղաքականությունը, որով ապօրինի քայլեր եւ բռնաճնշումներ են սանձազերծվել Մայր Աթոռի եւ բարձրաստիճան եկեղեցականության դեմ: Գիտեք, որ անազատության մեջ են գտնվում երեք Սրբազաններ, ազգային մեծ բարերարը եւ այլ հայորդիներ: Տեղեկացանք, որ այսօր եւս մեկ Սրբազան՝ Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանը, ձերբակալված է կալանքի տանելու համար: Սիրելիներ, մեր ժողովրդի միասնականության, հավատի եւ առ Եկեղեցին հավատարմության շնորհիվ, լիահույս ենք, որ կհաղթահարվի այս փորձությունը, եւ կչեզոքացվեն շարամիտ այս ոտնձգությունները:

Հրաշափառի այս արարողությունը ողջունում ենք ներկայությունը պետական պաշտոնյաների, Մարսելի բարձրապատիվ արքեպիսկոպոս, կարդինալ Ժան Մարկ Ավրլինի, մեր քույր Եկեղեցիների ներկայացուցիչների, որոնց հետ հարաբերությունները հատկանշված են համերաշխության ու սիրո ոգով: Մեր միասնական աղոթական ջանքերով ու գործակ-

ցությամբ է, որ նոր ժամանակներում պիտի կարողանանք Տիրոջ Ավետարանի լույսն ու պատգամը բերել եւ սփռել մարդկության կյանքում՝ հաղթահարելու համար արդի աշխարհի մարտահրավերներն ու խնդիրները:

Սիրելի հայորդիներ, վերստին Մեր օրհնությունն ենք բերում ձեզ ամենքիդ: Մեր գնահատանքն ենք հայտնում թեմակալ բարեջան առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս Խաչատրյանին, Ֆրանսիայի եւ Մարսելի հայկական եկեղեցիներում ծառայող մեր սիրելի հոգեւոր սպասավորներին, թեմական, համայնքային վարչությանց անդամներին, Սրբոց Թարգմանչաց եկեղեցու ատենապետ տիար Ռոպեր Ազիլազյանին եւ մաղթում առավել կորով ու եռանդ՝ Մարսելի համայնքում պայծառություն ու բարօրություն հավելելու եւ Ֆրանսիայի Հայոց թեմի ազգային-եկեղեցական կյանքը նոր իրագործումներով հարստացնելու համար:

Աղոթում ենք, որ հաստատուն լինեք առ Քրիստոս մեր Տերը նվիրումի ու հավատարմության մեջ եւ հարատեւ զորանաք հավատքով, հույսով ու սիրով: Հայցում ենք Երկնավորից, որ խաղաղ պահի Ֆրանսիայի Հանրապետությունը, Իր շնորհների եւ օրհնության ներքո՝ նրա բարեսեր ժողովրդին եւ պայծառ պահպանի Ֆրանսահայոց թեմը՝ առատապես օրհնելով ձեզ, ձեր կյանքն ու բարի գործերը:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
«ՀԱՅ ՍՇԱԿՈՒՅԹԻ ՎԱՆՁԵՐԸ 1511–1828 ԹԹ.» ՑՈՒՑԱՅԱՆՊԵՍԻ
ԲԱՅՍԱՆ ՀԱՆՊԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

(Մարտել, 5 դեկտեմբերի, 2025 թ.)

Սիրելիներ,

Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում Ֆրանսիայի ավանդաշատ եւ հռչակավոր Մարսել քաղաքում «Հայ մշակույթի գանձերը 1511–1828 թթ.» ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողության մասնակիցներին:

Սիրելիներ, ուրախ ենք Տիրոջ կամքով վերստին լինելու Ֆրանսիո օրհնյալ երկրում՝ «Հայ մշակույթի գանձերը (1511–1828 թթ.)» ցուցահանդեսի բացման առիթով: Ֆրանսիան հայության համար բարեկամ երկիր է, ուր հատկապես Հայոց Յեղասպանությունից հետո կյանքի ապահովություն գտան հազարավոր հայորդիներ՝ դառնալով երկրի արժանավոր քաղաքացիներ եւ իրենց օրինավոր կյանքով մասնակցություն բերելով հասարակական ու տնտեսական, գիտակրթական ու մշակութային կյանքի զարգացմանը:

Հայաշատ Մարսել քաղաքում կազմակերպված ցուցահանդեսը պիտի ծառայի հայ ժողովրդի բազմադարյա մշակութային եւ հոգեւոր ժառանգության առավել ճանաչմանը: Այստեղ ներկայացված են մշակույթի ինքնատիպ գանձեր, որոնցից շատերն առաջին անգամ են ի տես դրվում արվեստասեր հանրությանը: Այս բացառիկ ցուցանմուշները կերտվել են մեր ժողովրդի համար բարդ ու դժվարին ժամանակներում եւ վկայում են, որ նույնիսկ ամենածանր փորձությունների մեջ մեր հայրերը շարունակել են ստեղծագործել՝ անխախտ պահելով հավատարմությունը իրենց ազգային ու հոգեւոր արմատներին: Այս ցուցահանդեսը ներկայացնում է շուրջ երեք դարերի հայոց կյանքն ու կենցաղը, միտքն ու արարումները, խաղաղ ու բարօր ապրելու իղձերն ու երազանքները:

Սիրելիներ, մշակույթը համամարդկային է, նրա լեզուն հասկանալի է յուրաքանչյուրին, եւ նրա արտահայտած գաղափարները կոչված են

նպաստելու ժողովուրդների միջև համերաշխ կեցությունը: Ցավոք, սակայն, նույնիսկ մեր օրերում երբեմն նպատակային կերպով իրականացվում է մշակութային ժառանգության ոչնչացման քաղաքականության՝ իբրև այն ստեղծած ազգի դեմ թշնամության ու անհանդուրժողականության արտահայտություն: Ասվածի ապացույցը Արցախում մեր վանքերի ու եկեղեցիների, խաչքարերի ու առհասարակ հայ մշակույթի ավերման կամ յուրացման գործողություններն են Ադրբեջանի կողմից 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո: Այս ցուցահանդեսը Մենք համարում ենք նաև կոչ քաղաքակիրթ աշխարհին՝ անտարբեր չմնալու մշակութային ժառանգությանն ուղղված ոտնձգությունների հանդեպ:

Ցուցահանդեսի իրականացման գործին կարելուր զորակցության համար Հայրապետական Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքն ենք բերում ի մասնավորի Մարսելի արքեպիսկոպոս կարգինալ ժան Մարկ Ավրլինին: Մենք անձնապես ճանաչում ենք արքեպիսկոպոս ժան Մարկ Ավրլինին եւ առիթ ենք ունեցել նաև ողջունել նրան Հայաստանում՝ հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, զգալ նրա անկեղծ սերն ու հարգանքը հանդեպ հայ ժողովուրդը, բարյացակամությունը Մարսելի հայ համայնքի նկատմամբ, այլև գովելի պատրաստակամությունը՝ նպաստ բերելու Հայ եւ Կաթոլիկ եկեղեցիների հարաբերությունների ու գործակցության առավել արդյունավորմանը: Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում ցուցահանդեսի կայացմանն իրենց ազնվի ջանքերը ներդրած Տիարք ժան-Միշել Սանշեզին եւ Մաքսիմ Եւադյանին, այլև հովանավորներին՝ մեր Սուրբ եկեղեցու մեծագնիվ բարերար տիար Վահե Գաբրաշին, հարգարժան տիար Ռոյ Առաքելյանին եւ աջակից բոլոր անձանց: Համոզված ենք, որ այս ցուցահանդեսը եւս կարելուր ներդրում պիտի լինի հայ եւ ֆրանսիացի եղբայր ժողովուրդների բարեկամական կապերի առավել խորացմանը եւ նորոգ արգասավորմանը:

Աղոթում ենք առ Բարձրյալն Աստված համայն աշխարհի խաղաղության եւ ապահովության համար: Թող Ամենակալ Տերը երկնառաք շնորհներով զորացնի բարեկամությունը մեր ժողովուրդների եւ պարզեւի մեր երկրներին առաջընթաց ու բարօրություն իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՅԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ԱՆՐԱԵԼՈՒՄ ՅԱՅ ԵՒ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆԸ
ՆՎԻՐՎԱԾ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻ ՕՐՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՎ

(Մարտի, 5 դեկտեմբերի, 2025 թ.)

Պատվարժան կարգինալ ժան Մարկ Ավրլին,
Գերաշնորհ Տ. Գրիգոր եպիսկոպոս Խաչատրյան,
Սիրելի հայորդիներ եւ հարգարժան հյուրեր,

Ուրախության զգացումով եւ պարուրված մեր հոգիները: Ֆրանսիայի հյուրընկալ երկրում՝ վեհաշուք այս տաճարի հովանու ներքո, փառաբանում ենք մեր Երկնավոր Հորը, որ շնորհն ընծայեց ամենքիս մասնակցելու Հայ Առաքելական եւ Կաթոլիկ Եկեղեցիների բարեկամությանը նվիրված հրաշակերտ երեք խաչքարերի համադրմամբ կանգնեցված այս հուշակոթողի բացման հանդիսավոր արարողությանը: Նշանակալի այս նախաձեռնությունը արտահայտությունն է հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների անխախտ բարեկամության, այլեւ մեր Եկեղեցիների եղբայրական ամուր կապերի եւ արդյունավոր գործակցության:

Այս ավանդաշատ քաղաքը վերջին հարյուրամյակում դարձել է եվրոպայի հայ կյանքի կենտրոններից, որտեղ մեր ժողովրդի զավակները բազմաթիվ եկեղեցիներ ու մշակութային հաստատություններ են հիմնել եւ նրանց շուրջ ձեւավորել իրենց ազգային ու հոգեւոր կյանքը: Այսօր քանդակազարդ խաչերով, Կենաց ծառի ոճավորումով, Արարատ սրբազան լեռան եւ Նոյյան տապանի պատկերներով զարդարված գեղեցիկ ու խորհրդաշատ այս հուշակոթողով եւս մեկ հայկական վկայություն է հաստատվում Մարտելում:

Խաչը բացառիկ նշանակություն ունի քրիստոնյաներիս համար՝ որպես դեպի փրկություն եւ հավիտենական կյանք առաջնորդող հուսաբեր նշան: «Թող զորությունը Քո Սուրբ Խաչի, Քրիստոս, որ կանգնեցրիր ի փրկություն աշխարհի, պահպանի մեզ բոլոր փորձություններից»,— աղոթական հայց է հնչեցնում շարականագիրը (Խաչվերացի

շարական): Եկեղեցու հայրերի մեկնողական երկերում Կենաց ծառը նախատիպն է Խաչի, որի վրա Աստվածորդին, առաքյալի խոսքերով, «մեր մեղքերն Իր մարմնով բարձրացրեց, որպեսզի մեղքերից հեռանալով՝ արդարության համար ապրենք» (Ա Պետ. 2:24): Իսկ Բիբլիական Արարատ լեռը, որտեղ ըստ աստվածաշնչյան վկայության հանգրվանեց Նոյ նահապետի տապանը, քրիստոնյա ողջ աշխարհի, առավել եւս մեր ժողովրդի թանկ արժեքներից է:

Հուշակոթողի այս սրբազան խորհրդանիշերը պատմության հոլովույթներում դարձել են անբաժան մասը մեր ժողովրդի ինքնության, դավանած արժեքների ու գիտակցության: Ինչպես բոլոր ալեխոով ժամանակներում, այնպես եւ ներկայիս նեղույթուններին ու մարտահրավերներին հանդիման Սուրբ Խաչի խորհուրդը ու տապանակիր Արարատ լեռան բիբլիական պատկերը մեր ժողովրդի հավատի զորացման ամուր պատվարներ են ու անանց վկաներ փրկության հույսի:

Միրելիներ, աշխարհիկացման մեր ժամանակներում փորձ է արվում խեղաթյուրել քրիստոնեական արժեհամակարգի հիմքերը, հատկապես նոր սերնդին հեռացնել եկեղեցուց եւ ձեւավորել, այսպես կոչված, ազատ, աշխարհիկ հասարակություն: Այս պայմաններում կարելու անհրաժեշտություն է քրիստոնեական ավանդական եկեղեցիների գործակցությունն ու միասնական աշխատանքը՝ Քրիստոսի սերը եւ Աստծո պատվիրանները ապրվող ներկայություն դարձնելու ժողովուրդների կյանքում: Ամիսներ առաջ Մենք առիթ ունեցանք հանդիպելու Հոռմի սրբազան Քահանայապետ Լեւոն 14-րդ պապի հետ, որը, անտարակույս, նոր խթան պիտի հաղորդի Կաթոլիկ եւ Հայ Առաքելական Եկեղեցիների միջեւ փոխգործակցության նորոգ արդյունավորման:

Միրելի ներկաներ, այս գեղեցիկ արարողության առիթով Մեր օրհնությունն ենք բերում ամենքիդ եւ Հայրապետական գնահատանքը այն բոլոր անձանց, ովքեր միասնական եռանդուն աշխատանքով կարողացան իրականացնել այս կարելու ձեռնարկը: Մեր առանձնակի բարձր գնահատանքն ու բարեմաղթանքներն ենք բերում Մարսելի եպիսկոպոս կարդինալ Ժան Մարկ Ավրլինին՝ մեր Սուրբ Եկեղեցու եւ հայ ժողովրդի ազնիվ բարեկամին, ում շնորհիվ իրականացավ խաչքարերի տեղագրումը Նոտր Դամ դը լա Գարդ հոյակերտ տաճարի շրջափակում: Հիրավի, այս հուշարձանը մի նոր վկայություն պիտի լինի մեր քույր եկեղեցիների խորը բարեկամության՝ հանուն աշխարհում Քրիստոսի

Ավետարանի լույսի տարածման եւ մեր բարեկամ ժողովուրդների դարավոր կապերի առավել զորացման:

Ի խորոց սրտի աղոթք ենք բարձրացնում առ Ողորմածն Աստված, որ հանապազ օրհնի եւ պահպանի Հայաստանն ու Ֆրանսիան, հավատավոր հայ եւ ֆրանսացի Քրիստոսասեր մեր ժողովուրդներին, այլեւ ամրապնդի սերն ու բարի հարաբերությունները մեր Եկեղեցիների եւ պարգեւի համայն աշխարհին ու մարդկության կյանքին խաղաղություն, բարօրություն ու լուսավոր առաջընթաց:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերը եւ ողորմությունը լինեն մեզ հետ եւ ամենքի՝ այսօր եւ միշտ. ամեն:



Ն. Ա. Օ. Տ. Տ. ՓԱՐԵՓԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏՎԱՍԸ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

(18 դեկտեմբերի, 2025 թ.)

Սիրելի՛ զավակներ Մեր,

Հայրապետական սիրով եւ օրհնությամբ ողջունում ենք ամենքիդ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Այսօր դուք հավաքվել եք հայոց հոգեւոր կենտրոնում՝ վկայելով ձեր սերը հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Սուրբ Էջմիածինը ամենքիդ տունն է, հարազատ հոգեւոր օրրանը ամեն մի հայի: Ինչպես պատմիչ Առաքել Դավրիժեցին է վկայում, հայոց ազգը ի սփյուռս աշխարհի կապված է Լուսավորչի Աջին եւ Սուրբ Էջմիածնին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Աստծո հետ մեր ժողովրդի հավերժական ուխտի խորհրդանիշն է: Աստվածակառույց Սուրբ Էջմիածինը աշխարհասփյուռ հայոց ազգի միաբանության, մեր ինքնության ու ժառանգության պաշտպանության, մեր հավատքի պայծառության անխորտակելի սրբությունն է: Ցավոք, պատմության հոլովույթներում եղել են նաեւ ուժեր, որոնք ձգտել են կասկածի տակ առնել Եկեղեցու առաքելությունը, ծառայեցնել Եկեղեցին, Սուրբ Էջմիածինը տարատեսակ նեղ շահերի: Այդ մերժելի իրողությունը բաժանումներ է առաջացրել ներազգային կյանքում, մասնատել մեր ժողովրդին եւ տկարացրել ու թուլացրել մեր պետությունը՝ ըստ Տիրոջ խոսքի կանգնեցնելով կորստաբեր վտանգի առջեւ. «Ինքն իր մեջ բաժանված ամեն թագավորություն ավերվում է, եւ ինքն իր մեջ բաժանված ամեն քաղաք կամ տուն կանգուն չի մնա» (Մատթ. 12.21): Այսօր էլ տագնապալի օրեր ենք ապրում: Մեր երկիրը գտնվում է անվտանգային խնդիրների եւ հրատապ լուծման կարոտ լրջագույն հիմնահարցերի առջեւ: Այս պայմաններում, փոխանակ հանրության մեջ հաշտության, հանդուրժողության, միասնության ոգին զորացնելու, Եկեղեցի-պետություն խաթարված հարաբերությունները վերականգնելու, ընդհակառակը, շարունակվում են հարձակումները մեր Սուրբ Եկեղեցու դեմ: Սուրբ Էջմիածնի հանդեպ ոտնձգության հերթա-

կան փորձը կատարվեց այսօր, ցավոք, նաեւ մեր որոշ եկեղեցականների միջոցով, սակայն հավատավոր մեր ժողովրդի զավակները մնում են աներեր եւ աներկյուղ: Այս աղմուկը երբեք չի կարող խաթարել տերունապատվեր մեր առաքելությունը, մեր ծրագրերը, որոնք կոչված են մեր երկրի շինության համար:

Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում ձեզ, սիրելիներ, եւ բոլոր հայորդիներին, ազգային կազմակերպություններին, որոնք տարիներ շարունակ, ինչպես նաեւ հակաեկեղեցական արշավի այս օրերին իրենց զորակցությունն են ցուցաբերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն եւ մեր Սուրբ Եկեղեցու ազգօգուտ առաքելությանը: Մեր գնահատանքն ենք բերում Մայր Աթոռի միաբանությանը, թեմերում սպասավորող քահանաներին եւ սիրելի սարկավազներին, որ հաստատուն եւ վճռական են մեր Սուրբ Եկեղեցու կանոնական իրավունքների պաշտպանության դիրքերում: Մենք բոլորս էլ ցանկանում ենք, որ մեր կյանքը լինի գերծ անօրինություններից, անարդարություններից, որոնց դառը հետեւանքներն են կրում ապօրինաբար ազատազրկված մեր հոգեւորականները, ազգային մեծանուն բարերարը, նվիրյալ հայորդիներ: Փափագում ենք, որ մեզանում թագավորեն բարությունն ու գթասրտությունը, եղբայրսիրությունն ու համերաշխությունը: Մենք մեկ ազգ ենք, մեկ հայրենիք, մեկ Եկեղեցի, եւ չպետք է տրվենք երկպառակության սաղրանքներին: Միավորվենք բոլորս հայրենիքի եւ մեր Սուրբ Եկեղեցու շուրջ: Պահպանենք մեր միաբանությունը, որով միայն կարող են զորավոր լինել մեր պետությունը եւ Եկեղեցին՝ Քրիստոսահիմն Սուրբ Էջմիածին կենտրոնով: Հոգեւոր ասպարեզում առկա խնդիրները լուծվում են եկեղեցական կանոնական ընթացքներով եւ ոչ առանձին խմբերի պարտադրանքներով կամ հակականոնական քայլերով: Հորդորում ենք խոտոր ընթացքի մեջ եղող մեր Սրբազան Հայրերին վերագառնալ կանոնական դաշտ եւ գործել միայն մեր Սուրբ Եկեղեցու նվիրական կարգաց համաձայն՝ ի սեր մեր ժողովրդի եւ հայրենյաց: Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Հայրապետական Մեր հորդորն է՝ ներկա զգայուն կացության մեջ ցուցաբերել սթափություն, լինել ողջախոհ եւ շենթարկվել որեւէ սաղրանքի: Առաքյալի խոսքով պատգամում ենք ամենքիդ. «Արթուն կացեք, հաստատուն մնացեք հավատի մեջ, քաջ եղեք, զորացեք: Ձեր ամեն ինչը սիրով թող լինի» (Ա Կորնթ. 16.13–14):

Միասնաբար հայցենք, որ Տիրոջ խաղաղությունը հաստատվի աշխարհում, ապահով ու անխռով լինեն մեր հայրենիքն ու աշխարհասփյուն ժողովուրդը՝ միշտ առաջնորդվելով Սուրբ Էջմիածնից ճառագող աստվածապարզեւ հույսով, հավատով ու սիրով:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերը եւ խաղաղությունը թող լինեն մեզ եւ ամենքի հետ այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:



Ն. Ա. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(31 դեկտեմբերի, 2025 թ.)

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Ամանորի խորախորհուրդ այս երեկո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հղում ենք ձեզ Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը եւ սրտագին շնորհավորանքներն ու բարեմաղթանքները: Տարեմուտի սեմին Բարձրյալից հայցում ենք խաղաղություն համայն աշխարհին, խաղաղություն մեր հայրենիքին, խաղաղություն խռովահույզ մեր ողջ ժողովրդին:

Անցնող տարին ազգիս համար լի էր տագնապալի իրադարձություններով՝ հասարակության մեջ տեղ գտած պառակտումներով, ատելության ու անհանդուրժողության դրսևորումներով: Ցավոք, Նոր տարի մուտք ենք գործում նաեւ Հայոց Եկեղեցու եւ հոգևոր դասի թիրախավորման մտահոգիչ պայմաններում: Շարունակում են բանտերում ապօրինաբար արգելափակված մնալ եկեղեցականները, ազգային բարերարը եւ նվիրյալ հայորդիներ:

Տարեմուտը, սիրելիներ, հրավեր է նորոգվելու, վանելու մեր կյանքից մերժելի իրողությունները, սրբագրելու մեղսալի ու կործանարար ընթացքները, դադարեցնելու եղբայրադավության քայլերը, իսպառ բացառելու ատելությունն ու թշնամանքը, անհանդուրժողության եւ անօրինականության հանցավոր երեւույթները: Մենք Աստծո ժողովուրդ ենք, իսկ «Աստված խռովության Աստվածը չէ, այլ՝ խաղաղության»,— հուշակում է Սուրբ Գիրքը (Ա. Կոր. 14:33): Մեր կյանքում երկնապարգեւ խաղաղությունը, օրհնություններն ու շնորհները հաստատուն են մնում միմյանց նկատմամբ սիրո, ներողամտության եւ համերաշխության դրսևորմամբ: Հիրավի, խաղաղության եւ սիրո մեջ է գործում Աստված, եւ իրական սերն ու ներքին խաղաղությունն են բարիք դառնում թե՛ անհատի եւ թե՛ ժողովրդի համար: Ազգը զորեղ է, եւ պետությունը՝ անսասան, երբ անխաթար են նվիրական արժեքները, ավանդույթներն ու նախնյաց ժառանգությունը, երբ որեւէ պատրվակով չի ձեւախեղվում պատմական

հիշողությունը, կասկածի տակ դրվում մեր Սուրբ Եկեղեցու բազմադարյա առաքելությունը: Այսօր ընդդեմ Եկեղեցու կատարվող պառակտիչ գործողությունները, որ արդարորեն առաջ են բերում մեր հավատավոր զավակների ընդվզումը հայրենիքում եւ սփյուռքում, չունեն որեւէ արդարացում եւ չեն ունենա շահեկան արդյունք: Եկեղեցին չի պատկանում որեւէ դարաշրջանի, որում ապրում է, այլ՝ միայն Քրիստոսին: Առաքելահիմն Հայոց Եկեղեցին՝ քրիստոսահաստատ Սուրբ էջմիածնով, Երկնավորի շնորհն է մեր ժողովրդին՝ ազգանվեր, հայրենաշեն ու հայապահպան իր ծառայությամբ:

Տարեմուտի խորհրդաշատ այս պահին, սիրելիներ, Հայրապետիս հորդորն է՝ ամուր եւ աներեր պահենք մեր հավատը, դժվարություններին արիաբար դիմակայելու կամքն ու վճռականությունը: Թույլ չտանք, որ անցնող տարվա փորձությունները կարծրացնեն մեր սրտերը, հարմարվողականությունն ու անտարբերությունը լինեն մեր ուղեկիցը՝ տկարացնելով մեր հույսը եւ թուլացնելով մեր ազգային ոգին: Աննվազ նախանձախնդրությամբ գործենք՝ հանուն արցախահայության իրավունքների պաշտպանության եւ Բաքվում անմարդկային նվաստացումների ենթարկվող մեր հայրենակիցների ազատ արձակման: Սերն առ հայրենին, առ մեր ժողովուրդը եւ Մայր Եկեղեցին դարձնենք առանցքը մեր կյանքի, ներշնչող ուժը խիզախումների ու հանձնառությունների, իմաստավորումը ամեն զոհողության: Բարի եւ արժանապատիվ ընթացքով վերահաստատենք եղբայրսիրության, փոխադարձ հարգանքի, զորակցության մթնոլորտը մեր հայրենիքում, ազգային կյանքում եւ միջանձնային հարաբերություններում: Դժվարին այս շրջանը, անտարակույս, պիտի հաղթահարենք մեր լույս հավատի, մեր միասնականության, հաստատակամության ու տոկունության շնորհիվ՝ ունկնդիր առաքելական պատգամին. «Միաբան եղեք, խաղաղություն արեք, եւ խաղաղության ու սիրո Աստվածը թող լինի ձեզ հետ» (Բ Կոր, 13:11):

Աղոթենք Հայոց բանակի սպաների եւ զինվորների, նեղությունների ու կարիքի մեջ գտնվողների, գերեվարված ու անհայտ կորած եւ բանտերում արգելափակված մեր զավակների ու նրանց ընտանիքների համար: Առ Տերն ապավինությամբ թող մեր հայացքը դեպի ապագան համակված լինի լավատեսությամբ, որով 2026 թվականը կարող պիտի լինենք դարձնել նոր հնարավորությունների տարի՝ առավել ամրացնելու եւ զորացնելու մեր պետականությունը, ազգային ինքնությունն ու

հոգեւոր մեր կյանքը: Ըստ առաքյալի պատգամի՝ ընթանանք ինչպես լուսոս որդիներ, քանզի լուսոս պտուղներն են բարությունը, արդարությունը եւ ճշմարտությունը (հմմտ. Եփ. 5:8–9): Թող Աստծո սերն ու շնորհները միշտ սփռված լինեն հայրենական ու ազգային մեր անդաստանում եւ ամենքիս սրտերում:

Աստված օգնական եւ պահպան մեր հայրենիքին եւ աշխարհափյուռ մեր ժողովրդին այսօր եւ միշտ եւ հավիտյան:

Շնորհավոր Նոր տարի:





ՄՈՎՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՊԱՏԿԵՐՈՒՄ¹

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաքինությունը, որպես ճշմարիտ եւ ուղղափառ հավատի արգասիք, աստվածային շնորհ է, որով մարդը չի մեղանշում Աստծու պատվիրանների դեմ թե՛ մտքով, թե՛ խոսքով եւ թե՛ գործով²: «Առաքինություն» բառը ինչպես եւ իր հունարեն եւ լատիներեն զուգահեռները խարսխված են քաջություն, արություն, մեծագործություն, բարեպաշտություն ապանաե բարեպաշտություն ու հոգու մաքրություն իմաստներին³: Առաքինություն է կոչվում մարդու այն հոգեւոր ու բարոյական ունակությունը, որն արտահայտվում է նրա մտքերի, խոսքերի ու գործերի մեջ՝ Աստծու, իր եւ մյուս մարդկանց նկատմամբ: Որպես բարոյականության հիմնական հասկացություններ, հանդես են գալիս բարին եւ չարը, պարտքը եւ խիղճը, պատիվը եւ մարդկային արժանապատվությունը⁴: Ըստ Պողոս պատրիարք Ադրիանապոլսեցու, «առաքինություն» բառն «առավելություն» բառից է առաջացել, որը նշանակում է բարին ուրիշներից առավել

^{1*} Ստացվել է՝ 25.11.2025, գրախոսվել է՝ 7.03.2026: Էլ. հասցե՝ hayrmovses@gmail.com:

² Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Առաքինություն, «Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան», Երեւան, 2002, էջ 79:

³ *ἡμῶν ἀρετή* եւ *virtus*. տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հտ. Ա., Վենետիկ, 1836, էջ 301, հմմտ. CHAPLAIN (COLONEL) GREGORY J. D'EMMA, *Christian Contributions to Army Values*, Pensilvania, 2000, էջ 2, տե՛ս նաեւ Հ. ԱՃԱՌԵԱՆ, Հայերէն արմատական բառարան, Երեւան, 1926, էջ 257:

⁴ Տե՛ս Հ. ՄՈՔՈՅԱՆ, Քրիստոնեական բարոյականության հայրենասիրական բնույթը հայ հոգեւոր կյանքում, «Էջմիածին» ամսագիր, 2007, Բ.-Գ., էջ 114:

անել: Միեւնույն ժամանակ «առաքինի» բառը կազմված է «այր» բառից եւ ստուգաբանվում է որպէս այրութիւն կամ արիութիւն ունեցող, այսինքն՝ ավելի արքենի, քաջ, վեհանձն, զորավոր⁵:

Առաքինութիւնների մասին առաջին քննարկումները հանդիպում են Սոկրատեսի, Պլատոնի ու Արիստոտելի մտորումներում: Սոկրատեսը պնդում էր, որ առաքինութիւնը նույնական է գիտելիքին, իսկ ըստ Արիստոտելի, առաքինութիւններն ունեն հոգեւոր սկիզբ⁶: Պլատոնը կարծում էր, որ կան չորս առաքինութիւններ՝ իմաստութիւն, քաջութիւն, ինքնատիրապետում եւ արդարութիւն, որոնցից մեծագույնը իմաստութիւնն է, քանի որ գիտելիքն է այն մասին, թե ինչն է իսկապէս լավը: Նա հավատում էր, որ իմաստուն մարդիկ գիտեն, թե ինչն է լավը եւ հակված են անել այն, ինչ ճիշտ է, որը համարում էր արդարութեան հիմքը, իսկ արդարութիւն ունեցող մարդիկ նաեւ տիրապետում էին շափավորութեան եւ քաջութեան⁷: Հետագայում առաքինութեան գաղափարը զարգացրել են Սուրբ Օգոստինոս Երանելին (354–430) եւ Թովմա Աքվինացին (1225–1274)⁸:

Հին Կտակարանում չկա եբրայեցերէն բառ, որը կարտահայտի «առաքինութիւն» հասկացութիւնը, այլ օգտագործվում է «թաղաք» բառը⁹, որպէս արդարութիւն կամ արդար արարք (տե՛ս Ծննդ. ԺԵ. 6, ԼԸ. 26, Բ. Օր. 2. 25 եւ այլն): Առաքինութիւն բառը Սուրբ Գրքի հունարէն բնագրում արտահայտվում է «արետե» բառով¹⁰, որը նույն լատիներէն «վիրտուս» բառն է եւ նշանակում է առաջին հերթին ներքին վեհութիւն, բարոյականութիւն, բարութիւն, առաքինութիւն (Ա. Պետր. Բ. 9), որը պարտադիր որակ է համարվում հավատացյալի համար (Փիլիպ. Դ. 8): «Արետե» բառը կիրառվում է խոհեմութիւն, արդարութիւն, քաջութիւն (տոկունութիւն), զսպվածութիւն եւ այլ իմաստներով, ինչպէս Սողոմոն իմաստունն է ասում. «Եթե մաքդ արդարութիւն է սիրում, ապա նրա վաս-

⁵ Տե՛ս ՊՈՂՈՍ ՊԱՏՐԻԱՐԿ ԱԳՐԻԱՆԱՊՈԼՍԵՅԻ, *Խրատի թանգարան, վեցերորդ հրատարակութիւն, Ս. Էջմիածին, 2015, էջ 136–137*:

⁶ Տե՛ս Հ. ՄՈՔՈՅԱՆ, *Հոգեւոր եւ բարոյական արժեքները եւ անձնային եւ-ի ինքնամբողջացումը, «Էջմիածին» ամսագիր, 2004, Բ.–Գ., էջ 158*:

⁷ Տե՛ս CHAPLAIN (COLONEL) GREGORY J. D'EMMA, *նշ. աշխ., էջ 2*:

⁸ Տե՛ս SAINT THOMAS AQUINAS, *Summa Theologica*, First part of the second part, Question 60: How the moral virtues differ from one another, 61: Of the cardinal virtues,

⁹ Տե՛ս W. E. VINE “Complete Expository Dictionary of Old & New Testament Words” 1940:

¹⁰ Նույն տեղում:

տակի արդյունքը առափնությունն է, որովհետև սովորեցնում է գիտություն եւ խորագիտություն, արդարամտություն եւ արիություն, որոնցից առավել պիտանի բան չկա մարդու կյանքում» (*Իմաստ. Սողոմոնի Ը. 7*)¹¹:

Ընդունված է առաքինությունը համարել «մայր բարեաց»¹², որը նշանակում է, թե բարի, արդար մտածումները, գործերն ու արարքները բխում են առաքինությունից: Առաքինությունները լինում են երկու տեսակ՝ բնական եւ գերբնական:

- Բնական առափնություններ ասելով հասկանում ենք մարդու ի ծնե հատկանիշները, որոնք զարգանում են կյանքի փորձառությունամբ, միջավայրի ազդեցությամբ, կրթությամբ ու դաստիարակությամբ:

- Գերբնական առափնություններ են համարվում այն հատկությունները, որոնք մարդուն ներշնչվում են Աստծու շնորհների միջոցով եւ մարդու քայլերն ուղղում դեպի Աստված, որպես Աստծու որդիներ¹³:

Գերբնական առաքինություններն իրենց հերթին բաժանվում են երկու խմբի. աստվածային կամ աստվածաբանական առաքինություններ եւ մարդկային կամ բարոյական առաքինություններ, որոնք կոչվում են նաեւ ավագ կամ հիմնական առաքինություններ¹⁴: Դրանք որակներ են, կամ լավ վարքի սովորույթներ են, որոնց վրա հիմնված է բարոյականությունը: Այս առաքինությունները կազմում են բարոյական տրամադրությունների եւ ունակությունների մի ամբողջություն, որը նպաստում է բարոյական հարցերում ճիշտ ընտրությունների կայացմանը:

- Աստվածային առափնությունները վերաբերում են Աստծուն. դրանք են հավատը, հույսը եւ սերը. որոնցից վերջինը, ըստ Պողոս առաքյալի, մեծագույնն է (*հմտ. Ա. Կոր. ԺԳ. 13*): Աստվածային առաքինությունները մեր բարոյական կյանքի հիմնական սյուներն են, որ Սուրբ Մկրտության խորհրդակատարության ժամանակ մկրտող հոգեւորակա-

¹¹ Սուրբգրային մեջբերումներն արվել են ըստ հետեւյալ հրատարակությունների՝ «Աստվածաշունչ մատյան Հին եւ Նոր կտակարանների (Թարգմանություն գրաբարից)», Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, 2021: Աստվածաշունչ, Նոր կտակարան Հիսուս Քրիստոսի եւ Սաղմոսներ, հունական եւ եբրայական բնագրերից թարգմանված, վերանայված Ա. հրատարակություն, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Երեւան, 2017:

¹² Տէս ԳԱՐԵԳԻՆ ՎՐԳ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Քրիստոնէական բարոյագիտութիւն, Գարեգին Ա. աստուածաբանական եւ հայագիտական մատենաշար, Թիւ Գ., Կանադա-Չինաստան, 2005, էջ 317:

¹³ Տէս նույն տեղում, էջ 318:

¹⁴ Իմա՛ cardinal virtues. սա ծագում է լատիներեն «cardo» բառից, որը նշանակում է «ծխնի» (hinge): Տէս CHAPLAIN (COLONEL) GREGORY J. D'EMMA, նշ. աշխ., էջ 3:

նի միջոցով խնդրում ենք Աստծուց¹⁵: Մեր անհատական ու ընկերային կյանքն արդյունավորելու համար անհրաժեշտ են այս երեք առաքինությունները, որոնց հիմքի վրա էլ զարգանում են մյուս բոլոր առաքինությունները: Այս մտքով Եզնիկ Կողբացին իր խրատներում պատգամում է. «Հնազանդվի՛ր սիրով, աղոթի՛ր հույսով, աշխատի՛ր հավատով»¹⁶:

• Բարոյական առաքինություններն իրագործվում են սեփական անձի ու մերձավորների հանդեպ. դրանք են խոհեմությունը, արիությունը, արդարությունը եւ ողջախոհությունը¹⁷: Այս չորս առաքինությունների կարեւորության մասին որոշակիորեն խոսում է Սողոմոն թագավորն իր Իմաստության գրքում. «Եթէ մարդ արդարություն է սիրում, ապա նրա վաստակի արդիւնքը առաքինությունն է, որովհետեւ սովորեցնում է գիտություն եւ խորագիտություն, արդարամտություն եւ արիություն, որոնցից առավել պիտանի բան չկա մարդու կյանքում.» (Իմաստ, Հ. 7): Բարոյական առաքինությունները ձեւավորում եւ կատարելագործում են մարդկային հոգու ունակությունները եւ մղում բարի գործերի:

Քրիստոնեական այս յոթ առաքինություններից բխում են բազմաթիվ այլ առաքինություններ, որոնք շաղկապված են միմյանց, «Քանզի ով կատարյալ հավատ ունի, ուրեմն աներկվիտ հույս ու անկեղծ սեր ունի: Եւ ի նշան կատարյալ սիրո արդյունքի՝ պահանջվում են բարոյական առաքինությունների գործեր, որոնք կատարվում են խոհեմությամբ, արդարությամբ, արիությամբ ու ժուժկալությամբ»¹⁸: Առաքինությունները ձեռք են բերվում աստվածային շնորհի եւ համբերատար ճիգերի միջոցով, երբ շնորհը տրվում է ըստ մարդու հավատի, իսկ ճիգերը գործադրվում են Աստծու հանդեպ սիրուց: Այս բոլոր առաքինությունները կարգավորում են Աստծու ու մարդկանց հարաբերությունները եւ ըստ էության ամփոփվում են հետեւյալ երեք գործերում՝ աղոթք, պահեւ եւ ողորմություն. աղոթքն արտահայտում է մարդու պարտավորություններն Աստծու հանդեպ, պահքը՝ սեփական անձի, իսկ ողորմությունը՝ մերձավորի: Մարդը առաքինությունների շնորհիվ

¹⁵ Տե՛ս Կաթողիկոսություն Ամենայն Հայոց, Մաշտոց, Յորում ականդին սրբազան արարողութիւնք ազգիս ըստ սահմանադրութեան Սուրբ Եկեղեցւոյ Հայոց, Զ. հրատարակութիւն, Սուրբ Եջմիածին, 2024, էջ 25:

¹⁶ ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՅԻ, Եղծ աղանդոց, Թարգմանությունը եւ ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երեւան, 1994, էջ 245:

¹⁷ Հաճախ որպէս չորրորդ բարոյական առաքինություն նշվում է ժուժկալությունը կամ զսպվածությունը:

¹⁸ ՊՈՂՈՍ ՊԱՏՐԻԱՐԷ ԱՎԻՆԱՊՈԼՍԵՅԻ, նշ. աշխ., էջ 138:

արժանի է դառնում ժառանգելու երկնային փառքը, որ Աստված խոստացավ Իրեն սիրողներին: Ուստի առաքինությունները միջոցներ ու ճանապարհ են փրկության հասնելու համար:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՁԻՆՎՈՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Հայրենիքի պաշտպանի համար անհրաժեշտ է հոգեւոր ու բարոյական դաստիարակությունը¹⁹: Քրիստոնյա զինվորի բարոյական արժեքներն ունեն քրիստոնեական բովանդակություն, ուստի կարելու է դրանք հիմնավորել քրիստոնեական առաքինությունների ձեռքբերման անհրաժեշտությամբ: Մյուս կողմից զինվորական արժեքներն էլ անհրաժեշտ են քրիստոնեական առաքինությունների մեջ աճելու համար, որովհետեւ դրանք ձեռք բերելով՝ զինծառայողը բարձրացնում է ոչ միայն իր մասնագիտական կարողություններն ու պատրաստվածությունը, այլև Աստծու նկատմամբ հավատքի զորություն մեջ օգնություն մատուցելու համար անհրաժեշտ հատկությունները: Այս գաղափարն է ներկայացնում Պողոս առաքյալն իր թղթերում՝ ցույց տալով, որ այն արժեքները, որոնք առկա են զինվորականների մոտ, համապատասխանաբար պետք է ունենա նաև Քրիստոսին հավատացողը: Մասնավորապես, Տիմոթեոսին ուղղված երկրորդ թղթում առաքյալը խոսում է շարչարանքները համբերությամբ տանելու մասին, քանի որ տառապանքների համբերությունը բնորոշ է լավ զինվորներին. «Ինձ նման հա՛նձն առ շարչարվել, որպես Քրիստոս Հիսուսի բարի զինվոր» (Բ. Տիմ. Բ. 3):

Բանակի ընդհանուր բարոյական վիճակը կախված է նրա մասնիկը կազմող յուրաքանչյուր զինծառայողի զինվորական առաքինությունների բարձրության վրա լինելուց, ինչպես նաև հակառակը, զինծառայողները կլինեն զինվորական առաքինությունների բարձրության վրա, եթե նրանց ամբողջություն կազմող բանակը առաջնորդվի բարոյական արժեքներով: Այսինքն՝ հավատքի հիմքերի վրա մարտիկի մեջ կարելի է ձեւավորել բարձր բարոյականություն ու պատասխանատվություն, որը կօգնի խուսափել զինվորական հանցագործություններից, բռնարարքներից ու ոչկանոնագրքային փոխհարաբերություններից, ինչպես նաև

¹⁹ Այս մասին տե՛ս ՏԵՐ ՄՈՎՍԵՍ ՎՐԳ. ՍԱՐԳՍՅԱՆ, *Ձինծառայողների հոգեւոր դաստիարակության կարեւորությունը*, «Հայկական բանակ», 2023, 1 (115):

արժանապատվորեն իրականացնել իր զինվորական ծառայությունը, ճիշտ կառուցել հարաբերությունները զինակիցների հետ եւ ամենակարեւորը, դրսեւորել դրանք մարտական իրավիճակներում, որտեղ պահանջվում է անձնուրացություն, քաջություն եւ ինքնատիրապետում: Միով բանիվ, քրիստոնեական արժեքներ կրող անձը իր ծառայությունն իրականացնում է նվիրումով, նախանձախնդրությամբ ու պատասխանատվությամբ:

Այդ իսկ նպատակով հատկապես Արեւմտյան երկրների (ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ավստրալիա եւ այլն) զինված ուժերը վաղուց սահմանել են իրենց զինվորական արժեքները եւ բանակին վերաբերող բոլոր վարքականոնները հիմնված են այդ արժեքների վրա: ԱՄՆ բանակի զինվորական արժեքները յոթն են, որոնք բոլոր զինվորական ու քաղաքացիական ծառայողները պետք է դարձնեն իրենց ինքնության մաս, որովհետեւ բանակի արժեքների ընդունումը բանակի մասնագետ լինելու առանձնահատկությունն է²⁰: Մարդիկ ազատ են ընտրելու եւ պահպանելու իրենց արժեքները, բայց զինվորական երդում ընդունելուց հետո զինվորներն ու քաղաքացիական ծառայողները համաձայնվում են ապրել եւ գործել բանակի արժեքներին համապատասխան, որոնք բաղկացած են ծառայության համար անհրաժեշտ համարվող սկզբունքներից, չափանիշներից եւ որակներից: Դրանք սահմանում են վարքագծի նկատմամբ սպասումներ եւ հիմնարար են ցանկացած իրավիճակում ճիշտ որոշում կայացնելու համար:

Բանակը հիմնված է արժեքների վրա, որոնք արտահայտված են զինվորների կողմից տրված երդման եւ վարքագծի ու ներքին ծառայության կանոնադրքերի մեջ: Բանակը մարզում է զինվորի մարմինը՝ ֆիզիկական պատրաստությամբ, միտքը՝ մասնագիտական ու այլ գիտելիքներով եւ սիրտն ու հոգին՝ զինվորական արժեքներով, որոնք բանակը սերմանում է անհատի մեջ: Զինվորների դաստիարակությունը առավել նպատակային ու արդյունավետ կարող է լինել սպաների, կրտսեր ու ավագ հրամանատարների կողմից անձնական օրինակով, լսարանային ու դաշ-

²⁰ Տե՛ս Department of The Army United States of America, ADP 6–22, Army Leadership and the Profession, 2019, էջ 21, ԱՄՆ-ի բանակային արժեքների մասին տե՛ս նաեւ GENERAL JOSEPH LAWTON COLLINS, What a Leader Must be, Field Manual No. 22–100, Headquarters Department of the Army, Washington, DC, 1990, էջ 22–23, Headquarters Department of the Army, FM 100–1, Washington, DC, 10 December 1991, էջ 16:

տային պարապմունքներով զինվորական արժեքների անընդհատ ուսուցմամբ ու կիրառությունը:

Հայոց բանակի զինվորական արժեքներն են.

- հավատք,
- հավատարմությունը,
- պարտականությունը,
- անձնվիրությունը,
- պատիվը,
- ազնվությունը,
- փառությունը:

Շատերն են հաճախ օգտագործում հավատք, հավատարմություն, պարտականություն, անձնվիրություն, պատիվ, ազնվություն ու փառություն բառերը, բայց քանի՞սն են իրականում ապրում հոգեւոր ու բարոյական այս հատկություններով: Զինվորական ծառայության անցնելու առաջին իսկ օրից, զինծառայողին անհրաժեշտ է մանրամասնորեն սովորեցնել այս արժեքները, այնուհետև հետեւել, որ նրանք ամեն օր ապրեն այդ արժեքներով, մինչև որ այն դառնա կենսակերպ: Անկասկած բանակն ունի իր արժեքային համակարգը, որը պահանջում է բարձր էթիկական եւ բարոյական շափանիշներ իր անդամներից, որը ձգտում է իր անդամների մեջ սերմանել այդ արժեքները ուսուցման եւ օրինակի միջոցով: Ստորել թվարկված զինվորական արժեքների²¹ յոթ կետերը, համառոտ բացատրություններով, ցույց են տալիս, թե ինչ է նշանակում լինել Հայոց Բանակի զինվոր:

1. Հավատք

Հասարակ ժողովրդից առավել պետք է դու՛ր հավատաս Աստծուն եւ Նրա պատվիրանները պահես, որովհետեւ աստվածահաճո առաքելություն ես իրականացնում՝ մշտական վտանգավորության պայմաններում: Զինվորականի կերպարի մեջ են խտացած քրիստոնեական առաքինությունները: Հետեւաբար, ֆիզիկական զենքերից ավելի հավատքի՛ զենքերով սպառազինվիր, որպեսզի Աստծու օրհնությանն ու զորակցությանը

²¹ Այստեղ ներկայացված արժեքները որոշակի կրճատումներով ընդգրկված են Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության բանակի կերպափոխման հայեցակարգի մեջ, <https://mil.am/hy/libraries/40> (10.12.2025 թ.):

արժանանաս: Կարեւորի՛ր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բացառիկ առաքելությունը, որպես ազգային Եկեղեցի²²:

2. Հավատարմություն

Հավատարիմ եղիր ՀՀ Սահմանադրությանը, զինվորական երզմանդ, Հայոց Բանակին, քո ստորաբաժանումին ու մյուս զինծառայողներին: Հավատարիմ լինել նշանակում է հավատալ ու նվիրվել ինչ որ մեկի կամ ինչ որ բանի: Հայոց բանակի համազգեստը կրելով՝ դու արտահայտում ես քո հավատարմությունը բանակին: Հավատարմությունը առաջացնում է վստահություն անձի նկատմամբ եւ մղում ավելի բարձր ու կարեւոր առաքելություններին:

3. Պարտականություն

Կատարի՛ր քո պարտավորությունները լիարժեք, բարեխղճորեն, պատասխանատվությամբ ու արիաբար, եղիր հանձնառու, նախաձեռնող ու ստեղծագործող: Պարտականությունները կատարելը ավելին է նշանակում, քան զուտ առաջադրանքի կատարումը: Ընդհանուրի ծառայության հաջողությունը հիմնված է յուրաքանչյուրի պարտականությունների կատարման վրա: Խուսափի՛ր դյուրանցումներով խնդիրը կատարելու գայթակղությունից, որպեսզի չվնասես ընդհանուր ծառայությունը:

4. Անձնվիրություն

Ազգի, բանակի եւ ենթականերիդ բարօրությունը առաջնային համարի՛ր քո բարօրությունից: Ծառայիր հայրենիքիդ անձնվիրաբար, սիրով, որպեսզի պատրաստ լինես հանուն նրա շինյալ կյանքդ՝ համաձայն զինվորական երզմանդ: Անձնվեր ծառայության հիմքը թիմի յուրաքանչյուր անդամի հանձնառությունն է՝ առաջ գնալ, ինքնակատարելագործվել, ջանքերն ավելացնել, բարձրացնել ծառայության որակը:

²² «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ որպես ազգային Եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում», Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 18:

5. Պատիվ

Պատվի են արժանանում կամ պատվո պարգևներ են ստանում այն զինծառայողները, որոնք պատիվը դարձնում են առօրյա կյանքի խնդիր, որոնք զարգացնում են արժանապատիվ ապրելու սովորույթը եւ ամրացնում այն իրենց կատարած յուրաքանչյուր որոշումով: Պատիվ է, երբ ծառայությունը իրականացնում ես զորաց վարքականոնի համաձայն:

6. Ազնվություն

Արա այն, ինչն արդար է թե՛ օրենքով, թե՛ բարոյապես: Ազնվությունը որակ է, որը զարգացնում ես բարոյական սկզբունքներին հավատարիմ մնալով: Այն պահանջում է լինել ճշմարտախոս եւ մեծացնում է քո անձի նկատմամբ վստահությունը: Որքան քո կայացրած որոշումները հիմնված լինեն ազնվության վրա, այնքան դրանք դրական ազդեցություն կունենան քո ծառայության, ինչպես նաեւ ընտանիքիդ եւ ընկերներիդ հետ հարաբերությունների վրա:

7. Քաջություն

Քաջությամբ հաղթահարիր վախը, վտանգներն ու դժվարությունները թե՛ ֆիզիկական, թե՛ բարոյական: Անձնական խիզախությունը ֆիզիկական ու հոգեբանական ճնշումներին դիմանալու եւ անհրաժեշտության դեպքում կյանքը վտանգի տակ դնելու կարողություն է: Այն մարտական խնդրի կատարումը շարունակելու եւ իր օրինակով մյուսներին ոգեշնչելու ընդունակություն է:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հայոց բանակի զինվորական արժեքների յոթ կետերի կարեւորությունն ինքնին ակնհայտ է: Հավատարմության ուժեղ զգացումը, ցանկացած օղակում, հանգեցնում է ըստ զինվորական ենթակայության հրամաններին ենթարկվելու եւ անհրաժեշտության դեպքում իրենց անձնակազմի յուրաքանչյուր անդամի մասին հոգ տանելու պարտավորության: Ղեկավարների, ենթակաների ու ծառայակիցների նկատմամբ ազնիվ վերաբերմունքը՝ խոսքերով եւ գործերով, ստեղծում է ամուր կոլեկտիվ: Առկա մարտահրավերներին ընդառաջ զարգացնելով անձնվեր ծառայությունն ու քաջությունը, զինծառայողներին հնարավորություն է տալիս

պատրաստակամ լինել իրենց վախերը հաղթահարելու, կյանքը հայրենիքի պաշտպանության համար շինաչելու եւ հաղթանակ տանելու:

Հայոց բանակի արժեքները ամրագրված են հայոց պատմիչների ու Եկեղեցու հայրերի վկայություններում: Օրինակ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» 5-րդ դպրության 20-րդ գլխում, երբ պատմիչը նկարագրում է սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի (ծն. թ. անհայտ – մահ. 376 թ.) անձնական առաքինություններն ու հայրենիքին մատուցած ծառայությունները, պարզորեն ներկայացնում է հայ զինվորականի արժեհամակարգը²³: Այս բարոյական դրույթների հիման վրա է ձևավորվել եւ անթիվ մարտերի մեջ սրբագործվել է հայ զինվորականի 4-րդ եւ 5-րդ դդ. պատվո վարքականոնը:

Բանակային արժեքները կերտում են զինվորի ոգին եւ իմաստ հաղորդում նրա կյանքին ու ծառայությանը: Դրանք խոսում են զինվորի սրտի ու հոգու հետ եւ ամրացնում են կամքը: Բանակի արժեքները չեն գործում միայն այն ժամանակ, երբ զինվորը ծառայության մեջ է, այլ նախատեսված են ամբողջ կյանքի համար: Անձը մինչև զինվորագրվելը այս արժեքները որոշ չափով ստանում է ծնողների դաստիարակությամբ կամ դպրոցական կրթության միջոցով: Սակայն դրանք ամբողջությամբ սովորելու ու դրանցով ապրելու լավագույն ժամանակն ու վայրը հենց բանակն է:

Զինվորական արժեքները լիովին համահունչ են քրիստոնեական առաքինություններին եւ Սուրբ Գիրքը ամրապնդում է ստորեւ ներկայացված զինվորական արժեքներից յուրաքանչյուրը.

Հավատ. «Բայց դուք, սիրելիներ, ձեր անձերը ձեր սուրբ հավատի վրա՝ կառուցեք...» (Հուդա Ա. 20): «Սա՛ է այն հաղթաթուղթը, որ աշխարհին հաղթեց, այսինքն՝ մեր հավատը» (Ա. Հովհ. Ե. 4):

Ըստ Եկեղեցու հայրերի՝ առաքինությունն իրագործվում է միայն Աստծու շնորհով եւ հետեւաբար, առաքինությունների սկիզբն է հավատը՝ ճշմարիտ, ուղղափառ հավատը Աստծու եւ Նրա խոսքի նկատմամբ: «Որովհետեւ ուղղափառ հավատքն է, որ Աստծուն ճանաչել է տալիս. նա բոլոր առաքինությունների հիմքն ու խարիսխն է»²⁴

²³ Տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրություններն ըստ ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երեւան, 1968, էջ 254:

²⁴ Պողոս պատրիարք Ադրիանապոլսեցի, նշ. աշխ., էջ 142:

Հավատարմություն. «Եւ նրա տերը նրան ասաց. “Լա՛վ, բարի ու հավատարի՛մ ծառա, քանի որ դու քիչ մեջ հավատարիմ եղար, եւ քեզ շատի վրա կարգեմ. մտի՛ր քո տիրոջ ուրախության մեջ» (Մատթ. ԻԵ. 21):

«Հավատք» եւ «հավատարմություն» հասկացությունները ստուգաբանորեն կապված են իրար, եբրայեցիներեն «էմունահ», հունարեն «պիոստիս», լատիներեն «ֆիդես» բառերը հավասարապես նշանակում են հավատ եւ հավատարմություն²⁵:

Պարտականություն. «Ինչ էլ որ անեմ, սրտանց արեմ, ինչպես կանեիք Տիրոջ եւ ոչ թե մարդկանց համար» (Կող. Գ. 23): «Ուրովհետեւ Աստծու առաջ ոչ թե օրենքը լսողներն են արդար, այլ օրենքը կատարողները պիտի արդարացվեն» (Հռոմ. Բ.13):

Զինվորական պարտականությունները սահմանված են օրենքով, սակայն որպեսզի մարդը լիարժեք կերպով ընկալի ու կատարի իր պարտականությունը, ապա անհրաժեշտ է, որ նա այն ընդունի որպես արժեք, առաքելություն՝ հոգեւոր ու բարոյական հիմնավորումներով²⁶:

Անձնվեր ծառայություն. «Ոչ ոք ավելի մեծ սեր չունի, քան նա, ով իր կյանքն է տալիս իր բարեկամների համար» (Հովհ. ԺԵ.13):

Մաղաքիա արք. Օրմանյանը պատկերավոր ձևով ներկայացնում է Հովհաննեսի Ավետարանի այս հատվածի բացատրությունը, որ Տեր Հիսուս խոսում է անձնվեր ու կատարյալ սիրո մասին եւ կոչ անում մեզ ասելով. «Դուք պետք է սիրեք իրար այնպես, ինչպես որ ես սիրեցի ձեզ: Ես սերը հասցրի մինչև վերջ, որովհետեւ բարեկամների համար կյանքը զոհելուց առավել սեր չի կարող լինել եւ ահա ես բոլոր մարդկանց եւ ձեզ համար կյանքս պիտի տամ եւ պիտի մեռնեմ եւ դուք էլ չպիտի վարանեմ ձեր սերը մինչև այդ աստիճանը հասցնել, եթե ձեր մահով ձեր ընկերներին բարիք ու օգուտ պիտի բերեմ»²⁷:

Պատիվ. «Արդ աղաչում եմ ձեզ եւ՝ Տիրոջ համար բանտարկյալս, որ այնպես ընթանաք, ինչպես վայել է այն կոչմանը, որի մեջ կանչվել եք» (Եփես. Գ.1):

Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով ու նմանությամբ, որը ամենեւին չի նշանակում արտաքին նմանություն, այլ դրանով Տերը իր արարածներին հաղորդեց իր հատկությունները: Հետեւաբար պատիվը

²⁵ Տէս Ս. Аверинцев. Поэтика ранневизантийской литературы. М., 1997, էջ 130:

²⁶ Տէս Տեր Մովսես վրդ. Մարգարան, նշ. աշխ., էջ 70:

²⁷ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆ, Համապատում, Գ. հրատ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 665:

կամ արժանապատվությունը «արարման ժամանակ մարդուն փոխանցված աստվածային հատկությունների հանրագումարն է»²⁸:

Ազնվություն. «Ողջամտությամբ գնացողը գնում է վստահությամբ, իսկ հանապարհից շեղվողը, աննկատ չի մնա» (Առակք Ժ.9): «Ծառանե՛ր, ձեր երկրավոր տերերին ամեն բանում հնազա՛նդ եղե՛ք. ոչ թե ծառայե՛ք, երբ ձեզ հսկում են, եւ նրանց հանդյանա՛ք, այլ անկեղծ սրտով՝ Աստծուց երկյուղ ելով» (Կող. Գ.22):

Ձինվորական ծառայությունը պետք է իրականացնել անկեղծ ու ազնիվ սրտով, որի իրական շարժառիթը պետք լինի սերը հայրենիքի նկատմամբ եւ պատասխանատվությունը Աստծու առաջ: Հանուն վեհ գաղափարների ազնվորեն ծառայելու մոտեցումը ազատագրում է մարդուն արտաքին գնահատականների կախվածությունից ու վախերից: Այն կոչ է անում աշխատել խիղճով եւ պատասխանատվությամբ՝ անկախ հսկողությունից, որովհետեւ իրական Տերը Աստված է:

Քաջություն. «Ահա պատվիրում եմ քեզ, զորացի՛ր եւ արիացի՛ր, մի՛ վախեցիր եւ մի՛ երկնչիր, որովհետեւ քեզ հետ է Տերը՝ քո Աստվածը, ամեն տեղ, ուր էլ ուր գնաս» (Հեսուս Ա. 9):

Աստված այսպես հրամայեց Հեսուսին, երբ վերջինս ընտրվեց՝ առաջնորդելու իր ազգին Ավետյաց երկիր, որը ծանր ու պատասխանատու առաքելություն էր եւ պահանջում էր մեծ քաջություն ու հավատ: Տիրոջ այս հրամանը հիշեցում է, որ Հայոց բանակի զինծառայողները իրենց պատասխանատու առաքելության մեջ առաջնորդվեն հավատքի վրա հիմնված գործունեությամբ ու աներեր քաջությամբ:

Բանակի արժեքները՝ հավատարմությունը, պարտականությունը, ազնվությունը եւ այլն, կարող են հիմնավորվել քրիստոնեական առաքինություններով ու բարոյական արժեքներով, որի նպատակն է դաստիարակել առաքինի մարդիկ, այսինքն՝ մարդիկ կամ զինվորներ, որոնք սրտացավությամբ ու պատասխանատվությամբ, նվիրումով ու ստեղծագործ մտքով են վերաբերվում իրենց ծառայությանը եւ, ի վերջո, երջանիկ են դրանով: Այլ կերպ ասած՝ զինվորական արժեքները, դրանց յուրացումն ու կիրառումը ստեղծում են առաքինի միջավայր, որտեղ զինծառայողներն ապրում ու գործում են այդ արժեքների համաձայն:

²⁸ Ռ. ՊԱՊԱՅԱՆ, Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2002, էջ 235:

Դժվարին ծառայություն ժամանակ եւ հատկապես ճգնաժամային իրավիճակներում գտնվող զինծառայողների համար հոգեւոր աջակցության անհրաժեշտությունը միշտ ճանաչվել, պահանջվել ու գնահատվել է բանակի կողմից: Զինծառայողների հոգեւոր դաստիարակության կարեւորությունը գիտակցումով է ՀՀ ԶՈՒ Հոգեւոր առաջնորդությունը²⁹ հոգում զինծառայողների հոգեւոր կարիքները: Բանակում քրիստոնեական առաքինություններն ու զինվորական արժեքները զինծառայողներին փոխանցում են հիմնականում գնդերեց³⁰ հոգեւորականները, որոնց առաքելությունն է զինծառայողներին հաղորդակից դարձնել Սուրբ Գրքի ու քրիստոնեական հավատքի սկզբունքներին՝ համաձայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանանքի, ինչպես նաեւ զինծառայողներին դաստիարակել քրիստոնեական-բարոյական սկզբունքներով եւ ազգային-հայրենասիրական ոգով:

Հոգեւորապես պատրաստված զինվորը հավատում է իր ընտրած առաքելության կարեւորությունը, անհրաժեշտությանը եւ արդարացի բնույթին: Հոգեւոր պատրաստվածությունն ավելի լավ է դրսեւորվում վտանգին եւ մահվանը քաջությամբ դիմակայելու մեջ: Այն գերազանցում է ֆիզիկական պատրաստվածությունը, քանի որ այն զինվորին պատրաստում է լուծելու ավելի բարձր հարցեր, ինչպիսիք են կյանքի արժեքը եւ իմաստը, եւ ոչ միայն պատշաճ վարքագիծը: Շատ զինվորներ իրենց հոգեւոր ուժը գտնում են իրենց կրոնական համոզմունքների մեջ, որն էլ դրսեւորվում է ազգի, պետության, իրենց ստորաբաժանման եւ զինակիցների նկատմամբ հավատարմության մեջ: Զինվորների հոգեւոր ուժի չափանիշը նրանց վճռականությունն է՝ աջակցել միմյանց իրենց առաքելությունը կատարելու գործում, անկախ գնից: Այս մասին է վկայել ամերիկյան բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Զորջ Մարշալը Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին. «Ես զինվորի հոգեւոր կյանքը համարում եմ ավելի կարեւոր, քան նրա ֆիզիկական պատրաստ-

²⁹ ՀՀ ԶՈՒ-ի հոգեւոր առաջնորդությունը կազմավորվել է 1997 թ. նոյեմբերի 13-ին երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսի եւ ՀՀ Պաշտպանության նախարար լուսահոգի Վազգեն Սարգսյանի համատեղ նախաձեռնությամբ (տես ԱՐՇԵՆ ԱՐԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆ, Բանակային քահանաների հաստատությունը ՀՀ Զինված ուժերում: «ՀԲ», 2001, հմ. 1–2 (27–28)):

³⁰ ՀՀ Զինված ուժերում ծառայող հոգեւորականները կոչվում են գնդերեց: Այլ երկրներում ընդունված են «կապելան» կամ «չապլին» (Chaplain, լատիներեն՝ cappellani) անվանումը, որը բնութագրում է հատուկ ծառայության նշանակված հոգեւորականին:

վածությունը: Զինվորի սիրտը, զինվորի ոգին, զինվորի հոգին ամեն ինչ են: ...Բարոյականությունն է, եւ ես նկատի ունեմ հոգեւոր բարոյականությունը, որը հաղթանակ է տանում վերջնական արդյունքում, եւ այդ տեսակի բարոյականություն կարող է ունենալ այն զինվորը, ով ճանաչում է Աստծուն եւ իր հոգում կրոնական եռանդ ունի: Ես մեծապէս հույսս դնում եմ այդ տեսակի մարդու եւ այդ տեսակի բանակի վրա»³¹:

Զինվորական արժեքներով ապրող ու ծառայող Հայոց բանակի մարտիկի ոգու կանչը կլինի.

- ԱՌԱՋԱԴՐԱՆՔՍ ԿԿԱՏԱՐԵՄ
- ՉԵՄ ՀԱՆՁՆՎԻ
- ՉԵՄ ԹՈՂՆԻ ԸՆԿԱԾ ԶԻՆԱԿՑԻՍ
- ԳԱՂՏՆԻՔԸ ՉԵՄ ԲԱՅԱՀԱՅՏԻ
- ԿՍԻՐԵՄ ՀԱՅՐԵՆԻՔՍ

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հոգեւոր կյանք, համաշխարհային պատերազմ, Հայոց բանակ, հոգեւոր բարոյականություն

РЕЗЮМЕ

Статья исследует взаимосвязь между воинскими ценностями Армянской армии и христианскими добродетелями. Вначале рассматриваются богословские и философские основы понятия добродетели – от античных мыслителей, таких как Платон и Аристотель, до отцов Церкви – Августина Блаженного и Фомы Аквинского. Устанавливается, что добродетель является одновременно природным человеческим качеством и даром Божиим. Христианские добродетели подразделяются на богословские (вера, надежда и любовь) и нравственные (благоразумие, справедливость, мужество и воздержание), которые в совокупности образуют основу праведной жизни.

Далее в статье представлены семь основных ценностей Армянской армии – вера, верность, долг, самоотверженное служение, честь, честность и мужество – и показано, как каждая из них укоренена в Священном Писании и

³¹ SŒU R. GUSHWA, The Best of Times and the Worst of Times: The United States Army Chaplaincy 1920–1945, Washington: Office of the Chief of Chaplains, 1977, էջ 186:

христианском нравственном учении. Утверждается, что воин, усвоивший эти ценности, становится не только более профессионально подготовленным, но и обретает духовный и нравственный характер, необходимый для достойной жизни и службы. Особо подчёркивается роль военных священнослужителей в поддержании духовного измерения воинской жизни, а также значение личного примера и непрерывного нравственного воспитания в вооружённых силах.

В заключение делается вывод о том, что воинские ценности и христианские добродетели – не две отдельные системы, а глубоко взаимодополняющие начала. Вместе они формируют воинов, которые несут службу с самоотдачей, ответственностью и непоколебимой преданностью Родине, боевым товарищам и своей вере.

SUMMARY

This article explores the relationship between the military values of the Armenian Army and Christian virtues. It begins by examining the theological and philosophical foundations of virtue – from ancient Greek thinkers such as Plato and Aristotle to Church Fathers like Augustine and Thomas Aquinas – establishing that virtue is both a natural human quality and a divine gift. Christian virtues are divided into theological (faith, hope, and love) and moral (prudence, justice, courage, and temperance), all of which form the foundation of a righteous life.

The article then presents the seven core values of the Armenian Army – faith, loyalty, duty, selfless service, honor, integrity, and courage – and demonstrates how each is grounded in the Scripture and Christian moral teaching. It argues that a soldier who internalizes these values not only becomes more professionally capable, but develops the spiritual and moral character necessary for a dignified life and service. The role of military chaplains in nurturing this spiritual dimension is also highlighted, along with the importance of personal example and continuous moral education within the armed forces.

The article concludes that military values and Christian virtues are not separate systems but deeply complementary – together shaping soldiers who serve with dedication, responsibility, and unwavering commitment to their homeland, their comrades, and their faith.



ԴԱՆԻԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՖԸՆՏԸԳԵԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

**«ՓԱԿ» ԿԱՍ «ԳՈՅ» ՊԱՏԱՐԱԳ.
ՄԵԾ ՊԱՅՈՑ ՓԱԿ ՎԱՐԱԳՈՅՐԻ ԶԱՐՑԸ
ՅԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ**

Ա. ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայ Եկեղեցու ծիսական ամենանշանակալի եւ արտառոց սովորոյթներինց է Մեծ պահքի վեհաշուք շրջանում խորանը արեւելեան մասին՝ դասի կամ երգչախմբի հատուածից փակ վարագոյրով բաժանելը¹: Մեծ պահքի ընթացքում «Փակ Պատարագի» ժամանակ, պատարագին ու դպիրները սքօղում են հաւատացեալներինց: Թէեւ, սա Եկեղեցու կայուն աւանդոյթներից է, այնուամենայնիւ, յարուցում է մի շարք պատմական, գործնական, հովուական եւ մեկնաբանական խնդիրներ, եւ որպէս այդպիսին անշան է պատմագրական հէնքը:

Բ. ՎԱՐԱԳՈՅՐԻ ՓԱԿՈՒՄԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Սիմէոն Ա. Երեւանցու (1763–1780) «Տօնացոյց»-ը ներառում է մօտ մէկ էջանոց հետեւեալ սեղմ մեկնութիւնը Մեծ Պահքին նախորդող շաբաթ օրուայ վերաբերեալ, որ համաձայն հայ եկեղեցական օրացոյցի՝ Կոստանդնուպօլսի ժողովի 150 հայրերի յիշատակութեան օրն է²:

¹ Խորանի վարագոյրները սոսկ հայերին չեն բնորոշ: Սուրբ Պատարագի մի պահի վարագոյրով խորանը հաւատացեալներից ծածկելը եղել է եւ կամ գոյութիւն ունի ցայսօր, բոլոր արեւելքի քրիստոնէական եկեղեցիների ծիսակարգերում՝ բացառութեամբ բիւզանդանի: Ողջ Քրիստոնեայ Արեւելքում՝ այդ թւում՝ Հայաստանում խորանի եւ սրբարանի վարագոյրների կիրառութեան վերաբերեալ համապարփակ պատմական քննութեան եւ ամբողջական մատենագիտութեան համար տե՛ս ՄԱՅՔԸ ԴԱՆԻԷԼ ՖԸՆՏԸԳԵԱՆ, Hanging by a Thread: The Closed Curtain During Great Lent in the Armenian Church, «Էջմիածին», 2016, ԺԲ., էջ 18–53:

² Ժամակարգութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, յորում պարունակին Սաղմոս Դաւթի, Ժամագիրք Ատենի եւ Տօնացոյց, Զ. տպագրութիւն (1915 թ. Դ. տպագրութեան նմանատպութիւն) (Վաղարշապատ, Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի Տպարան, 1999), էջ 462, այսուհետ՝ Տօնացոյց: Ինչպէս պիտի տեսնենք մեր առաջիկայ հետազօտութեան ընթացքին, Մեծ Պահոց շրջանի համար Տօնացոյց-ի ոչ բոլոր հրատարակութիւններն են որեւէ կարգադրու-

«Եւ քարշեալ զվարագոյրն՝ ծածկեսցեն զսեղանսն»³, յօրինակ արտաքսմանն Ադամայ ի դրախտէն, եւ ոչ համբուրեսցեն այսուհետեւ զԱւետարանն. նաեւ ոչ բարձրացուցեն ի Հաւատամքին եւ ի Կեցո՛ւին ի տես ժողովրդեանն. զկոյս զուարթն եւս թիւ ասասցեն ի տեղի մաղթանքին մինչեւ ի Ծաղկազարդն:

...

Վարագոյրը քաշելով՝ ծածկում են սեղանները, Ադամի՝ դրախտից արտաքսման օրինակով, եւ այսուհետեւ այլեւ չեն համբուրում Աւետարանը. նաեւ «Հաւատամք»-ի եւ «Կեցո՛ւ»-ի ժամանակ, ժողովրդին ցոյց տալու համար չեն բարձրացնում. «կոյս զուարթ» երգը եւս չեն երգում մաղթանքի տեղում մինչեւ Ծաղկազարդ»:

Ըստ Տօնացոյցի, վարագոյրը Մեծ պահքին նախորդող շաբաթ օրուանից պէտք է փակուի եւ այդպէս մնայ «մինչեւ Ծաղկազարդ»: Սակայն «Տօնացոյց»-ի հրահանգների ոչ միանշանակ ձեւակերպումներով պայմանաւորուած Հայոց թեմերում ու եկեղեցիներում, կարելի է ականատես լինել տարբեր սովորոյթների:

Համաձայն վերոյիշեալ հրահանգի, վարագոյրը փակում է շաբաթ երեկոյի ժամերգութեան վերջաւորութեան՝ մինչեւ Մեծ պահքի աւարտը: Բնականաբար, այն փակ է նաեւ յաջորդ օրը՝ Բուն Բարեկենդանին, որ ըստ «Տօնացոյց»-ի հաշուարկման Մեծ պահոց առաջին կիրակին է⁴: Ընդս-

թիւն ներառում վարագոյրի փակման կամ բացման վերաբերեալ: Այդպիսի կարգադրութիւն ներառող առաջին հրատարակութիւնը Տօնացոյց յաւուր պատշաճին-ն է (Վոստանդնուպոլիս, 1725), էջ 53: Գրաբարից արդի արեւելահայերէն բոլոր թարգմանութիւնները կատարել է Յովհաննէս Սարկաւազ էվինեանը:

³ Բառը գործածուած է յոգնակի թուով, ինչը վկայում է, որ տուեալ կարգադրութեան ձեւաւորման ժամանակ սովորական հայ եկեղեցին ունեցել է մի քանի սուրբ սեղաններ: Այնուամենայնիւ, մի քանի սեղաններ լայն տարածում են ստանում երկրորդ հազարամեակի սկզբից՝ միայն վանական եկեղեցիներում՝ հանգուցեալների յիշատակին մատուցուող պատարագների թուի կտրուկ աճի հետեւանքով: Փաստօրէն, որոշ վանական եկեղեցիներում օրական պէտք է մատուցուէր մի քանի պատարագ՝ երբեմն միաժամանակ, տարբեր խորանների վրայ: Տէն ՄԱՅՔԼ ԴԱՆԻԷ ԶԸՆՏԸԳԵԱՆ, The Function of the Gawit' in Medieval Armenian Monasteries», ΛΟΓΙΚΗ ΛΑΤΡΕΙΑ: Proceedings of the Eighth International Congress of the Society of Oriental Liturgy, Սալօնիկ, Յունաստան, 13–18 յունիսի 2022 թ., Studies in Eastern Christian Liturgies, խմբ. Քրիստոսոս ՆԱՍԻՍ, Արսէնոս ՄԻԽԱՅԷԼ, ԴԱՆԻԷ ԳԱԼԱԶԱ (Միւնսթէր. Aschendorff, 2025), էջ 468–494, այստեղ՝ 491–492:

⁴ Ի նկատի առնելով, որ Տօնացոյց-ը յաջորդող կիրակին յտակ նշում է որպէս «երկրորդ կիրակէ Մեծի պահոց» (Տօնացոյց, 463): Այս հաշուարկն սկիզբ է առնում Հայոց ճաշոցի երկրորդ սերնդից (ութերորդ դարից յետոյ), որոնցում առաջին անգամ Երուսաղէմեան ճաշոցը յարմարեցուեց տեղական աւանդոյթին. տէն ՇԱՌՈՒ ՌԷՆՈՒ, Le lectionnaire de Jérusalem en Arménie: Le Čašoc' II. Édition synoptique des plus anciens témoins, PO 48/2 (Թուրնհուտ, Բեկդիա. Բրեպոլիս, 1999), էջ 123–125, 160–182, այսուհետեւ՝ Ռընու, Le Čašoc' II:

մին տօնացոյցեան գրառմամբ՝ «ըստ օրինակի արտաքսմանն Ադամայ ի դրախտէն» վարագոյրը փակելն ուղղակի հակասում է տօնական ոգուն ու էութեանը Բարեկենդանի, որի իմաստն ընկալելի է ըստ ինքեան. եզրոյթը յօդուում է «բարի» եւ «կենդանի» արմատներից⁵: Դեռեւս միջնադարեան աւանդոյթներում քրիստոնէական համայնքները նախքան Մեծ Պահքը կազմակերպում էին ժողովրդական հանդէսներ ու տօնախմբութիւններ: Այդօրինակ խրախճանքները իւրօրինակ համաժողովրդական անցում էին առօրեայ եռուզեռից դէպի պահոց խստամբեր ժուժկալուծիւն: Նման խրախճանքները նպատակ ունէին նաեւ պահքի նախօրէին ձերբազատուել ոչ պահոց սնունդից: Հայ իրականութեան մէջ եւս Բուն Բարեկենդանն ընկալուել է որպէս ուրախական օր: Հայ եկեղեցական բազմաթիւ համայնքներ՝ յատկապէս բուն Հայաստանում, տօնակատարութեան նախօրէին վարագոյրն փակելով յիրաւի անշեղօրէն հետեւում են Տօնացոյցում գրուած կարգին: Այդուհանդերձ, վարագոյրի փակմամբ արտայայտուած ապաշխարող ոգու եւ Բուն Բարեկենդանի տօնական բնոյթի համատեղման հանգամանքը շարունակում է երկընտրանք մնալ թէ՛ հոգեւորականութեան, թէ՛ ուսուցիչների եւ թէ՛ հաւատացեալների համար: Սրա հետ մէկտեղ հայկական սփիւռքի շատ համայնքային եկեղեցիներ, այնուամենայնիւ, կանոնաւոր կերպով չեն կատարում շաբաթ երեկոյեան ժամերգութիւնը, ուստի վարագոյրը բաց է մնում մինչեւ Բուն Բարեկենդանի կիրակնօրեայ Պատարագի աւարտը: Շատ ծխատէր քահանաներ, ըստ սովորութեան Սուրբ Հաղորդութիւնից յետոյ փակում են խորանի վարագոյրը, բայց այն փակ են թողնում նաեւ Պատարագի արձակման ժամանակ, երբ որպէս կանոն այն պէտք է կրկին բացուեր⁶: Այս լուծումն

⁵ Հրաչեայ Աճառեանը, բառը համեմատելով Ռամադանի պահեցողութեան մեկնարկին նախորդող օրը խորհրդանշող՝ պարսկերէն *pērgantan / barqandān* կազմութեան հետ, եզրափակում է. «պարսկերէն բառը փոխառեալ է հայերէնից». տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Երեւան, 1971, հտ. Ա., էջ 422, հմմտ. նաեւ ՇԱՌԼ ՌԵՆՈՒ, «Un programme de conversion: la liturgie du 1er dimanche de carême dans le rite arménien», Liturgie, conversion et vie monastique, Conférences Saint-Serge, XXXVe Semaine d'Études Liturgiques (Bibliotheca "Ephemerides Liturgicae" Սուրբսիդիա 40, Հոտմ, 1988), 283, ծան. 2:

⁶ Տե՛ս Divine Liturgy of the Armenian Apostolic Orthodox Church with Variables, Complete Rubrics and Commentary (Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Սուրբ Պատարագը՝ փոփոխութիւնները, ամբողջական խորագրերն ու մեկնութիւնը), թարգմ.՝ ՏԻՐԱՆ ԱՐՔ. ՆԵՐՍՈՅԵԱՆ, վերանայուած հինգերորդ հրատ. (Լօնդօն. Սուրբ Սարգիս եկեղեցի, 1984), էջեր 104–105. այսուհետեւ՝ ՆԵՐՍՈՅԵԱՆ, Divine Liturgy:

առաւել հարազատ է Բուն Բարեկենդանի ոգուն⁷, սակայն հակասում է Տօնացոյցի հրահանգին⁸:

Աւելի մտահոգիչ է մէկ այլ հակասութիւն: Մէկ այլ ծիսական մատեան՝ Օրացոյցը Բուն Բարեկենդանը համարում է Մեծ Պահքի առաջին կիրակի⁹: Իսկ յաջորդ օրը՝ երկուշաբթին, ըստ Օրացոյցի, համարում է՝ «Ա. օր Մեծի պահոց»¹⁰: Նոյնն է նաև Շարականոցի պարագան¹¹: Ուստի իրականում ե՞րբ է սկսում Մեծ Պահքը Հայ Եկեղեցում. Բուն Բարեկենդանի կիրակի՞ օրը, թէ՛ յաջորդող երկուշաբթի: Ծիսական մատեաններում առկայ հակասական տեղեկութիւնների պատճառով այս հարցի պատասխանը յստակ չէ:

Առկայ անհամապատասխանութիւնն աղերսում է փակ վարագոյրի խորհրդաբանութեանը, ինչպէս նշուած է Տօնացոյցում: Զարմանալիօրէն ո՛չ շաբաթ

⁷ Թէև, ոչ այդքան ճշմարիտ, քանի որ բարեկենդանի հանդիսութիւնները կարող էին մեկնարկել միայն Պատարագի աւարտից յետոյ:

⁸ Իրնուն փորձում է լուսաբանել առաջարկելով, որ Բուն Բարեկենդանը ոչ թէ մէկօրեայ, այլ երկշաբաթեայ ընթացք է, որ սկսում է Մեծ Պահքին նախորդող հնգօրեայ՝ «Առաջաւորաց պահքից» յետոյ: Այսպիսով, Բուն Բարեկենդանն այդ երկշաբաթեայ տօնական շրջանի պսակն է: Տես ՌԸՆՈՒ, «Un programme de conversion», էջ 283: Որոշ հայկական ձեռագիր ձաշոցներ Բուն Բարեկենդանին նախորդող շաբաթ օրը նշում են իբրև «Բուն բարեկենդանին շաբաթ արն»: Տես ՌԸՆՈՒ, Le Čašoc' II: Օրմանեանը նոյնպէս նշում է, որ Բուն Բարեկենդանը համանուն շաբաթի վերջին օրն է. «Այժմ սովորութիւն է, եւ սովորութիւնն ալ նոր չէ, որ ոչ թէ միայն Բուն Բարեկենդանին կիրակին, այլ եւ բովանդակ անոր նախընթաց եօթնեակն ամբողջովին բարեկենդան կը նկատուի, եւ բարեկենդանի շաբաթ կը կոչուի»: ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ, Ծիսական բառարան (Անթիլիաս. Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1979), էջ 20: Բարեկենդանի շրջանի ընդլայնուած լինելու վերաբերեալ այս տեսութիւնները հերքում են Տօնացոյցում կամ ծիսական այլ գրքերում առ այդ ցանկացած յիշատակութիւնների բացակայութեան հանգամանքով: Աւելին, Բուն Բարեկենդանին նախորդող երկու շորեքշաբթի եւ ուրբաթ օրերը՝ համաձայն իրենց ծիսական պատշաճին, հասարակ պահոց եւ ապաշխարութեան օրեր են: Վերջապէս, եթէ ենթադրեալ մէկ կամ երկշաբաթեայ Բարեկենդանի շրջանն աւարտում է կիրակի օրը, հարց է մնում, թէ ինչո՞ւ խորանի վարագոյրը պէտք է փակուեր նախորդ շաբաթ՝ Կոստանդնուպօլսի Ժողովի 150 Հայրերի յիշատակութեան օրը, ինչը դեռևս ամբողջութեամբ կհամապատասխաներ այդ ենթադրեալ տօնական շրջանին:

⁹ Սա նոյնպէս Տօնացոյցի վկայութեան օրինակով հասկանալի է, քանի որ Բուն Բարեկենդանի սկիզբը շունի որեւէ յաջորդական կարգադրութիւն: Այդուհանդերձ, յաջորդ կիրակին արդեն կոչում է «Բ. Կիրակի Քառասնորդաց պահոց». Օրացոյց Սուրբ Էջմիածին 2025, էջ 53. այսուհետեւ՝ Օրացոյց: Այսպիսով, Մեծ Պահքի իւրաքանչիւր օրը համարակալուած է այնպէս, որ Ղազարոսի յարութեան յիշատակի շաբաթի նախորդ ուրբաթ օրը համարում է Մեծ Պահքի քառասուններորդ եւ վերջին օրեր:

¹⁰ Օրացոյց, 51:

¹¹ «Զայնքաղ շարական» (Երուսաղէմ. Տպարան Առաքելական Աթոռոյ, 1914), էջ 103, (այսուհետեւ՝ Շարական): Շարականների կանոնը վերնագրուած է «Երկրորդ Կիրակէի Աղուհացից». հմմտ. նոյն տեղում, էջ 84:

օրուայ՝ Կոստանդնուպոլսի տիեզերաժողովի յիշատակութեան, ո՛չ իսկ Բուն Բարեկենդանի աստուածաշնչեան ընթերցուածքները, շարականները կամ օրուան պատշաճող այլ ծիսական բնագրերը որեւէ ակնարկ չեն պարունակում Ադամի ու Եւայի՝ դրախտից արտաքսման մասին՝ թէեւ այն Տօնացոյցով սահմանուած բնաբանն է, որ համատարած հանդիպում է հայ աստուածաբանութեան, շարականագրութեան եւ մեկնողական գրականութեան մէջ:

«Մովսէսի Օրհնութեան»-ը (Ելք ԺԵ.) զուգորդուող Օրհնութիւն շարականը, որ ըստ Տօնացոյցի պիտի հնչի շաբաթ երեկոյեան վարագոյրի փակուելու ընթացին, որեւէ աղերս չունի ո՛չ Ադամի ու Եւայի աքսորի, ո՛չ իսկ խարանի փակ վարագոյրի հետ¹²: Ընդհակառակը, շարականն իրենից ներկայացնում է նրանց՝ դրախտային երջանիկ նախամեղսական կեանքի գովերգում, որտեղ հայկական աւանդոյթին ոչ այնքան բնորոշ կերպով չի շեշտուում նրանց մեղքը¹³:

Ձորօրինակ՝ դիտարկենք շարականի առաջին տները¹⁴:

Բանն որ ընդ Հօր յէութեան եւ համագոյ սուրբ Հոգւոյն. զպատկերն իւրական խառնեալ ընդ հողանիւթ բնութեանս. զոր զարդարեալ փառօք եդ ի դրախտին փափկութեան:

Յորում ցնծայր զուարճացեալ անտխրական խնդութեամբ. քանզի զԱստուած տեսանէր միշտ խոնարհեալ ի դրախտին. յորմէ զլուսոյն ճառագայթ տպաւորէր ի յինքեան:

Վասն որոյ աղաչեա՛ մայր Աստուծոյ Մարիամ. զմիածին քո զՈրդին. զի շնորհեսցէ ըստ աւագակին ժառանգել վերստին մեզ զդրախտին վայելչութիւն:

Այսօր յօրինակ նախաստեղծին Ադամայ. որ ի դրախտին փափկութեան ուրախանայր ընդ հրեշտակս. ցնծասցուք եւ մեք ի յօրհնութիւնս հոգեւորս:

Այսօր ի խորհուրդ աստուածաստեղծ նախահօրն, որ ի պտղոյն Ադինայ ճաշակելով զուարճանայր. ճաշակեսցուք եւ մեք զպատուիրանս աստուծոյ:

¹² Ռընոն ուսումնասիրում է Բուն Բարեկենդանի ծիսական օրուայ պատշաճը՝ ՌԷՆՈՒ, «Un programme de conversion», էջ 283–292. Հմմտ. նաեւ ԳՈՂԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ-ԹՈՄԱՍԻ՝ «Les lectures eucharistiques des dimanches du grande carême d'après le rite arménien», մեջ՝ *A. M. TRIACCA, A. PISTOIA*, խմբ., *La liturgie: interprète de l'écriture I: Les lectures bibliques pour les dimanches et fêtes, Conférences Saint-Serge, XLVIIIe Semaine d'Études Liturgiques, Փարիզ, 25–28 յունիսի 2001 (Հոռմ. Edizioni Liturgiche, 2002)*, էջ 173–182:

¹³ Փրկութեան գաղափարի առանցքը Հայ միջնադարեան ծիսական մեկնութիւններում, Ադամի ու Եւայի պատմութիւնն է, որի քննութիւնը տես *M. D. FINDIKYAN*, «Christology in Early Armenian Liturgical Commentaries», *The Place of Christ in Liturgical Prayer: Trinity, Christology and Liturgical Theology*, խմբ. ԲՐԱՅԱՆ Դ. ՍՓԻՆՔՍ (Collegeville, MN. Liturgical Press, 2008), էջ 200–203:

¹⁴ Շարական, 84:

...

Բանը, որ էութեամբ Հօր հետ է եւ համագոյ է Սուրբ Հոգուն. իրենական պատկերը խառնեց այս հողանիւթ բնութեան հետ, որ փառքով զարդարելով, դրեց դրախտի բերկրանքի մէջ:

Որի մէջ զուարեանալով ցնծում էր անտխրական խնդրութեամբ, քանի որ Աստուած միշտ խոնարհուած էր տեսնում դրախտի մէջ, որից էլ նրա վրայ տպաւորում էր լոյսի նառագայթը:

Որի համար աղաչի՛ր, Աստծո՛ւ Մայր Մարիամ, քո Միածին Որդուն, որպէսզի շնորհ տայ մեզ, ինչպէս աւագակին, կրկին ժառանգել դրախտի վայելչութիւնը:

Այսօր՝ նախաստեղծ Ադամի օրինակով, որը հրեշտակների հետ ուրախանում էր դրախտի բերկրութեան մէջ, ուրախանանք նաեւ մենք՝ հոգեւոր օրհնութիւններով:

Այսօր՝ աստուածաստեղծ նախահօր խորհրդով, որը պտղից նաշակելով ուրախանում էր, նաշակենք եւ մենք պատուիրաններն Աստծու:

Կանոնի մնացեալ շարականները եւս որեւէ կերպ չեն անդրադառնում նախաստեղծ զոյգի Դրախտից արտաքսուելուն: Այդ պարագային ինչո՞ւ սքօղեալ վարագոյրի պէս կարկառուն ծէսը որեւէ նշում չունի օրուայ ծիսական ցուցումներում եւ անգամ այն շարականում, որ հնչում է փակուելու ընթացքին: Տօնացոյցի՝ հակիրճ՝ եռատող նշումն այս ծէսի եւ դրա խորհրդաբանական նշանակութեան միակ վկայութիւնն է: Հայկական ծիսակարգի արարողութիւնները կանոնակարգող ծիսական բնագրերը, յատկապէս օրուայ սաղմոսները, երգերն ու շարականները, սովորաբար տալիս են ընթացիկ ծէսերի աստուածաբանական մեկնաբանութիւնը : Այդ կայուն օրինաչափութիւնն առաւել ցայտուն է դարձնում վարագոյրի ծիսական փակման եւ ուղեկցող շարականի միջեւ առկայ անհամապատասխանութիւնը:

Սա ամենեւին չի նշանակում, թէ Ադամի՝ Դրախտից արտաքսման պատումը բացակայում է Մեծ Պահքի հայոց աստուածաբանական ընկալումներում: Ընդհակառակը: Պարզապէս այդ նիւթը կապում է ոչ թէ Բուն Բարեկենդանի, այլ յաջորդող կիրակիի հետ՝ «Բ. օր Մեծի պահոց», որը յայտնի է որպէս Արտաքսման կիրակի¹⁵: Հենց այդ օրուայ ծիսական

¹⁵ Օրացոյց, էջ 42: Մաղաքիա Օրմանեանը գրում է. «Բ. Կիրակին գործածական եղած անուն մը չունի, սակայն տեղ-տեղ կը գտնենք Արտաքսման անունով կոչուած, որ եւ կը հաստատուի Շնորհալույն գրած շարականին իմաստէն: Արդէն գիտենք թէ Բուն Բարեկենդանին, այսինքն Մեծ Պահոց Ա. Կիրակին, կը յիշատակուի նախամարդոց Դրախտի կեանքը, ըստ այսմ Բ. Կիրակին ալ Դրախտէ արտաքսուիլը կը յիշատակուի»: Օրմանեանը, ըստ երեւոյթին,

բնագրերում է, որ հանդիպում ենք Ադամի ու Եւայի անկման եւ մարդկութեան համար դրա աղետալի հետեւանքների վերաբերեալ բազմաթիւ անմիջական անդրադարձներին: «Օրհնութիւն» շարականի առաջին տեսերը ներկայացնում են ամբողջ կանոնի ընդհանուր ոգին¹⁶.

Որ զօրէնս սրբութեան պահոց նախ ի դրախտին աւանդեցեր. զոր ոչ պահելով նախաստեղծիցն ճաշակմամբ պտղոյն ճաշակեցին զդառնութիւն մեղաց եւ մահու. վասն որոյ շնորհեա՛ մեզ Տէր ճաշակել քաղցրութիւն Քոց պատուիրանաց: Որ զանագան վիրօք մեղաց հարաք յոգիս ի թշնամւոյն. եւ ի բազմապատիկ հիւանդութիւնս կարօտացաք մարդասիրիդ բառնալոյ զցաւս մեր. վասն որոյ բժշկեա՛ զմեզ Քրիստոս որպէս մարդասէր:

Որ եկիր ի փրկութիւն մարդկան ծննդեամբ կուսին Մարիամու. եւ կենդանարար Քո յարութեամբդ հրաւիրեցեր զմահացեալքս ի յարութիւն անմահութեան. վասն որոյ աղաչանօք մօր քո կեցո՛ զմեզ Փրկիչ:

...

Որ պահի սրբութեան օրէնքն՝ նախ դրախտում աւանդեցիր, որը որ նախաստեղծները չպահելով, պտղի ճաշակմամբ ճաշակեցին մեղքի ու մահուան դառնութիւնը, որի պատճառով էլ շնորհի՛ր մեզ Տէր, ճաշակել Քո պատուիրանների քաղցրութիւնը: Որ զանագան մեղքերով եւ հոգեւոր թշնամութեամբ յարուցուած թշնամուց, եւ բազմաթիւ հիւանդութիւնների մէջ, Քո՝ մարդասերիդ կարիքը զգացիմք, որ մեր ցաւերը վերցնես, որի համար, որպէս մարդասէր բժշկի՛ր մեզ Քրիստոս:

Որ եկար մարդկանց փրկութեան, կոյս Մարիամից ծնուելով, եւ քո կենդանարար յարութեամբ մահացածներին հրաւիրեցիր դէպի անմահ յարութիւն, որի համար քո մօր աղաչանքներով ապրեցրու մեզ, փրկի՛չ:

Շարականի առաջին բառերում դիպուկ է Մեծ Պահքի պահեցողութեանը միտուած ակնարկը, որը հեղինակը շեշտուած կերպով հակադրում է Դրախտում մեղքի պտղով Ադամի ու Եւայի վայելած ճոխ խրախճանքին: Ինչպէս տեսանք, շնայած որոշ աղբիւրներում Բուն Բարեկենդանը յիշատակուում է որպէս Մեծ Պահքի առաջին կիրակի, այդ տօնի շարականները որեւէ գաղափարական կապ չեն դրսեւորում պահեցողութեան այդ մեծ շրջանի հետ: Հետեւաբար մեր առաջ կայ մէկ հակասութիւն, որ է փակ վարագոյրի եւ Բուն Բարեկենդանի իրական խորհուրդի եկեղեցական մեկնաբանութիւնը:

չի նկատում կամ չի արձանագրում վարագոյրի փակման առնչութեամբ առկայ ակնյայտ հակասութիւնը: Տես ՕՐՄԱՆԵԱՆ, Ծիսական բառարան, էջ 16:

¹⁶ Շարական, 103:

Նոյնիսկ հայ անուանի եկեղեցական գործիչ եւ մտաւորական Մաղաքիա Օրմանեանն է Բուն Բարեկենդանի կապակցութեամբ տալիս Հայ եկեղեցու ընկալման մի շփոթեցնող եւ հակասական մեկնաբանութիւն¹⁷:

Մեծ Պահֆի ապաշխարութեան եկեղեցական երգերը եւ վարագոյրին փակումը շաբաթ իրիկուն կատարուելէն ետքը, Կիրակի օրը եկեղեցական տխրութեան հետ կերակուներու ուրախութեան նուիրովիլը, ըստ մեր վարդապետաց «Զփափկութիւն դրախտին եւ զբարեկենդանութիւն օրինակէ». Բուն Բարեկենդանի Կիրակիին խորհուրդը նախահայրերուն դրախտային երջանիկ կենաց յիշատակութիւնը կը պարունակէ:

Պարզ չէ, թէ Մեծ Պահֆի յատկապէս ո՞ր «եկեղեցական ապաշխարութեան երգերը» նկատի ունի Օրմանեանը, քանի որ Բուն Բարեկենդանին նախորդող շաբաթ օրուայ համար որեւէ ապաշխարութեան շարական սահմանուած չէ: Նոյնկերպ տարակուսելի է, որ նա զուգահրոյժ է «կերակուրներու ուրախութիւնը» եւ «եկեղեցական տխրութիւն» հասկացութիւնները: Ինչպէս են դրանք խորհրդանշում «զփափկութիւն դրախտին եւ զբարեկենդանութիւն» (դրախտի փափկութիւնն ու բարեկենդանութիւնը): Բացի այդ, ովքեր են այն «վարդապետները», որոնց Օրմանեանը վերագրում է այս ձեւակերպումը: Սրբազանը չի տալիս նրանց անունները: Ընդհանուր առմամբ, այս հատուածը բացայայտում է առաւել խորքային մի անհամապատասխանութիւն. Բուն Բարեկենդանի ոգին սահմանող ցնծալի շարականագրութիւնը պարզապէս հակասում է վարագոյրի փակման ապաշխարական ծէսին: Այս անհամապատասխանութիւնը լուրջ հարցեր է յարուցում տուեալ սովորոյթի հիմնաւոր լինելու վերաբերեալ՝ ստիպելով ենթադրել, թէ այն շաբաթ երեկոյի ժամերգութեան կարգն է թափանցել վայրապար կամ իբրեւ առանց որեւէ պատշաճաւոր քննութեան ներմուծուած անագան յաւելում:

Գ. ՎԱՐԱԳՈՅՐԻ ԲԱՅՈՒՄԸ

Եթէ Հայոց ծիսական մատեանները Մեծ պահֆին նախորդող օրերին փակուող վարագոյրի վերաբերեալ տալիս են իրարամերժ պարզաբանումներ, ապա աւելի շատ հարցեր են ծագում Պահֆի աւարտին դրա վերաբացմանն առնչուող հանգամանքների շուրջ: Նախեւառաջ, Տօնա-

¹⁷ ՕՐՄԱՆԵԱՆ, Ծիսական բառարան, 20–21:

ցոյցում դրոշմուած՝ «մինչ Մաղկազարդն» արտայայտութիւնը պէտք է ընկալել բացառող իմաստով, քանի որ Տօնացոյցում որեւէ հրահանգ չկայ Մաղկազարդի օրը վարագոյրը բացելու վերաբերեալ: Այդ գրութիւնը Մաղկազարդին նախորդող Ղազարու յարութեան տօնի վերաբերեալ ծաւալուն յօդուածի վերջում է՝ «Համբարձի» շարականի նշումից անմիջապէս յետոյ:

«Ի սկսանիլն բացցեն զխորանն»:

Ակտուելուն պէս թող բացեն խորանը¹⁸:

Գրաբարեան այդ շորս բառերը չեն համապատասխանում Պահճի սկզբում վարագոյրը փակելու հրահանգին, որն ուղեկցւում էր իր կարճառօտ, բայց աստուածաբանական խօսուն հիմնաւորմամբ:

Վարագոյրի վերաբացման արարողութիւնն ըստ ամենայնի տեղաւորւում է տօնին նախորդող եւ «Նախատօնակ» կոչուող ծէսի յատկանշական կառուցուածքում, թէեւ Տօնացոյցը, իրեն ոչ բնորոշ կերպով, այն այդպէս չի անուանում:

«Եւ զգեցցին միաբան քահանայքն եւ ելցեն յատեանն խաչիւ եւ աւետարանաւ, խնկօք եւ մոմեղինօք»

«Եւ միաբան քահանայքն կզգեստաւորուն եւ դուրս գան ատեան՝ խաչով եւ Աւետարանով, խնկով եւ մոմերով»¹⁹:

«Նախատօնակ» արարողութիւնը կատարւում է Տէրունի տօների եւ նշանաւոր սուրբերի յիշատակութեան նախօրէին՝ յաւարտ Երեկոյեան ժամերգութեան: Արարողութիւնը սովորաբար սկսւում է «Հայր գթած...»-ից յետոյ, որը Երեկոյեան ժամերգութեան անփոփոխ աղօթքներից է²⁰: Քահանայից դասը, շուրջառներն զգեցուցանելով, խմբւում է

¹⁸ Տօնացոյց, 467. Նկատում ենք, որ այս կարգադրութիւնն ուղղուած է միայն մի խորանին: Իսկ Բուն Բարեկենդանի նախորդ երեկոյի կարգադրութիւնն ուղղորդում է ծածկել «խորանները»: Տէս 3-րդ ծանօթագրութիւնը: Այս տարածայնութիւնը վկայում է, որ Մեծ Պահճի սկզբին եւ աւարտին՝ Բուն բարեկենդանի եւ Մաղկազարդի նախորդ շաբաթ օրերին, խորանի վարագոյրը փակել, յետոյ բացելու ծիսակարգը հարազատ չէ երկու տօների (Բուն Բարեկենդան, Մաղկազարդ) նախորդ շաբաթուայ արարողութիւններին: Հետեւաբար, կարգադրութիւնն, ըստ ամենայնի, տարբերային կամ առանց լուրջ ուղղորդութեան է յաւելուել:

¹⁹ Նոյն տեղում:

²⁰ Ժամակարգութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ յորում պարունակին Սաղմոս Դաւթի, Ժամագիրք Ատենի եւ Տօնացոյց, 2. տպագրութիւն (նմանատպութիւն 1915 թ.

Ատեանում, երգչախումբը որպէս կանոն կատարում է գալիք օրուայ տօնին ընծայուած շարականների կանոնը, մինչդեռ հանդիսագիր հոգեւորականը շրջում է եկեղեցում եւ խնկարկում:

Եթէ յաջորդ օրուայ տօնը սուրբի յիշատակութեան օր է, երգում է նրան ձօնուած մաղթանքը, եւ արարողութիւնն աւարտում է սարկաւազի քարոզով ու արձակման աղօթքով²¹:

«Նախատօնակի» կոչուած է ազդարարելու գալիք օրուայ տօնախմբութեան սկիզբը՝ ներկայացնելով դրա հիմնական դրոյթները, որոնք առաւել յստակօրէն արտայայտուած են տուեալ տօնի շարականներում: Ըստ այսմ վարագոյրի բացման ծէսը Ծաղկազարդի շաբաթ երեկոյեան «Նախատօնակի» մէջ ներառելը փաստացի սահմանում է այդ արարողութեան իմաստը հէնց Ծաղկազարդի խորհրդի ենթատեքստում: Այլ կերպ ասած՝ վարագոյրի բացման նպատակային նշանակութիւնը պէտք է որ սկզբունքօրէն, հնարաւոր լինի պարզել զուտ այն ուղեկցող Ծաղկազարդի շարականն ընթերցելով: Բայց, ցաւօք, փաստերը հեռու են միանշանակ լինելուց կամ՝ այնքան պարզ չեն, որքան թւում է:

Ի սկզբանէ նկատենք, որ մշտապէս «Նախատօնակի» ընթացքին երգուող շարականները յաջորդ օրուայ համար սահմանուած կանոնից են, ինչպէս եւ տուեալ դէպքում է: Սակայն Նախատօնակի շարականները գրեթէ միշտ երգում են Երեկոյեան ժամերգութեան սովորական՝ տուեալ օրուայ «Համբարձի» շարականից յետոյ եւ ի յաւելումն դրա²²: Ղազարու յարութեան Երեկոյեան ժամերգութեան պարագայում «Համբարձի» շարականը միահիւսուել է Ծաղկազարդի Նախատօնակի կանոնին: Պար-

Դ. տպագրութիւնից) (Վաղարշապատ, Տպարան Սրբոյ Կաթողիկէ էջմիածնի, 1999) 403–404, այսուհետեւ՝ ժամագիրք: Անգլերէն թարգմանութիւնը՝ Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցու, ժամագիրք կամ Ընդհանուր աղօթքների կարգը. Առաւօտեան ժամ, Առաջին ժամ, Երեկոյեան ժամ եւ առիթական կարգեր (Է.Վ.Ն.Ս.Թ.ՈՆ., Ի.Լ.Ի.ՈՅՍ. Ouzonian House, 1964), էջ 93, այսուհետ՝ Book of Hours:

²¹ Տես, օրինակ, Աստուածայայտնութեան ութօրեակի՝ ամեն երեկոյ կատարուող Նախատօնակի կարգը. «Եւ զկնի Հայր գթածին՝ միաբան յատեանն ելցեն խաչի եւ Աւետարանաւ, խնկօք եւ մոմեղինօք եւ զառաջիկայ աւուր Հարցն իւր սարօքն ասելով նախատօնակ արասցեն յայս ութն օրս: Քարոզ. Սուրբ զԱստուածածինն: Աղօթք. Ընկալ, Տէր, զաղաչանս: (Եւ Հայր գթածից յետոյ, միասին ատեան են ելնում խաչով եւ ավետարանով, խնկերով եւ մոմերով եւ յաջորդ օրուայ Հարցն իւր շարքով ասելով, նախատօնակ թող անեն այս ութ օրերին: Քարոզ-Սուրբ զԱստուածածինն: Աղօթք-Ընկալ, Տէր, զաղաչանս:.) Տօնացոյց, 454:

²² «Համբարձին» Երեկոյեան ժամերգութեանը ձԻ. Սաղմոսի կապուած շարականն է: ժամագիրք, էջ 401–403: See FINDIKYAN, The Commentary on the Armenian Daily Office, 473, 490–491:

զապէս երկու շարականի փոխարէն երգուում է մէկը: Սա կարող է նշան լինել այն բանի, որ ժամերգութեան կարգն այս կէտում ենթարկուել է փոփոխութեան՝ վարագոյրի բացման համար ծիսական առաւել հանդիսաւոր մթնոլորտ ապահովելու նպատակով²³: Սա, իր հերթին, ցոյց կտար, որ վարագոյրի բացման ծիսակարգը Ղազարու յարութեան Երեկոյեան ժամերգութեան զարգացման ընթացքում առաջացած երկրորդական յաւելում է, եւ հետեւաբար՝ Ծաղկազարդի շարականը կարող է ծիսակարգի հետ ծագումնաբանական կապ չունենալ: Իրականում, Ծաղկազարդի «Որ վերօրհնիս» շարականը որեւէ կերպ չի ակնարկում վարագոյրի բացման մասին եւ չի պարունակում դրա հետ որեւէ ակնյայտ գաղափարական առնչութիւն: Դիտարկենք առաջին մի քանի տները²⁴.

Որ վերօրհնիս յաթոռս քրովբէից, ի վերայ նստիլ յաւանակի հաճեցար. բարեբանեալ որ եկիրդ ի կեցուցանել:

Ուստի եւ մեք զյաղթական օրհնութեանցն զձայն մատուցանեմք Քեզ, Թագաւոր փառաց, ընդ տղայսն օրհնաբանելով. բարեբանեալ որ եկիրդ ի կեցուցանել:

Ովսաննայ ի բարձունս ալէլուիա. բարեբանեալ եկեալ անուամբ Տեառն ալէլուիա՛. եւ օրհնութիւն որ գալոցդ ես անուամբ Տեառն ալէլուիա՛:

Այսօր զանսկիզբն Բանն որ յաթոռ փառաց ընդ Հօր յերկրի երեւեալ տեսաք. քրովբէական ձայնիւն օրհնեսցուք. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Այսօր գոլով ի Բեթանիա Քո ամենազօր հրամանաւ ձայնեցեր Ղազարու, եւ դողացաւ մահ՛. դժոխք պարտեցաւ, ապականութիւն լուծաւ, կենդանարար Քրիստոս, կեցո՛ զմեզ:

Այսօր գոլով ի Բեթանիա զՔո զաշխարհակեցոյց սուրբ զյարութիւնդ յառաջագոյն ծանուցեր անապականաբար կոչմամբ զչորեքօրեայն ի թաղմանէ. կենդանարար Քրիստոս կեցո՛ զմեզ:

Այսօր գոլով ի Բեթանիա եբրայեցւոց մանկունքն սքանչացեալ ասէին. զՄարիամու զեղբայրն ի թաղմանէ յարուցեալ որդւոյն Մարիամու. կենդանարար Քրիստոս, կեցո՛ զմեզ:

²³ Ես հանդիպել եմ միայն մի դէպքի, երբ տուեալ օրուայ նախատօնակ շարականը միաձուլուած է եղել Համբարձի շարականի հետ: Դա Տիրոջ Պայծառակերպութեան տօնի նախօրէին էր: Տօնացոյց, էջ 180: Էջմիածնի Օրացոյցն ընդհանուր առմամբ աւելի շատ նախատօնակներ է յիշատակում քան Տօնացոյցը:

²⁴ Շարական, էջ 263: Ռընուն, հիմնուելով Ծաղկազարդի վրացերէն երգերի հետ ունեցած բովանդակային եւ բառացի նմանութիւնների վրայ, պնդում է, որ այս շարականի ակունքները կարող են լինել չորրորդ դարի վերջի կամ հինգերորդ դարասկզբի Երուսաղէմից: Նոյն հեղինակը «Le Iadgari géorgien et le Saraknoc' arménien», Revue des Études Arméniennes 24 (1993), էջ 89–112:

...

Որ փառաւորում ես Քերովբէների աթոռի վրայ, հանեցիր նստել աւանակի վրայ, բարեբանուածդ, որ եկար ապրեցնելու:

Ուստի մենք եւս յաղթական օրհնութիւնների ձայնն ենք Քեզ մատուցում, փառքի՛ թագաւոր, Քեզ փառաբանող երեխաների հետ միասին, բարեբանուածդ, որ եկար ապրեցնելու:

Օրհնութիւն (Ովսաննա) բարձունքներում, ալելուիա՛: Բարեբանեալ լինի Տիրոջ անունով եկածը, ալելուիա՛: Եւ օրհնութիւն Քեզ, որ կգաս Տիրոջ անունով, ալելուիա՛:

Այսօր անսկիզբ Բանը, որ Հօր հետ փառքի աթոռին յայտնուած տեսանք, ֆերովբէական ձայնով օրհնենք. օրհնեալ է Տիրոջ անունով եկածը:

Այսօր Բերթանիայում Քո ամենագօր հրամանով ձայն տուեցիր Ղազարոսին, եւ մահը դողաց, դժոխքը պարտուեց, ապականութիւնը լուծարուեց. կենդանաւոր Քրիստոս, ապրեցրո՛ւ մեզ:

Այսօր Բերթանիայում, քառօրեայ թաղուածին անապականօրէն կանչելով, նախագուշակեցիր աշխարհին ապրեցնող Քո սուրբ Յարութիւնը. կենդանաւոր Քրիստոս, ապրեցրո՛ւ մեզ:

Այսօր Բերթանիայում հրէաների մանուկներն սփանչացած ասում էին. «Մարիամի եղբայրը թաղումից յարութիւն է առել Մարիամի Որդու միջոցով». կենդանաւոր Քրիստոս, ապրեցրո՛ւ մեզ:

Ինչպէս ցոյց են տալիս վերոբերեալ տները, Հայոց Ծաղկազարդի կանոնը միահիւսուած է Ղազարոսի յարութեան պատմութեան տեսարանները Ծաղկազարդի աւանդական պատումի հետ՝ զուգադրելով Բեթանիան եւ Երուսաղէմը: Թէեւ հնարաւոր է հնարամտօրէն զանազան մեկնաբանական կապեր գտնել Ծաղկազարդի շարականի եւ վարագոյրի բացման ծիսակարգի միջեւ, սակայն առաւել պարզ բացատրութիւնը վստահաբար մնում է նոյնը. շարականը եւ ծիսակարգն իրականում որեւէ ներքին առնչութիւն չունեն: Վարագոյրի բացման արարողութիւնն առանց խիստ խտրութեան պարզապէս աւելացուել է Ղազարոս յարութեան երեկոյեան ժամերգութեան եւ դրա շարականների՝ արդէն իսկ գոյութիւն ունեցող կառույցին: Տօնացոյցի՝ վարագոյրը բացելու վերաբերեալ հակիրճ՝ չորսբառանի հրահանգն անկասկած ուշ շրջանի յաւելման տեսք ունի:

Այդ հրահանգն աւելի շատ հարցերի տեղիք է տալիս: Մենք ենթադրել ենք, թէ վարագոյրը պէտք է փակ մնայ Մեծ Պահքի ողջ ընթացքին, անգամ եթէ որոշակի անորոշութիւն կայ այդ շրջանի սկզբնաւորութեան ճշգրիտ պահի վերաբերեալ: Սակայն Տօնացոյցի կանոնների ուշադիր

ընթերցումը ցոյց է տալիս, որ այս տեսակէտը հազիւ թէ անվիճելի համարուի: Իրականում, Մեծ Պահջի վեցերորդ կիրակիին նախորդող շաբաթ օրուայ հետ համընկնող՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի «Մուտն ի վիրապ» յիշատակութեան օրուայ կապակցութեամբ Տօնացոյցում առկայ է հետեւեալ նշումը.²⁵

Եւ յորում խորանի մատուցանելոց ես զպատարագն, զայն խորանն միայն բացեալ ես. Իսկ զկնի պատարագին դարձեալ փակեալ:

Եւ այն խորանը, որի վրայ Պատարագ եւ մատուցելու, այդ խորանը միայն կբացես, իսկ Պատարագից յետոյ, նորից փակի՛ր:

Հետեւաբար, յիշատակի այդ տօնախմբումը պիտի կատարուի վարագոյրը բաց:

Իսկ ի՞նչ կարող ենք ասել Մեծ Պահջի այն օրերի մասին, երբ Տօնացոյցը հրահանգում է Սուրբ Պատարագ մատուցել: Սա վերաբերում է Պահջի բոլոր կիրակիներին, ինչպէս նաեւ բոլոր այն շաբաթ օրերին, երբ յիշատակում են Հայոց եկեղեցական օրացոյցի ամենայարգի սրբերից մի քանիսը²⁶՝ Սուրբ Թէոդորոս Զօրավարը²⁷, Սուրբ Կիրեղ Երուսաղէմացին²⁸, Սուրբ Յովհաննէս Երուսաղէմացին եւ հայ երկու սուրբ Յովհաննէսները՝ Յովհաննէս Օձնեցին ու Յովհաննէս Որոտնեցին՝ վերջինիս աշակերտ Գրիգոր Տաթեւացու հետ միասին²⁹, ինչպէս նաեւ Սեբաստիոյ Քառասուն Մանկունքը³⁰:

²⁵ Տօնացոյց, 466. Այստեղ խօսուում է մի քանի «խորանների» մասին: Տէս ծանօթ. 4:

²⁶ Արեւելեան կանոնական իրաւունքում առկայ է մի ամբողջական աւանդութիւն, որն առաւել յստակ եւ հաւանաբար առաջին անգամ ձեւակերպուել է Լաւորիկէի ժողովի (Ռ. դարի վերջ – Ե. դարից առաջ) 46, 47 եւ 48 կանոններում: Այս աւանդութիւնը հրահանգում է, որ Մեծ Պահջի ընթացքում Պատարագ մատուցուի միայն շաբաթ եւ կիրակի օրերին, ընդ որում՝ շաբաթ օրերը յատկապէս նախատեսուած են մարտիրոսների յիշատակութեան համար: Վերոյիշեալ կանոնները համապատասխանում են յունարէն տարբերակի 49, 50 եւ 51 կանոններին: ARAM MARDIROSSIAN, Le livre des canons arméniens (Կանոնագիրք Հայոց) de Yovhannēs Awjnec'i: Église, droit et société en Arménie du IVe – au VIIIe siècle, CSCO 606 Subsidia T.116 (Louvain: Peeters, 2004) 556. Կանոնագիրք Հայոց, 2 vols., ՎԱԶԳԵՆ ՅԱԿՈԲԵԱՆ, (Երեւան, 1964, 1971) I: 591–593. Dictionnaire de droit canonique, 7 vols., R. Naz, ed. (Paris, 1957) VI: 338–343.

²⁷ Պահոց առաջին շաբաթուայ շաբաթ օրը: Տօնացոյց, 463:

²⁸ Պահոց երկրորդ շաբաթուայ շաբաթ օրը: Նոյն տեղում, 464:

²⁹ Բոլորը՝ Պահջի երրորդ շաբաթուայ շաբաթ օրը: Նոյն տեղում, 464–465:

³⁰ Պահջի չորրորդ շաբաթուայ շաբաթ օրը: Նոյն տեղում, 465:

Աւելին, փետրուարի 14-ի Տեառնընդառաջի անշարժ տէրունի տօնը երբեմն ընկնում է Մեծ Պահքի քառասնօրեայ շրջանին: Տօնացոյցի՝ այս տօնին նուիրուած երկու ծաւալուն էջերի կանոններում վարագոյրի մասին որեւէ յիշատակում չկայ, թէեւ շարագրանքը մանրակրկիտ սահմանում է ծիսական դրոյթներն այն դէպքերի համար, երբ տօնախմբումը համընկնում է Մեծ Պահոց շրջանի հետ³¹: Նոյնը կարելի է ասել նաեւ ապրիլի 7-ին նշուող Աստուածածնի Աւետման տօնի վերաբերեալ³²: Թէեւ կանոններ են սահմանուած այն տարիների համար, երբ տօնը համընկնում է Աւագ շաբաթուան, Սուրբ Զատիկի կամ Զատիկին յաջորդող կիրակիին, որեւէ յատուկ կարգադրութիւն չկայ այն դէպքի համար, երբ տօնը համընկնում է Մեծ Պահքի քառասնօրեայ շրջանին: Յամենայնդէպս, Տօնացոյցն այս օրերին վերաբերող յօդուածներից եւ ոչ մէկում որեւէ անդրադարձ չի կատարում խորանի վարագոյրին:

Հայոց ծիսակարգի ամենաակնառու արարողութիւններից մէկի՝ Վարագոյրի բացման եւ փակման վերաբերեալ կարեւոր հրահանգների բացակայութիւնը էապէս հակասում է Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի «Տօնացոյցի» կանոնական մանրակրկիտ տեղեկատուութիւն տրամադրելու սկզբունքին, որին կատարելապէս ապաւինել է հայ հոգեւոր դասն աւելի քան երկու հարիւր տարի:

Օրմանեանը գրում է. «Աւետման տօնը ըստ մեզ այժմ հաստատուն կերպով կը կատարուի Ապրիլ 7-ին, ինչ օր որ հանդիպի, նոյն իսկ եթէ Մեծ Պահքի մէջ հանդիպի՝ եկեղեցւոյ սուգի ու ապաշխարութեան ձեւերն իսկ կընդհատուին»³³: Սրանից կարելի է եզրակացնել, որ այդ օրը մատուցուող Պատարագի ժամանակ վարագոյրը պէտք է բացուի, թէեւ Օրմանեանը ոչ մի տեղ չի յստակեցնում, թէ ինչ նկատի ունի իր յիշատակած «ապաշխարութեան ձեւեր (ն)» ասելով: Բացթողումը մանր սայթաքում կամ վրիպում չէ, որ կարող է հետաքրքրել լոկ ծիսագէտներին: Այն իրական երկընտրանքի առջեւ է կանգնեցնում հայ հոգեւորականութեանը, որը ձգտում է հաւատարիմ մնալ իր սուրբ աւանդութեան թէ՛ տառին, թէ՛ ոգուն: Խնդրի լուծման համար ըստ էութեան գոյութիւն ունի երկու տարբերակ՝ կախուած նրանից, թէ ինչպէս է մեկնաբանուում Տօնացոյցի

³¹ Նոյն տեղում, 458–459.

³² Նոյն տեղում, 482–483.

³³ ՕՐՄԱՆԵԱՆ, Ծիսական բառարան, էջ 18:

լուծութիւնը: Ծայրայեղ տառակերութեան սիրահարները ենթադրում են, թէ վարագոյրի վերաբերեալ որեւէ հրահանգի բացակայութիւնը կանխամտածուած է, հետեւաբար երեւոյթն ունի պարտադիր կանոնի ուժ: Ըստ այսմ նրանք պահքի այս տօնական Պատարագները մատուցում են փակ վարագոյրով՝ լիակատար կարեւորութիւն տալով դրա մեկուսացնող գործառոյթին եւ դրանով իսկ ընդգծելով Մեծ Պահքի արմատական ապաշխարողական ընկալումը:

Միւսներն իրաւացիօրէն ջանում են հասկանալ, թէ յատկապէս ի՞նչն է Սուրբ Գրիգորի «Մուտն ի վիրապ» տօնի մէջ այնքան բացառիկ, որն արդարացնում է խորանի վարագոյրի բացման արտառոց հանգամանքը³⁴: Ամենայն յարգանք տածելով Հայաստանի հովանաւոր սրբի հանդէպ՝ հարց է առաջանում, թէ այդ ի՞նչն է Սուրբ Գրիգորի յիշատակութիւնը վերդասում միւս մեծ սուրբերի նմանատիպ ծէսերից եւ, առաւել եւս, Տէրունի երկու տօների պաշտամունքից³⁵:

Չունենալով որեւէ հաւաստի պատասխան՝ վերջիններս ենթադրում են, թէ Սուրբ Գրիգորի տօնին վարագոյրը բացելու հրահանգը չափանիշ պիտի հանդիսանայ նաեւ միւս սուրբերի յիշատակութեան օրերի համար եւ, յատկապէս , Մեծ Պահքի ընթացքում հանդիպող Տէրունի տօների համար: Ուստի նրանք բացում են վարագոյրը պահքի յիշեալ Պատարագների մատուցման ժամանակ՝ ասես լռելեայն շեշտելով Պատարագի միջոցով ընծայուող աստուածային փրկագործական շնորհի գերակայութիւնը եկեղեցական ապաշխարողական կարգապահութեան ցանկացած տարրի նկատմամբ: Այս մօտեցումը, թէեւ ըստ արժանւոյն գնահատելի է, սակայն չի հիմնաւորում Տօնացոյցի տառացի ընթերցմամբ:

³⁴ Փաստօրէն Վիրապում Գրիգորի տասներեքամեայ բանտարկումն իրապէս կարելի է արտացոլել մեղանշական մեղաւոր մարդկութեան հեռացումն Աստծուց, ինչն այնքան ազդեցիկ կերպով խորհրդանշում է փակ վարագոյրով:

³⁵ Լուսաւորչի վիրապ մուտքի յիշատակութեան օրը, վարագոյրը բացելու եւ ժողովրդի առաջ պատարագ մատուցելու հրահանգը՝ վերագրում է ԺԸ. դարի կէսերին Սիմէոն Ա. Երեւանցի կաթողիկոսի ծիսական բարեփոխումներին: Վերջինս իր եկեղեցական սուրբերի վերակազմաւորման գործում ջանում էր հայ սուրբերին աւելի մեծ նշանակութիւն տալ: Մտահոգ լինելով, որ Սուրբ Լուսաւորչի յիշատակի օրը համընկնում է եկեղեցու Մեծ Պահքին, միեւնոյն ժամանակ շկամենալով փոփոխել գործող եւ սիրուած տօնը , Սիմէոնը պատուիրեց, որ այս տօնի առթիւ վարագոյրը բացուի: Տէն Մ. ՕՐՄԱՆԵԱՆ, «Ազգապատում», Բ. հրատ., (Պէյրուս, 1960) III: 3067, յղում՝ ԳԻԻՏ ԱՂԱՆԵԱՆՅ, «Դիւան հայոց պատմութեան», Թիֆլիս, 1782–1802) III, 427: Օրմանեանն այս բարենորոգումը վերագրում է «յարմարութենէ գուրկ»: Փակ վարագոյրով ծէսն անցկացնելու գլխաւոր հակասութիւնը մնում է անլուծելի:

Գոյուլթիւն ունի նաեւ երրորդ՝ ենթադրեալ լուծում. Սփիւռքի ծխական եկեղեցիների ճնշող մեծամասնութիւնում այս տօնական կամ շաբաթօրեայ Պատարագները պարզապէս չեն մատուցուում: Ուստի, Մեծ Պահքի ընթացքում վարագոյրը բացելու հարց առհասարակ չի առաջանում: Յընթացս ժամանակի այս մօտեցումը քարացնում է ստեղծուած իրավիճակը (status quo), ինչն էլ իր հերթին միտում է բնագրի տառի վրայ հիմնուելու ծայրայեղ սկզբունքին:

Այսօր կարելի է հանդիպել վերոնշեալ երկու մեկնաբանութիւնների ջատագովներին հետեւաբար նաեւ պահքի տօնական օրերին Պատարագի մատուցման տարբեր սովորոյթների: Սակայն, ինչպէս պարզուում է, լուծումներից եւ ոչ մէկն անթերի չէ, ոչ իսկ լիովին բաւարար: Մնում է միայն փնտրել աւելի հիմնաւոր բացատրութիւն:

Շարունակութիւնը՝ հաջորդիւ

Թարգմ. անգլերէնից՝
ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԱՆ



ՍՈՎԱՅՍ Գ. ՏԱԹԵԼՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ ՂԱԶԱՐ ԳՐԻՉԸ
(ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵՒԱՆԻ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԴՄ 1278
ՁԵՈԱԳՐԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ 400 ԱՄՅԱԿԻՆ)

Սկիզբը՝ թիվ Ժ., ԺԱ.

Բ. 156ա–277բ ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ՂՈՒԿԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ, ԶՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է ԻԳՆԱՏԻՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, Ի ԽՆԴՐՈՅ ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

-156աբ [Ա. –ՃԱ.] Ցանկ է: Ղուկասու Աւետարան – Վասն յղութեան Եղիսաբեթի Ա.: Վասն յղութեան Մարիամու Բ.: Վասն Ծննդեան Փրկչին Գ. ...

-156բ–7բ [Առաջաբանութիւն նոյն սուրբ վարդապետին Իգնատիոսի, առ սուրբ կաթողիկոսն Հայոց Գրիգորիոս]¹ – Կնուլ զայս իմաստ աստուածային քո ըղձից՝ պարտ համարեցայց, ո՛վ Գրիգորիոս քահանայապետական գլուխ եւ սիւն...

ա. 158ա–163բ ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԱՎԵՏԱՐԱՆԻ, ԱՐԱՐԵԱԼ ԻԳՆԱՏԻՈՍԷ ՎԱՐԴԱՊԵՏԷ, Ի ԽՆԴՐՈՅ <Օ> ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ. Քանզի բազումք յաւժարեցին վերըստին կարգել զպատմութիւնն վասն իրացն հաստատելոց ի մեզ, որպէս աւանդեցին մեզ որք ի սկզբանէ ականատեսք եւ սպասաւորք եղեն բանին – Եւ արդ, զոր ասիցէ բազումս, վասն զի Յովհաննէս յետ սորա գրեաց, որպէս ունի պատմութիւնն տալ զցոյցս, եւ զերկոսեանն որք միայն նախ քան զբազումս ասել օրէն ոչ է... առ մարդկան այսպիսիքս պարսաւեալ լինին²:

բ. 163բ–170բ Վասն յղութան Մարիամու. Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ Աստուծոյ ի քաղաք մի Գալիլեացոց,

¹ Տէն տպ. Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու, արարեալ սուրբ վարդապետին Իգնատիոսի, ի խնդրոյ տեառն Գրիգորիոսի Հայոց կաթողիկոսի: Տպեալ վերստին ի հայրապետութեան Սրբոյ էջմիածնի տեառն տեառն Եփրոմի սրբազան կաթողիկոսի Ամենայն Հայոց...: Յամի Տեառն 1824, Յունիսի 12, ի Հասանփաշայխան (Կոստանդնուպօլիս), էջ 2 (= 6^o): «Առաջաբանութիւն» տպ. թերի:

² Նույն տեղում, էջ 7–32:

որում անուն էր Նազարեթ – Ամիս վեցերորդ զՆիսան կոչէ, եւ ոչ եթէ ի թիվս ամսոց վեցերորդ է, այլ առաջին հանդիպի լինի... իբրեւ զհրեշտակ ոք յերկնից իջեալ³:

ե. 170բ–1ա ե. [Գլուխ բնաբանին Բ.]⁴ Եւ եղեւ ընդ այնոսիկ ել հրաման յԱւգոստոս կայսերէ, աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս – Աստուծոյ նախախնամութեամբն ամենայն ինչ ըստ պատշաճի ամենայն ուրեք վճարեալ լինէր, վասնորոյ յիշեաց զՕգոստոս կայսր սպասաւոր նմա աստուածային ծնընդեանն, ի ձեռն աշխարհագրին...

զ. 171բ–3ա եւ հովիւք էին ի տեղոջ այնմիկ բացօթագք (sic)... – Մեկուսացոյց զանձն ի բազմաց ի ժամանակի Մննդեանն, եւ անյայտեաց, անշքացոյց զանձն: Իսկ հովուացն կամեցաւ սքանչելեաւք յայտնել զինքն... Եւ զի զնոսա արժանացոյց տեսողս լինել անճառ խորհրդոյն:

է. 173աբ եւ իբրեւ լցան աւուրք Ը.(8) թլփատել զնա եւ կոչեցաւ անուն նորա Յիսուս... - Յանձն առնու եւ զայն ըստ օրինացն, զի լցցէ նախ զօրէնս, եւ ապա լուծցէ, զի ոչ էր օրէն նմա հրաժարել յօրինաց անտի, զոր ինքն աւանդեաց հարցն... եւ յետ յղութեանն Յովսէփայ ասաց⁵:

ը. 173բ–8բ եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նոցա, ըստ օրինացն Մովսէսի, ածին զնա յԵրուսաղէմ յանդիման առնել Տեառն – Ո՞ր իցեն աւուրք սրբութեան: Աւուրք սրբութեան այն է, զոր գրեաց Մովսէս. Կին ոք, եթէ սաղմ առիցի եւ ծնանիցէ արու, կացցէ զաւուրս քառասուն... Ուսուցանէր ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենեցունց⁶:

ժա. ժԱ. 178բ-80ա [Գլուխ բնաբանին Գ.]⁷. Ի հնգետասաներրորդի ամի տերութեանն Տիբերեայ կայսէր, ի դատաւորութեանն Հրէաստանի Պիղատոսի Պոնտացուց... – Աստ Ղուկաս անթերի պահէ զժամանակն եւ զկարգ պատմութենէ, իսկ Մատթէոս շառնէ ինչ փոյթ զժամանակացն... եւ այնպէս փրկութեան հանդիպել⁸:

ժբ. 180աբ եկին եւ մաքսաւորք մկրտել ի նմանէ եւ ասեն. Զի՞նչ գործեսցուք – Առաքինութեան նորա համբաւ զամենեսեան զարթոյց գալ առ

³ Նույն տեղում, էջ 32–64:

⁴ Նույն տեղում, էջ 64:

⁵ Նույն տեղում, էջ 76–77:

⁶ Նույն տեղում, էջ 78–100:

⁷ Նույն տեղում, էջ 100:

⁸ Նույն տեղում, էջ 100–105:

նա, ըստ որում եւ ախտացեալք առ բժիշկ... զի օրինակ ստոյգ տացէ ամենայնի, որում պարտ է տեղեակ լինել⁹:

Ժգ. 180բ–1ա Ո՛հր,– ասէ,– Յիսուս ամաց երեսնից սկսեալ, յորոց որպէս եւ կարծէր որդի Յովսէփայ – Սկսեալ ասէ մարմնով ընդ ժամանակաւ մտեալ ի մօրէ, եւ ունի զանժամանակ լինելն ի Հօրէ... սկիզբն առնէ այնուհետեւ վարդապետութեան ուսուցանելոյ¹⁰:

- 181ա-Յբ [Գլուխ բնաբանին Դ.]¹¹. Դարձաւ,– ասէ,– Յիսուս զօրութեամբ Հոգւոյն ի Գալիլիա – Զիւրոյ ոչ զարհուրեցան նոքա, որք փոքր կացուցին զպատիւ Հոգոյն, եւ ահա՛ ամենայն ուրէք յայտ է, զի իբրեւ զնոյն էութիւն ամենուրէք ընդ նմա... եւ անցեալ գնայր ի միջոյ նոցա¹²:

Ժդ. 183բ–4ա Եւ իջանէ անտի ի Կափառնաում, ուսուցանէ իշխանութեամբ, եւ զարմանան ընդ իմաստութիւն նորա – Ի միջոցի աստ է այն, զոր Մատթէոս գրեաց. Տեսեալ զժողովուրդն, եւ իլեառն եւ նստաւ անդ... այլ իշխանութեամբ, որպէս Տէր ծառայի սաստէ¹³:

Ժե. 184ա Գայ այնուհետեւ եւ խոնարհութեամբ ագանել յանարգ տունն Սիմովնի, եւ զջերմամբ տագնապեալ կինն յարուցանէ... կամէին յարակայ տեսողս լինել սքանչելեացն, որպէս եւ լսել, զիմաստուն բանն նորա¹⁴:

-184ա [Գլուխ բնաբանին Ե.]¹⁵. Արդ, ի խոնիլ զնովաւ ժողովրդոցն, եմուտ ի նաւ վասն բազմութեան – Զի ի թիկանց կուսէ ոք մի կացցէ, այլ ամենեքեան հանդէպ երեսաց նորա կայցեն... ոչ աշխարհս բաւական էր տանել, ըստ Յոհաննու¹⁶:

Ժէ. 184ա–5ա Եւ լռեալ,– ասէ,– ի խօսիցն, ասաց Սիմովնի. Խաղացոյ ի խորն...– Աստ Մատթէոս յայսպիսեաց աստի ինչ ոչ գրեաց, այլ սոսկ միայն, զի. Գնայր ընդ եզր ծովուն... գերեմք զամենայն միտս ի հնազանդութիւն Քրիստոսի¹⁷:

⁹ Նույն տեղում, էջ 105–109:

¹⁰ Նույն տեղում, էջ 109–110:

¹¹ Նույն տեղում, էջ 111:

¹² Նույն տեղում, էջ 111–123:

¹³ Նույն տեղում, էջ 123:

¹⁴ Նույն տեղում, էջ 123–124:

¹⁵ Նույն տեղում, էջ 124:

¹⁶ Նույն տեղում, էջ 124–125:

¹⁷ Նույն տեղում, էջ 125–128:

ժը. 185ա – Եւ ի գնալ նոցա ի քաղաք անդր, բորոտին ընդ առաջ եկեալ, անկեալ յերկիր խնդրէ՛, զի սրբեսցի... ըստ աստուածեղէն իմաստութեանն¹⁸:

[ժթ.] 185աբ Արդ, ի խօսելն նորա բերին անդամալոյծ, եւ ընդ ցուոցն կախեալ իջուցին առաջի նորա – Ա՛յս եղեւ, զի սքանչելիքն վկայ եղեալ բանիցն հաւատարիմ... աւանդութիւնս այս, որ ի Քրիստոսէ տուաւ, քան զօրինացն պահպանութիւն¹⁹:

-185բ–7ա [Գլուխ բնաբանին Զ.]²⁰. Ածէ այնուհետեւ զաշակերտսն իւր ի շաբաթու շաբաթս, ընդ արտորայս նոցա – Եւ տայ նոցա նախ ժամանել առնուլ զերախայրիս քահանայիցն, եւ նոքա ոչ իմացան զայս... զի ի ձեռն նշանացն ասացեալքն հաւատարիմ լիցին²¹:

[Իդ.] 187ա Եմուտ ի Կափառնառւմ – Հարիւրապետն, նախ զծերս առաքէ աղաչել, զի տացէ առողջութիւն ախտացելոց մանկանն... եւ ցուցանէ արժանաւոր շնորհին եւ ապա տայ զառողջութիւն ախտացելոյ մանկանն²²:

-187աբ [Գլուխ բնաբանին Է.]. Եւ եղեւ ի վաղիւ անդր երթայր աշակերտօքն ի քաղաքն որում անուն էր Նային – Ոչ կամէր նա ի միում տեղւոյ լինել, զի ոչ եկն նա ի Հօրէ բնակութիւն իւր խնդրել յերկրի, այլ շրջել եւ ուսուցանել... այլ մարդք պարզ եւ առանց նենգութեան²³:

[Իե.] 187բ–8ա Իբրեւ մերձ եղեւ ի դուռն քաղաքին, եւ հա՛ն՛ ելանէր պատանի մեռեալ որդի միամօր իւրոյ, եւ նա էր այրի – Արդ, մերձ եղեալ աստ, պատահէ մեծագոյն սքանչելեաց քան որ ի Կափառնառւմ եղեւ... ըմբռնեալ ի զօրութենէ գործոյն եկեալ պատմէին Յոհաննու ի բանտն²⁴:

[Իզ.] 188ա–91ա Իսկ Յովհաննու Աւետարանին. Յորժամ եկեալ աշակերտացն Յովհաննու, ասեն. Ռաբբի որում վկայեցեր նա մկրտէ, եւ բազումք գան առ նա... երթ հանգիր ի խաղաղութիւն²⁵:

-191ա [Գլուխ բնաբանին Ը.]. Եւ յետ այնորիկ շրջէր ընդ քաղաքսն եւ ընդ գեաւղս արեւարանէր զարքայութիւնն Աստուծոյ եւ ԲԺ. (12)քն ընդ

¹⁸ Նույն տեղում, էջ 128–129:

¹⁹ Նույն տեղում, էջ 129–130:

²⁰ Նույն տեղում, էջ 131:

²¹ Նույն տեղում, էջ 131–137:

²² Նույն տեղում, էջ 138:

²³ Նույն տեղում, էջ 138–139:

²⁴ Նույն տեղում, էջ 139–142:

²⁵ Նույն տեղում, էջ 142–153:

նմա – Աստի յայտ է, զի յիրաւի է զայս օծումն իւրոյ ի կնօջէ աստի, որոշել յերից անտի... Արդ, զայս ընկալեալ, ոչ կամէին բնաւ մեկնել ի նմանէ²⁶:

[ԻԲ.] 191աբ Եւ ի շրջելն նորա եւ յուսուցանելն, ժողովեցան առ նա բազմութիւն մարդկան առ եզր ծովուն Գալիլեացոց, եւ սկսանի խօսել ընդ նոսա առական – Վասն զի եւ այս գրեալ է վասն նորա. Բացից առական զբերան իմ, խօսեցայց զիմաստութիւն... չիք իմ եղբայր, բայց միայն որ առնեն զկամս Հօր իմոյ²⁷:

[ԻԲ.] 191բ–2ա Յետ այնորիկ մտանէ ի նաւ աշակետօքն միայն – Զի կրթեսցէ զնոսա նեղութեամբն, զի մի՛ մոռասցին զգօրութիւն նորա, վասն որոյ հրաման տայ ամբոխել ծովուն... զի որք տեսին զչափ զօրութեան նորա Որդոյ Աստուծոյ գոլ²⁸:

[Լ.] 192ա – Ապա անցեալ առ Գերգեսացիսն, զչար եւ զստամբակ ծառայան, ըմբնէ ի շարագործութեան իւրոց... որ ոչ էին նախանձու շարութեամբ ընդ նմա²⁹:

[Լա.] 192ա Ի նմին ժամու գայ իշխան ժողովրդեանն – Եւ առ վտանգի տրտմութեան անկանի առաջի եւ խնդրէ վասն բժշկութեան ախտացելոյ մանկանն... զնաց տալ զպարգեւս ըստ խնդրողին մտաց³⁰:

[Լբ.] 192աբ – Եւ ի զնալն նորա այն որ ունէր հաւատս կատարեալս, եւ վասն ամօթալի ախտին չհամարձակէր կալ առաջի նորա ի ծածուկ հնարեցաւ գողանալ զպարգեւս... ի հաւատ ամենեցուն յարութեան³¹:

-192բ [Գլուխ բնաբանին Թ.]³² – Կազմէ այնուհետեւ զառաքեալսն, զօրանալ ի վերայ դիւաց, հալածել ի մարդկանէ... գուցէ նքթիցէն ի ճանապարհին³³:

[Լգ.] 192բ Եւ ապա հրամայեաց բազմել նոցա – Եւ եցոյց զհանդէս զօրութեան իւրոյ ի վերայ հացին... զոր փոխեաց գինի ի մէջ թակուկացն³⁴:

²⁶ Նույն տեղում, էջ 154–155:

²⁷ Նույն տեղում, էջ 155–157:

²⁸ Նույն տեղում, էջ 157:

²⁹ Նույն տեղում, էջ 157–158:

³⁰ Նույն տեղում, էջ 158:

³¹ Նույն տեղում, էջ 158–159:

³² Նույն տեղում, էջ 160:

³³ Նույն տեղում, էջ 160–161:

³⁴ Նույն տեղում, էջ 161:

[ԼԵ.] 192բ–3ա – Անցան է // (193ա) անտի ի կողմանս Կեսարու, հարցան է զաշակերտսն ի կալն իւրում յաղօթս... Արդ, այսպէս նախ կրթէ ցնոսա³⁵:

[ԼԳ.] 193աբ – Եւ յութերորդի աւուրն, ընտրէ երիս յառաքելոց անտի, եւ հան է զնոսա... այլ պահեսցեն յիւրում ժամանակին յայտնութեան³⁶:

[ԼԷ.] 193բ–4ա – Ի ժամոյն յայնմիկ այր մի լի անհաւատութեամբ, մեկուսի գտեալ զաշակերտսն, էաժ առ նոսա զորդին իւր դիւահար... զի մի գիտասցեն, որով ունիցին զայս ուսանել³⁷:

[ԼՐ.] 194ա – Ի նմին ժամու սկսան խորհել աշակերտքն, թէ ո՞վ ի նոցան է ունիցին զառաջին պատիւն... եւ եթէ ճշմարտութեամբ Քրիստոս պատմի եւ ընդ այս խնդամ³⁸:

[Խ.] 194ա–5ա – Եւ եղև ի կատարել աւուրց վերանալոյ նորա եւ ինքն զերեսս հաստատեաց երթալ յԵրուսաղէմ... այլ թողին անդէն եւ զնացին զհետ նորա³⁹:

[Խբ.] [Գլուխ բնաբանին ժ.]⁴⁰ 195ա–7բ Յետ այսորիկ երեւեցոյց Տէր եւ այլեւս եւթանասուն երկու, առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր – Չայս նկարեալ եցոյց յօրինակի անդ գալ ժողովրդեանն յԱղիմ... այլ երանելիք են սոքա, որ արժանացան⁴¹:

[Խգ.] 197բ–8բ Եւ հահ՛յարեաւ ոմն օրինական փորձէր զնա եւ ասէր. Վարդապետ զի՞նչ գործեցից, զի զկեանս յաւիտենականս ժառանգեցից – Այս օրինական ի հարցուածոյն եւ ի պատասխանոյն Տեառն ցուցեալ է, զի ոչ է յատելեացն Քրիստոսի... զի գիտութեամբ լիցի հաղորդութիւն սիրոյն: Առ այս ասէ Յիսուս⁴²:

[Խդ.] 198բ–200ա Այր մի իջանէր յԵրուսաղէմէ յԵրիքով եւ անկաւ ի ձեռս աւագակաց... – Ամենայն ուրէք զանձն օրինակ տայ մեզ ամենայն բարեաց, զի զոր ինչ ուսոյց... Երթ արա եւ դու նոյնպէս եւ կեցցես⁴³:

³⁵ Նույն տեղում, էջ 161–163:

³⁶ Նույն տեղում, էջ 163–165:

³⁷ Նույն տեղում, էջ 165–166:

³⁸ Նույն տեղում, էջ 166–167:

³⁹ Նույն տեղում, էջ 167–171:

⁴⁰ Նույն տեղում, էջ 171:

⁴¹ Նույն տեղում, էջ 171–181:

⁴² Նույն տեղում, էջ 181–184:

⁴³ Նույն տեղում, էջ 184–189:

[խե.] 200աբ Եւ եղեւ ի գնալն նոցա եւ ինքն եմուտ ի գիւղ մի, եւ կին ոմն անուն Մարթայ, ըկալաւ զնա ի տան իւրում – Զարմանք են անշափ խոնարհութեան, յորպիսի տուն մտանէր...որ ոչ երբէք պակասեսցի ի նմանէ: Այս է բարձցին⁴⁴:

[խգ.] 200բ [Գլուխ բնաբանին ժԱ.]⁴⁵ Եւ եղեւ ի տեղուոյ ուրեք կալ յաղօթս – Որպէս ամենայն առաքինութեան զանձն օրինակեցոյց նոյնպէս եւ աղօթելոյն, որ անկարօտն էր... զի հաւատարիմ լսողացն ասացեալքն լիցին⁴⁶:

[խէ.] 200բ–2ա Եւ ասէ. Ո՞վ իցէ ի ձենջ որոյ իցէ բարեկամ, եւ երթայցէ առ նա ի մէջ գիշերի... - Այս առակ եւ Դատաւորին հաւասարապէս խրատեն մեզ... Իսկ զերրորդն ժամանակն ի պատահումնս իրացն⁴⁷:

[խը.] 202աբ Յետ այսորիկ մատուցին դիւահար, զոր համրացոյց դենն, զի մի՛ տացէ հաւատս եւ առցէ փրկութիւն... կարի անբերելի չար եղեւ նոցա, քան զամենայն զառաջինսն զայն⁴⁸:

[խթ.] 202բ–3ա Ի խօսելն զայս կին ոմն հիացեալ ընդ այն, ոչ կարացեալ բերել յինքն զլուծութիւն, աղաղակեաց ի ձայն մեծ եւ ասէ. Երանի որովայնին, որ կրեացն զքեզ, եւ ստեանցն, որ դիեցուցին զքեզ – Ետես կինս զայս զՏէրն մեր, զի ամենայնիւ գեղեցիկ եւ զարմանալի էր տեսիլ նորա... որք կամեցին մտանել ընդ այս դուռն երանութեան⁴⁹:

[ժ.] 203աբ Եւ ի խօսելն նորա զայս, սկսան կուտել ամբոխն ի վերայ նորա – Եւ նա դարձուցանէ զբանն առ այնոսիկ, որ նշանն յերկնից խնդրէին տեսանել... զի մի ազահութեամբ խաւարեալ լիցի⁵⁰:

[ժա.] 203բ Եւ յաղաչելն փարիսեցւոյն հաւանի մտանել ի տուն նորա – Սակայն ոչ պահէ զպատիւս ծերոցն նոցա ստեպ կալ լուանալոյ ... մարմնոյ աղտ վնասել ինչ զձեզ ոչ կարէ⁵¹:

[ժբ.] 203բ - Ապա սկսանի պախարակել ստոյգ աղտեղութիւն նոցա, յորմէ կարի վնասին ոգիքն... խաբեութեամբ ունին զմերձաւորս⁵²:

⁴⁴ Նույն տեղում, էջ 190–192:

⁴⁵ Նույն տեղում, էջ 192:

⁴⁶ Նույն տեղում, էջ 192–193:

⁴⁷ Նույն տեղում, էջ 193–199:

⁴⁸ Նույն տեղում, էջ 199–201:

⁴⁹ Նույն տեղում, էջ 201–202:

⁵⁰ Նույն տեղում, էջ 202–204:

⁵¹ Նույն տեղում, էջ 204:

⁵² Նույն տեղում, էջ 204–205:

[ծգ.] 203բ–4ա – Առ այս օրինական ոմն սուտակասպաս ասէ. Վարդապետ զայդի յանդիմանութիւն մե՞զ ասացեր... խտացեալ, մինչեւ կոխել զմիմեանս⁵³:

- 204աբ [Գլուխ բնաբանին ժԲ.]⁵⁴ Իսկ Յիսուս որով բանիւ ըստգտանէր զփարիսեցիսն, նովին սկսաւ խրատել զաշակերտսն, զի մի նմանեացին նոցա... զի նա տաց պատասխանի փոխանակ նոցա⁵⁵:

[ծդ.] 204բ–6բ Ասաց ոմն իժողովրդենէն. Վարդապետ ասա ցեղբայր իմ բաժանել ընդ իս զժառանգութիւն – Որպէս օրէն է զրկելոց առ արսարդարս եւ ուղիղս դիմել, զի իրաւունս գտցեն... ապա նա եւս բարձրացուցանէ զմիտս լսողացն⁵⁶:

[ծե.] 206բ–8ա Մի երկնչիր հոտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն – Զհօտ փոքրիկն, ոմանք ասացին վասն մարդկան ազգի... առաւել եւս պահանջեսցեն ի նմանէ⁵⁷:

[ծզ.] 208ա–9բ Հուր եկի արկանել յերկիր, եւ զինչ կամիմ, թէ արդեն իսկ բորբոքէր – Զգօրութիւն Աւետարանին պէս պէս օրինակօք նմանեցուցանէ, որպէս հնար է զօրինակն դնել... ունի եւ արդարացուցանել զայս խնդիր կրկնապատիկ մտօք⁵⁸:

[ծէ.] 209բ–10բ [Գլուխ բնաբանին ժԳ.]⁵⁹ Եկին առ նա ոմանք ի նմին ժամանակի եւ պամեցին նմա վասն գալիլեացուցն... – Յարմար պատահեաց եւ այս համբաւ այսոցիկ բանից, զի ո՛չ գալիլեացիք էին պատճառ արոյն... հատանի եւ ի հուր արկանի⁶⁰:

[ծը.] 210բ–2ա Եւ աստ ասէ ցայգեգործն, այս երեք ամք են, յորմէ հետէ զամ խնդրել պտուղ եւ ոչ գտանեմք... – Այգոյ առակաւ յորժամ առնու ասել ազգին ամենայնի... ճանաչել զմեր բարեսոսհմութիւն⁶¹:

[ծթ.] 212աբ Յասեաւ ժողովրդապետն, թէ. Ընդէ՞ր ի շաբաթու բժշկեաց Յիսուս... զի պարտ էր, զի յԵրուսաղէմ կատարեսցի⁶²:

⁵³ Նույն տեղում, էջ 205–206:

⁵⁴ Նույն տեղում, էջ 206:

⁵⁵ Նույն տեղում, էջ 206–208:

⁵⁶ Նույն տեղում, էջ 208–217:

⁵⁷ Նույն տեղում, էջ 217–222:

⁵⁸ Նույն տեղում, էջ 222–228:

⁵⁹ Նույն տեղում, էջ 229:

⁶⁰ Նույն տեղում, էջ 229–232:

⁶¹ Նույն տեղում, էջ 232–237:

⁶² Նույն տեղում, էջ 237–240:

[կ.] 212բ–4բ Ասէ ոմն ցնա, թէ. //(213ա) Սակա՛ւք իցեն, որ ապրելոց իցեն, զի ի նմանէ լուաւ նեղ լինել զդուռն... այլ այնպէս անձամբ զանձինս ատարացուցին ի շնորհացն⁶³:

[կա.] 214բ–5բ Ի նմին աւուր մատեան ոմանք փարիսեցիք եւ ասեն ցնա. Ել եւ գնա աստի, զի Հերովդէս կամի սպանանել զքեզ... իսկ Ղուկաս, որ անդէն մերձ էր⁶⁴:

[կբ.] 215բ–6ա [Գլուխ բնաբանին ԺԴ.]⁶⁵ Եւ եղեւ ի մտանելն նորա ի տուն ուրումն իշխանացն փարիսեցւոցն... ապա դարձուցանէ զբանն խրատու ի հեշտալիսն ասէ⁶⁶:

[կգ.] 216աբ Երթ իշիր եւ բազմեսչիր յետինս տեղին, եւ այն որ կոչեացն զքեզ ասիցէ. Բարեկամ, ի վեր մատիր... զի զսնոտիս խնդրեցին եւ աստուածայնոցն ոչ բաղձացան⁶⁷:

[կդ.] 216բ–7ա Տայ պատշաճ խրատ եւ այնմ որ առնիցէ ընդունելութիւն մի բնաւ կոչել ի փարթամաց... վասն այնորիկ զպարզ ասացեալն առակաւ յարգէ⁶⁸:

[կե.] 217ա–8բ Ասէ. Ո՞րք կամիցի շինել աշտարակ եւ ոչ նախ զծախսն համարիցի բաւական... որ ոչ ընտրեցին կալ անարատութեամբ յաշակերտութիւնս յայս⁶⁹:

[կզ.] 218բ–9բ [Գլուխ բնաբանին ԺԵ.]⁷⁰ - Մաքսաւորք եւ մեղաւորք կացեալ առ նմա վայելեսցեն յառատ պարգեւս նորա... եւ զհօրն բարեմտութիւն եւ զանյիշաչար լինել⁷¹:

[կէ.] 219բ–27ա Առն միոջ էին երկու որդիք, ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն... – Դէմք առակիս առ ամենակալ բնութիւն Արարչին Աստուծոյ հայի... այսպէս եւ ի յառնելն եւ ի գտանելն ուրախութիւն⁷²:

[կը.] 227ա–37ա [Գլուխ բնաբանին ԺԶ.]⁷³ – Եւ ասէ առ աշակերտսն. Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես: Եւ եղեւ զնմանէ ամբաստանու-

⁶³ Նույն տեղում, էջ 240–247:

⁶⁴ Նույն տեղում, էջ 247–250:

⁶⁵ Նույն տեղում, էջ 251:

⁶⁶ Նույն տեղում, էջ 251–253:

⁶⁷ Նույն տեղում, էջ 253–255:

⁶⁸ Նույն տեղում, էջ 255–257:

⁶⁹ Նույն տեղում, էջ 257–263:

⁷⁰ Նույն տեղում, էջ 263:

⁷¹ Նույն տեղում, էջ 263–267:

⁷² Նույն տեղում, էջ 267–297:

⁷³ Նույն տեղում, էջ 297:

թիւն... վայրենամիտ եղեն եւ յայսպիսի անհաւատութիւն ձգեցան: Վասն որոյ ի նոյն յարեալ ասաց⁷⁴:

-237ա-41ա [Գլուխ բնաբանին Ժէ.]⁷⁵ Ոչ է մարթ չգալ գայթակղութեանց, բայց վա՛յ այնմիկ յորոյ ձեռն... - Արդ, այսոքիկ բովբ քննութեան են, զի զտեալ փորձքն յայտնեսցին եւ վատթարքն յանդիմանեսցին... յայնժամ առանց հեղգութեան յաղօթս կալ եւ մի ձանձրանալ⁷⁶:

-241ա-4բ [Գլուխ բնաբանին ԺԸ.]⁷⁷ Դատաւոր մի,- ասէ,- էր ի քաղաքի ուրեմն, յԱստուծոյ ոչ երկնչէր... - Դէմք առակիս ոմանց թուեցաւ, թէ վասն Աստուծոյ ասացեալ է... յօրինակ ներքին մարդոյն լուսաւորութեան⁷⁸:

- 244բ-50ա [Գլուխ բնաբանին ԺԹ.]⁷⁹ - Զայս նշան արարեալ, մտեալ շրջի ընդ Երիբով, խոնարհութեամբ ամենայն ուրեք մտանէ... զի ծանիցեն զտանջողական զօրութիւն նորա, եւ մի վստահասցին իբարեգործականն⁸⁰:

- 250ա-1ա [Գլուխ բնաբանին Ի.]⁸¹ - Մտեալ դարձեալ ի տաճարի անդ ուսուցանէր, իսկ փարիսեցիքն, որ յառաջնում աւուրն տեսին... փոքր վրէժս լուծցեն, քան զայնս, որ բարէօքն վարին ի շար անդր⁸²:

-251ա-5ա [Գլուխ բնաբանին ԻԱ.]⁸³ - Ետես եւ զայնոսիկ, որք ի ստացուածոց իւրեանց նուէրս մատուցանէին Աստուծոյ... զայս օրինակ պարտ էր պահել կատարելոցս մեզ զանկատարիցն այնոցիկ⁸⁴:

-255ա-60բ [Գլուխ բնաբանին ԻԲ.]⁸⁵ - Եհաս տօն Բաղարջակերացն, յորում սահմանեցաւ լրումն օրինակացն հաստատեալ անտի եւ այսր նորոյ աւանդութեանս խորհուրդ... եւ թափեցին զթոյնս դառնութեան իւրեանց, զոր ի բազում ժամանակս երկնչին⁸⁶:

⁷⁴ Նույն տեղում, էջ 297-334:

⁷⁵ Նույն տեղում, էջ 334:

⁷⁶ Նույն տեղում, էջ 334-350:

⁷⁷ Նույն տեղում, էջ 350:

⁷⁸ Նույն տեղում, էջ 350-363:

⁷⁹ Նույն տեղում, էջ 364:

⁸⁰ Նույն տեղում, էջ 364-384:

⁸¹ Նույն տեղում, էջ 385:

⁸² Նույն տեղում, էջ 385-389:

⁸³ Նույն տեղում, էջ 389:

⁸⁴ Նույն տեղում, էջ 389-405:

⁸⁵ Նույն տեղում, էջ 405:

⁸⁶ Նույն տեղում, էջ 405-427:

- 260բ–5բ [Գլուխ բնաբանին ԻԳ.]⁸⁷ – Իսկ ի վաղորդեայն աւուրն առեալ ածին ի վանացն Կայիափայ յապարանս դատաւորին... թէպէտեւ ջերմէին ի տանել նմա զսպասաւորութիւն մենայն ուրեք⁸⁸:

- 265բ–77բ [Գլուխ բնաբանին ԻԴ.]⁸⁹ – Իսկ յանցանել շաբաթուն ի վաղորդեայն աւուրն միաշաբաթուն փութացան զալ ի գերեզմանն... սահմանեցաք զբանս ի Հայր, եւ յՈրդի, եւ ի Սուրբ Հոգին, որում մենայն Փառք եւ զաւրութիւն յամենայն արարածոց, այժմ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն եւ եղիցի⁹⁰ (277աբ Յիշատակարան նախագաղափար օրինակի, որ ներառված է տպ. էջ 493–494: «Որոց եւ քեզ մաղթեմ հաղորդս լինել անձառելեացն...»):

277բ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

277բ (Ա) Փառք եռահիւսակ անձանց...: Գրեցաւ գիրքս այս եւ աստուածային տառս եւ հոգոյ եւ մարմնոյ փրկութիւնս ի թուականութեանս Հայոց Մեծաց ՌՀԴ. (1625), ի վիճակս Ստաթէի ի յերկիրս Ահանանու ի գեաւդս Խոտանան ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, ի խնդրոյ Մովսէս քաջ ըրբունապետին լցեալ շնորհիւ իմաստութեամբ եւ առաւելեալ ամենայն գործովք առաքինութեամբ: Արդ, աղաչեմ զամենեսեան զհարս եւ զեղբարս, զվարդապետս եւ զքահանայս եւ մակացուս իմաստութեանց, յորժամ ընթեռնուք, կամ արինակէք՝ զսրբասնունդ եւ պատուական Մովսէս ըրբունապետն եւ զծնողսն իւր յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր: Ընդ նմին եւ զնուաղեալ յիմաստութենէ եւ զպակասեալս ի գործոց բարեաց զտարակուսեալս՝ Ղազար քերող գրոյս եւ զծնողսն իմ յիշեսջիք ի Տէր եւ դուք յիշեալ լիջիք ի Տեառնէ մերմէ, որում տացուք գոհութիւն եւ փառք այժմ եւ անգրաւ յաւիտենիւ. ամէն⁹¹:

Զգրված՝ 278աբ:

⁸⁷ Նույն տեղում, էջ 427:

⁸⁸ Նույն տեղում, էջ 427–447:

⁸⁹ Նույն տեղում, էջ 447:

⁹⁰ Նույն տեղում, էջ 447–494:

⁹¹ Սույն հիշատակարանի ընթերցումից պարզվում է, որ Ղազար գրիչը, երբ գրի է առել Իգնատիոս վարդապետի Ղուկասի Ավետարանի մեկնությունը, իր ձեռքի տակ ունեցել է 1621 թվականի Բյուզանդիայում գրված Ժողովածուն, ստացող՝ հաշատուր Կեսարացի, որը Մովսէս Տաթևացու աշակերտներից մեկն էր (տե՛ս տպ. ՄԱՅՐ ՅՈՒՅԱԿ, հտ. Դ., էջ 734–736):

Գ. 279ա–435ա [ՆԱՆԱՅԻ ԱՍՈՐԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ՅՈՎ-
ՀԱՆՆՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ]⁹²

-279ա–82ա Առաջաբանութիւն Մեկնութեան Յոհաննու Աւետարա-
նին – Ոչինչ ըղձալի գոլ քան զսիրելեացն լցուցան[ե]լ զիղձս բաղձա-
նաց... սկիզբն Բանին ասելով⁹³:

[ա. Ա.] 282ա–6բ Երանելոյն Նանայի Ասորոց վարդապետի Մեկնու-
թեան Յովհաննու սրբոյ Աւետարանին. Ի սկզբանէ էր Բանն – Պարտ է մեզ
յի սկզբան ճառիս նկատել զառաւելութիւն իմաստութեան աւետարան-
չիս... եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն⁹⁴:

[բ.] 286բ–91բ ԶԱստուած ոչ ոք երբէք ետես, բայց Միածին, որ ի ծոց Հաւր,
նա պատմեաց մեզ – Ոմանց այսպէս թուի, ոչ ըստ կարգի նախասացելոցն դա-
սիլ այսմ բանի... թէպէտ եւս յետոյ իմացեալ եղեւ այս ամենայն Նաթանայէլի⁹⁵:

- [Բ.] 291բ–3բ Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի Կանա Գալիլեաց-
ւոց... – Զայսոսիկ յառաջագոյն կանխեալ //(292ա) պատմեցաք, ոչ ըստ
կարգի շարադասիլ երրորդ օր, այլ հինգերորդ... եւ պատիւ, այժմ եւ միշտ
յաւիտեանս. ամէն⁹⁶:

- [Գ.] 293բ–6ա Յետ այսորիկ էջ Յիսուս ի Կափանաւում... - Վասն զի յետ
մկրտելոյն ի Յովհաննէ եւ ստանալոյն զաշակերտան, այնուհետեւ ամենայն
ուրեք վարդապետութիւնն... զսիրտս եւ զերիկամունս իմացեալ լինէր⁹⁷:

- [Գ.] 296ա–305բ Եւ այր ոմն ի փարիսեցոցն Նիկողեմոս անուն նորա
իշխան հրէիցն... – Յերուսաղէմ ցուցանէ զգալն: Սա նա է, որ այնքան
զմուռս եւ հալուէ ի ժամանակի թաղմանն... այսպէս եւ անհաւատիցն յա-
ւիտենական տանջանքն պատրաստին⁹⁸:

[դ. Դ.] 305բ–14ա Իսկ իբրեւ գիտաց Յիսուս, եթէ փարիսեցիքն, եթէ
Յիսուս բազում յաշակերտս առ[ն]է... - Զայս զչարախօսացն հրէիցն
ասաց, որք հանապազ ջանային բանս ինչ... լինէր տեսողացն աստուա-
ծային իմն զաւրութեանն այնորիկ հրաշագործութիւնք⁹⁹:

⁹² Թանգարան հայկական Հին եւ Նոր դպրութեանց է., Նանայի Ասորոց վարդապետի Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին, Վենետիկ, 1920, տիտղոսաթերթ:

⁹³ Նույն տեղում, էջ 1–13:

⁹⁴ Նույն տեղում, էջ 15–27:

⁹⁵ Նույն տեղում, էջ 28–40:

⁹⁶ Նույն տեղում, էջ 41–45:

⁹⁷ Նույն տեղում, էջ 46–51:

⁹⁸ Նույն տեղում, էջ 51–76:

⁹⁹ Նույն տեղում, էջ 76–99:

-[Ե.] 314ա–23բ Յետ այսորիկ տանն էր հրէիցն եւ ել Յիսուս յԵրուսաղէմ ի Պրոպատիկէ աւագանին... – Եւ ո՞ր իցէ տաննն այն... սամարացի կոչէք զիս որդի Յովսէփայ, այլեւ դիւահար¹⁰⁰:

-[Զ.] 323բ–35ա Յետ այսորիկ գնաց Յիսուս յայնկոյս ծովուն Գալիլէացոց Տիբերայ... - Եւ վասն էր աւետարանիչս պատմեաց զայս... եւ մինդ ի ձէնչ սատանայ է, եւ Սիմոնեան Յուդայ Սկարիովտացի է¹⁰¹:

-[է.] 335ա–41բ Եւ յետ այսորիկ շրջէր Յիսուս ի Գալիլէա... – Եւ մի՛ դու այնպէս ինչ խիտասցիս, եթէ վասն երկիւղիւ հրէիցն... ջանային կարկատել եւ հնարել, վասն որոյ խորհէին ի նա ձեռս արկանել¹⁰²:

-[Ը. 12] 341բ–50ա Դարձեալ խաւսեցաւ ընդ նոսա Յիսուս եւ ասէ. Ես եմ լոյս աշխարհի... – Եւ զինչ ի դէպ իցէ այս առ նոցա ասացեալն... այլ ոչ յակամայ մատնել ի ձեռս նոցա¹⁰³:

-[Թ.] 350ա–7ա Եւ մինչդեռ անցանէր ետես այր մի կոյր ի ծնէ – Յոյժ զշարեցան հրէայքն ընդ Փրկչին, յորժամ լուան ի նմանէ, թէ. Յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես... զի ոչ էին դառնալոց եւ պիտանիք լինելոց¹⁰⁴:

-[Ժ.] 350ա–67ա Ամէն ամէն ասեմ ձեզ, որ ոչ մտանէ ընդ դուռն ի գաւիթ ոչխարացն... – Եւ վասն զի ետ պատասխանի փարիսեցոցն, վասն որոյ ընդ կուրին վիճէին... յորոց շահաւոր յիշատակաց զրկեաց զտարամերժեալ անձն իմ ի հանդերձեալ կենացն¹⁰⁵:

(367ա ձեռ. չիք տպ.-ի «Այլեւ Սմբատ Բագրատունի եւ Մարեմ Սիւնեաց տիկին...») վերջաբանը:

Գրիչ Ղազարն այստեղ, քանի որ սկսվելու է Ղազարու հարուժյան գլուխը, թողնում է հիշատակարան՝

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

«Աղաչեմ եւ ես՝ եղկելիս յիշել աղօթիւք զմեղեպարտ գծողս յիշեցէք, յիշեալ լիցիք ի Քրիստոսէ»):

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 99–124:

¹⁰¹ Նույն տեղում, էջ 124–157:

¹⁰² Նույն տեղում, էջ 158–177:

¹⁰³ Նույն տեղում, էջ 177–200:

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 200–219:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 219–246:

[նՈՐԻՆ ՍՐԲՈՅՆ ՆԱՆԱՅԻ ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ.]¹⁰⁶

-[ԺԱ.] 367ա-74բ Երանելոյն Նանայի Հատած երկրորդ Յովհաննու աւետարանչին: Էր հիւանդ Ղազարոս ի Բեթանիայ, ի գեղջէ Մարիամու... - Սովորութիւն իսկ է սրբոց, որ բուռն հարեալ են զնախ եղելոց իրաց... վասն որոյ ամենայն ուրեք զայն եւեթ տային պատասխանի ժողովրդեանն¹⁰⁷:

-[ԺԲ.] 374բ-86ա Իսկ Յիսուս վեց աւուրք յառաջ քան զԶատիկն եկն ի Բեթանիայ... - Եւ վասն զի հանդերձեալ էր Կենարարն գալ ի խաչն, որ փրկելոց էր ազգս մարդկան... ընդ որում Հօր ամենակալի եւ Հոգոյ նորոգողի, Փառք պատիւ եւ իշխանութիւն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յօրտե[նից]¹⁰⁸:

-[ԺԳ.] 386ա-90ա Յառաջագոյն քան զտաւանն Զատիկին գիտաց Յիսուս, թէ հասեալ է ժամ նորա... - Ոչ զայն ինչ ասաց աւետարանիչս գիտել աստանաւր զոր յառաջ ոչ գիտէր... յայտ լիցի անվրէպ կանխագիտութիւնքն զլինելոցն¹⁰⁹:

-[Ղ. ԺԴ.] 390ա-6բ Մի խոռվեսցին սիրտք ձեր, այլ հաւատացէք յԱստուած... - Քանզի յորժամ Պետր/(390բ)ոսի՛, որ զխաւորագոյն էր ի նոսա եւ այնքան սիրէր զվարդապետն... Աւն արի[ք] զնասցուք աստի: Այլուր. Եւ որպէս չոգան,- ասէ¹¹⁰:

-[ԺԵ.] 396բ-400բ Ես եմ որթն ճշմարիտ եւ Հայր իմ մշակ է... - Քանզի յորժամ մխիթարեաց զնոսա եւ քաջալերեաց վասն շարչարանացն իւր եւ մահուն... ի միտ առնուցուք, զոր ընդունելոց էք ի յաւուրն հատուցման¹¹¹:

-[ԺԶ.] 400բ-6ա Զայս խօսեցայց ընդ ձեզ, զի մի՛ գայթաղեաջիք - վասն այնորիկ ասէ. Յառաջագոյն ծանուցի ձեզ զլինելոցն, զի յորժամ հասանիցէ... այս է, զոր աւանդեցի ձեզ զխաղաղութիւն զիմ, զոր թողում ձեզ¹¹²:

-[ԺԷ.] 406ա-11բ Զայս իբրեւ ասաց Յիսուս, ամբարձ զաչս իւր յերկինս եւ ասէ - Եւ զի՛նչ արդեւք պէտք էին համբառնալ յերկինս զաչս, որ

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 247:

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 247-269:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 269-300:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 300-313:

¹¹⁰ Նույն տեղում, էջ 313-330:

¹¹¹ Նույն տեղում, էջ 331-342:

¹¹² Նույն տեղում, էջ 343-359:

հաւասարն էր բնութեամբ... յետ այնորիկ սկիզբն առնէ զչարչարանացն եւ զխաչէն¹¹³:

-[ԺԸ.] 411բ–6ա Զայս,– ասէ,– իբրեւ ասաց Յիսուս, ել աշակետօքն հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրոնի... – Աքանչացիր ընդ իմաստութիւն աւետարանչիս, վասն էր արդեւք զայն պատմէ, եթէ գիտէր եւ Յուդա գտեղին... այլ ոչ աւգտեաց նոցա մոլութեանն եւ կատաղութեանն¹¹⁴:

-[ԺԹ.] 416ա–24ա Յայնժամ առ Պիղատոս զՅիսուս եւ գան ե//(416բ) հար – Քանզի յորժամ ետես, եթէ ոչինչ աւգտեցաւ որով հնար էր առեալ զնա գան հհար... Վասն որոյ եւ զկանայս աւետաւորս փոխանակ Եւայա՝ կանացն ցուցանեն տրտմականացն¹¹⁵: (421բ զետեղված է «Յորդորակը»։ Ի տարբերություն տպ.-ի, որն ունի հետեւյալ սկզբնատողը. «Յորժամ զանազան թատերք մոլութեանցն ի փողոցս քաղաքացն երեւութանան...»¹¹⁶, ձեռագրում «թատերք» բառի փոխարեն գործածված է «դստերք» արտահայտությունը, որը բոլորովին այլ ենթատեւք է տալիս նյութին։ Հավանական ենք համարում նախագաղափար օրինակում, որից օգտվել է Ղազար գրիչը, եղել է այս վրիպումը)։

-[Ի.] 424ա–30բ Եւ ի միայշաբաթոջն Մարիամ Մակղաղենացի գայ առաւօտուն ընդ արշալոյսն... - Այս վերստին գո[=ա]լ իմանի Մարիամայ ի գերեզմանն, յորժամ ետես զհրեշտակն ի թաւալեցուցանել... եթէ Որդի Աստուծոյ է զանգրաւ եւ զանվաճանն ընդունին զկեանսն հաւատով յԱնուն նորա¹¹⁷:

-[ԻԱ.] 430բ–4ա Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յիսուս աշակերտաց իւրոց... Զինչ արդեւք թերեւս ցուցանէ այն, թէ. Դարձեալ յայտնեաց զանձն իւր... մանաւանդ պատմագրոցն բերել պատմութիւն անչափութեան իրացն եղելոց¹¹⁸:

- 434ա–5ա [Յորդորակ]¹¹⁹ – Յորժամ ձմեռական ժամանակին անվայելուչ դժնդակութիւնքն ժամանեն... արժանաւորեսցուք վերառաքել

¹¹³ Նույն տեղում, էջ 359–373:

¹¹⁴ Նույն տեղում, էջ 373–387:

¹¹⁵ Նույն տեղում, էջ 388–410:

¹¹⁶ Նույն տեղում, էջ 403:

¹¹⁷ Նույն տեղում, էջ 410–427:

¹¹⁸ Նույն տեղում, էջ 427–440:

¹¹⁹ Նույն տեղում, էջ 440–441:

փառս Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ (Իգնատիոս Մակվեցի)

435ա (բոլորգիր) Փանօք... Արդ, գրեցաւ Մեկնիչ Գ. (Յ) գլուխ Աւետարանաց հրամանաւ Մովսէս կաթողիկոսի, յԱթոռն գերագահ Սուրբ էջմիածնի, որ եղեւ կրկին լուսաւորիչ ազիս եւ կարգիս մերոյ: Եւ նորոգեաց զՍուրբ Աթոռն էջմիածին: Եւ զայս գիրքս գրել ետ եւ եղ յիշատակ ի Սուրբ Աթոռն, զի ելցէ անտի ուրէք եւ մի ոք իւրացուցէ զյիշատակս հօրն սրբոյ, այլ կացցէ եւ մնասցէ յաւիտեան: Ի թվականիս մերում ՌԼԳ.¹²⁰ (ՏԻԸ.) ամին, ձեռամբ Իսահակայ վարդապետին:

435ա (նոտրգիր) Արդ, ի թվականութեանս մերում ՌՃԼԳ (1684) ամին զաստուածախօս տառս այս, որ գերեալ եղեւ ի Մարաց ազգէ, վերստին գնեալ ազատեաց բարեպաշտօն եւ աստուածասէր քահանայն՝ տէր Աւետիսն եւ ձրի եւ թարց փոխարինի շնորհեաց Սուրբ Աթոռոյն էջմիածնի, որ էր սեփհական նոյն Հայրապետարանին, ի բարերջանիկ հօրէն՝ ի Մովսէս կաթողիկոսէն գծագրել տուեալ եւ եղեալ յիշատակ ի Դուռն Սուրբ էջմիածնի: Այժմ եւս, կրկին անգամ, հաստատեցաւ ձեռամբ Իսահակ վարդապետի, որ էր վերատեսուչ Սուրբ Ուխտին Թաղէոսի առաքելոյն: Որք մի անգամ վայելէք ի հոգեւոր բուրաստանէս, յիշեսջիք սրտի մտօք ի բարին զՀերէմէրցի տէր Աւետիսն եւ զորդին իւր՝ զտէր Կիրակոսն, եւ զոչիս Մուրատն, եւ զՎարդիսաթոն՝ կենակից տէր Աւետիսին եւ զեղբայր նորա՝ զՅովաննէսն եւ զծնօղս նորա, զհայրն՝ Աւագն եւ զմայր նորա՝ Սառայն եւ զաւագ եղբայր նորա՝ զՄարգարէն եւ զայլ ամենայն արեան մերձաւորս նորա: Այլեւ զփոքր որդի նորա՝ զՅովասափն եւ զկնի նորա՝ զԽանուճն եւ զամենայն ազգականս նոցա: Եւ որք յիշէք յիշեալ լիջիք ի Քրիստոս:

Մի ոք այսուհետեւ յանդգնեսցի հանել ի դրանէ Սուրբ էջմիածնի այլեւայլ պատճառաւ, զի մի պատժապարտ լիցի սուրբ հօրն՝ Մովսէս հոգեւոր տիրին, որ այնպէս բաղձանօք ընծայեալ է Սուրբ էջմիածնի սեփ-

¹²⁰ Կարծում ենք՝ Իսահակ վարդապետի ձեռքով գրված հիշատակարանում թվականութեան մեջ, պարզապես, բաց է թողնված «Ճ.» տառը, այսրքն՝ հարչուրը, որը տեղիք է տվել ամենատարբեր մեկնաբանությունների, օրինակ՝ Ն. Ակինյանը կեղծիք է համարել սույն գրությունը, որովհետեւ «ՌԼԳ.»-ն պետք է ընթերցել 1584, որն էլ առավել բարդացնում է խնդրի լուծումը, իսկ ՄՄ., հտ. Գ., էջ 801, նշված է «ՌԼԳ. (1644)»:

հական: Իսկ որք բարեպէս պահեսցեն, վարձս մեծապէս առցեն ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ. ամէն:

Ի հայրապետութեան Սուրբ Էջմիածնի սրբազանին Եղիազար կաթողիկոսին գրեցաւ ի թվին ՌՃԼԳ (1684) ի նոյեմբերի ԻԲ. (22), ձեռամբ Իսահակ վարդապետի Մակունցուց»¹²¹:

Զգրուած՝ 436ա-7ա:

437բ՝ «Գրչափորձ»:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ.

ՄՄ. ԶԵՌ. ՀՄՐ. 745

ԺՈՂՈՎԱԾՈՅ

Ուրհա ՌԾԶ-1607

Գրիչ՝ Մովսէս Տաթեւացի (2ա-186բ), Անանուն (188ա-92ա):

ԹԵՐԹ՝ 193+1 (կրկ. 3). չգրուած՝ 67ա-8բ, 99բ-103բ, 151բ-2բ, 171ա-4բ, 187աբ, 192բ: Պրակ՝ Ա-ԺԳX12 (Ա, Թ. 10, ԺԳ. 14)+1X4(12+9+14+6): Նիւթ թուղթ (տարբեր՝ 188-193): Մեծութիւն՝ 15X10,5: Գրութիւն՝ միասին: Գիր՝ նոտրգիր (2ա-99ա, 104բ-26բ, 175ա-93բ), բոլորգիր (104ա, 127ա-70բ): Տող՝ 19-24 (խառն): Կազմ՝ դրոշմազարդ շազանակագոյն կաշի՝ դռնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ նշազարդ դեղին կտաւ:

Մանրանկարչութիւն – Ճակատազարդ՝ Չա: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր:

Պատառիկ պահպանակ – Աւետարան Մատթէոսի: Ժ.-ԺԱ. դդ: 2 (Ա-Բ)+(Գ). Ա-Բ ստացուած վերին կէս թերթի ընդերկայնակի երկտակումից, իսկ Գ-ն քառորդ թերթից: Մագաղաթ, միասին (նախապէս երկսին), բոլորագիծ երկաթագիր: Կարդալ Աա-Բբ, չգրուած Աբ, Բա: Խորան, բազմագունի (կարմիր, կապոյտ, կանաչ, սև) եւ Համաբարբառ (Կանոն Ժ): Գբ «///[միայն] պաշտեսցես... եւ իբրեւ լուսա///» (Գ. 10-12): Գա «///[վա]զվազակի զգործսն... զՅակովբոս///» (Գ. 20-21):

¹²¹ Հիշատակարան հետազայի բաժնում առկա են երկու հիշատակարաններ գրված Իսահակ Մակունցի վարդապետի ձեռամբ, մեկը տարեսկզբին՝ բոլորգրով Ռ[Ճ]ԼԳ. (1684), իսկ երկրորդը՝ նոտրգրով, որտեղ խոսվում է ձեռագրի գերեվարման եւ նույն թվականին Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերստին հետդարձի մասին նշելով «ՌՃԼԳ» թվականի նոյեմբերի 22-ը:

Վիճակ՝ բաւարար, տեղ-տեղ զանազան բծեր եւ ցեցակեր: Կազմի եզրերը՝ մաշուած, փականները՝ ընկած:

Ծնթ. Ձեռագիրս ամենայն հաւանականութեամբ եղել է Մովսէս Տաթեւացու անձնական սեփականութիւնը՝ գրուած իր ուսունառութեան տարիներին. այդ են ցոյց տալիս գրատեսակի յաճախակի փոփոխութիւնները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. 2ա—41բ [Գրիգորի, աշակերտի Եռամեծի Յոհաննու Որոտնեցոյ, Տեսութիւն ի բան մարգարէին, որ ասէ. Հոգի Տեառն ի վերայ իմ... — Տեսանողն վերերեւակ տեսութեամբ ի բնաբարձունս գերամբարձեալ բարձրութեամբ...]

Բ. 42ա—65ա Յոհաննու Որոտնեցոյ հաւաքեալ ի բանից իմաստասիրաց — Ի սկզբանէ Տէր, զերկիր հաստատեցեր եւ գործք ձեռաց քոց երկինք են...

Գ. ա. 70ա—99ա Աւրհնութիւն ժողովրդեան եւ շրջաբերական գրելոյն — Ի գթութեանցն Աստուծոյ եւ ամենայն սրբոց նորա, նաեւ այս անուն բանի սպասաւորէս [հ]ասցէ գիր արհնութեան...

բ. 104ա—50բ [նախերգանք քարոզից] — Աստուծով եւ աստուածատուր պարգեւօք շարժեցից ի շարժողէն բոլորից զլեզու իմ...

գ. 176բ—9ա Նախերգան բանի — Աստուածապետականին գլխոյ պսակ պանծալի... տեղապահ եւ յաջորդ սրբոյն Գրիգորի՝ այս անուն:

Դ. 1. 153ա—65ա Անուամբ Աստուծոյ. Գիրք ի վերայ բնութեան եւ մասնական քահանայի ումեմն աշխատասիրեալ Իշաւղ անուն — [Խ]նդիր վասն բնութեան այսպիսի արասցուք: Յորժամ գոյացոյց Աստուած զէսս յոչ էից... որ առնէ այսպիսի կենդանի: Փառք յաւիտեանս, ամէն:

Կից հետեւեալ նիւթերը, որոնց սոյն գործի մաս կազմելն ու Իշաւիսին պատկանելը երկբայելի են:

2. ա. 165աբ [Վասն կենդանեաց] — Նոյնպէս եւ այլոց կենդանեաց ետ բնութիւն... ըստ իւրաքանչիւր պիտոյից եւ զգուշութեան:

բ. 165բ—6ա Վասն համոց — Յայտնին՝ է: Ա. փոթոր, Բ. թըթու, Գ. քաղցր... Խարտեաշ մաղձոտն պատերազմ տեսանէ եւ հեծեալս:

գ. 166ա—7ա [Պլատոնի իմաստասիրի] Վասն գունոյ — Հաւասարքն առանց զգայութեանց են, զոր յստակս կոչեմք... Թէ ոք գործով կամիցի, ոչ կարիցէ հասու լինել. (տե՛ս տպ. «Պլատոնի իմաստասիրի Տրամախօսութիւնք, Տիմէոս», Վենետիկ, 1877, էջ 142—143):

դ. 167ա–8բ [Յաղագս ծովու եւ աղբեր...] – Տեսցուք աստ, թէ ծով ի սկզբանէ՞ էին աղտաղտակուք եւ դառն, որպէս այժմ, թէ ոչ... թէ որպէս եղեն աղի եւ դառն եւ ջերմ:

ե. 168բ–70բ Յաղագս Դ.-ից տարերաց – Ասեն ստոյրկեանքն. Ձտաբերս զոմանս՝ արարողականս եւ զոմանս՝ իգականս... Այս չափ բաւական լիցի իմաստնոցդ:

2. [Բանք Մովսիսի Տաթեւացւոյ՝ աշակերտի Սրապիոնի Ուրհայեցւոյ]

1. ա. 175աբ [Առ վարժապետն իւր՝ Ա.-Ք] – [Յ]ախղընթոր էի՝ պիտանի փառաւք բարձրացուցեր, /Բացաւթեայ էի՝ սիրով հոգոյն ջերմացուցեր...

բ. 175բ–6բ [Դարձեալ ի նոյն՝ Ա.-Ք] – Դու, Աղբիւր կենդանի՝ ծարաւեալ հոգոյս, / Դու, Բարձր աշտարակ՝ անյարկ տնանկիս...

-176բ–9ա, տէս Գ. Տ գ.:

2. ա. 179բ–82բ Մովսէս միոյ տեղեալ Տաթեւացի. Սակաւ բան համեմատութիւն աշակերտի առ վարժապետ, որպէս բազմաց մի սոսկ – Գիտելի է, զի մարդն Գ. ծնունդ ունի. նախ՝ ի հարէ եւ ի մարէ, երկրորդ՝ շնորհօք Սուրբ աւագանին...

բ. 182բ–3բ [Ողբ ի մահն Սրապիոն Ուրհայեցւոյ՝ Ա.-Ք] – Աչք իմ լուսատու, զհարդ խաւարեցար, / Բազուկ իմ հզար, զհարդ յարմնկէ հատար...

գ. 183բ–4բ [Դարձեալ ի նոյն խորհուրդ՝ Ա.-Ք] – Աչքդ լուսատեսիլ սղմեցաւ, / Բերանդ քաղցրահամ խփեցաւ...

դ. 184բ–6ա [Դարձեալ ի նոյն խորհուրդ՝ Ա.-Ք] – Ամայի եղեալ՝ հարէդ հեռացայ, սրբացեալ որդեակս առ ո՞վ զարգանամ, / Բանի կարաւտեալ, սրտիւ թախանձեալ, կերակրի կարաւտս առ ո՞վ լիանամ...

ե. [Դարձեալ ի նոյն խորհուրդ՝ «Մովսէս»] – Մեռանիլ ըզձամ հողով ծածկելու, / Գարշապար ոտից՝ դժոխք բանտելու... (կից՝ 186ա Յիշատակարան հեղինակի):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

117ա Թողութիւն արա, զի ննջում էի:

186ա Արդ, եղբայրք իմ սիրելիք, չէ պարտ մեզ անմխիթար լալ, այլ չափ եւ կշիռ: Եթէ թագաւորք սիրելեաց իւրոց առ ինքն կոչէ // (186բ) եւ ընտանիք նորա խնդան եւ ուրախ լինին, քանի առաւել երկնաւոր թագաւորն, որ այսաւր վարժապետն մեր առ ինքն կոչեաց, չէ պարտ մեզ սուգ առնուլ, այլ՝ սակաւ մի լաց եւ աղաւթք անդադար վասն փոշետեսակ մեղացն, որով փրկեսցէ զամենեքեան. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Ո՛վ ընթերցող, թէպէտ յետոյ գրեցաւ, սակայն առ ոտս նորա էի, մինչ ի փոխելն առ Քրիստոս, եւ յետոյ եղէ տատանման օտարութիւն, որպէս որ բանս յիշէ: Գրեցաւ ի մայրաքաղաքն յՈւրհայ, թվին ՌԾՁ. (1607), ի Արաց ամսու:

Թվին ՌԾԵ. (1606) Մեհեկի Ե. աւուր շորեքշաբթի եւ Հայոց Զատկի առաջին շաբաթու, ի մենաստան ժամու վարժապետն մեր աւանդեաց գհոգին իւր սրբասնեալ:

Շարագրելս պակաս է եւ թերի,
 Միտք իմ մոլորեալ խաւարածածկի,
 Ապակին ստակ յորմէ հայէի,
 Վերացեալ աչացս ոչ երեւի:
 Նուաստ աշակերտացն եւ շեմ անուանի,
 Ստենէ զատուցեալ մանուկ թարշամի,
 Կերակուր կարծրագոյն չէ ինձ ուտելի,
 Կաթին փափաքիմ մաւրն իմ ծնաւդի:
 Վարդապետ քաղցուն, բժիշկ բերկրալի,
 Աչացս լուս, սրտիս ըղձալի,
 Մարմինդ կոյս եղեալ ի շիրմի,
 Հոգիդ դասակցեալ նախնոյն Գրիգորի»¹²²:

ՀԻՄՆԱԲԱՆՈՒՄ

Մովսես Գ. Տաթևացի, Ղազար գրիչ, Մաշտոցի անվան Մատենադարան, Էջմիածնի գրչության կենտրոն, Խոտանան գրչավայր Իսահակ վարդապետ Մակվեցի, Ձեռագրական ժառանգություն Մեծ Անապատի դպրոց:

РЕЗЮМЕ

В хранилищах мировой культуры собраны непреходящие ценности подлежащие из века в века исследованиям. К этим ценностям принадлежит рукопись

¹²² Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի, հտ. Գ., կազմեց՝ Օ. Եգանեան: Խմբագրութեամբ՝ Փ. Անթաբեանի, Յ. Քէոսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շ. քհն. Հայրապետեանի: Յանկերը կազմեց՝ Վ. Դերիկեան, Երեւան, 2008, էջ 799–802:

N 1278 Матенадарана имени Месропа Маштоца. Автор обращается в статье к месту написания рукописи, к типу письма, к писцу и т. д. Еще 400 лет назад в Сюникской области в Хотанан архимандрит Мовсес (в дальнейшем католикос Мовсес III Татеваци 1629–1633) поручил своему кровному родственнику писцу Лазару переписать это сочинение, имеющее характер толкования.

В статье описан путь, который прошла рукопись с Мовсесом Татеваци и затем нашла свое место в святом первопрестольном монастыре в Эчмиадзине. В последствие плененная однажды при неких обстоятельствах рукопись была спасена, выкуплена и вновь возвращена первопрестольный монастырь.

В основу работы положена связующая деятельность католикоса Мовсеса Татеваци с его наставниками и учениками.


SUMMARY

The repositories of world culture house timeless treasures that have been the subject of study for centuries. Among these treasures is Manuscript No. 1278 of the Mesrop Mashtots Matenadaran. In this article, the author examines the manuscript's place of origin, its script style, the scribe, and other related aspects. Some 400 years ago, in the Syunik region at Khotanan, Archimandrite Movses (later Catholicos Movses III of Tatev, 1629–1633) commissioned his close relative, the scribe Ghazar, to transcribe this work, which is in the nature of an exegesis.

This article describes the journey of a manuscript that originated with Movses of Tatev and eventually found its home in the Mother See of Holy Etchmiadzin. Later, after being seized under certain circumstances, the manuscript was rescued, ransomed, and returned to Holy Etchmiadzin.

The work is based on the connecting role played by Catholicos Movses of Tatev with his mentors and disciples.





ԱՐԵՄՏԱՅԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՈՒՔԵԼԱԿԱՆ ՆՎԻՐԱԿ ԱՆՁԵԼՈ ՄԱՐԻԱ ԴՈԼՉԻԻ 1916 Թ.
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1915 թ. ընթացքում պապական առաքելությունը գործադրեց բոլոր հնարավոր դիվանագիտական ու մարդասիրական ջանքերը՝ կանխելու Օսմանյան կայսրությունում հայ բնակչության նկատմամբ գործադրվող հալածանքներն ու կոտորածները: Թուրքական վարչակարգին ուղղված սուրբ Աթոռի բոլոր միջնորդական փորձերը գործնականում ազդեցություն չունեցան իշխանությունների քաղաքական որոշումների վրա, որը հետևողականորեն իրականացրեց իր ծրագրերը՝ անտեսելով բոլոր կոչերը: Թուրքացման գործընթացը շահամանափակվեց պատմական հայրենիքից հայ բնակչության բռնի տեղահանությամբ եւ զանգվածային կոտորածներով: Փոքրաթիվ փրկվածները՝ հիմնականում կանայք եւ երեխաներ, ովքեր կարողացան վերապրել մահվան երկարատեւ ու տանջալից երթերը, չարժանացան ո՛չ նոր «հայրենիքի», ո՛չ իսկ որեւէ ապահով արքայազնի: Չնայած օսմանյան վարչակարգը համառորեն պնդում էր, թե տեղահանությունը պայմանավորված էր անվտանգության նկատառումներով եւ նպատակ ուներ իրականացնել «վերաբնակեցում», իրականում այն չէր կրում վերաբնակեցման բնույթ եւ ուներ մեկ նպատակ՝ բնաջնջել կայսրության հայ բնակչությանը: Այդ պայմաններում պապական առաքելությունը շարունակեց հանդես գալ միջնորդական ու մարդասիրական նախաձեռնություններով՝ փորձելով պաշտպանել հատկապես կանանց ու որբերին:

¹ Ստացվել է՝ 25.12.2025, գրախոսվել է՝ 2.03.2026:
Էլ. հասցե՝ koninyan.mane2024@gmail.com:

ԱՆՋԵԼՈ ԴՈԼՉԻԻ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅՈՑ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆԸ

Արդեն 1916 թ. սկզբից ակնհայտ էր, որ օսմանյան վարչակարգի որդեգրած հայահալած քաղաքականությունը կրում էր համակարգված եւ շարունակական բնույթ: Թեեւ զանգվածային տեղահանությունների գործընթացն սկսվել էր նախորդ տարում, սակայն դրանց հետեւանքները ոչ միայն չմեղմացան, այլեւ ընդգրկեցին հայ բնակչության նկատմամբ շարունակական ճնշումների տարբեր դրսեւորումներ: Այդ քաղաքականության համակարգված բնույթն արձանագրում էր տեղում գործող կաթոլիկ միաբանների, ինչպես նաեւ չեզոք պետությունների դիվանագիտական ու մարդասիրական ներկայացուցիչների զեկուլցյունով:

1916 թ. հունվարի 5-ին «Հավատքի տարածման միաբանություն» պատասխանատու կարգինալ Գ. Գոտտիին ուղղված զեկուլցյունում առաքելական նվիրակ Անջելո Դոլչին, անդրադառնալով Անկարայում վերսկսված հայ բնակչության հալածանքներին ու ձերբակալություններին, նշում էր, որ այդ գործողություններում Արտաքին գործերի նախարարությունը մեղադրում էր հայ բնակչությանը՝ արդարանալով, որ «երբ հայրենադարձների առաջին խումբը մտավ քաղաք ու տեսավ, որ իրենց տներն ու պահեստները փակ են, սկսեցին բարձրաձայն դժգոհել՝ խախտելով հասարակական կարգը: Արդյունքում կառավարությունը բանտարկեց ընդդիմադիրներին եւ կասեցրեց հայրենադարձության գործընթացը»²: Փաստորեն՝ նման ձեւակերպմամբ թուրքական վարչակարգը փորձում էր պաշտպանվել միջազգային քննադատությունից՝ իր քաղաքականությունը ներկայացնելով որպես «հարկադրանքից ելնող» քայլեր: Արդեն 1916 թ. սկզբներին Վատիկանի պետքարտուղար Պ. Գասպարրիին հասցեագրված իր զեկուլցյունում Դոլչին, վկայակոչելով գերմանացի մի ականատեսի հաղորդած տեղեկությունները, նշում էր, որ Անկարայում մնացել էր շուրջ 2000 կաթոլիկ հայ, մինչդեռ մնացած՝ մոտ 15 000-ոց համայնքը, ենթարկվել էր տեղահանության: Զեկուլցյունում Դոլչին նշում էր, որ կաթոլիկների նկատմամբ զանգվածային կոտորածներ չեն արձանագրվել, մինչդեռ առա-

² *Stes* La Questione Armenia, Documenti dell' Archivio della Congregazione per le Chiese Orientali (ACO), vol. III, 1908–1925, A cura di Georges -Henri Ruysse SJ, Edizioni Orientalia Christiana, Valore Italiano, Lilamé, էջ 114:

քելադավան հայերը ենթարկվել են զանգվածային ոչնչացման՝ ծայրահեղ բռնի միջոցներով³:

Հատկանշական է, որ Դուլչիի միջամտությունների շնորհիվ էր, որ Կ. Պոլսում գերմանական դեսպանատան ներկայացուցիչ էրցբերգերը 1916 թ. փետրվարին կազմել էր «Թուրքիայում կաթոլիկ հայերի վիճակի վերաբերյալ» հուշագիրը, որտեղ մանրամասն անդրադարձել էր Օսմանյան կայսրության հատկապես կաթոլիկ հայերի դրուսթյանը: Նա գրում էր. «Մարդիկ շաբաթներ եւ ամիսներ շարունակ անասունների հոտերի պես քշվում են մեկ վայրից մյուսը: Սակայն երբ հասնում են որեւէ նպատակակետ, նրանց այնտեղ մնալու հնարավորություն չեն տալիս. ստիպված են լինում շարժվել դեպի հաջորդ տեղանքը, այնուհետեւ՝ մեկ այլ ուղղություն՝ այդպիսով երբեք խաղաղություն գտնելու հնարավորություն չստանալով: Սովը եւ անխուսափելի վտանգները հայ կանանց ու աղջիկներին մղում են ապաստան որոնել թուրքական ընտանիքներում: Երեխաները կամ դառնում են թուրքեր կամ համարվում այսպես կոչված «պատերազմի որբեր»՝ պետական քաղաքականության միջոցով ենթարկվելով թուրքացման գործընթացին»⁴: 1916 թ. փետրվարի 10-ին էրցբերգերը Թալեաթ եւ էնվեր փաշաների հետ ունեցած զրույցի ժամանակ շեշտում էր, որ կաթոլիկ հայերը միշտ դրսեւորել են հավատարմություն օսմանյան իշխանություններին եւ այդ համապատկերում նպատակահարմար կլինի նախաձեռնել համապատասխան քայլեր: Այնուհետեւ ներկայացնում էր Կ. Պոլսի Հայ Կաթոլիկե պատրիարք Պողոս Պետրոս Թերզյանի առաջադրած այն հիմնական խնդրանքներն ու ակնկալիքները, որոնց իրականացումը Գերմանիայի միջամտությամբ կարող էր գոնե մասնակիորեն մեղմել կաթոլիկ հայերի ծայրահեղ ծանր դրուսթյունը: Առաջարկվում էր.

• աքսորված կաթոլիկ եպիսկոպոսներին, քահանաներին, միանձնուհիներն ու աշխարհականներին հնարավորություն տալ վերադառնալու իրենց բնակավայրեր, իսկ նրանց բռնագրավված գույքը՝ մասնավորապես եկեղեցական ու համայնքային ունեցվածքը, վերադարձնել օրինական տերերին,

³ *Shu* La Questione Armenia, Documenti dell' Archivio Segreto Vaticani (ASV) & dell' Archivio Storico della Segreteria di Stato, Sezione per I Rapporti con gli stati (SS. RR. SS), vol. IV, 1908–1925, A cura di Georges-Henri Ruyssen SJ, Edizioni Orientalia Christiana, Valore Italiano, Lillamé, էջ 169:

⁴ *Shu* նույն տեղում, էջ 178:

- ապահովել, որ Կ. Պոլսի, Բուրսայի, Հալեպի եւ Մարաշի թեմերից այլեւս չիրականացվեն կաթոլիկ հայերի վտարումներ: Այդ թեմերը համեմատաբար խուսափել էին զանգվածային տեղահանություններից եւ պահպանել էին իրենց համայնքային կառուցվածքը,

- ապահովել, որ կաթոլիկ հայերի շրջանում չիրականացվի բռնի դավանափոխություն,

- որբացած երեխաների պաշտպանության եւ խնամքի համար ստեղծվի հուսալի համակարգ,

- տեղահանված ու ընկերային առումով անապահով կաթոլիկ հայ համայնքներին պետության կողմից տրամադրել նյութական աջակցություն,

- գերմանացի կաթոլիկներին թուլյատրել մարդասիրական օգնություն ցուցաբերել Կ. Պոլսի Հայ Կաթոլիկ պատրիարքարանին, որի դրությունը ծայրահեղ ծանր էր՝ հատկապես նյութական ապահովման տեսանկյունից,

- Թուրքական կառավարությունը պաշտոնապես ճանաչի օրինական պատրիարքին՝ որպես Օսմանյան կայսրության հայ կաթոլիկ բնակչության հոգեւոր ու վարչական առաջնորդի⁵:

Հայկական կոտորածների եւ զանգվածային տեղահանությունների ընթացքում Հալեպը վերածվեց առանցքային հանգրվանի, որտեղ ժամանակավոր ապաստան էին գտնում հազարավոր մազապուրծ գաղթականներ՝ սովի, հիվանդությունների եւ մշտական վտանգի պայմաններում: Կարնո (Էրզրում) Կապուլին միաբանության գերագույն առաջնորդ Նորբերտ Հոֆերը փաստում էր, որ Հալեպ հասել են հիմնականում կանայք, քանի որ տղամարդիկ կոտորվել էին. «Տեսա մի քանի հարյուր կանանց, որոնց մեջ շատ մայրեր էին՝ իրենց արդեն մեռած կամ դեռ կենդանի երեխաներին կրծքներին սեղմած: Բոլորն էլ գտնվում էին մահվան շեմին»⁶: Հիշենք, որ նույն Հոֆերը նշում էր, որ հայ ազգի նկատմամբ կիրառված պատիժն ուղղակի պատրվակ էր թուրքական կառավարության համար՝ կայսրության ներքին նահանգներում ապրող ողջ հայկական տարրի համակարգված բնաջնջման նպատակով»⁷:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 179–180:

⁶ M. HESEMANN, Völkermord an den Armeniern, Mit unveröffentlichten Dokument aus dem Geheimarchiv des Vatikans über das größte Verbrechen des Ersten Weltkriegs, München, 2015, էջ 249:

⁷ Տե՛ս M. J. SOMAKIAN, Empires in Conflict: Armenia and the Great Powers, 1895–1920, Tauris Academic Studies, 1995, էջ 95:

«Հավատքի տարածման միաբանության» կարգինալ Սերաֆինի-ին ուղղված 1916 թ. ապրիլի 18-ի գեկույցում Անջելո Դոլչին, անդրադառնալով հայ բնակչության զանգվածային հալածանքներին ու տեղահանություններին, հաղորդում էր, որ վերջին կաթոլիկ հայերին Կոնիայից, Անկարայից եւ Հալեպից արտաքսում էին դեպի Սիրիայի անապատում տեղակայված համակենտրոնացման ճամբարներ⁸: Օսմանյան կառավարությանն ուղղված նրա դիմումներին՝ դադարեցնել այդ քաղաքականությունը, ընդամենը պատասխանել էին, որ այդ գործողությունները ոչ թե օսմանյան կենտրոնական կառավարության, այլ Սիրիայում գործող շորորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշայի իրավասության ներքո են: Հետագայում իր հուշերում Ջեմալ փաշան, խեղաթյուրելով պատմական իրականությունը, պնդում էր, որ ոչ միայն հիմնել է որբանոցներ ու կանանց օգնության տներ, այլեւ Միջագետքի անապատներում հայերին սովի եւ աղքատության շմատնվելու նպատակով ստացել էր կենտրոնական իշխանությունների թույլտվությունը՝ նրանց Բեյրութի եւ Սիրիայի նահանգներում տեղակայելու համար⁹:

Հետաքրքրության արժանի է այն հանգամանքը, որ Օսմանյան իշխանությունները Սիրիայի եւ Լիբանանի տարածքում հալածանքների էին ենթարկում ոչ միայն հայ կաթոլիկներին, այլեւ ընդհանրապես կաթոլիկ համայնքների ներկայացուցիչներին: Այդ մասին տեղեկացնում էր Հալեպի Ֆրանցիսկյան միաբանության վանահայր Սաբատինո դել Գազոն՝ 1916 թ. ապրիլի 7-ին Անջելո Դոլչինն ուղղած նամակում: Վանահայրը նշում էր. «Օսմանյան կառավարությունը մեր հավատացյալներին հայ է համարում եւ տեղահանության է ենթարկում»¹⁰: Նա օգնություն էր խնդրում Դոլչինից՝ միջնորդելու օսմանյան իշխանություններին, որ դադարեցնեն այդ միջոցառումները: Դրա մասին էր վկայում նաեւ Փարիզի արքեպիսկոպոս կարդինալ Ամետիի 1916 թ. մայիսի 6-ին պետքարտուղար Պ. Գասպար-

⁸ *Տե՛ս* La Questione Armenia, Documenti dell' Archivio della Congregazione per le Chiese Orientali (ACO), vol. III..., էջ 117:

⁹ *Տե՛ս* Ռ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Ն. ՊՈՂՈՍՅԱՆ, Հայկական հարցն ու Հայոց ցեղասպանության խնդիրը թուրք բարձրաստիճան քաղաքական եւ ռազմական գործիչների հուշերում (XIX դարի վերջ – XX դարի կեսեր), Եր., ԵՊՀ հրատ., 2022, էջ 23–24:

¹⁰ *Տե՛ս* La Questione Armenia, Documenti dell' Archivio Segreto Vaticano (ASV) & dell' Archivio Storico della Segreteria di Stato, Sezione per I Rapporti con gli stati (SS. RR. SS), vol. IV..., էջ 190:

րիին ուղղած նամակը, որտեղ նա հաղորդում էր Ֆրանսիայի կառավարության անհանգստությունը Սիրիայում քրիստոնյա համայնքների առջեւ ծառայած վտանգների ու վերահաս կոտորածների առնչությամբ՝ համեմատություն անցկացնելով հայ ժողովրդի նկատմամբ իրականացված հալածանքների հետ: Կարգինալ Ամեսին համոզմունք էր հայտնում, որ եթե Սուրբ Հայրը, կիրառելով իր գերագույն հեղինակությունը, բարեհաճի միջնորդել Օսմանյան կայսրության իշխանություններին եւ Գերմանիայի կայսրին, ապա այդ միջամտությունը կարող է կանխել մարդկային բազմաթիվ զոհեր:

Անջելո Դոլչին, անդրադառնալով հայ բնակչության տեղահանություններին, իր՝ 1916 թ. հունիսի զեկուլցում նշում էր. «Հայ ժողովրդի ոչնչացման ծրագիրը դեռեւս շարունակում էր ուժի մեջ մնալ: Էսքիշեհիրի, Անկարայի, Աֆիոն-Գարահիսարի եւ Կոնիայի հայ աքսորյալները անողոք կերպով տեղահանվում են՝ ցրվելով շրջակա մուսուլմանական գյուղեր կամ նույնիսկ ավելի հեռու: Հալեպից եւ շրջաններից հայ բնակչությունը քշվում է անապատներ՝ զրկվելով գոյության բոլոր միջոցներից: Նրանք դաժանորեն մահանում են տարաբնույթ հիվանդություններից, սովից ու դաժան կլիմայական պայմաններից»¹¹:

Սուրբ Աթոռում վաղուց հրաժարվել էին պատրանքներից: Հայերի զանգվածային տեղահանություններն ու կոտորածներն այլեւս չէին դիտարկվում որպես առանձին կամ կարճաժամկետ բռնություններ, այլ ընկալվում՝ որպես պետական մակարդակով իրականացվող համակարգված ծրագիր՝ ուղղված տարածաշրջանից քրիստոնեական տարրերի վերացմանը: Ստացվող տեղեկությունների հիման վրա պապ Բենեդիկտոս ԺՅ. հատուկ հրահանգներ էր տվել Դոլչինին՝ հանդիպել թուրքական իշխանությունների ներկայացուցիչների հետ՝ կոչ անելով դադարեցնել այդ նորանոր սարսափները: Նմանատիպ հանձնարարականներ ստացել էին նաեւ Մյունխենում Պապի նվիրակ Ֆրյուհվիրթը¹²

¹¹ Տե՛ս R. KÉVORKIAN, L'extermination des déportés Arméniens ottomans dans les camps de concentration de Syrie-Mésopotamie (1915–1916), La deuxième phase du génocide, T. II, 1988, էջ 240:

¹² Սիրիայում ու Լիբանանում քրիստոնյաների պաշտպանության հարցով Մյունխենի առաքելական նվիրակ Ֆրյուհվիրթը դիմել էր Գերմանիայի կառավարությանը: Գերմանական կողմը, արձագանքելով խնդրին, հրահանգներ էր փոխանցել Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Մետերնիխին եւ միաժամանակ հարցը բարձրացրել Բեռլինում Օսմանյան կայսրության դեսպանի առջեւ, ով խոստացել էր փոխանցել ստացված տեղեկատվությունը Կ. Պոլիս սուլթանական կառավարությանը:

եւ Վիեննայում նվիրակ Սկապինելլին¹³՝ փոխանցելու դրանք այդ երկրների կառավարություններին՝ հանուն քրիստոնեական շահերի¹⁴:

Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարին ուղղված 1916 թ. հունիսի 5-ի նամակում հակադարձելով կառավարության ներկայացրած բոլոր հերքումներին, Անջելո Դոլչին նշում էր, որ Սիրիայում եւ Լիբանանում քրիստոնյաների նկատմամբ կիրառվող հալածանքների մասին տեղեկություններն արձագանք են գտել անգամ եւրոպական եւ ամերիկյան մամուլում: Մամուլի հրապարակումներում նշվում էր, որ նահանգապետի հրահանգներով վանականներն ու միանձնուհիները տեղահանվել են, իսկ նրանց գույքը՝ բռնագրավվել: Միեւնույն ժամանակ, դրսևերելով դիվանագիտական զգուշավորություն, Դոլչին գրում էր. «Խնդրում եմ Նորին Գերագանցությանը թույլ տալ մեղմելու Սուրբ հորանհանգստությունը եւ տեղեկացնել, որ Սիրիայում եւ Լիբանանում իրականացվող այդ գործողությունները հակասում են Օսմանյան կայսրության իրական շահերին, ինչը միջազգային հանրության աչքում կբարձրացնի կայսրության հեղինակությունը եւ ցույց կտա, որ քրիստոնեական հավատքը կարիք չունի արտաքին պաշտպանության, քանի որ նրա իսկական եւ օրինական պաշտպանն ինքն է՝ օսմանյան կառավարությունը»¹⁵: Դոլչին հետետղականորեն շարունակում էր դիմումները թուրքական կառավարությանը՝ հորդորելով դադարեցնել հայ բնակչության նկատմամբ կիրառվող բռնություններն ու տառապանքները: 1916 թ. օգոստոսին նա հանդես եկավ մի շարք առաջարկություններով՝ ուղղված օսմանյան կառավարության կողմից իրականացվող հայ բնակչության հալածանքների մեղմացմանը: Նա ընդգծում էր, որ օսմանյան կառավարությունը պարտավոր է առնվազն մասնակիորեն հաշվի առնել

¹³ Սիրիայում եւ Լիբանանում քրիստոնյաների նկատմամբ իրականացվող դաժան հալածանքների մասին վկայում էր նաեւ Վիեննայի առաքելական նվիրակ Սկապինելլիի 1916 թ. մայիսի 23-ի Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարությանը հասցեագրված գեկույցը: Նա նշում էր, որ Սուրբ Աթոռը խորը մտահոգություն էր հայտնել ստեղծված իրավիճակի կապակցությամբ եւ Կ. Պոլսում առաքելական նվիրակ Անջելո Դոլչին հանձնարարել վճռական քայլեր ձեռնարկել Բարձր Դռան առջեւ՝ նպատակ ունենալով պարտադրել տեղական իշխանություններին խիստ հրահանգներ տալ՝ կանխելու հալածանքներն ու ռճրագործությունները:

¹⁴ *Տես* La Questione Armenia, Documenti dell' Archivio Segreto Vaticani (ASV) & dell' Archivio Storico della Segreteria di Stato, Sezione per I Rapporti con gli stati (SS. RR. SS), vol. IV..., էջ 199:

¹⁵ *Տես նույն տեղում*, էջ 217, տես նաեւ R. KÉVORKIAN, L'extermination des déportés Arméniens ottomans dans les camps de concentration de Syrie-Mésopotamie (1915–1916)..., էջ 242:

այդ առաջարկությունները՝ ելնելով միջազգային բարոյական պարտավորություններից: Նա ընդգծում էր ամենահրատապ կարիքները, որոնք պետք է բավարարվեին թուրքական վարչակարգի կողմից՝ նահանգային իշխանություններին հրաման տալ դադարեցնել իրենց տարածքներում գտնվող հայերի հալածանքները, տեղահանվածների հետ վարվեն մարդասիրաբար՝ թույլ տալով մնալ այն վայրերում, որտեղ գտնվում, են, որպեսզի կարողանան իրենց ապրուստը վաստակել, քանի որ անորոշ ու վտանգավոր տեղաբաշխման հետեւանքով բազմաթիվ մարդիկ մահանում են՝ սովի, հիվանդությունների ու գոյության միջոցների բացակայության պատճառով¹⁶:

Դուլչին առաջարկների հաջորդական շարքում առանձնացնում էր նաև տեղահանված հայերի կենսական հիմնարար իրավունքների ապահովմանը միտված մի շարք հրատապ քայլեր՝ օսմանյան կառավարությունը պարտավոր է օգնություն ցուցաբերել տեղահանված հայերին, փոստի եւ հեռագրության վարչությունները թույլ տան տեղահանվածներին նամակագրվել իրենց հարազատների հետ: Նշելով, որ կայսրության հայ հոգեւորականության 99 տոկոսը կոտորվել է, եւ Միջագետքի գաղթականները զրկված են եկեղեցական պաշտամունքից, Դուլչին անհրաժեշտ էր գտնում թույլ տալ Հայոց պատրիարքարանին՝ նրանց համար քահանա ուղարկել¹⁷: Շարունակելով իր զեկույցը՝ Անջելո Դուլչին ընդգծում էր, որ հայերի տեղահանությունը ոչ թե անվտանգությունից բխող անհրաժեշտություն էր, այլ միտումնավոր կերպով իրականացվող քաղաքականություն: Նա գրում էր. «Ակնհայտ է, որ հայերն այս կամ այն պատրվակով տեղահանվում են Կ. Պոլսից: Տեղ հասնելուն պես՝ օրինակ՝ Իզմիդ, նրանց հարկադրում են շարունակել ճանապարհը ոտքով: Շատերն այդ ընթացքում անհետանում են: Եթե նրանց նպատակային կերպով տեղափոխում են Միջագետք, ապա ինչո՞ւ չեն տեղափոխվում երկաթուղով: Օսմանյան կառավարության հայտարարությունների համաձայն հայերի կոտորածները չափազանցված են, սակայն մինչ օրս հայերից ոչ մի լուր չի ստացվել, որտեղ են այդ հայերը, որոնք կենդանության ոչ մի նշան չեն տալիս մայրաքաղաքում գտնվող իրենց հարազատներին կամ ընկերներին: Իրենց

¹⁶ Տե՛ս R. KÉVORKIAN, L'extermination des déportés Arméniens ottomans dans les camps de concentration de Syrie-Mésopotamie (1915–1916)..., էջ 241:

¹⁷ Անդ.:

բնակավայրերում մնացած կամ տեղահանված հայերն ստիպված են դավանափոխվել: Նման ճնշումների արդյունքում Կաստամունում, Անկարայում, Կոնիայում, Կեսարիայում առանց աջակցության մնացած ընտանիքները, ինչպես նաև Հալեպի, Սիրիայի, Մոսուլի, Ջորի եւ այլ նահանգներ տեղահանվածները ստիպված են եղել դավանափոխվել: Մուսուլմանական գյուղերում ցրված հայերը ենթարկվում են զանազան հալածանքների ու հարձակումների: Նրանց զրկել են իրենց ողջ ունեցվածքից, երիտասարդ աղջիկներն առևանգվում եւ բռնաբարվում են, նրանք զրկված են սննդից: Հազարավոր երեխաներ վերցվում են իրենց ծնողներից եւ պահվում մուսուլմանական ընտանիքներում՝ ընդունելով իսլամ»¹⁸: Վերոնշյալ առաջարկների միջոցով Անջելո Դուլչին հետեւողականորեն փաստում էր օսմանյան կառավարության քաղաքական հալածանքները հայ բնակչության նկատմամբ՝ դրանք բնութագրելով որպես կազմակերպված եւ համակարգված բնաջնջման քաղաքականություն: Նրա դիտարկումներն ընդգրկում էին թե՛ տեղահանության դաժան ու նպատակային մեխանիզմները եւ թե՛ դրանց ուղեկցող զանգվածային բռնությունները՝ սովը, հիվանդությունները, դավանափոխության հարկադրանքը, գույքի բռնագրավումը, սեռական բռնությունները, երեխաների բռնի իսլամացումը՝ շեշտելով մարդու հիմնարար իրավունքների խախտումները: Փաստորեն՝ վերոհիշյալ զեկուցյով Դուլչին փաստում էր, որ հայ բնակչության ձուլումը կամ ոչնչացումը տարերային գործողություն չէր, այլ կայսրության ներքին գործերի նախարարության խնամքով հաշվարկած քաղաքականություն¹⁹:

Չնայած ձեռնարկված միջամտություններին՝ սուլթանական կառավարությունը շարունակաբար հերքում էր քրիստոնյա բնակչության դեմ իրականացվող հալածանքների մասին հաղորդումները: Սուլթանական իշխանությունները պնդում էին, որ Լիբանանում մահապատժի էին ենթարկվել 23 արաբ եւ 3 քրիստոնյա, որոնք, ըստ պաշտոնական գնահատականի, դիտարկվել էին որպես քաղաքական հանցագործներ: Նրանց ընտանիքներն այնուհետեւ տեղահանվել էին, ինչն ավելացրել էր լարվածությունն ու խորացրել տագնապի մթնոլորտը քրիստոնեական համայնքներում²⁰:

¹⁸ Անդ:

¹⁹ Հ. ԿԱՅՁԵՐ, Դեյր էզ-Ջորի խաչուղիներում, Երեւան, Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ, 2015, էջ 7:

²⁰ *Stes* La Questione Armenia, Documenti dell' Archivio Segreto Vaticano (ASV) & dell' Archivio Storico della Segreteria di Stato, Sezione per I Rapporti con gli stati (SS. RR. SS), vol. IV..., էջ 212:

Ավելին, օսմանյան իշխանությունները փորձում էին Դոլչիի միջոցով համոզել Սուրբ Աթոռին, որ որեւէ կոտորած տեղի չի ունեցել, եւ իրավիճակն ամբողջությամբ վերահսկվում է:

1916 թ. օգոստոսին Յոզղատի հայ կաթոլիկ համայնքի քահանա Զ. Նալբանդյանը Դոլչիին ուղղված հեռագրում հաղորդելով տեղի ծանր կացությունը, նշում էր, որ Յոզղատում հավաքված շուրջ 2500 տեղահանված որբեր ու այրիներ մահանում էին սովի ու հիվանդությունների հետեւանքով: Հեռագրում մասնավորապես նշվում էր. «Տեղացի թուրքերը խիստ վատ վերաբերմունք են ցուցաբերում հատկապես երիտասարդ կանանց ու աղջիկների նկատմամբ: Եկեղեցական գույքը բռնագրավվել է: Խոնարհաբար աղերսում եմ բարոյական ու նյութական աջակցություն՝ այդ թշվառ մարդկանց օգնության համար»²¹:

Նույն տարվա հոկտեմբերին Մարդինից Դոմինիկյան միաբանության անդամ Հայր Դոմինիկ Բերրեի՝ Անջելո Դոլչիին ուղղված նամակը շարունակում էր պատկերել հայության ողբերգական իրավիճակը: Նամակն արժեքավոր վկայություն էր տեղի հայության ընկերային-տնտեսական ծայրահեղ ծանր ու անապահով դրության վերաբերյալ: Նա մասնավորապես գրում էր. «Իժբախտների թիվը օրեցօր աճում է. դրանք աղքատ այրիներ ու որբեր են, որոնք աղետից փրկվելով՝ գաղտնի վերադառնում են գյուղերից ու անապատներից: Ես անկարող եմ նկարագրել այն ողբալի վիճակը, որում հայտնվել են այդ մարդիկ: Նրանք վերադառնում են առանց հագուստի, զրկված են ամեն ինչից եւ աղերսում են մեր օգնությունը: Եթե չաջակցենք՝ նրանք դատապարտված են մահվան: Որքան կցանկանայինք այս ամենը հաղորդել բարերարներին, սակայն մենք չունենք արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու ոչ մի միջոց: Այս տեղեկատվությունը կարող եմ վստահել միայն Ձեզ՝ աղաչելով, որ հնարավորության դեպքում այն փոխանցեք Սրբազան Հորը: Մեծ թվով հայ կանայք եւ երեխաներ բռնի կերպով առեւանգված են: Հնարավոր կլինե՞ր նրանց ազատել, եթե ունենայինք անհրաժեշտ միջոցներ՝ փրկագին մուծելու եւ նրանց խնամելու համար»²²:

Արդեն դեկտեմբերին Անկարայի հայ կաթոլիկ քահանա Ն. Բաղդիկյանը առաքելական նվիրակ Դոլչիին ուղղված գեկույցում ընդգծում էր,

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 249:

²² Տե՛ս նույն տեղում, էջ 258–259:

որ քրիստոնյաների հալածանքները շարունակվում էին նույնիսկ քաղաքի խոշոր հրդեհից հետո: Նրա վկայության համաձայն՝ այդ հալածանքները երբեք լիարժեք չեն դադարել, փոխվել է եղանակը՝ դառնալով առավել խորքային ու կործանարար: Նրա հաղորդմամբ՝ «Հրդեհից հետո աղքատ կաթոլիկներն ստիպված են ապաստան գտնել թուրքական տներում, որտեղ նրանք մշտապես գտնվում են անմիջական վտանգի տակ՝ ենթարկվելով ոտնձգությունների, բռնաբարությունների ու զանազան բռնությունների: Իրենց տներում տեղավորելուց եւ վարձավճարը ստանալուց հետո, թուրքերը նրանց ստիպում են տեղափոխվել մեկ այլ տուն: Կրկին կախված է դավանափոխության վտանգը: Թուրքերը թալանում են մեր այրված եկեղեցիները, վանքերն ու դպրոցները: Մատաղ սերունդը վտանգված է, քանի որ զրկված է կաթոլիկ կրթություն ստանալու հնարավորությունից, խառնվել է թուրք երեխաների հետ եւ սովորում է նրանց հետ»²³: Վերոհիշյալ ուղերձներն արժեքավոր վկայություններ են Հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրության տարբեր գավառներում տիրող աղետի ծավալի, բնույթի ու հետեւանքների մասին: Դրանք ներկայացնում էին ոչ միայն տեղահանության ենթարկված հայ բնակչության՝ հատկապես կանանց ու երեխաների՝ կենսապահովման տարրական միջոցներից զրկված լինելու ողբերգական վիճակը, այլեւ մատնանշում օգնություն ցուցաբերելու սահմանափակ հնարավորությունները:

ԱՆՋԵԼՈ ԴՈԼՉԻԻ ՓԱՍՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՌՆԻ ԴԱՎԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1916 թ. ցեղասպանության երկրորդ փուլի ընթացքում եւս բռնի դավանափոխությունը շարունակում էր հանդես գալ որպես նշանակալի պետական քաղաքականություն: Դավանափոխությունը, որը փաստացի կերպով ձուլման միջոց էր, սպառնալիք էր նաեւ բողոքական ու կաթոլիկ հայերի անվտանգության համար՝ ընդգծելով գործընթացի ընդգրկուն բնույթը: Հարկադիր դավանափոխության վերաբերյալ ստացվող հաղորդումները փոխանցվում էին նաեւ Սուրբ Աթոռ՝ որպես լրջագույն սահմանափակ տեղի ունեցող իրադարձությունների մասին: Այդ մասին Ան-

²³ Տե՛ս նույն տեղում, էջ 284–286:

ջելո Դոլչին հայտնում էր իր 1916 թ. հունիսի զեկուլցում, որ տարբեր քաղաքներում մնացած սակավաթիվ հայ ընտանիքների նկատմամբ գործադրվում են տարաբնույթ բռնություններ՝ հարկադրելով դավանափոխություն: Նրա վկայությունները՝ «Վերջին ամիսներին Բոլուսի, Կիրշեհիրի, Դենեկ-Մադենի եւ այլնի հայերը ստիպված են եղել հրաժարվել քրիստոնեությունից: Վերջին օրերին Աֆիոն-Գարահիսարից 60 հայ ընտանիք հարկադրաբար դավանափոխվել է, մինչդեռ էսքիշեհիրի հայերը դավանափոխությունից հրաժարվելու պատճառով վտարվել են: Նույն ճակատագիրն է սպասվում նաեւ Կոնիայի, Անկարայի եւ այլ վայրերի տեղահանվածներին: Օսմանյան կառավարությունը հայերին պարտադրելով դավանափոխություն՝ պաշտոնապես արգելեց բոլոր հայկական եկեղեցիների բացումը»²⁴: Ջեկուլցն ավարտվում էր հետեւյալ եզրակացությամբ. «Անկասկած, կառավարությունը որոշել է քրիստոնեությունն արմատախիլ անել կայսրությունից՝ մինչեւ պատերազմի ավարտը»²⁵: Այդ քաղաքականությունը վկայում էր ոչ միայն միջազգային դիվանագիտական միջամտությունների ձախողման մասին, այլեւ հաստատում, որ ծրագրված բնաջնջման գործողությունները տարածվել էին քրիստոնյա բոլոր հայկական համայնքների վրա՝ ներառյալ կաթոլիկներն ու բողոքականները, որոնք, ըստ պաշտոնական հավաստիացումների, պետք է մնային պաշտպանված:

Սիրիայում եւ Լիբանանում հավատարմագրված Սուրբ Աթոռի առաքելական նվիրակ Ֆ. Ջիանինին Անջելո Դոլչին ուղղած 1916 թ. օգոստոսի 8-ի զեկուլցումը²⁶ անդրադառնում էր Սիրիայի տարածաշրջանում հայ գաղթականների հարկադիր դավանափոխության խնդրին: Նրա հաղորդմամբ՝ «Հայերից շատերն ստիպված էին դավանափոխվել՝ իրենց կյանքը եւ բարությունը պահպանելու համար: Դերա քաղաքի մերձակայքում գտնվող մի քանի հազար տեղահանվածների դավանափոխություն էր պարտադրվել, սակայն նրանց մերժման հետեւանքով ամենահայտնի եւ ամենաազդեցիկ մարդկանց զգալի մասը աննկարագրելի դաժանությամբ մահապատժի է ենթարկվել, ինչից հետո մյուսները վախից դրդված ընդունել էին հրամա-

²⁴ Տե՛ս R. KÉVORKIAN, L'extermination des déportés Arméniens ottomans dans les camps de concentration de Syrie-Mésopotamie (1915–1916)..., էջ 240:

²⁵ Անդ:

²⁶ Նույնանման զեկուլց ուղարկել էր նաեւ «Հավատքի տարածման միաբանության» կարդինալ Սերաֆինին:

նը»²⁷: Զիաննինին նշում է, որ իրեն հասած հուսալի աղբյուրներից տեղեկացել էր, որ նույն բնույթի հրամաններ տրվել են նաև Համայի, Դամասկոսի եւ շրջանների հայերին, որոնց ընդհանուր թիվը հասնում էր մի քանի հազարի. «Տեղահանվածների մեծամասնությունն Առաքելական Եկեղեցու հետևորդներ էին, սակայն նրանց թվում կային նաև կաթոլիկներ. ամեն դեպքում, նրանք բոլորը քրիստոնյաներ են»²⁸: Անդրադառնալով ընդհանուր պատկերին՝ նա գրում էր. «Սարսափելի սպառնալիքների միջոցով տեղական իշխանություններն այս խեղճ թշվառներին ստիպում են գրավոր կերպով դավանափոխվել, եւ այդ փաստաթուղթն օգտագործվում էր ցանկացած բողոք կամ միջամտություն լռեցնելու համար: Նման միջոցներով թուրքական իշխանությունները մտադիր են ոչնչացնել անգամ հայ ժողովրդի վերջին դժբախտ մնացորդները, որի մեծ մասը մինչ այդ արդեն իսկ բնաջնջված էր»²⁹: Եւ իսկապես, երբ 1916 թ. գարնանը սիրիական շրջաններում սկսվեց ցեղասպանության երկրորդ ալիքը, դրա հետ զուգահեռ աշխուժացավ նաև բռնի դավանափոխության գործընթացը: Այդ մասին ահազանգում էին չեզոք երկրների հյուպատոսական զեկուլցները: Նման դիտարկումներ արվում էին Հալեպում ԱՄՆ հյուպատոս Զեսսի Բ. Զեքսոնի զեկուլցներում: Վերջինս փաստում էր, որ Համայում, Հոմսում, Մարաշում եւ այլ բնակավայրերում հայերը կանգնեցվել էին կրոնափոխության հարկադրանքի առջև եւ ստիպված էին եղել ընդունել իսլամ՝ ֆիզիկական բնաջնջումից խուսափելու համար³⁰:

ԱՆՋԵԼՈ ԳՈԼԶԻԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1916 թ. գարնանից սիրիական շրջաններում սկսվեց ցեղասպանության երկրորդ ալիքը, որին նախորդեց տվյալ տարածաշրջանը «արգելված գոտի» հայտարարելու քայլը: Օսմանյան իշխանություններն արգելեցին օտարերկրացիների մուտքը նշված տարածքներ՝ խոչընդոտելու համար նրանց շփումը տեղահանված հայերի հետ: Արգելքը տարածվում էր

²⁷ *Տէս* La Questione Armenia, Documenti dell' Archivio della Congregazione per le Chiese Orientali (ACO), vol. III..., էջ 122:

²⁸ *Անդ*:

²⁹ *Անդ*:

³⁰ *Տէս* T. AKÇAM, The Young Turks' Crime Against Humanity: the Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire, Princeton, N. J.: Princeton University Press, 2012, էջ 305–306:

ոչ միայն դիվանագիտական անձնակազմի կամ կրոնական քարոզիչների, այլ նույնիսկ ոչ մուսուլման առեւտրականների վրա՝ բացառելով նրանց գործունեությունը այդ տարածքներում: Օսմանյան կառավարությունը ոչ միայն որեւէ համակարգված աջակցություն չձեռնարկեց՝ դրամական, պարենային, բժշկական, այլեւ արգելեց ցանկացած տեսակի մարդասիրական օգնության տրամադրումը տեղահանված հայերին: Արդեն 1916 թ. փետրվարի 23-ին Սիրիայում եւ Լիբանանում հավատարմագրված Սուրբ Աթոռի առաքելական նվիրակ Ֆ. Ջիաննինին, ներկայացնելով սիրիական տարածքներում հայ բնակչության ծայրահեղ ծանր վիճակը, նշում էր, որ այդ շրջաններում հայ բնակչությունը զանգվածաբար սովամահ է լինում, իսկ օսմանյան իշխանություններն արգելում են մարդասիրական օգնության բաշխումը: Ըստ տեղեկությունների՝ Կ. Պոլսից ուղարկված մարդասիրական օգնությունը չէր հասնում հասցեատերերին³¹:

Հատկանշական է, որ օսմանյան կառավարությունը պահանջում էր, որ հայերին ուղղված բոլոր մարդասիրական օգնությունները բաժանվեն բացառապես պետական վարչական պաշտոնյաների հսկողությամբ: Թուրքական վարչակարգն սպառնում էր քրեական հետապնդում բոլոր այն անձանց ու կազմակերպություններին, որոնք փորձել էին օգնություն տրամադրել տեղահանված հայերին: Այդ վերահսկողական քաղաքականությունը պաշտոնապես ամրագրվեց Թալեաթ փաշայի՝ նահանգապետերին ուղղված 1916 թ. ապրիլի 3-ի ընդհանուր հրամանագրով. «Այն պատասխանատու անձինք, որ առանց պետական պաշտոնյաների միջամտության թույլատրել են ամերիկյան եւ գերմանական հաստատությունների գումարների գաղտնի եւ անմիջական բաշխումը հայերին, ինչպես նաեւ նրանք, ովքեր տեղեկացված են եղել այդ մասին ու ոչինչ չեն ձեռնարկել դա կանխելու համար, պետք է խիստ պատժվեն»³²: Դրա մասին էր փաստում նաեւ Դոլչիի «Հավատքի տարածման միաբանություն» կարգինալ Սերաֆինին ուղղված 1916 թ. ապրիլի 18-ի զեկույցը, որում հաղորդվում էր, թե ներքին գործերի նախարարությունը հստակ արգելել էր հայերին օտարերկրյա օգնության տրամադրումը, ինչից խորապես մտահոգված՝ հայ կաթոլիկ եւ առաքելական համայնքների ներ-

³¹ ՏԷՍ R. KÉVORKIAN, L'extermination des déportés Arméniens ottomans dans les camps de concentration de Syrie-Mésopotamie (1915-1916)..., էջ 244:

³² ՏԷՍ T. AKÇAM, The Young Turks' Crime Against Humanity..., էջ 436:

կայացուցիչները դիմել էին Դուլչին՝ խնդրելով միջնորդել Ավստրո-Հուն-գարիայի եւ Գերմանիայի դեսպաններին՝ կասեցնելու հայկական կոտորածների այդ վերջին փուլը: Դուլչին փորձում էր հասնել այն դրույթի շեղարկմանը, որով օտարերկրյա կառույցներին արգելվում էր դրամական օգնություն տրամադրել տեղահանված հայ բնակչությանը³³: Զեկույցում Դուլչին նշում էր, որ թեեւ Ներքին գործերի նախարարությունը շարունակաբար հերքում էր շրջանառվող լուրերը, նա համոզված է, որ դրանք արտահայտում էին տեղական իշխանությունների որդեգրած եւ կենտրոնական կառավարության խրախուսած ընդհանուր դիրքորոշումը՝ հայերին ահաբեկել տեղահանության սպառնալիքով եւ հարկադրել դավանափոխության³⁴: Այդ միջնորդությունները վկայում էին, որ մարդասիրական օգնության տրամադրումը վերածվել էր ոչ միայն մարդասիրական, այլեւ քաղաքական հարցի՝ օսմանյան կառավարությանը խանգարելով իրականացնել հայերին իսպառ բնաջնջելու հանցավոր քաղաքականությունը:

Մարդասիրական օգնության օսմանների համակարգված արգելման վկայություն է Անկարայում գործող կաթոլիկ քահանա Ե. Դավիդի 1916 թ. մայիսի 10-ին Անջելո Դուլչին ուղղված նամակը: Նամակում նշվում է, որ կառավարությունը պաշտոնապես արգելել է որեւէ կերպ մարդասիրական աջակցություն ցուցաբերել անգամ մահամերձ հայերին: Հատկանշական է այն փաստը, որ ձերբակալվել էին կանայք, որոնք Դավիդից ստացած օգնությունը փոխանցել էին աղքատներին³⁵: Դիտելի է, որ այդ կապակցությամբ Դուլչին ձեռնարկել էր աշխույժ միջնորդական գործողություններ՝ դիմելով Մեծ վեզիրին՝ միջամտելու եւ դադարեցնելու հայ բնակչության դեմ իրականացվող քաղաքականությունը, ինչպես նաեւ թույլատրելու մարդասիրական օգնություն ցուցաբերել կարիքավորներին: Այդ ջանքերը մասամբ պայմանավորված էին այն հանգամանքով, որ Սուրբ Աթոռից ուղարկվող նյութական օգնությունը կենտրոնացնելու եւ բաշխելու գործընթացը համակարգեր հենց ինքը: Նշենք, որ Սուրբ Աթոռից բացի՝ Անջելո Դուլչին մարդասիրական աջակցություն էր ստանում նաեւ այլ երկր-

³³ *Steu* La Questione Armenia, Documenti dell' Archivio della Congregazione per le Chiese Orientali (ACO), vol. III..., էջ 114:

³⁴ *Steu* նույն տեղում, էջ 117:

³⁵ *Steu* La Questione Armenia, Documenti dell' Archivio Segreto Vaticani (ASV) & dell' Archivio Storico della Segreteria di Stato, Sezione per I Rapporti con gli stati (SS. RR. SS), vol. IV..., էջ 199:

ներից: Օրինակ՝ 1916 թ. մայիսին Վիեննայի առաքելական նվիրակ Սկապինելլին նրան էր փոխանցել 5399 ավստրիական կրոն եւ 85 հելլեր գումար՝ կարիքավոր հայ քրիստոնյաների հրատապ կարիքների ապահովման նպատակով³⁶:

Փաստորեն՝ ցանկացած տեսակի ու քանակի մարդասիրական օգնություն թուրքական վարչակարգն ընկալում էր որպես հակապետական գործողություն: Չնայած խիստ վերահսկողության եւ պատժի սպառնալիքներին, բարեգործական նախաձեռնությունները, այնուամենայնիվ, շարունակվեցին: Շատ դեպքերում տեղական ու միջազգային մարդասիրական կազմակերպությունները, կրոնական քարոզիչներն ու անհատ բարերարները, շրջանցելով պետական վերահսկողությունը, փորձել են օգնություն փոխանցել հայ գաղթականներին՝ գաղտնի ուղիներով կամ միջնորդների միջոցով: Չնայած օգնության մասնակի ու սահմանափակ լինելուն, այդուհանդերձ, որոշակի չափով հաջողվեց մեղմել տեղահանվածների վիճակը՝ հատկապես Սիրիայի, Միջագետքի ու Լիբանանի որոշ շրջաններում:

Անշելո Դոլչիի միջնորդությունը վկայում էր նրա հետեւողական ու համակարգված ջանքերի մասին, որոնք միտված էին ոչ միայն տեղահանված հայ կաթոլիկների գոյաբանական անվտանգության ապահովմանը, այլեւ նրանց համար նվազագույն ընկերային կայուն պայմանների ստեղծմանը՝ ներառյալ կեցավայր: Եւ դա այն պայմաններում, երբ Օսմանյան կայսրության պետական քաղաքականությունն ուղղված էր քրիստոնյա փոքրամասնությունների իրավական, մշակութային ու կրոնական իրավունքների համակարգված սահմանափակմանն ու ճնշմանը: Հատկանշական է, որ Կ. Պոլսի «Ժամանակ» թերթը շատ բարձր է գնահատել առաքելական նվիրակ Անշելո Դոլչիի հայանպաստ գործունեությունը, նշելով՝ «Մօնս. Տոլչին աներկիրը պաշտպանեց հալածող, ջարդող թշուառ Հայ ազգը: Երբ մեծամեծք իսկ սարսափահար կը դողային, Մօնս. Տոլչի բուռն գործունեութեան մէջ էր. կը դիմէր, կը բարեխօսէր, կը համոզէր: Շատերը ազատեց աքսորանքէ, մայրաքաղաքիս Հայութիւնը գիտէ՛ արդեօք, թէ ինչեր կը պարտի այս առաքեալին... ազատեց մահուան ճիրաններէն, գնդակահարումի, կախաղանի վճիռներէն, անթիւ են մանր պատիժներէն ազատուածները, անհամար են իր նիւթական օգուտները:

³⁶ Տես նույն տեղում, էջ, 202:

Այսպիսի բարերարի մը անունը անմոռաց պիտի քանդակուի անշուշտ Հայ ազգին սրտին մէջ»³⁷։

Նշենք, որ Անշելո Դոլչիի դիվանագիտական ծառայութեան շրջանում իրականացվել են բարեգործական մի շարք ծրագրեր, որոնք պետք է մեղմեին տեղահանված հայ կաթողիկոսների ընկերային ծանր դրութիւնը։ Մասնավորապես նրա նախաձեռնութեամբ սննդի բաշխման կենտրոն էր բացվել՝ նախատեսված աղքատ խավի համար, որտեղ օրական շուրջ 600 բաժին ապուր էր տրամադրվում կարիքավորներին։ Խոհանոցի պարենային կարիքների ապահովման նպատակով Դոլչին պատվիրակութեան այգու մի հատվածը վերածել էր բանջարանոցի, որտեղ աճեցվում էին խոտաբույսեր ու լոբազգիներ։ Ձմռան ամիսներին գոյատեւման նվազագույն պայմաններ ապահովելու համար աղքատներին տրամադրվում էին ձմեռային կոշիկներ եւ վառելանյութ՝ մասնավորապես ածուխ։

Դոլչիի զեկույցների համաձայն, նմանատիպ բարեգործություն իրականացվում էր նաեւ Սանտա Մարիա ծխական համայնքի Սալի Բազար թաղամասում, որտեղ օրական բաժանվում էր շուրջ 900 բաժին ապուր։ Այդ ծրագրերի իրագործման մէջ ներգրավված էին Ֆրանցիսկյան, Կապուչին եւ Ճիզվիտ միաբանությունների ներկայացուցիչները։ Նշենք, որ այդ խոհանոցի գործունեությունն զգալի աջակցություն էր ցուցաբերում Կ. Պոլսի Գերմանիայի դեսպանատունը՝ կատարելով դրամական նվիրատվություններ։

Նմանատիպ գործունեություն ծավալվում էր նաեւ Սան Պիետրո համայնքում, որտեղ ավստրիական բարեգործական քույրերի ջանքերով օրական բաժանվում էր շուրջ 200 բաժին ապուր՝ Ավստրիայի դեսպանատան նյութական աջակցութեան շնորհիվ։

Դոլչիի ջանքերով Իսպանիայի հովանավորութեամբ Շիշլի թաղամասում հիմնադրվել էր երեխաների համար նախատեսված սննդաբաշխման կենտրոն, որն ըստ 1916 թ. նոյեմբերի տվյալների՝ օրական ապահովում էր 100 երեխայի սնունդ։ Այդ կենտրոնի աշխատանքները համակարգվում էին թագավորական հյուպատոսի միջոցով։

Սան Անտոնիո դի Պագովայի համայնքում գերմանացի քահանա Շտրաումբինգերի նախաձեռնութեամբ եւ բարեպաշտ անձանց նվիրատվությունների միջոցով բացվել էր սննդաբաշխման կենտրոն, որտեղ օրական հատկացվում էր մոտ 100 բաժին ապուր։ Բացի այդ նախաձեռնու-

³⁷ Տե՛ս Հայկական կոտորածը, «Ժամանակ», 1918, Կ. Պոլիս, թիւ 3343։

թյուններից, Դոլչիի վկայությամբ, գործում էր նաեւ մեկ այլ բարեգործական նախագիծ՝ կազմակերպված ջանքերով ֆրանսիացի Գերոյի, որ օրական բաժանում էր շուրջ 200 բաժին ապուր՝ օգտագործելով 23 ցենտար ժողովությամբ հատուկ կտրոններ, որոնք տրամադրվում էին աղքատներին՝ տարբեր բարերարների, հատկապես հոգեւորականների միջոցով³⁸։

1916 թ. աշնանը տեղի ունեցած Անկարայի հրդեհը, որն ուղեկցվել էր ծանր նյութական կորուստներով ու տեղական բնակչության, այդ թվում՝ հայ կաթոլիկ համայնքի շրջանում առաջացրած լուրջ ճգնաժամով, նույնպես արժանացել էր Սուրբ Աթոռի առանձնակի ուշադրությանը։ Անշելո Դոլչին, արձագանքելով իրավիճակի հրատապությանը, տեղի համայնքի առաջնային կարիքների բավարարման համար անհապաղ ուղարկել էր 80 թուրքական լիրա³⁹։ Զուգահեռաբար, Սուրբ Աթոռը, ցուցաբերելով ավելի համակարգված աջակցություն, շուրջ 5000 լիրայի⁴⁰ չափով դրամական օգնություն էր փոխանցել Անկարայում ծառայություն իրականացնող կաթոլիկ քահանա Ե. Դավիդին։ Այդ աջակցությունը պետք է մեղմեր հրդեհից տուժած ավելի քան 3000 կաթոլիկների կենսապայմանների հետեւանքով առաջացած ճգնաժամը։ Հռոմի պապի հովանավորությամբ տրամադրվել էր նաեւ այլ օգնություն՝ ուղղված Օսմանյան կայսրության ուրիշ նահանգներ տեղահանված կաթոլիկների կարիքների բավարարմանը, որի ընդհանուր գումարը կազմել էր շուրջ 22 հազար լիրա⁴¹։ Բացի այդ՝ 1916 թ. սկզբին Սուրբ Աթոռը 10 հազար լիրայի չափով առանձին հատկացում էր կատարել՝ ուղղված Կ. Պոլսի Հայ կաթոլիկ պատրիարք Պողոս Պետրոս Թերզյանի ղեկավարությամբ գործող համայնքի ընկերային խնդիրների լուծմանը⁴²։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Առաքելական նվիրակ Անշելո Մարիա Դոլչիի 1916 թ. հաշվետվությունները կարեւոր եւ հավաստի աղբյուր են հայ բնակչության նկատմամբ

³⁸ *Šeu* La Questione Armenia, Documenti dell' Archivio Segreto Vaticano (ASV) & dell' Archivio Storico della Segreteria di Stato, Sezione per I Rapporti con gli stati (SS. RR. SS), vol. IV..., էջ 281։

³⁹ *Šeu* նույն տեղում, էջ 272։

⁴⁰ Դա համարժեք էր թուրքական 200 լիրային։

⁴¹ *Šeu* La Questione Armenia, Documenti dell' Archivio Segreto Vaticano (ASV) & dell' Archivio Storico della Segreteria di Stato, Sezione per I Rapporti con gli stati (SS. RR. SS), vol. IV..., էջ 281–282։

⁴² Անդ։

իրականացված քաղաքականության բնույթի բացահայտման համար: Դուլչիի հաղորդումները, հիմնված լինելով ինչպես անձնական դիտարկումների, այնպես եւ օտարերկրյա ականատեսների եւ կաթողիկ միաբանների վկայությունների վրա, փաստում են, որ օսմանյան իշխանությունների իրականացրած բռնությունները կրում էին համակարգված եւ շարունակական բնույթ: Զեկուլցներում արձանագրված տվյալները ցույց են տալիս, որ հայ բնակչության տարբեր խմբերի նկատմամբ կիրառված քաղաքականությունը տարբերակված էր՝ պայմանավորված նրանց կրոնական պատկանելությամբ, սակայն ընդհանուր առմամբ ուղղված էր հայ համայնքների կազմալուծմանն ու ոչնչացմանը: Դուլչիի հաշվետվությունները ոչ միայն լրացնում են Հայոց ցեղասպանության վերաբերյալ առկա փաստագրական դաշտը, այլեւ կարենոր վկայություն են միջազգային եւ եկեղեցական շրջանակների իրազեկվածության մասին՝ ընդգծելով այդ կառույցների սահմանափակ, սակայն նշանակալի միջամտության փորձերը հայ բնակչության պաշտպանության գործում:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայոց ցեղասպանություն, առաքելական նվիրակ, կաթողիկ միաբաններ, Անջելո Դուլչի, մարդասիրական օգնություն, տեղահանություն, դավանափոխություն:


РЕЗЮМЕ

В ходе массовых насилий, осуществлявшихся в отношении армянского населения Османской империи в 1915 г., папская миссия предприняла широко-масштабные дипломатические и гуманитарные усилия с целью предотвращения преследований и массовых убийств. Однако все посреднические инициативы Святого Престола, адресованные турецким властям, фактически не оказали влияния на их политические решения, и османская администрация последовательно продолжала реализацию своих программ, игнорируя все обращения и призывы. Официальная турецкая пропаганда представляла насильственную депортацию армян как переселение, обусловленное соображениями безопасности,

однако на практике она не носила характера реального расселения. Принудительное выселение сопровождалось смертельными маршами и массовыми расправами, направленными на физическое уничтожение армянского населения. Большинство выживших, прежде всего женщины и дети, не получили ни нового места проживания, ни какого-либо безопасного убежища, оказавшись в состоянии полной незащитности. В этих трагических условиях папская миссия продолжала выступать с гуманитарными инициативами, стремясь в пределах своих возможностей смягчить последствия постигшей армянский народ катастрофы.

SUMMARY

During the mass violence perpetrated against the Armenian population of the Ottoman Empire in 1915, the papal mission undertook extensive diplomatic and humanitarian efforts with the aim of preventing persecution and mass killings. However, all mediatory initiatives of the Holy See addressed to the Turkish authorities proved largely ineffective in influencing their political decisions, and the Ottoman administration consistently continued the implementation of its policies, disregarding all appeals and calls. Official Turkish propaganda portrayed the forced deportation of Armenians as a security-driven resettlement; however, it did not, in practice, constitute genuine resettlement. The forced displacement was accompanied by death marches and mass massacres aimed at the physical destruction of the Armenian population. Most survivors, chiefly women and children, were deprived of both permanent resettlement locations and any reliable form of protection. Despite these tragic circumstances, the papal mission maintained its humanitarian initiatives, attempting, within the constraints of its capabilities, to address the consequences of the catastrophe affecting the Armenian people.



ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
արխիվի եւ թանգարանների տնօրեն

**ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ
ԱՅՅՐ ԱԹՈՂ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԵՒ ՎԱՏԻԿԱՆԻ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1945–1954 ԹԹ.)¹**

Խորհրդային կարգերի հաստատումից ի վեր թեեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը 1920–1930-ական թթ. կրել էր մեծագույն հարվածներ ու կորուստներ², այդուհանդերձ Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, Սբ Հոգու առաջնորդությամբ եւ աստվածային զորությամբ օժտված իր խորագիտությունամբ ու դիվանագիտությամբ, մնում է կենսունակ եւ կանգուն. «Հետագարձ հայացք ձգելով 1920–1930-ական թվականներին՝ հարկավոր է փաստագրել, որ չնայած բռնի քաղաքական ու վարչահրամայական մեթոդներին, գույքի բռնագրավմանը, եկեղեցիների համատարած քանդմանն ու փակմանը, հոգեւորականների հանդեպ ֆիզիկական բռնաճնշումներին, քարոզչական-տեղեկատվական լայնածավալ գործունեությունը, պետական անվտանգության մարմինների ամենակոչ եւ զորավոր արշավանքին՝ այդպես էլ կոմկուսը պետական տարատեսակ գործիքակազմով (առաջին հերթին եւ գլխավորապես պետանվտանգության մարմինների) ի զորու չեղավ վերջնականապես ոչնչացնելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ու բնակչության լայն խավերի շրջանում քաղաքականապես արմատավորել անաստվածությունը կամ աստվածամերժությունը: Ավելին՝ Խորհրդային Հայաստանում միայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին էր, որ անգամ պետանվտանգության մարմինների հետապնդ-

^{1*} Ստացվել է՝ 22.12.2025, գրախոսվել է՝ 12.03.2026: էլ. հասցե՝ fr.asoghik@gmail.com:

² «Հայաստանի խորհրդայնացումից հետո սոսկալի եւ աննախադեպ բռնություններ սկսվեցին Հայոց Եկեղեցու դեմ. ձեռքարկվեցին բազմաթիվ եկեղեցականներ, բռնագրավվեցին Հայոց Եկեղեցու շինական կառույցները, եկեղեցապատկան ու վանքապատկան կալվածքները, եկեղեցական գանձերն ու իրերը, ձեռագրերը, փակվեցին ու խորտակվեցին եկեղեցիներ...»

...Եկեղեցականների եղեռնը 1930-ական թթ. մի քիչ ավ մեթոդներով շարունակվեց նաեւ Խորհրդային Հայաստանում» (տես «Նշանավոր ճեմարանականներ», պրակ Ա., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005, էջ 77, 81):

ման պայմաններում շարունակեց մնալ միակ զանգվածային ու օրինական կառույցը, որի գաղափարախոսությունը քաղաքականապես չէր համընկնում խորհրդային կոմունիստական իշխող գաղափարախոսության հետ»³: Դիմադրության հետեւանքով վերափոխվում են նաեւ պետական քաղաքականությունը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Մայր Աթոռն այդուհետ խորհրդային կենտրոնական եւ հանրապետական կառավարությունների շրջահայաց ու շահագետ քաղաքականության ու վերահսկողության պայմաններում է շարունակում հաղորդակցության մեջ լինել արտասահմանում գտնվող իր նվիրապետական աթոռների եւ թեմերի հետ: Մայր Աթոռի արտաքին հարաբերությունները, սակայն, Հայոց Եկեղեցու անդաստանից դուրս չէին գալիս. Սուրբ Էջմիածինն անմիջական, ուղղակի միջեկեղեցական հարաբերություններ, բացի խորհրդային Միության տարածքում գործող Եկեղեցիներից, չունեւ որեւէ այլ քրիստոնեական Եկեղեցու հետ (բացառություն էր Անգլիկան Եպիսկոպոսական Եկեղեցին): Թերեւս խորհրդային իշխանությունները, ինչպես Ռուս Ուղղափառ Եկեղեցու պարագային⁴, այնպես էլ Հայոց Եկեղեցու դեպքում զգուշանում էին, որպեսզի ԽՍՀՄ հակակրոնական եւ հալածողական քաղաքականության մասին միջեկեղեցական խողովակով բառ անգամ հայտնի չլինեւ միջագային հանրությանը: Սակայն իզուր էր այդ զգուշությունը, քանի որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը (հակառակ, որ ներքին փոխհարաբերություններում արիաբար ու հետեւողական կերպով օրինական պահանջներ էր առաջադրում եւ բողոքի արդար ձայն բարձրացնում մինչեւ ամենաբարձր պետական պաշտոնյաները՝ Երեւանից Մոսկվա, հանրապետական ու միութենական) իմաստուն ու փրկարար վճռով, «գործնականապես ապացուցված եւ որպես անշեղ ուղեցույց ընդունած», սկզբունք էր որդեգրել պետության հանդեպ օրինապահ ու զուսպ, բարյացակամ ու հանդուրժող վերաբերմունքը. «խորհրդային իշխանությունը մեր երկիրը ոտք կոխելու օրից,– Տ. Տ. Խորեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը գրում է ՀՍԽՆ ներքգործող կոմիսար Վիկտոր Խվորոստյանին,– Էջմիածինը համարում է նրան իր հարազատ պետությունը եւ միշտ աղոթել է նրա հարատեւության եւ անսասանության համար: Էջմիածինը գիտակցել է միշտ, որ հայ ժողովուրդը իր

³ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «Եկեղեցի–պետություն փոխհարաբերությունը խորհրդային Հայաստանում 1920–1930-ական թվականներին», Ա. Էջմիածին, 2025, էջ 111:

⁴ Տե՛ս Մ. Վ. ШКАРОВСКИЙ, «Русская Православная Церковь в XX веке», Москва, 2010, с. 283:

Ֆիզիկական գոյությունը նույն խորհրդային իշխանությունն է պարտական, որ նա է հայ ժողովրդի մտավոր եւ տնտեսական առաջադիմության մեծապես զարկ տվողը եւ նրա երջանկության ուղին հարթողը: Եւ այդ է պատճառը, որ էջմիածինը անկեղծորեն սիրել եւ սիրում է իր հարազատ խորհրդային իշխանությունը եւ միշտ ձգտել ու ձգտում է ընդհանրապես խորհրդային իշխանության եւ մասնավորապես իր հարազատ պետության եւ Հայրենիքի հմայքը բարձրացնել գաղութահայության աչքում: Այս ընթացքն է ունեցել մեր նախորդը, որով անշեղ ընթացել եւ ընթանում ենք նաեւ մենք հայրապետական գահ բարձրանալու օրից սկսած: Այս ուղին է, որով ընթանալ պատվիրել ենք մեր Հայրապետական կոնդակներով մեր արտասահմանյան բոլոր ներկայացուցիչներին»⁵:

Ամենայն Հայոց Կաթողիկոսության վերաբերմունքը խորհրդային պետության հանդեպ, ներքաղաքական կյանքում Հայրենական մեծ պատերազմով պայմանավորված էական փոփոխությունների հետեւանքով, այլեւս այսպես է բանաձեւվում. «...էջմիածինը եւ այնտեղ իշխող Բարձր Հոգեւոր Իշխանութիւնը վարում է յօգուտ Հայկական խորհրդային Իշխանութեան գիծ, եւ այն խղճի մտօք, որովհետեւ իր տարած գիծը ճշմարտութեան եւ արդարութեան [գիծ է – Ա. Կ.]»⁶:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գլխավորությունամբ ընդհանրական Հայոց Եկեղեցու որդեգրած այս ճշմարիտ եւ արդար գիծը դրսեւորվում է նաեւ ԽՍՀՄ-ից դուրս միջեկեղեցական հարաբերություններում:

Ա. 1945 Թ. ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՇԽԱՐՀԻՆ

1945 թ. հունիսի 16–25-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովի յոթերորդ նիստի ընթացքում պատգամավորներից լեզվաբան, պրոֆեսոր Արարատ Ղարիբջանն առաջարկում է հետեւյալը, որ «Ազգային Եկեղեցական ժողովը իր վերաբերմունքն արտահայտի Վատիկանի բռնած ընթացքի մասին՝ հանդեպ ֆաշիստական

⁵ «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության (1921–1938 թթ.)», կազմեց Սանդրո Բեհրուդյանը, Երեւան, 1994, էջ 324–325:

⁶ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3610, թ. 3, նաեւ՝ «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք ԺԲ., Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան (1904–1989)», կազմեց Սանդրո Բեհրուդյանը, Աբ. էջմիածին, 2004, էջ 133:

Գերմանիայի ղեկավարները»⁷: Առաջադրված հարցի առնչությամբ Ա. Ղա-րիբջանը ներկայացնում է նաեւ իր բացատրություններն ու լուսաբանու-թյունները: Քննարկության արդյունքում ժողովը միաձայն որոշում է հան-դես գալ հատուկ դիմումով՝ ուղղված Քրիստոնյա աշխարհին, սակայն դրա ձեւակերպումը վերապահում է Տ. Տ. Գեւորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողի-կոսին եւ Մեծի Տանն Կիլիկիո գահակալ Տ. Տ. Գարեգին Ա. Հովսեփյանին⁸:

Քրիստոնյա աշխարհին ուղղված Ազգային-եկեղեցական ժողովի դի-մումը հրապարակվում է հուլիսի 4-ին նախ՝ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի, Երեւանի կոմիտեի եւ Հայկական ՍՍՀ աշխատավորության պատգամավորների խոր-հուրդների օրգան «Սովետական Հայաստան» օրաթերթում, այնուհետեւ՝ «Էջմիածին» ամսագրում⁹: Ազգային-եկեղեցական ժողովի հանձնարարու-թյամբ դիմումն ստորագրում են Տ. Տ. Գեւորգ Զ. Ամենայն Հայոց Կաթո-ղիկոսը, Տ. Տ. Գարեգին Ա. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը, Տ. Կյուրեղ Բ. Երուսաղեմի հայոց պատրիարքը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Մամբրե եպիսկոպոս Սիրունյանը, Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Վահան եպիսկոպոս Կոստանյանը, Հյուսիսային Ամերիկա-յի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրան եպիսկոպոս Ներսոյանը, Կալիֆոռ-նիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Մամբրե եպիսկոպոս Գալֆայանը, Հու-նաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Կարապետ արքեպիսկոպոս Մազ-լումյանը, Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգոր եպիսկոպոս Կարապետյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Ներսես վարդապետ Տեր-Հովհաննիսյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Ռուբեն եպիսկոպոս Դրամբյանը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Ներսես եպիսկոպոս Աբրահամյանը, Բաքվի եւ Թուրքմենս-տանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզնիկ վարդապետ Ազնավուրյանը, Հյու-սիսային Կովկասի հայոց թեմի առաջնորդ Տ. Սուրեն եպիսկոպոս Թորո-սյանը, Նոր Նախիջևանի եւ Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Կա-րապետ եպիսկոպոս Թումանյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի հե-ղինակությամբ շարադրված դիմումում ասվում է. «Ազգային-եկեղեցա-կան ժողովը՝ գումարված Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք-Կա-

⁷ «Էջմիածին» ամսագիր, 1945, հունիս-հուլիս, էջ 41-42:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 42:

⁹ Տե՛ս «Սովետական Հայաստան», 1945, 4 հուլիսի, № 133 (7386), էջ 2, «Էջմիածին» ամ-սագիր, 1945, հունիս-հուլիս, էջ 15:

Թողիկոս ընտրելու նպատակով, իր երախտագիտական զգացմունքն ու փառաբանությունն է ուղղում առ Աստված ոչ միայն իր գործի ներդաշնակ ու կատարյալ վախճանի համար, այլ որ նաեւ այդ գումարումը զուգադիպում է հանուր մարդկության կյանքի բարօրության եւ ազատության համար անսահման նշանակություն ունեցող միացյալ ազգերի փառապանծ հաղթանակին:

Քրիստոնեական կրոնն ու եկեղեցիները արտաքո կարգի դեր ունին կատարելիք, այդ՝ եղբայրության, արդարության եւ ազատության գաղափարները կյանք եւ իրականություն դարձնելն է համայն քրիստոնեական աշխարհի եւ մարդկության մեջ: Քաղաքական միտումնավոր աշխատանքները քրիստոնեական եկեղեցիների մեջ՝ հիշյալ նպատակների իրականացման միայն խոչընդոտ կլինեն: Նոքա նոր եւ ահավոր պատերազմի ուղին կհարթեն միլիոնավոր մարդկանց կորստյան, մարդկային կուլտուրական ստեղծագործության ոչնչացման պատճառ կհանդիսանան եւ մարդկության համար նոր տառապանքների դռներ կբանան:

Տարաբախտաբար Հռովմեական Եկեղեցին գլխավորող Վատիկանը մխրճվում է քաղաքական նպատակների մեջ՝ արգելք հանդիսանալով քրիստոնեական բարձրագույն նպատակների իրագործմանը եւ պաշտպանելով գերմանական աշխարհավեր ուժը, որ հանուր մարդկության տառապանքների աղբյուր է հանդիսացել: Ուստի Ազգային-Եկեղեցական Ժողովը Վատիկանի բռնած այս դիրքը, որ անհարիր է քրիստոնեական վսեմ գաղափարներին, համարում է դատապարտելի»¹⁰:

Հայոց Եկեղեցու Ազգային-եկեղեցական Ժողովի՝ Վատիկանի բռնած դիրքը դատապարտող դիմումը եւս, ինչպես նույն թվականի սկզբին հրապարակված Ռուս Ուղղափառ Եկեղեցու Տեղական Ժողովի հայտարարությունն ուղղված աշխարհի բոլոր ժողովուրդներին¹¹, շրջահայեցություն

¹⁰ «Սովետական Հայաստան», 1945, 4 հուլիսի, № 133 (7386), էջ 2, «էջմիածին» ամսագիր, 1945, հունիս-հուլիս, էջ 15: Նկատենք, որ Հայաստանի ազգային արխիվում պահվող դիմումի մեքենագիր տարբերակի վերջին պարբերության առաջին նախադասությունն ունի այս շարադրանքը՝ «Տարաբախտաբար Հռովմեական Եկեղեցին գլխավորող Վատիկանը մխրճում է քաղաքական նպատակների մեջ արգելք հանդիսանալով քրիստոնեական բարձրագույն նպատակների իրագործման եւ պաշտպանելով գերմանական աշխարհաւեր ուժը, որ հանուր մարդկութեան տառապանքների աղբյուր է հանդիսացել, ապահովում է ապագայ նոր պատերազմը: Սակայն «ապահովում է ապագայ նոր պատերազմը» հատվածի վրա թանաքագրչով գիծ է քաշված (տե՛ս ՀԱՍ, ֆ. 409, ց. 1, գ. 532, թ. 1):

¹¹ 1945 թ. հունվարի 31-ից փետրվարի 2-ը Մոսկվայում գումարվում է Ռուս Եկեղեցու Տեղական Ժողովը՝ պատրիարքի ընտրության եւ Ռուս Եկեղեցու ղեկավարման կանոնադրության

արտահայտող համերաշխությունն էր Խորհրդային պետության քաղաքականությունը¹²: Արդարեւ, աշխարհաքաղաքական իրավիճակով պայմա-

ւնդունման նպատակով: Այդ ժողովի ընթացքում, առաջին անգամը լինելով, գործածվում է Խորհրդային Միության եկեղեցական հարթակը եւ հնչում է հայտարարություն ընդդեմ վատիկանյան քաղաքականության: Ժողովի մասնակիցները, որոնց թվում նաեւ այլ Ուղղափառ եկեղեցիների պատրիարքներ ու պաշտոնական ներկայացուցիչներ համերաշխություն հայտնելով Խորհրդային պետության քաղաքականությանը, փետրվարի 7-ին՝ դիմելով աշխարհի բոլոր ժողովուրդներին, ի մասնավորի կտրականապես մերժում են Հռոմի Պիոս ԺԲ. պապի առաջադրած «փափուկ խաղաղության» գաղափարը. “Представители Православных Автокефальных Церквей, присутствовавшие на созванном в Москве Соборе Русской Православной Церкви для избрания Патриарха Московского и всея Руси, имея в виду теперешнее международное положение, возвышают свой- голос против усилий тех – особенно Ватикана,— кто, пытаясь в своих выступлениях оградить гитлеровскую Германию от ответственности за все совершенные ею преступления и взывая к милосердию в отношении гитлеровцев, заливших кровью невинных жертв всю Европу, хочет тем самым, по нашему мнению, оставить после войны на земле фашистское, человеконенавистническое, антихристианское учение и его носителей” (տե՛ս «Журнал Московской Патриархии», февраль, № 2, 1945, էջ 17):

¹² Հայաստանի ազգային արխիվում՝ ՀԽՍՀ Ժողովմխորհրդի կից Հայ լուսավորչական եկեղեցու գործերի խորհրդի ֆոնդում, պահվում է եւս մեկ դիմում-կոչ՝ «Բոլոր հավատացեալ քրիստոնյաների քրիստոնեական եկեղեցու պետերին» խորագրով: Այս կոչը, սակայն, ժամանակին չի հրապարակվել. թերեւս այն եղել է դիմում-կոչի տարբերակներից մեկը: Խնդրո վավերագրի համաձայն 1945 թ. Ազգային-եկեղեցական ժողովն ի դեմս Հայոց եկեղեցու՝ լիովին միանալով Ռուս Ուղղափառ եկեղեցու հրապարակած դիմումին, իր բողոքի հուժկու ձայնն է բարձրացնում Հռոմեակաթոլիկ եկեղեցու հոգեւոր առաջնորդների, ի մասնավորի Պապի եւ Վատիկանի դեմ, այլեւ կոչ է անում ողջ քրիստոնեությանը, որպէսզի բոլոր ուժերով օգնեն առաջադեմ մարդկությանը խստագույն պատժի ենթարկելու Երկրորդ համաշխարհային պատերազմի հանցագործներին եւ հաստատելու ֆաշիզմի գոյությունը բացառող կարգեր. «...Բայց ի զարմանա մեր, մինչդեռ ազատասեր մարդկությունն այսօր զբաղված է խաղաղության, անվտանգության եւ բոլոր ժողովուրդների բարեկեցությունը տնօրինելու խնդրով, ոմանց կողմից կոչեր են արվում ներող լինել մե եւզմ վարվել պատերազմի հանցագործների հետ, փորձեր որոնց նպատակն է զերծ պահել արժանի հատուցումից գերմանական ֆաշիզմի պարագլուխներին եւ հետագա գոյության հնարավորություն տալ գերմանական իմպերիալիզմին:

Եւ այդ հանցագործ փորձերը, որոնք վտանգի տակ են դնում ապագա խաղաղությունն ու ժողովուրդների համերաշխությունը՝ ի զարմանա մեր, գլխավորում են կաթոլիկական եկեղեցու կենտրոնը՝ Վատիկանը եւ նրա հոգեւոր առաջնորդները:

Հայ եկեղեցին լիովին միանում է Ռուսական Ուղղափառ եկեղեցու ժողովի կողմից աշխարհիս բոլոր քրիստոնյաներին ուղղված դիմումին, որով նա բողոքում է Վատիկանի ջանքերի դեմ, որը ձգտում է զերծ պահել պատասխանատվությունից գերմանական ֆաշիզմի ջատագովներին նրանց գործած բոլոր ոճրագործությունների համար, ներողամտություն պահանջելով նրանց նկատմամբ:

Ողջ առաջավոր մարդկության հետ միատեղ, մենք մեր բողոքի հուժկու ձայնն ենք բարձրացնում բոլոր նրանց դեմ, որոնք ինչպէս պատերազմի ընթացքում, այնպէս էլ այժմ, երբ խաղաղության թշնամիները պետք է կանգնեն հատուցման դատաստանի առջեւ, աշխատում են ողջ Եւրոպան միլիոնների արլունով ողողող հիտլերյան զազրեւի մարդասպաններին ազատել պատասխանատվությունից, դրանով իսկ մարդկության ապագան նորից դնել պատերազմի սպառնալիքի տակ: ...Մենք կոչ ենք անում ողջ քրիստոնեությանը եւ նրանց, ում համար թանկ է խաղաղությունը, մարդկային անձի ու հոգու ազատությունը, աղոթել եւ բոլոր ուժերով օգնել

նավորված՝ Խորհրդային Միությունում իր հեղինակությունամբ, աշխարհասփյուռ հանգամանքով ու միջազգային որոշակի ազդեցությունամբ նշանավոր եւ Ռուս Եկեղեցուց հետո երկրորդը ճանաչված Հայաստանյայց Եկեղեցին անպայմանորեն պետք է հանդես գար այդ դիմումով: Բնավ փուլթ չէ, եթե նույնիսկ այդ դիմումի հրապարակման անհրաժեշտությունն առաջ էր քաշվել միութենական եւ հանրապետական պետական պատկան մարմինների¹³ կողմից, նախ եւ առաջ՝ այդ էին պահանջում թե՛ հոգեւոր-եկեղեցական ինքնագիտակցությունն ու առաքելությունը, ապահովությունն ու անվտանգությունը, թե՛ ազգային-պետական շահը: Անհաղթահարելի թվացող բազում դժվարությունների ու փորձությունների միջով անցած ու անցնող Տ. Տ. Գեւորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն այն հոգեւոր Առաջնորդն էր, որը 1938 թ. ի վեր «բարձրացրեց մեր ազգի արժեքը, եկեղեցու պատիվը՝ արդարության եւ հայրենասիրության ճանապարհով»¹⁴: Հետեւաբար, նորընտիր Հայոց Հայրապետը վավերացնելով ու հրապարակելով նման ծանրակշիռ դիմումը՝ խորապես համոզված էր կայացված որոշման ճշմարտացիության մեջ, ստեղծված իրադրության մեջ եկեղեցական ու պետական գաղափարաբանություններն ու ձգտումները համընկել էին: Խորագետ Հայրապետի ծավալած գործունեությունը չէր կարող աննկատ մնալ Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Միության բարձրագույն ղեկավարության, ի մասնավորի Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ի. Վ. Ստալինի կողմից: Ուստի Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր տեղակալի, ապա՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գեւորգ Զ. Հայրապետի առաջադրած եկեղեցական որոշ կենսական խնդիրներին պետության կողմից տրվում է դրական լուծում. «Ի. Վ. Ստալինի Մեզ ընդունելը պետք է համարել Մեծ Մարդու գոհունակութեան եւ համակրությունն նշանակ հանդէպ հայ ժողովրդի, իսկ խնդիրների մակագրական դրական որոշումը՝ հանդէպ էջմիածնի տա-

առաջադեմ մարդկությանը խստագույն պատժի ենթարկել պատերազմի հանցագործներին եւ հաստատել այնպիսի կարգեր, ուր անհնարին լինի ֆաշիզմի գոյությունը», տե՛ս ՀԱՍ, ֆ. 823, ց. 1, գ. 6, թ. 6–7:

¹³ 1945 թ. Ազգային-եկեղեցական ժողովին ներկա էին ԽՍՀՄ կառավարության ներկայացուցիչը՝ ԽՍՀՄ Ժողկոմխորհրդի կից կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկին եւ ՀԽՍՀ Կառավարության ներկայացուցիչը՝ ՀԽՍՀ Ժողկոմխորհրդի կից Հայ լուսավորչական եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանը, տե՛ս «էջմիածին» ամսագիր, հունիս–հուլիս, 1945, էջ 27:

¹⁴ «էջմիածին» ամսագիր, 1945, հունիս–հուլիս, էջ 42:

ծած վստահութեան: Այս բացառիկ երեւոյթը կատարելապէս վստահ եմ թէ կգնահատուի թէ ազգի, թէ եկեղեցու կողմից, եւ կարդարանայ: Մինչեւ այժմ մեր ունեցած փաստական արտօնութիւնները մեծ մարդու մակարութեամբ ստացան նաեւ իրաւական բնոյթ»¹⁵:

Արդարեւ, Հայոց Եկեղեցու իշխանութեան գերագույն մարմին Ազգային-եկեղեցական ժողովի բողոքն ու դատապարտութիւնն ուղղված Հռոմի Պիոս ԺԲ. պապի եւ Վատիկանի դեմ, ամենեւին էլ ողջ Հռոմեակաթուրիկ Եկեղեցու դատապարտութիւնը չէր. «Կաթոլիկ վերնախավը,— նշվում է «էջմիածին» ամսագրի խմբագրականում,— միաձուլվել է պատերազմի հրձիգների հետ եւ ապրում է նրա մարդասպան գաղափարներով: Շարքային կաթոլիկ աշխատավորութիւնը խաղաղութիւն է ուզում մյուս ժողովուրդների պես, իսկ վերնախավը կառչել է պատերազմի հրձիգների արկածախնդրական քաղաքականութեանը: Շարքային կաթոլիկ հավատացյալները՝ աշխատավոր մասսաների հետ պայքարում են ամբողջ աշխարհում հացի, ազատութեան, խաղաղութեան համար: Վերնախավը, որը ծառայում է Տրումենին՝ օրհնում է նրանց արշավանքը ընդդէմ աշխատավորութեան ապրելու իրավունքի»¹⁶:

Բողոքի դեմ եւ ակթիստական պետութեան ու հասարակարգի պայքարող եւ հետպատերազմյան աշխարհում սկսված «սառը պատերազմի» նոր իրադրութեան պայմաններում վերադիրքավորվող Վատիկանն ուներ իր ճշմարտութիւնն ու իր արդարութիւնը, որով եւ պայմանավորված՝ իր յուրահատուկ գործունեութիւնն ու սերտ դաշինքն արեւմտյան տերութիւնների հետ: Սակայն որոշ է, որ վատիկանյան այդ ճշմարտութիւնն ու արդարութիւնը՝ գաղափարախոսութիւնն ու դրանից բխող գործունեութիւնն ու դաշնակցութիւնն ուղղված էր ոչ միայն սոցիալիզմի ու կոմունիզմի «վտանգը» չեզոքացնելուն, այլեւ Խորհրդային Միութեան ժողովուրդների եւ եկեղեցիների դեմ. «Стратегия Ватикана, нацеленная на “отбрасывание” коммунизма и Советского Союза и даже на их уничтожение “во имя спасения христианской Европы”, с 1946 г. теснейшим образом связывала Ватикан с западными державами.Ватикан снова сосредоточил свое внимание на подготовке католической миссии для

¹⁵ «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան (1938–1955 թթ.), գիրք Զ., Գէորգ Զ. Զորէքեան Կաթողիկոս Ամենայն Հայոց», կազմեց Սանդրո Բեհրուդյանը, Երեւան, 1999, էջ 282:

¹⁶ «էջմիածին» ամսագիր, 1952, ապրիլ, էջ 5:

Советского Союза в полном соответствии с планами церковной унии среди славянских народов.

Чтобы понять все эти, казалось бы, чисто церковные дела, которых мы коснулись лишь в общих чертах, их необходимо рассматривать в тесной связи с “холодной войной”. Годы кульминации “холодной войны” не случайно были годами активизации восточной миссионерской деятельности Ватикана»¹⁷:

Դարերի հոլովույթում Հռոմեակաթուղիկ Եկեղեցին՝ ի գլուխ Վատիկանի, անդադար եւ ամեն միջոց ի գործ դնելով, ձգտել է կլանել, նվաճել, «Պետրոսի Գահին» հնազանդեցնելով ենթարկել՝ իր կողմից հերձվածող համարվող մյուս քրիստոնեական Եկեղեցիներին: Եւ խորհրդային Միության ժողովուրդներն ու եկեղեցիներն այն պարարտ անդաստանն էին դիտվում, որտեղ Վատիկանը փափագում էր միախոնրական առաքելությունն իրականացնել եւ հաստատել իր տիրակալությունը: Մինչդեռ աշխարհը փոխվել էր, մարդկության կյանքում բացվել էր հոգեւոր կյանքի մի նոր էջ՝ բյուզանդահռոմեակաթուղիկ միարարական շարժումներին հրաժեշտ տալու էր եկել էկումենիկ շարժումը: Իսկ Վատիկանը դեռ պետք է հասունանար ճշմարիտ ավետարանական սիրո մեջ. «Մինչ Վատիկանի Բ ժողովը, ինչպես շատ այլ հարցերում, այնպես էլ էկումենիզմի վերաբերյալ, Կաթոլիկ Եկեղեցու դիրքորոշումն այլ էր: 20-րդ դարասկզբին, երբ նոր էր ձեւավորվում էկումենիկ շարժումը, Կաթոլիկ Եկեղեցու դիրքորոշումը հստակ էր: Շարժումը նպատակադրված էր Եկեղեցու միությանը: Կաթոլիկ Եկեղեցին դարերով փայփայել էր Եկեղեցու միության իր ուրույն սկզբունքները: 20-րդ դարասկզբին, երբ ծնվում էր այս շարժումը, Կաթոլիկ Եկեղեցին գրկաբաց չէր ընդունելու այն»¹⁸:

Հետագա շարադրանքում կներկայացվեն այն հիմնավոր փաստերը, որոնք ապացուցում են 1945–1954 թթ., խորհրդային Միության դեմ իրականացվող անզիջող պայքարի ծիրից ներս, Հայոց Եկեղեցու, հայ ժողովրդի եւ նրա քաղաքական անկախության դեմ Վատիկանի սկսած նոր «խաչակրաց արշավանքը», որն իրագործվում էր հատկապես Հայ Կաթոլիկ Եկեղեցու պատրիարքության միջոցով՝ Վատիկանի սովերի ներքո:

¹⁷ Э. Винтер, “Политика Ватикана в отношении СССР (1917–1968)”, третья часть трилогии, Москва, ст. 194, 200.

¹⁸ Հովսեփոս Աբգ. ՄԱՆՈՒԿՅԱՆ, «էկումենիզմը 20-րդ դարում եւ Հայ Եկեղեցին» (վարդապետական թեզ), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005, էջ 58:

Բ. ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ
ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԾ
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՉՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Երկրորդ աշխարհամարտի հաղթական ելքն ի Հայաստան եւ ի Սփյուռուս հույս արթնացրեց՝ վերամիավորելու Արեւմտյան Հայաստանը Խորհրդային Հայաստանին: Առավել քան երբեւէ չափազանց իրական էր «Ազգային սուրբ Դատի» հաղթանակը: Հայ մտավորականությունն ու քաղաքական միտքն այդ հույսը վերածում են պահանջատիրության՝ բոլոր միջոցներով ծավալելով նպատակային գործունեություն: Միացյալ Հայաստանը պետք է, որպեսզի աշխարհասփյուռ հայությունը վերադառնա իր հայրենի բնօրրան, ամբողջանա եւ ապահով կերպով շարունակի իր ստեղծագործ ու շինարար կյանքը. «Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին, երբ ականերեւ էր Ֆաշիստական Գերմանիայի եւ նրա դաշնակիցների պարտության անխուսափելիությունը, Սփյուռքում եւ Հայաստանում՝ մտավորականության շրջանում, բարձրացավ Կարսի մարզը եւ Արեւմտյան Հայաստանը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու պահանջը՝ աշխարհասփյուռ հայերին իրենց հայրենիքում համախմբելու համար:

Հայաստանում 1944 թ. այդ հարցը քննարկվում էր մտավորականների նեղ շրջանակներում, մինչդեռ սփյուռքահայությունը, հատկապես Ստալինգրադի (այժմ՝ Վոլգոգրադ) ճակատամարտից հետո, ակտիվ միջոցների դիմեց հայկական տարածքների հարցը միջազգային հանրությանը ներկայացնելու ուղղությամբ: Հայկական գաղթօջախներում ստեղծվեցին ազգային խորհուրդներ, որոնց աշխատանքը համակարգում էր 1944 թ. մարտին Նյու Յորքում ստեղծված Ամերիկահայ ազգային խորհուրդը»¹⁹:

Հայկական հողերը վերադարձնելու եւ հայրենադարձություն կազմակերպելու հարցերի արծարծմանն ու լուծմանն է լծվում նաեւ Հայոց Եկեղեցին՝ ի գլուխ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի. «Ազգային սուրբ Դատի բազմադարյան հավատարիմ պաշտպան Մայր Աթոռը, ունկնդիր Սփյուռքի տարագիր մեր զավակների արդար պահանջի, անդրդվելի կանգնած է իր կոչմանն ու պարտքի կատարման պատասխանատու դիրքերում»²⁰:

¹⁹ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, «Հայոց պատմություն», հտ. IV, գիրք երկրորդ (նորագույն ժամանակաշրջան /1945–1991 թթ./), Երեւան, 2016, էջ 75:

²⁰ «Էջմիածին» ամսագիր, 1947, մարտ–ապրիլ, էջ 3:

Այսպես՝ 1945 թ. Ազգային-եկեղեցական ժողովը, իր աշխատանքների սկզբին, հեռագիր հղելով ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ, մարշալ Ստալինին՝ ի մասնավորի նշում է. «...Մենք հաստատ հավատացած ենք, որ Ձեր օժանդակությամբ կիրականանան ճնշման ու հալածանքների հետեւանքով տարագիր դարձած արտասահմանյան հայերի իղձերը եւ նրանք կվերագառնան իրենց Հայրենիքը՝ Սովետական Հայաստան»²¹: Իսկ ժողովի աշխատանքների ավարտից հետո՝ Ազգային-եկեղեցական ժողովի նախագահության կողմից Ի. Վ. Ստալինին հղված երկրորդ հեռագրում հետեւյալն է ասվում. «Մենք մեծ հույս ունենք, որ Սովետական Միության պետական քաղաքագիտական իմաստությունը կգտնե նաեւ միջոց ու ճանապարհ վերացնելու այն անարդարությունը, որին ենթարկվեց մեր ժողովուրդը առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում»²²: Այնուհետեւ, նույն թվականի նոյեմբերի 27-ին՝ այլեւս Տ. Տ. Գեւորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հատուկ գրությամբ դիմում է երեք գերտերությունների ղեկավարներին՝ ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի նախագահ Ի. Վ. Ստալինին, ԱՄՆ-ի նախագահ Հ. Ս. Տրումենին եւ Մեծ Բրիտանիայի վարչապետ Կ. Ռ. Էտլինին՝ խնդրելով. «...Ձեզ են դիմում Թյուրքիայից վտարված հին ու նոր հայ գաղթականները, որոնք թափառում են երկրագնդի զանազան մասերում եւ նոցա հետ Ամենայն Հայոց Հինավուրց Հայրապետությունը եւ խնդրում Ձեզ ճանաչել հայերի իրավունքը իրենց պատմական հայրենիքի վրա, որ նոքա սրբագործել են իրենց արյունով եւ քրտինքով եւ ծածկել հիշատակաց արժանի հարուստ կուլտուրական կոթողներով: Մենք խնդրում ենք առնել Թյուրքիայի ձեռքից այդ բռնագրավված եւ այժմ համարյա ամայացած հողերը եւ վերագարձնել իրենց իսկական տերերին ու միացնել Սովետական Հայաստանին, որով նոքա հնարավորություն կունենան խաղաղ ապրելու իրենց եղբայրակիցների կողքին՝ աշխատելու եւ իրենց ազգային մշակույթը զարգացնելու:

...Հայ ժողովուրդը բոլոր ճակատներում քաջությամբ կռվեց հաղթանակի համար, ուստի անիրավություն կլինի, եթե այս անգամ էլ նա հուսախաբ լինի: Աշխարհը աններելի կհամարե, եթե այս անգամ էլ հայերի սրբազան իրավունքը չհարգվի:

²¹ «Էջմիածին» ամսագիր, 1945, հունիս-հուլիս, էջ 7:

²² «Սովետական Հայաստան», 1945, 6 հուլիսի, № 134 (7387), էջ 1, «Էջմիածին» ամսագիր, 1945, հունիս-հուլիս, էջ 8:

....Ուստի վերստին խնդրում ենք, որ Թյուրքիայի Հայկական Վիլայեթները միացվեն Սովետական Հայաստանին, որպեսզի հայուկթյունը ամբողջանա՝ հավաքվելով հայրենի երկրում եւ ապահովության ու խաղաղության մեջ՝ շարունակե իր ընդհատված քաղաքակրթական աշխատանքը եւ ի հայտ բերե իր անուրանալի ստեղծագործական պոտենցիալը»²³:

Հայոց հողային պահանջատիրության եւ հայրենադարձության խնդիրներին Վեհափառ Հայրապետն անդրադառնում է նաեւ նոյեմբերի 29-ին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կազմակերպված մամլո ասուլիսի ժամանակ, որին մասնակցում էին մի խումբ լրագրողներ, կենտրոնական եւ հանրապետական թերթերի թղթակիցներ: Հայոց Հայրապետը հայտարարում է հետեւյալը. «Արտասահմանի հայուկթյան ճակատագրի մասին մեր հոգատարուկթյունը եւ նրանցից ստացած բազմաթիվ նամակներն ու հեռագրերը մեզ մղեցին դիմելու երեք մեծ տերուկթյունների ղեկավարներին..., խնդրելով վերացնել բազմաշարժար հայ ժողովրդի վերաբերմամբ թույլ տրված պատմական մեծ անարդարուկթյունը: ...Դա գաղթական հայերին հնարավորուկթյուն կտա մի ընտանիքի մեջ ապրելու իրենց արյունակից եղբայրների հետ, աշխատելու եւ զարգացնելու իրենց ազգային կուլտուրան: Եւ դա արդարացի փոխհատուցում կլինի այն վիթխարի գոհերի ու ինքնազոհուկթյունների հանդեպ, որ հայ ժողովուրդը բերել է հանուն միավորյալ դեմոկրատական ազգերի գործի, հանուն դեմոկրատիայի հաղթանակի»²⁴:

Դեկտեմբերի սկզբին՝ ԽՍՀՄ Ժողկոմխորհի՝ նոյեմբերի 21-ի որոշման («Արտասահմանյան հայերի՝ Խորհրդային Հայաստան վերադառնալու կապակցուկթյամբ ձեռնարկվող միջոցառումների մասին») հրապարակումից հետո, Տ. Տ. Գեւորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդես է գալիս ռադիոտելուկթով: Վեհափառ Հայրապետն անդրադառնալով Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 25-ամյա հոբելյանին եւ այդ տարիների նվաճումներին՝ մասնավորապես նշում է. «Սովետական Մեծ Միուկթյան Կառավարուկթյունն ընդառաջելով սփյուռքի հայուկթյան խնդրանքին՝ընդունել է մի պատմական որոշում, որով թույլատրվում է արտա-

²³ «Սովետական Հայաստան», 1945, 2 դեկտեմբերի, № 259 (7512), էջ 3, տե՛ս նաեւ «էջմիածին» ամսագիր, 1945, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 8-10:

²⁴ Նույն տեղում, տե՛ս նաեւ «էջմիածին» ամսագիր, 1945, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 11:

սահմանյան հայերին վերադառնալու իրենց սրբազան հայրենիքը՝ Սովետական Հայաստան:

Հարազատ կառավարության այդ սքանչելի որոշումը Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռը եւ Հայրապետությունը ողջունել են սրտի անհուն բերկրանքով եւ խորին երախտագիտական զգացմունքով:

....Միովեական կառավարության պատմական որոշումը այժմեական է, եւ որ այս 25 տարվա քրտնաջան աշխատանքի նվաճումները հնարավորություն են տալիս Հայաստանի կառավարությանը գրկաբաց ընդունելու արտասահմանի իմ սիրասուն ու բազմաշարչար զավակներին:

....Մենք չենք կամենում կասկածել, որ երբ Սովետական կառավարությունը արտասահմանյան հայություն իր սրբազան հայրենիքը վերադառնալու հարցն է լուծել, դեմոկրատիկ Մեծ պետությունները, հատկապես ժողովուրդների Մեծ Առաջնորդ ՍՍՀՄ-ի հանճարեղ միտքը, ելք կգտնեն նաեւ հայ ժողովրդի արդար պահանջը դրականապես լուծելու եւ նրան վերադարձնելու Տաճկաստանի կողմից բռնություններ գրավված իր պապական հողերը, միացնելով այն բուն երկրին՝ Սովետական Հայաստանին»²⁵:

Իսկ արդեն տարեվերջին՝ դեկտեմբերի 23-ին, Վեհափառ Հայրապետը Շրջաբերական է առաքում Հայոց Եկեղեցու արտասահմանի առաջնորդներին, որով կատարում է հետեւյալ կարգադրությունը. «Այսօր, երբ ներգաղթի հարցը սրտաբաց ու լայն մասշտաբով է դրված՝ տեղի Հայ Հոգեւորականությունը բարոյական պարտականություն ունի բացատրել իր հոտին հարցի ներկա վիճակը եւ նորա շտապ կազմակերպման անհրաժեշտությունը եւ իր ոգեւորիչ քարոզներով անմար պահել հայ ժողովրդի ոգեւորությունը:

....Սովետական Հայաստանում կազմակերպված ներգաղթի կոմիտեն հրահանգել է տեղերում կոմիտեներ կազմակերպել, որպեսզի ներգաղթը կանոնավոր, արագ եւ հաջող կատարվի: Հատկապես Առաջնորդներից վերա բարոյական պարտականություն կա Ձեր հեղինակությունը, ճարտար լեզվով եւ ազդու խոսքով՝ աջակցելու հիշյալ կոմիտեների հաջող կազմակերպմանը, առաջ քաշելով հեղինակավոր, գործունյա եւ ներգաղթի գաղափարին նվիրված անձանց: Եւ այս առթիվ Ձեր կատարած աշխատանքների մասին անմիջապես Մեզ զեկուցանել, որպեսզի գործն

²⁵ «Էջմիածին» ամսագիր, 1946, հունվար, էջ 9–10:

ընթացք ստանա եւ պետական խնամակալության հանձնվի»²⁶: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը նշում է, որ առաջնորդներին՝ որպես խորհրդակից, մեծապես օգտակար կարող են լինել թեմական խորհուրդներն ու պատգամավորական ժողովները: Թեեւ Հայաստանի կառավարությունն ըստ ամենայնի ընդառաջում է ներգաղթի հաջող լուծմանը՝ «խորհում է ներգաղթող ժողովրդին փոխադրել, երկրում տեղավորման դյուրություններ տալ եւ նորա ապրուստի մասին հոգալ», սակայն Հայոց Հայրապետն անհրաժեշտ է համարում, որ առաջնորդները գործին մասնակից դարձնեն նաեւ բարեգործական ընկերություններին եւ ազգային մեկենասներին, «որոնք միշտ էլ սիրով եւ առատաձեռնությամբ մասնակցել են նման դեպքերում»²⁷: Վերջապես՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շեշտում է. «Ս. Էջմիածինն էլ չի զլանա իր ամենատեսակ աջակցությունը ներգաղթի սուրբ գործին՝ իր ձեռքն եղած ամենատեսակ միջոցներով»²⁸:

Հայաստանի ազգային արխիվում պահվող Գերագույն հոգեւոր խորհրդի արխիվային ֆոնդում առկա է սույն Հայրապետական շրջաբերականի մեկ այլ տարբերակ, որում առկա է թեմակալ առաջնորդներին արված եւս մեկ կաթողիկոսական թելադրություն. «Այս գաղափարը անխտիր բոլոր հայութեան մէջ կենդանի եւ վառ պահելու հարցում, չափազանց օգտակար կարող է լինել մամուլը, մանաւանդ հարցին բարեացակամ վերաբերմունք ունեցող մամուլը: Ուստի եւ մամուլը պէտք է օգտագործել ժողովրդին լուսաբանութիւններ տալու եւ ներշնչումներ անելու նպատակով»²⁹:

Արդարեւ, ժամանակի հայ պետական, հասարակական-քաղաքական եւ հոգեւոր միտքն ու կառույցները, բնականաբար, համերաշխ Միութենական կառավարության հետ՝ ամենայն անկեղծությամբ, ուրախությամբ, հուսավառ ու եռանդագին կերպով ջանքեր էին գործադրում, որպեսզի իրականություն դառնա Միացյալ Հայաստանը եւ աշխարհասփյուռ հայությունը ժողովրդի իր Մայր Հայրենիքում: Առավելաբար ոգեւորիչ էին ազգասեր ու հայրենասեր Տ. Տ. Գեւորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ելույթներն ու խոսքերը, որոնք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից լույսի պես սփռվում էին գաղթաշխարհի հայ համայնքներում՝ ճշմարտապես լուսավորելով նրանց եւ առաջնորդելով դեպի Մայր Հայաստան. «Ամենայն

²⁶ Նույն տեղում, էջ 12:

²⁷ Նույն տեղում, էջ 13:

²⁸ Նույն տեղում, էջ 13:

²⁹ «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության...», գիրք 2., էջ 309:

Հայոց կաթողիկոսի ելույթներն ու ներգաղթի կոչերը մեծ խանդավառություն էին առաջացնում սփյուռքում: Սփյուռքահայ մամուլը հեղեղված էր ներգաղթի ոգեւորութեամբ: Գրեթե բոլոր տեղերում հայերին ոգեւորելու ու առաջնորդելու գործը ստանձնել էին հայ եկեղեցու առաջնորդները: Նրանք ամենուր հայտարարում էին մայր հայրենիքի հզորացման ու վերագարթոնքի, ինչպես նաև հայության պապենական հողերի ետ վերագարձի մասին: Այդ ամենով հանդերձ չպետք է մոռանալ, որ 1945 թ. ապրիլից մինչև 1947 թ. իր ելույթները՝ հայահավաքի ու հողահավաքի թեմայով, սկզբում տեղապահ, ապա կաթողիկոս Չորեքչյանը համաձայնեցրել էր իշխանությունների հետ»³⁰:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Երուսաղեմի հայոց պատրիարք Տ. Կյուրեղ արքեպիսկոպոս Իսրայելյանի՝ 1946 թ. մայիսի 27-ի գրությունը՝ ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Խոսելով ներգաղթի արտոնության եւ հրավերի մասին՝ նա նշում է, որ այդ արդեն մեծ խանդավառութեամբ է ընդունվել, եւ Հայ բարեգործական ընդհանուր միությունը ստանձնել է վճարումը փոխադրության բոլոր ծախսերի՝ իր ունեցած եւ մասնավոր հանգանակություններից ստացված միջոցներով: Պատրիարքը հայտնում է նաև, որ Միության հանգանակություններին պետք է մասնակցեն արտասահմանի բոլոր գաղութներն ու ազգային հաստատությունները, քանի որ «Հայաստանի կառավարութեան այս նոր ձեռնարկին կանոնաւոր ու յաջող իրագործումը անտարակոյս պիտի բարձրացնէ ոչ միայն Հայաստանի բնակչութեան թիւը, այլև անոր արդիւնաբերութեան քանակն ու որակը, եւ բնական յաջորդութեամբ անոր ընդհանուր զարգացումը կեանքի բոլոր մարզերուն մէջ»:

Երուսաղեմի հայոց պատրիարքը գրության մեջ նաև իր հետեւյալ ըղձանքն է բարձրաձայնում՝ թերեւս որպէս արձագանք այն ժխտական տրամադրությունների, որոնք արդեն երեւան էին գալիս որոշ համայնքներում՝ հիմնականում Հայ Կաթողիկէ Եկեղեցու պատրիարքութեան ազդեցութեամբ. «Երանի թէ միաժամանակ ներգաղթ մըն ալ մեր հոգեւոր աշխարհին մէջ տեղի ունենար եւ մեր թափառական այլադաւանները վերագառնային իրենց մայրենի եկեղեցու գիրկը եւ Հայաստանեայց եկեղեցին վերագտնէր իր նախկին միասնականութեան ոյժն ու եռանդը»³¹:

³⁰ Հ. ՆՆԳԻՐԱՐՅԱՆ, «Մեծ հայրենադարձությունը եւ Հայ Եկեղեցին», Երեւան, 2023, էջ 138:

³¹ «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության...», գիրք 2., էջ 324:

Եւ, իրապես, տակավին 1945 թ. վերջավորութեանը, երբ նոր էր հրապարակվել Հայրենադարձութիւն կազմակերպելու ԽՍՀՄ Ժողկոմիսորի որոշումը, Հայ Կաթողիկէ Եկեղեցու պատրիարքութեան «Աւետիք» պաշտոնաթերթը գրում է. «...Անտարակոյս, մեծ ուրախութիւն պատճառեց ամենուս՝ Սովիէթ Բարձրագոյն Խորհուրդին որոշողութիւնը՝ սփիւռքի Հայերը Սովիէթ երկիրներու մէջ ընդունելու:

Սակայն, կամայ, կամայ, բարեկամներ...

Չմոռնանք որ տեղափոխութեան միջոցներու չգոյութիւնը գրեթէ անկարելի կը դարձնէ աստ եւ այժմ տեղափոխութիւնը:

Չմոռնանք նաեւ որ, սովորական բնականոն ժամանակներու մէջ իսկ, քանի մը հազար ժողովուրդի տեղափոխութիւնը՝ մէկ օրէն միւսը ըլլալիք բան չէ:

Չմոռնանք վերջապէս որ գաղթավայրերը միշտ օգտակար եղած են ու պիտի ըլլան Մայր Հայրենիքին:

Անշուշտ մենք համոզուած ենք որ գաղթավայրերու Հայերէն դասակարգ մը պէտք է Հայաստան երթայ, որովհետեւ հոն միայն կրնայ ինքզինքը գտնել ու պահել:

Սակայն վարիչներուն պարտականութիւնն է չափաւորել ժողովրդեան խանդավառութիւնը՝ մինչեւ որ անոր երազը իրականութիւն դառնայ:

Այլապէս, ոչ միայն թշուառութեան կը մատնեն մեր եղբայրները, այլ կրնանք նաեւ հրաւիրել մեր վրայ՝ զմեզ հիւրասիրող եւ մեզի համար Երկրորդ Հայրենիք եղող երկիրներու անվստահութիւնը:

Գիտնանք ուրեմն չափաւորել մեր խանդը»³²:

Այո, Հայ Կաթողիկէ Եկեղեցու դիրքորոշումն ու վերաբերմունքն արտահայտող պաշտոնաթերթը՝ որոշ «գործնական» մտահոգութիւններ ընդի ներքո (որոնք, սակայն, երբեք պատճառ չէին կարող դառնալ կասեցնելու հայրենաշէն եւ ազգապահ հայրենադարձութիւնը), լիովին արտահայտում էր այն գիծը, որը սկիզբ էր առնում Վատիկանից՝ «Ս. Պետրոսի Գահ»-ից: Իսկ այդ գիծն այն ակնկալութիւնն էր, որով համակված են եղել հայոց ազգի եւ Հայոց Եկեղեցու հետ երբեւէ առնչված Հոռմի պապերը, բայց մանավանդ՝ Պիոս ԺԲ. պապը, այն է՝ «...ամէնքդ խմբուած մեր շուրջը մատուցանելու համար ձեր հպատակութիւնը, ձեր մեծարանքն ու սէրը»³³:

³² «Աւետիք» ամսական պաշտօնաթերթ, 1945, թիւ 9–12, էջ 124–125:

³³ «Աւետիք» ամսական պաշտօնաթերթ, 1946, թիւ 1–6, էջ 44:

1946 թ. մարտի 13-ին՝ Վատիկանի Քահանայապետական պալատի սրահներից մեկում, Պիոս ԺԲ. Հռոմի պապն ընդունելով Հայ Կաթողիկե Եկեղեցու կաթողիկոս-պատրիարք կարդինալ Գրիգոր-Պետրոս ԺԵ. Աղաջանյանին, հոգեւոր սպասավորներին եւ հավատացյալ անդամներին՝ իր խոսքն է ուղղում նրանց, սակայն այն միտումով, որ կարծես խոսքը բովանդակ հայության մասին է. «...Ուզեցինք միանգամայն նշանակել եւ այսպէս ըսելու համար պսակել հանդիսաւոր ցոյցով մը հոգածութեան եւ սիրոյ արարքները զորս Քրիստոնէութեան ամենահին ժամանակներէն ի վեր՝ Ս. Պետրոսի Գահը շղաղրեցաւ երբեք, դարերու ընթացքին ընծայելէ Հայաստանի եւ իր ժողովրդեան: Կրնանք իրաւամբ ըսել թէ այս գերագնիւ ազգը իր աղէտներուն եւ տառապանքներուն մէջ՝ Հռոմի Քահանայապետն ունեցաւ միշտ պաշտպան եւ փաստաբան»³⁴:

Ի վերջո, Պիոս ԺԲ. պապը պատգամում է բոլոր ներկաներին եւ «բովանդակ սիրելի հայ ժողովրդեան». «...Հոգեկան խռովքի եւ շփոթութեան այս շրջանիս, ձեզի ուժգին կը յանձնարարենք ներկայիս եւ ապագային համար. հաստատ մնացէք ձեր հաւատքին մէջ, հաստատապէս, ամբողջովին, ուղիղ սրտով եւ առանց դեղեւելու՝ հաւատացէք յայտնուած բոլոր ճշմարտութիւններուն զորս եկեղեցին կը սորվեցնէ, շնորհքի բոլոր խորհուրդներուն զորս կը մատակարարէ, առանց երբեք հրապուրուելու եւ տարուելու հոսանքներէ որոնց վերջնական վախճանն է մակերեսային բանապաշտութիւն մը, զուտ մարդկային եւ երկրային բարոյական մը կամ յաճախ նաեւ անաստուածութիւն»³⁵: Անտարակույս, պապական այս եւ նման հորդոր-պատգամներից է սերում՝ «պատրիարք Տանն Կիլիկիոյ եւ կաթողիկոս հայոց ուղղափառաց» տիտղոսը կրող կարդինալ Գրիգոր-Պետրոս ԺԵ. Աղաջանյանի՝ 1946 թ. հուլիսի 6-ի Շրջաբերականը:

Արդարեւ, հայրենագարձության իրականացման այդ ողջ գործընթացում, երբ Հայոց Եկեղեցին ի գլուխ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ իր Նվիրապետական աթոռներով ու աշխարհասփյուռ թեմերով, ամենայն ջանք էր ներդնում ու օժանդակում այդ ծրագրի կազմակերպմանը, ամենուրեք բարձրացնում էր հայկական տարածքները վերագարձնելու խնդիրը, ներգաղթի նկատմամբ միանգամայն այլ տեսակետ ու մոտեցում էր արտահայտում ու դրսևորում Հայ Կաթողիկե Եկեղեցին:

³⁴ Նույն տեղում, էջ 44:

³⁵ Նույն տեղում, էջ 45:

Կաթողիկոս-պատրիարք կարգինալ Աղաջանյանն իր այդ նշանավոր Շրջաբերականում թեև նշում էր, որ «Կաթողիկէ կրօնքը ոչ մէկ ատեն ուրացած է հայրենիքի եւ ազգութեան գաղափարականները, ...նուիրական է ուրեմն ամէն կաթողիկէի՝ հայրենիքի եւ ազգի սէրը»³⁶, սակայն նաև հավելում էր՝ ասելով. «...Մեր Հայրերը, քաղցր հայրենի հողին վրայ, յաճախ գտած են իրենք զիրենք ահաւոր երկընտրանքի առջեւ, կամ ուրանալ ճշմարիտ Աստուածը, զՔրիստոս եւ անոր Ս. Եկեղեցին. եւ կամ, եթէ ոչ միշտ արիւնով մկրտուիլ, գէթ պանդխտութեան ցուպը ձեռք առնուլ, օտարութեան եւ անոր պարտադրած զրկանքներուն մէջ ապրիլ: Անոնք սակայն Ս. Աւետարանի լոյսով հոգեզմայլ եւ անկեղծ ու խորունկ հաւատքով սնած ու զրահաւորուած, չվարանեցան հրաժարելու ամէն բանէ՝ միայն թէ Աստուծոմէ շօտարանային»³⁷: Ուստի եւ պատգամում էր իր եկեղեցու հոգեւորական ու աշխարհական անդամներին, որ նրանք շմասնակցեն հայրենադարձութեան գործընթացին, չգնան Մայր Հայրենիք, քանի որ այնտեղ չկա «Կրօնքի կատարեալ ազատութիւն»³⁸, ավելին՝ «հայրենադարձի բանբերները եւ անոնց մունետիկները համազգային այս գործին յարանուանական շեշտուած բնոյթ մը տուին, եւ Հայ Կաթողիկէութեան հանդէպ... կը զլացուէր արդար եւ լիովին արժանացած ազատամիտ վերաբերում մը»³⁹: Կաթողիկոս-պատրիարք կարգինալ Աղաջանյանը նաև նշում էր, որ հայրենադարձվելիս իրենք, անկեղծ ու օրինավոր հպատակութեամբ, կարող էին խզել որեւէ հարաբերութիւն կամ կապ որեւէ քաղաքական խմբակցութեան հետ, սակայն իրենք չեն կարող հրաժարվել Հռոմի Սուրբ Աթոռից, որը «քաղաքական բեւեռ մը չէ, այլ սոսկ կրօնական եւ այն ալ անփոխարինելի՝ Քրիստոսի կարգադրութեամբ»⁴⁰: Հետեւաբար, քանի որ Հռոմի Սուրբ Աթոռի հպատակութիւնից հրաժարվելը համահավասար է հրաժարման Սուրբ Եկեղեցուց, կաթողիկոսութեանից ու հավատքից, կարգինալ Աղաջանյանը վճռում է. «Ուրեմն մեզի կը պարտադրուի տակաւին պանդխտութեան մէջ մնալ, որպէս զի անաղարտ պահենք մեր Կաթողիկէ Ս. Հաւատքը»⁴¹:

³⁶ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ-ՊԵՏՐՈՍ ԱՂԱՃԱՆՅԱՆ, «Ձայն հովուական (հովուական թուղթեր – բանախօսութիւններ, ճառեր եւ քարոզներ)», Վենետիկ – Ս. Ղազար, 1967, էջ 14, 16:

³⁷ Նույն տեղում, էջ 16–17:

³⁸ Նույն տեղում, էջ 17:

³⁹ Նույն տեղում, էջ 17–18:

⁴⁰ Նույն տեղում, էջ 18:

⁴¹ Նույն տեղում, էջ 18:

Կաթողիկոս-պատրիարքն իր երկարաշունչ Շրջաբերականի եզրափակիչ հատվածում հանդես է գալիս Հռոմի պապի նկատմամբ երախտագիտության, հավատարմության ու հպատակության հավաստմամբ, ինչպես նաև Վատիկանին՝ «Առաքելապետական Ս. Գահ»-ին տրված ողջունով՝ շնորհալիական «Ողբ Եղեսիո»-ից մեջբերում կատարելով. «...Յանուն մեր Նուիրապետութեան եւ բովանդակ շօտին՝ դնել յոտս Քրիստոսի Փոխանորդին խոր երախտագիտութեան, որդիական սիրոյ, անայլայլ հպատակութեան եւ յարումի զգացմանց հաւաստիքը: Որքան քաղցր եւ նուիրական է մեզի մեր Հայրապետներու մէջէն ամէնէն հեզին ու շնորհալիին խօսքերով ողջունել յաւէտ Առաքելապետական Ս. Գահը՝ ըսելով եւ կրկնելով...»⁴²:

Կարեւոր է փաստել, որ մինչ այս Շրջաբերականը՝ ուղղված կաթողիկոսապետությանը, բազմաթիվ հոռոմեադավան հայորդիներ, որոնց թվում նաև հոգեւորականներ, ցանկություն էին հայտնել ներգաղթել Մայր Հայրենիք: Այս առումով իր «Յուշեր»-ում կարեւոր վկայություն է տալիս Հայ Կաթողիկե Եկեղեցու Սիրիայի Բարձր Զեզիրեի եւ Եփրատ նահանգների պատրիարքական փոխանորդ Կյուրեղ եպիսկոպոս Զոհրապյանը: Նա ի մասնավորի գրում է, որ զորավոր կերպով զգացել է Հայրենիքի կանչը եւ առաջինն է եղել, ով ստորագրել է Հայաստան ներգաղթելու խնդրագիրը՝ նույնիսկ պատրաստ լինելով նահատակության: Սակայն, ստանալով կաթողիկոս-պատրիարքի Շրջաբերականը, Կյուրեղ եպիսկոպոսը մտադրությունը փոխել է, ավելին՝ իր ցանկությունն ու գործողությունը համարել է սխալ, մեղսագործություն. «...Պիտի խոստովանիմ, որ սրտիս մէջ զօրաւոր կերպով զգացի հայրենիքի կանչը եւ ես առաջինը եղայ որ ստորագրեցի դէպի Հայաստան ներգաղթի խնդրագիրը: Հայ Կաթողիկէ Համայնքի բոլոր անդամները, բացառութեամբ միայն մէկ ընտանիքի, հետեւեցան իմ օրինակիս: Քաղղէական ծէսին պատկանող հարիւր ընտանիք փոխեցին իրենց ինքնութեան վկայագիրները եւ անդամագրուեցան ներգաղթողներու շարքերուն:

Այս բոլորին մասին տեղեկագիր մը ղրկեցի մեր Պատրիարքին: Կը խնդրէի իր օրհնութիւնը, որովհետեւ որոշած էի Հայաստան տեղափոխուիլ, հոն օգտակար ըլլալու համար մեր ժողովուրդին...: Որպէս մարտիրոս արիւնս թափելու հաւանականութիւնը զիս չէր վախեցնէր, որովհետեւ այդ պարագային՝ արիւնս հաւատքին աւելի պիտի ծառայէր՝ քան ինքնին կեանքս...

⁴² Նույն տեղում, էջ 20:

Ի վերջոյ, 1946 Յուլիս 16ին, ստացանք Հոգեւոր Տիրոջ հովուական նամակը: Հոն նկարագրուած էր Հայաստանի Սովետական Հանրապետութեան իրական վիճակը. կրօնական ազատութեան բացարձակ բացակայութիւն, յատկապէս կաթողիկէներու համար, որոնց արգիլուած էր որեւէ հաղորդակցութիւն ունենալ Հռոմի հետ: Տրամաբանական էր, հետեւաբար, Պատրիարքին եզրակացութիւնը. չէինք կրնար գաղթել երկիր մը, ուր քրիստոնէութիւնը հալածուած էր: Դժուարին կացութեան մէջ յայտնուեցայ: Ինչ պատասխան պիտի տայի իմ հաւատացեալներուս եւ քաղղէացիներուն: ...Հաւաքեցի ընտանիքներուն մեծերը եւ զղջացած մեղաւորի նման ծունկի եկած՝ ներողութիւն խնդրեցի կատարած սխալիս համար»⁴³:

Բնականաբար, կարգինալ Աղաջանյանի Շրջաբերականը եւ, առհասարակ, Հայ Կաթողիկէ Եկեղեցու վերոնշյալ դիրքորոշումն ու կեցվածքը պետք է հարուցեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ հայրենադարձութեան կողմնակիցների ու աջակիցների արդար զայրույթը: Ուստի եւ ամենուր հնչում են քննադատական ու դատապարտող տարբեր ելույթներ, հրապարակվում են հոդվածներ, վերլուծություններ ու գրքուկներ:

Առանձնահատուկ կարեւորություն ու նշանակություն ունի Մայր Աթոռի պաշտոնական ամսագրում 1946 թ. տպագրված «Թուղթ ընդդեմ Հայրենիքի եւ ներգաղթի» հոդվածը⁴⁴, որը, թեեւ, անհեղինակ է, սակայն ստորագրված է Վ.-ի կողմից⁴⁵: Այս հրապարակման հիմքում բացառապէս կարդինալական Շրջաբերականն է, որն էլ ենթարկվել է մանրակրկիտ վերլուծութեան: Հոդվածագիրը Հայոց Հայրապետի խորաթափանց միտքն ար-

⁴³ ԿԻՐԻՔԵՂ ԵՊՍ. ԶՕՀՐԱՊԵՏՆՍ (1881–1972), «Յուշեր (ինքնակենսագրութիւն)», Վենետիկ – Ս. Ղազար, 2007, էջ 397–398:

⁴⁴ Տէն «Էջմիածին» ամսագիրը, օգոստոս-սեպտեմբեր-հոկտեմբեր, 1946 թ., էջ 13–22: Նշենք, որ Հայաստանի ազգային արխիվում գտնվող «Էջմիածին» ամսագրի ֆոնդում առկա է հիշյալ հոդվածի նախնական խմբագրված (սեպտեմբեր) մեքենագիր տարբերակը՝ «Վատիկանի «հայասիրութիւնը» վերնագրով, սակայն այդ վերնագրի վրա գիծ է քաշված և որպէս նոր վերնագիր թանաքագրչով գրված է՝ «Թուղթ ընդդեմ ներգաղթի» (տէն ՀԱԱ, ֆ. 1143, ց. 12, գ. 194, թ. 1):

⁴⁵ Համեմատական-համադրական ուսումնասիրությամբ հանգեցինք այն եզրակացության, որ նշյալ հոդվածի հեղինակը Տ. Տ. Գևորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն է (քանի որ միայն Հայոց Հայրապետի իմաստութեամբ, հեղինակութեամբ և իշխանութեամբ էր կարելի շարագրել նման հոդված), իսկ Վ. ստորագրությունը պետք է հասկանալ՝ Վեհափառ: Անհրաժեշտաբար նաև նշենք, որ «Էջմիածին» ամսագրի ֆոնդում պահվող խնդրո հոդվածի մեքենագիր տարբերակի («Վատիկանի «հայասիրութիւնը» վերնագրով) վրա առկա է Տ. Տ. Գևորգ Զ. Հայրապետի թանաքագրչով արված հետևյալ մակագրությունը. «Տպագրել՝ Գէորգ Կաթողիկոս, 20/ԱՄ-47, Ս. Էջմիածին» (տէն ՀԱԱ, ֆ. 1143, ց. 12, գ. 246, թ. 1):

ծարծել է այնպիսի հարցեր, որոնք արտաքուստ տեսանելի չեն, սակայն երբ դիտարկվում են այդ ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական համատեքստում՝ տողատակերը երեւան են գալիս եւ ճշմարտությունը բացահայտվում է: Որով էլ, հիրավի, «հովուական» բնորոշված Շրջաբերականը կոչվել է «Թուղթ ընդդեմ Հայրենիքի եւ ներգաղթի»⁴⁶:

Հայոց Եկեղեցին ի գլուխ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ինչպես արդեն վերը նշել ենք, իր միջազգային ու միջեկեղեցական հարաբերություններում համաքայլ էր գործում Խորհրդային պետությանը, ուստի եւ Վատիկանի հանդեպ, թեեւ չունենալով ուղիղ շփումներ ու կապեր, ցուցաբերում էր նույն՝ դատապարտող դիրքորոշումը: Այստեղ, սակայն, վերստին պետք է կարեւորապես շեշտել, որ այդ դատապարտող ու ժխտական դիրքն ու վերաբերմունքը պայմանավորված չէր սոսկ Խորհրդային իրականությունամբ, այլ՝ առավելապես հիմնավորված էր պատմական իրողություններով ու հետեւանքներով՝ պատմական փորձառությունամբ, ինչն էլ արդար եւ իրավ կերպով ներկայացրել է Տ. Տ. Գեւորգ Զ. Կաթողիկոսը. «...Դարերի ընթացքում Հռոմեական եկեղեցին անհաշտ դիրք բռնելով Հայ Եկեղեցու հանդեպ եւ նրան հերձվածող համարելով շարունակ հալածել է Հայ Եկեղեցին ու նրա հետեւորդներին: Հռոմեական եկեղեցին ջանք չէր խնայում ոչնչացնելու հայ պետականության անկումից հետո հայ ժողովրդի ազգապահպանման նեցուկը հանդիսացող Հայ ազգային եկեղեցին, այն եկեղեցին, որն իր հիմնադրման օրից մինչ այսօր հայ ժողովրդի թե՛ երջանկության եւ թե՛ դժբախտության օրերին անբաժան է եղել իր ժողովրդից... մեծ արհավիրքների բովից անցել, ...բայց միշտ էլ անբաժան մնալով իր ժողովրդից՝ պատվար է հանդիսացել նրա ազգային ինքնուրույնությանը, մաքառել նրան ձուլելու փորձերի դեմ: ...Ամեն անգամ, երբ հայ ժողովրդի համար ստեղծվել են փորձության օրեր, երբ նրա առաջ ծառացել են կենաց եւ մահու խնդիրները, Հռոմեական եկեղեցին նրա նկատմամբ հանդես է բերել ոչ թե քրիստոնեական մարդասիրություն, այլ նվաստացուցիչ առեւտուր, նողկալի սակարկություն: ...Հայ ժողովրդի գոյամարտի պահերին Հռոմի եկեղեցին ...պատասխանում էր առեւտրականի սառնասրտությունամբ, փրկագին պահանջելով. «Ընդունեցեք կաթոլիկացում եւ կերաշխավորվի ձեր Ֆիզիկական գոյությունը»: ահա՛, ահա՛, թե ինչպես էին «պաշտպանում» հայերին «արժանահիշատակ» քահանայապետները Հռոմի»⁴⁷:

⁴⁶ «Էջմիածին» ամսագիր, 1946, օգոստոս–սեպտեմբեր–հոկտեմբեր, էջ 13:

⁴⁷ Նույն տեղում, էջ 15–16:

Կաթողիկոս-պատրիարք կարգինալ Աղաճանյանն իր Շրջաբերականով բոլորովին էլ միմիայն հոգեւոր ու հոգեխնամ նպատակներ չէր հետապնդում՝ ի նպաստ կաթողիկ հայության: Ինչպես պարզորոշ է դառնում Հոգվածագրի քննութեամբ, այդ Թուղթն առավելապես միտված էր Վատիկանի քաղաքականութեան իրագործմանը, որն ընդդէմ էր Խորհրդային պետության, բնականորեն՝ նաեւ Խորհրդային Հայաստանի, որով էլ, ինքնին, ձախողեցվում էր հայրենադարձութեան գործընթացը թէ՛ կաթողիկ հայերի շրջանակներում, թէ՛ բովանդակ սփյուռքահայութեան կյանքում. «Չնայած կարգինալ Աղաճանյանը շրջաբերականում շոշափված խնդիրներն ամենայն զգուշութեամբ աշխատում է ներկայացնել սքողված, կրոնական շղարշով պարուրված, մշուշապատ ձեւով, սակայն դժվար չէ կռահել նրա իսկական դիտավորությունները. խնդրի կրոնական զգեստավորումը եւ վարագուրումը չեն կարող փրկել կարգինալին, որովհետեւ կրոնական դիմակի տակից ակնհայտ կերպով երեւում են Վատիկանի քաղաքական նպատակները, որոնց կենսագործումը Միջին ու Մերձավոր Արեւելքում իր ուսերի վրա է առել կարգինալ Աղաճանյանը:

....Կարգինալ Աղաճանյանն ի հարկէ չի կարող իրագեկ չլինել Հայրենիքում տիրող կարգերին, բայց նրան անհրաժեշտ է իրականութիւնը շրջված ներկայացնել, փաստերն աղավաղել, բամբասել, զրպարտել, որովհետեւ նպատակն արդարացնում է միջոցները: «Կրօնքի լիակատար ազատութեան» չգոյութեան շուրջը հյուսած առասպելներով նա ցանկանում է վախեցնել ոչ միայն իր հոտին, այլ ընդհանրապես հայ հավատացյալ ժողովրդին: Այս բոլորը նա կատարում է մի հիմնական նպատակ հետապնդելով. հայրենիքը մռայլ գույներով ներկայացնելով, կասեցնել հայ տարագիր ժողովրդի ներգաղթը Հայրենիք:

....Կարգինալ Աղաճանյանի ներգաղթի դեմ գենքեր ճոճելը, պանդխտության մեջ մնալու հիստերիկ կոչերը եւ հայկական պահանջները ձախողելու փորձերը մի ընդհանուր ակունքից են բխում եւ այդ ակունքը հանդիսանում է Վատիկանը. կարգինալ Աղաճանյանի հակաաներգաղթային այս գործունեությունը սերտ կերպով կապված է Վատիկանի քաղաքական գործունեություն հետ, քաղաքական գործունեություն, որը բանադրվել է Հայ Եկեղեցու կողմից:

Իզուր է ճգնում կարգինալ Աղաճանյանը ամենայն զգուշութեամբ թաքցնելու իրողությունը, որ «Հռոմայ Ս. Աթոռը քաղաքական բեւեռ մը չէ, այլ սոսկ կրօնական» եւ որ ինքը քաղաքական նպատակներ չի հետապնդում,

այլ սոսկ նկատի ունի «խղճի ազատութիւն», «կրօնական վերելք» եւ այլ շաղակրատանքներ:

Այսպիսով՝ կարգինալ Աղաճանյանը ջանք չի խնայում հայ վտարանդի ժողովրդի բեկորները պապի քաղաքականութեան զոհասեղանի վրա ողջակիզելու»⁴⁸:

Այնուամենայնիվ, Հոգևածագիրը շեշտում է՝ «Մենք բնավ մտադրութիւն չունենք կրօնական վեճեր հրահրել ու կրքեր քրքրել. մեր նպատակն էր պատմական իրողութիւնների ճշտութիւնը վերականգնել ու զերծ դարձնել այն աղավաղումից եւ միաժամանակ նշել այն դրդապատճառները, որոնք առիթ են ծառայել այդ աղավաղմանը»⁴⁹: Իսկ վերջավորութեանը հոգևածագիր Հայոց Հայրապետը հարկ է համարում նշել, որ հոգևածը՝ իր քննադատութիւններով ու դատապարտող խոսքերով, ուղղված չէր կաթոլիկ եղբայրների դեմ, քանի որ «Հայ Եկեղեցին թշնամութեան նշույլ անգամ չի տածում կաթոլիկ կամ բողոքական իր եղբայրների հանդէպ: Հայ Եկեղեցուն.... խորթ են եղել կրօնական հալածանքները, անհամբերատարութիւնը կամ ուրիշներին իր գիրկը ներգրավելու ձգտումները»⁵⁰: Տ. Տ. Գեւորգ Զ. Հայրապետն այլեւ համոզմունք է հայտնում, որ «կաթոլիկ հայութիւնը չի բաժանում կարգինալ Աղաճանյանի տեսակետները ազգի, հայրենիքի եւ հատկապէս Սովետական Հայրենիքի նկատմամբ:Ինչպէս հայ ժողովրդի մյուս հատվածները, այդպէս էլ հայ կաթոլիկները հեռու լինելով հայրենի օջախից, օտար հորիզոնների տակ չեն դադարել իրենց սիրագորով հայացքը դէպի նվիրական Արարատն ուղղել: Հայ ժողովուրդը, ներառյալ նաեւ հայ կաթոլիկները, դարեր շարունակ տենչացել է հայ պետականութիւնը վերականգնված տեսնել եւ այսօր, երբ իրականացել են նրա դարավոր իղձերը, չի կարող նա սփյուռքում մնալ ու իր Հայրենիքը չդառնալ»⁵¹:

Շարունակութեամբ՝ հաջորդիվ

⁴⁸ Նույն տեղում, էջ 13, 19, 21:

⁴⁹ Նույն տեղում, էջ 21:

⁵⁰ Նույն տեղում, էջ 21:

⁵¹ Նույն տեղում, էջ 21–22:





ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, դոցենտ

ORCID: 0009-0007-7783-8580

ՍԵՂՐՈՒ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅՈՒ ՈՐՄԱՆԱԿԱՐՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ԵՒ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ

Ա. Ս. ՏԱՃԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳԻՐԸ¹

Մեղրու կաթողիկե Ս. Աստվածածին քառամուկթ, եռանավ բազիլիկ եկեղեցին, հայկական պատմական ճարտարապետության ուսումնասիրության երախտավոր Մուրադ Հասրաթյանի պարզաբանմամբ՝ Սյունիքի Ժէ. դարի նույնատիպ հուշարձաններից առանձնանում է, նախ, գմբեթավոր լինելու հանգամանքով, դրանով արդեն իսկ իրենից ներկայացնելով մեծ արժեք²: Ի դեպ, այդ դարաշրջանում «ամբողջ Սյունիքում կա գմբեթավոր երեք եկեղեցի, այն էլ Մեղրիում» (մյուս երկուսն են՝ Անապաստանաց վանքի Ս. Հովհաննեսը ու Տաշտունի եկեղեցին: Վերջինիս գմբեթը քանդվել է Ի. դարի 30-ական թվականներին)³:

Ս. Հովհաննես եւ Ս. Աստվածածին «եկեղեցիների գմբեթները իրականացված են աղյուսից: Կառուցելով բազիլիկների հիմնական ուղղանկյուն ծավալը տեղական բազալտից, շինարարներն այս ծավալի վրա դրել են աղյուսաշեն գմբեթներ, որոնց կառուցումն ավելի դյուրին է, էժան եւ արագ, քան բազալտի օգտագործման դեպքում»⁴: Նաեւ դա արվել է հիմնական կառուցի թեթևացման եւ գեղագիտական ներդաշնակության համար, քանի որ աղյուսը, «բաց դեղնակարմրավուն գույնով հակադրու-

¹* Ստացվել է՝ 8.12.2025, գրախոսվել է՝ 12.03.2026: Էլ. հասցե՝ ashot.manucharyan.1959@mail.ru:

² Տե՛ս Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ, Մեղրու շրջանի հուշարձանները, Եր., 1987, էջ 9:

³ Նույն տեղում, էջ 9–10:

⁴ Նույն տեղում, էջ 9:


թյան մեջ մտնելով հուշարձանի գորշակապտավուն բազալտից կառուցված ուղղանկյուն ծավալի հետ, ստեղծում է թեթեւություն, կենսուրախության տպավորություն, թվում է, թե գմբեթը կախված է օդում»⁵:

«Մեղրու եկեղեցում գերիշխողը գմբեթն է եւ ամբողջ կառուցվածքը ծառայում է պատվանդան գմբեթի համար»⁶:

Հիրավի, գեղեցիկ է Ս. Աստվածածնի գմբեթը՝ իր խորշերով, պատուհաններով, խաչերով հարդարված ութանիստ վեղարով:

Մեղրու Ս. Աստվածածին եկեղեցու մյուս առանձնահատկությունը փոքրիկ զանգակատան տեղադրությունն է «հարավային կողմից ճակտոնի երկթեք ծածկի վրա: Սա քառանկյուն, աղյուսակառույց բոլորաշեն է, որը պսակված է քառանիստ վեղարով: Պետք է նշել, որ Մեղրու Մեծ թաղի եկեղեցին կառուցված է բնակավայրի բարձրագիր մասում՝ Մեղրու հյուսիսային ծայրում»⁷ եւ ժամանակին ավանից այն դիտվել է «իր հարավային ճակատով: Այդ պատճառով էլ զանգակատունը կառուցված է հարավային կողմում, մի բան, որ համարյա չի հանդիպում նույն ժամանակաշրջանի հուշարձաններում (ընդհանրապես զանգակատները կառուցվում են եկեղեցիների արեւմտյան մասում)»⁸:

Մեղրու Ս. Աստվածածին եկեղեցին, ըստ հարավային պատի շինարարական արձանագրության, կառուցվել է 1673 թվականին.



Շինեցաւ Սբ Եկեղեցիս / Ի ԹՎ ԻՃԻԲ ԵՒՆՅՅ (1673)-ԻՆ⁹:

Բ. ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ¹⁰

Եկեղեցին անզուգական է ոչ միայն իր արտաքին, այլև ներքին տեսքով: Ավագ խորանին, ատյանին, հարավային պատին, չորս մույթերին,

⁵ Նույն տեղում, էջ 12:
⁶ Նույն տեղում:
⁷ Նույն տեղում, էջ 13:
⁸ Նույն տեղում:
⁹ Մեր դաշտային օրագրից:
¹⁰ Որմնանկարներին եւ նրանց մակագրություններին առավել հանգամանակից նախատեսել ենք անդրադառնալ մեկ այլ առիթով: Շնորհակալություն ենք հայտնում Մեղրու

միջմուկթային կամարներին, թաղերին պատկերված են հին ու նորկտակարանյան եւ վաղմիջնադարյան այլ պատումներով, նաեւ երկրաչափական ու բուսական զարդանախշերով բարձարվեստ որմնանկարներ: Դրանցում գերակշռում են վառ կարմիր, դեղին, կապույտ, կանաչ եւ այլ գույների տարբեր երանգներ, որոնք զուգորդված ու ներդաշնակված են մեծ վարպետութեամբ եւ բարձր ճաշակով: Մ. Հասրաթյանի գնահատմամբ՝ Մեղրու Ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարները «հայ կերպարվեստի այդ ժամանակաշրջանի լավագույն ստեղծագործություններից են եւ աչքի են ընկնում կատարման բարձր վարպետութեամբ»¹¹:

Ավագ խորանի գմբեթարդում՝ լուսամուտից վեր, հրեշտակի պատկեր է, հյուսիսային պատի եզրին, բարձուստ, քիվից վերեւ պատկերված է Ս. Մարիամ Աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկին: Ավագ խորանի հարավային պատի քիվի վերելում Ս. Անդրեաս առաքյալն է՝ Պետրոս առաքյալի եղբայրը, նրանից ցած՝ Միքայել հրեշտակապետն է՝ երկարավուն լծակով կշեռքը ձեռքին, որով կշռում է հանգուցյալների հոգիները եւ որոշում նրանց իրական վաստակը¹²:

Ատյանի հարավային կամարին՝ երկու կողմերում ամպերի միջից շեփորահարող հրեշտակներ են, որոնք ազդարարում են. «Արի՞ք ընդ առաջ Որդւոյն Այ»¹³: Դրանց վերելում՝ չորս կույսերն են՝ Ս. Գայանե, Ս. Շողակաթ, Ս. Հոփսիսիմե, Ս. Վարվառե: Ատյանի հյուսիսային կամարի երկու կողմերում նույնպէս ամպերի միջից շեփորահարող հրեշտակներ են՝ կոչելով, մի դեպքում. «Արի՞ք մեռեալք ընդ առաջ Այ», մյուս դրվագում՝ «Արի՞ք մեռեալք ընդ առաջ Որդւոյն»¹⁴: Դրանց վերելում՝ չորս ավետարանիչներն են՝ Ս. Մատթեոս, Ս. Մարկոս, Ս. Դուկաս, Ս. Հովհաննէս: Ի դեպ, Ս. Մատթեոս ավետարանչի որմնանկարի ստորին դիմահայաց աջ հատվածում երեք տողով ներկագիր արձանագրված է. «Շինեալ ձեռամբ / Մանուկ Ստեփլայ նեւան վլարդ[ա]պետի /, 1848»¹⁵: Կարծում ենք, խոսքը եկեղեցու նորոգման մասին է, քանի որ «շինել» բայը հաճախ կիրառվում է «վերանորո-

Ս. Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ, Արժանապատիվ Տ. Ռաֆայել քհն. Խաչիկյանին, գինձառայող, լուսանկարիչ Արգիշտի Մկրտչյանին՝ ցուցաբերած աշակցութեան համար:

¹¹ Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ, նշ. աշխ., էջ 13:

¹² ՏԵՍ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Մեղրիի Անապատանաց վանքի որմնանկարները, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2019, № 3, էջ 223:

¹³ Մեր դաշտային օրագրից:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում:

գել» իմաստով: Եկեղեցու նորոգումը, հատկապես տանիքի, լիովին տրամաբանական էր՝ ապահովելու որմնանկարվող պատկերների պաշտպանվածությունն անձրեւաչրերի ներթափանցումից: Հիշատակագրության թվականը հուշում է, որ նորոգումն ընթացել է որմնանկարելուն զուգընթաց՝ 1844–1848 թթ.:

Եկեղեցու հարավային ավանդատան մուտքից վերեւ Իսահակի զոհաբերության տեսարանն է, դրանից աջ (դիմահայաց ձախ)՝ խորանի՝ բեմ բարձրացող աստիճաններից վեր Ս. Պողոս առաքյալն է՝ աջ ձեռքին գավազանանման սուր, ձախով՝ կրծքին բացված գիրք է սեղմում:

Հարավային պատին՝ մուտքից դիմահայաց ձախ պատկերված որմնանկարի «Վերին մասում Բարեխոսության հորինվածքն է, ավելի ներքեւ առաքյալներն են, իսկ ստորին մասում՝ դրախտն ու դժոխքը»¹⁶: Նույն մուտքից դիմահայաց աջ՝ Ստեփանոս Նախավկայի որմնանկարն է:

Հյուսիսային եւ արեւմտյան պատերին որմնանկարներ չեն պահպանվել:

Հարավարեւելյան մուկթի հյուսիսահայաց նիստի վերելում «Ննչումն Աստուածածնի» որմնանկարն է¹⁷, որի կենտրոնում մահվան մահճում ասես քնած Ս. Մարիամն է՝ շրջապատված առաքյալներով, որոնք բուրվառներով ու մոմերով Տիրամորը հուղարկավորության են տանում Գեթսեմանիի պարտեզ: Նրանցից վեր՝ երկնքում, Որդին է՝ Հիսուս Քրիստոս, հրեշտակների ուղեկցությամբ, որ հայտնվել է՝ մորը երկինք տեղափոխելու առաքելությամբ: Նրա գրկում մոր հոգին է՝ մանկան կերպարանքով: Որմնանկարի ներքեւում Վերափոխման տեսարանն է, իսկ ամենավերելում՝ Հայր Աստված: Նրանից ներքեւ՝ աջ եւ ձախ կողմերում, որմնանկարի եզրագոտիներում, պատկերված են Ս. Թադեոս (ձեռքերին տեգաձեւ Գեղարդ ու Աստվածաշունչ) եւ Ս. Բարդուղիմեոս (ձեռքերին դաշույն ու Ս. Կույսի նկարը) առաքյալները: Նրանցից ցած՝ եզրագոտիներում ուղեկցվող մակագրություններով պատկերված են Ս. Մեսրոպ Մաշտոցը, Հայոց Մեծաց կաթողիկոսներ Ս. Սահակ Պարթեւը (387–439), Ս. Գյուտ Արահեզացին (461–478), Ս. Հովհան Մանդակունին (478–490):

¹⁶ Կ. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, Եր., 1990, էջ 51:

¹⁷ Որմնանկարի լուսանկարը մեզ տրամադրել են վիմագրագետ, պ. գ. թ. Արսեն Հարությունյանը, պատմաբան, Մեղրու տարածաշրջանի հնուկությունների հմուտ գիտակ Նաիրա Հայրապետյանը, որոնց հայտնում ենք մեր շնորհակալությունը:

«Ննչումն Աստուածածնի»-ից ցած, ձի հեծած Ս. Մինաս Եգիպտացու որմնանկարն է: Արեւմտահայաց նիստին՝ քիվից վեր, տաճարին Մանկան ընծայաբերման պատկերն է, իսկ դրանից ցած՝ Հիսուսի 12 չարչարանքների որմնանկարը: Հարավարեւելյան մուլթի արեւելահայաց եւ հարավահայաց նիստերը չունեն որմնանկարներ:

Հարավարեւմտյան մուլթի հյուսիսահայաց նիստի վերելում՝ Ադամն ու Եւան են՝ դրախտում, քիվից ներքեւ՝ նրանց մեղսագործությունը դրախտում: Արեւելահայաց նիստի վերելում պատկերված է Հռոմի պապ Ս. Սեղբեստրոսը (314–337), որի հետ Ս. Գրիգոր Լուսավորիչը 324 թ. Հռոմում կնքեց «Դաշանց թուղթ»-ը, որով Լատին Եկեղեցին ճանաչում էր Հայոց Եկեղեցու ինքնիշխանությունը եւ նրա համահավասար լինելը Հռոմի, Երուսաղեմի, Անտիոքի եւ Ալեքսանդրիայի Աթոռներին¹⁸: Ս. Սեղբեստրոսից ցած պատկերված է Ս. Կոստանդիանոս Ա. Մեծ կայսրը, որը 313 թ. Միլանի հրովարտակով թուլլատրեց քրիստոնեական դավանանքը: Ուշագրավ է, որ կայսեր որմնանկարի ներքեւում գրված են նրա գահակալության թվականները՝ 306–317 թթ.: Հարավային եւ արեւմտյան նիստերին չկան որմնանկարներ:

Հյուսիսարեւելյան մուլթի հարավահայաց նիստին, քիվից վեր՝ ձի հեծած Ս. Սարգիս Զորավարն է՝ որդու Մարտիրոսի հետ, քիվից ներքեւ՝ ձի հեծած Ս. Գեորգ Զորավարը՝ թավալզոր վիշապին նիզակով խոցելիս: Արեւմտահայաց նիստին, բարձուստ, Հիսուսի մկրտության տեսարանն է, քիվից ներքեւ՝ մոգերի երկրպագությունը Մանկանը: Նույն մուլթի հյուսիսահայաց եւ արեւելահայաց նիստերին չկան որմնանկարներ:



Հյուսիսարեւմտյան մուլթի արեւելահայաց նիստին, քիվից վեր՝ հրաշափառ Հարության տեսարանն է, ցած՝ Խաչելությունը: Հարավահայաց նիստին, բարձուստ, պատկերված է Հիսուսի մուտքը Երուսաղեմ, դրանից ներքեւ՝ Պայծառակերպության տեսարանն է: հյուսիսահայաց եւ արեւմտահայաց նիստերին որմնանկարներ չկան:

Ատյանի, միջմուլթային կամարների հատման հատվածներում Աստուծուն մշտապես օրհներգող, փառաբանող, աստվածային սիրո կրակով մարդկանց լուսավորող ու մաքրագործող սերովբեների՝ վեցաթեւ հրեշտակների որմնանկարներ են:

¹⁸ Տէս ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ՕՐԾԱՆՅԱՆ, Ազգապատում, Ա., Ս. էջմիածին, 2001, ս. 113:

Գ. ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ԵՒ ԾԱՂԿՈՂՆԵՐԸ


Հարավային ավանդատան մուտքի վերելում՝ Իսահակի զոհաբերության տեսարանից վեր, սեւ հիմնագույնի վրա սպիտակ ներկով 7 տողով բոլորգիր գրողմված է.



ՅՄ-ի ՔՄ-ի ծառայ: Ի 1844 ամի տիրացու Աղապապ Սարգիսեան Վաչագ / կարեցիմն գանձապետ մեղրու սք անձանայ եկեղեցոյ եւ նա սկսեալ առ / սակաւ սակաւ յորդորմամբ եւ բանիցն անձայիս սք Գրոց ժողովրդոց եւ հաս / արկուծեսց եւ նորա լսելով եւ կատարելով այսպէս որպէս հրեալն յիշատակ ան / պատկերոյ ստորեւ եւ ծառայ թէպէտ իրան ինչ հասարակութեան յարմարեալ ան / ծառայեցեալ եւ պատկերացունեալ բայց սա եղեւ պատճառ յայժմոք հանդիպեսցի / Ընդհանրեալ եւ ինքն յիշեալ ինչ ան առ քնի: 1848 ամի օօ

Տվյալ դեպքում տիրացու Աղաբաբ Սարգսի Վաչանը Մեղրու Ս. Աստվածածնի գանձապահն է՝ պատասխանատու եկեղեցու դրամական, այլ նվիրատվական մուտքերի եւ ելքերի համար: Նրա պատվերով էլ 1844–1848 թթ. որմնանկարվել է եկեղեցին, կարծում ենք նաեւ՝ վերանորոգվել:

Ավագ խորանի ատյանի եւ հյուսիսարեւմտյան մուկթի նկարազարդ կամարների հյուսիսարեւելյան սյան վերելում՝ հատման կետից վեր, սերուբերի ներքելում 6 տողով գրված է.




ՅԻՇԱՏԼԱՅ Է ԿԱԹՈՒՂԻԿԵՆ / ՉՈՐՄՍԻԻՆԻ ԾԱՂԿՈՒՆՔՆ ԽՈՆԴԻ ԻՆ, ԻԻՐ ՈՐԴԻ ՄԻՔԵԼԱՆԻՆ, ՄԵԾ / ԹՈՌԻՆ ՕՀԱՆԵՄՆ / ԵՒ ՊԵՏՐՈՍՆ, 1848 8:

Այն, որ որմնանկարների ծաղկողները՝ Խոնդրի գլխավորությունամբ, մեղրեցիներ են,

թերեւս, փաստվում է Մեղրի քաղաքի կենտրոնում Հայրենական մեծ պատերազմի (1941–1945) մեղրեցի զոհերի հիշատակին կանգնեցված հուշարձանին խՈՆԴՅԱՆ Գ. Պ., խՈՆԴՅԱՆ Կ. Պ. (ենթադրելի է, որ եղբայրներ են) անունների փորագրությամբ:

Եւ, որ նրանք տեղաբնիկներ են (բուն մեղրեցիներ), վկայվում է Մեղրու Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ (Ս. Սարգիս) եկեղեցու հարավային դռան մոտ հենած հետեւյալ խաչաքանդակ քարի առկայությամբ, որի վրա արձանագրված է.



ԽՈՆԴԻ, ՌԾԴ (1605):

Վիմագրում ն տառը կցագրված է նախորդող Ո-ին: Խոնդի անունը ծագում է պարսկերեն «խոնդ» = خاوند «խողավանդ» բառից, որ նշանակում է «տեր», «տիրակալ»¹⁹:

Խոնդիի որդու՝ Միքելանի անունն ըստ ամենայնի Միքայել անձնանվան տարբերակ է:

Երիտասարդ արվեստաբան, 2020 թ. 44-օրյա պատերազմի նահատակ, երջանկահիշատակ Ավետիս Ավետիսյանը Մեղրու Ս. Աստվածածին եկեղեցում առանձնացնում է որմնանկարների առնվազն երեք շերտ՝ 1745, 1790-ական, 1844–1848 թթ²⁰: Հայրենապսակ արվեստաբանը, մասամբ վերծանելով Պողոս առաքյալի որմնանկարի ներքեի կիսաեղծ մակագրությունը՝ ՌՃՂԴ. (1745) թվականով հանդերձ, ենթադրում է, որ այստեղ աշխատել են Նաղաշ Հովնաթանի (1661–1722) որդիներ Հակոբ եւ Հարություն Հովնաթանյանները, որոնց նա կարծում է նաեւ Մեղրու Անապատանաց վանքի Ս. Հովհաննես եկեղեցու հին շերտի որմնանկարների կատարող²¹: Ա. Ավետիսյանի ենթադրությունը թերեւս հաստատվում է Պողոս առաքյալի որմնանկարի մակագրությամբ, որ ՌՃՂԴ. թվականից հետո շարունակվում է ԿԵՆՎԴԱՆԱՂԳՐԵՎԱՅ՝ ՅԱՐՈՒԹԻԻՆ բառերով²², ուստի մենք եւս հակված ենք կարծելու, որ Մեղրու Ս. Աստվածածնի որմնանկա-

¹⁹ Տե՛ս Персидско-русский словарь, , т. I, М., 1983, էջ 590, 540: Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ., Երեւան, 1946, էջ 549:

²⁰ Տե՛ս Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Աստվածատուր Աստապատցի. նոր անուն XVIII դարի հայ որմնանկարչության ասպարեզում, «Պատմաբանասիրական հանդես», 2019, № 2, էջ 87–88:

²¹ Տե՛ս Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Մեղրիի Անապատանաց վանքի որմնանկարները, էջ 221–222:

²² Մեր դաշտային օրագրից:

րների վաղ շերտի հեղինակը Հարություն Հովնաթանյանն է: Ինչ վերաբերում է 1790-ականների շերտին, որոնք թարմացվել են 1844–1848 թթ.²³, ապա այն, ըստ Ա. Ավետիսյանի, ստեղծել է Աստվածատուր քահանա Աստապատցին, որը 1793 թ. նկարագարդել է Կարճեւանի Ս. Աստվածածին եկեղեցին²⁴:

Ի դեպ, որմնանկարիչ Աստվածատուր քահանա Աստապատցու անունը երեւան է հանել ու գիտական շրջանառության մեջ դրել Ավետիս Ավետիսյանը, որ քահանային է վերագրում նաեւ Մեղրու Փոքր թաղի եկեղեցու աննման որմնանկարների 1793 թ. շերտի նկարագարդումները՝ միաժամանակ տեղի վաղ՝ 1700 թ. պատկերագարդումները համարելով Նաղաշ Հովնաթանի շնորհաշատ ձեռքի գործ²⁵:

Թերեւս կարող ենք ամփոփելով եզրակացնել, որ մեղրեցի որմնանկարիչ Խոնդին երիտասարդ հասակում աշակերտել է Աստվածատուր Աստապատցուն՝ հետագայում հիմք դնելով XIX դ. Մեղրու որմնանկարչական հզորագույն դպրոցի: Խոնդիի որդի Միքելանը, թողը՝ Հովհաննեսը եւ Պետրոսն էլ 1866 թ. ստեղծել են Փոքր թաղի եկեղեցու որմնանկարների վերջին շերտը՝ միաժամանակ թարմացնելով Նաղաշ Հովնաթանի եւ Աստվածատուր Աստապատցու նկարագարդումները՝ հավատարիմ մնալով տեղի գունագարդային յուրահատկություններին:

Այսպիսով՝ ի տարբերություն Կարճեւանի, Անապաստանաց վանքի, Փոքր թաղի եկեղեցիների որմնանկարների ծաղկողների, Մեղրու Ս. Աստվածածնի նկարիչները զուտ տեղացիներ են՝ մեղրեցիներ:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մեղրի, Ս. Աստվածածին, եկեղեցի, որմնանկար, շերտ, պատվիրատու, կատարող, մակագրություն:

²³ Տե՛ս Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, *Աստվածատուր Աստապատցի. նոր անուն XVIII դարի հայ որմնանկարչության ասպարեզում*, էջ 87–90:

²⁴ Տե՛ս նույն տեղում, 80:

²⁵ Տե՛ս Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, *Մեղրու Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների շերտերը, ժամանակաշրջանն ու հեղինակների խնդիրը*, Ավետիսյան, «էջմիածին» 2020, Թ., էջ 72:

РЕЗЮМЕ

Внутренние стены церкви Святой Богородицы г. Мегри украшены высокохудожественными фресками на темы Ветхого и Нового Завета и др. Они относятся к числу лучших произведений армянского изобразительного искусства того периода и отличаются высоким мастерством исполнения.

Над входом в южную ризницу находится надпись из семи строк, согласно которой фрески были заказаны в 1844 году казначеем церкви Святой Богородицы дьячком Агабабом Саркисовичом Вачяном. Согласно надписи над северо-восточной колонной, авторами фресок являются Хонди, его сын Микелани, его внук Оганес и Петрос, написавший их в 1844–1848 годах. Одновременно с этим были обновлены фрески предыдущих слоёв, авторами которых, по словам Аветиса Аветисяна, молодого искусствоведа и мученика 44-дневной войны 2020 года, являются священник Аствацатур Астапатци, работавший в 1790-х годах и Арутюн Овнатянян (по нашему расширофку) в 1745 г.

Авторы фресок родом из Мегри, поскольку на памятнике, воздвигнутом в центре Мегри в память о 93 жертвах Великой Отечественной войны (1941–1945) из Мегри, выгравированы имена Хондяна Г. П. и Хондяна К. П. (предположительно, они братья). Также у церкви в Малом квартале Мегри находится хачкар 1605 года с упоминанием Хонди.

Мы считаем Хонди учеником Аствацатура Астапатци и основателем школы монументальной живописи Мегри.

SUMMARY


The interior walls of the Holy Mother of God Church in Meghri are adorned with highly artistic frescoes depicting scenes from the Old and New Testaments, among other subjects. These frescoes are considered among the finest works of Armenian visual art from that period and are distinguished by their exceptional craftsmanship.


There is a seven-line inscription above the entrance to the southern sacristy stating that the frescoes were commissioned in 1844 by deacon Aghabab Sarkisean Vachyan, the treasurer of the Holy Mother of God Church. According to the inscription above the northeast column, the frescoes were painted by Khondi, his son Mikelani, his grandson Ohanes, and Petros between 1844 and 1848. At the same time, the frescoes

from earlier layers were restored, which, according to Avetis Avetisyan, a young art historian and martyr of the 44-day war of 2020, were created by the priest Astvatsatur Astapatsi, who worked in the 1790s, and Harutyun Hovnatanyan (according to our interpretation) in 1745.

The artists who created the frescoes were from Meghri, as the names of G. P. Khondyan and K. P. Khondyan (presumably brothers) are engraved on a monument erected in the center of Meghri in memory of 93 victims of the Great Patriotic War (1941–1945) from Meghri. There is also a cross-stone from 1605 near the church in the Small Quarter of Meghri that mentions Khondi.

We consider Khondi to be a student of Astvatsatur Astapatsi and the founder of the Meghri school of monumental painting.





**ՍԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՍԵԻ ԿՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ 2025 Թ.
ԿՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը 2025 թ. շարունակել է ֆարոգչական իր ուրույն գործունեությունը՝ լույս ընծայելով եւ տարածելով գիտական, հոգեւոր-ուսուցողական, ֆարոգչական եւ կրթադաստիարակչան գրականություն:

Շնորհակալությամբ հիշենք Մայր Աթոռի հրատարակչական խորհրդի անդամներին, հեղինակներին եւ աշխատակիցներին՝ խմբագիրներին, սրբագրիչներին, էջադրողներին, տպագրիչներին, կազմարարներին եւ այլոց, որոնց միասնական աշխատանքի շնորհիվ ընթերցողի սեղանին են դրվում արժեքավոր ու օգտակար հրատարակություններ: Հատուկ շնորհակալությամբ պետք է հիշենք նաեւ Մայր Աթոռի հրատարակչության մեկենասներին՝ թե՛ տարբեր ֆոնդերով եւ թե՛ առանձին անհատական մեկենասությամբ օժանդակության համար:

Ըստ այսմ՝ 2025 թ. Մայր Աթոռի հրատարակչությունը լույս է ընծայել՝

1. «Աղոթագիրք. «Ճաշոց»-ի աղոթքների ժողովածու» (գրաբարից աշխարհաբար փոխադրությունը՝ Գեւորգ սարկավազ Կարապետյանի):

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Ճաշոց» գիրքը, որ գործածվում է աստվածապաշտական արարողությունների ժամանակ, ընդգրկում է հոգեպարար աղոթքներ, սուրբգրային ընթերցումներ եւ օրհներգություններ: Առաքելաշավիղ այս գիրքը սուրբ հայրերի հեղինակած հոգեբուխ աղոթքների փրկալույս շնորհներն է ճառագում՝ փարատելով խավարն ու ճանապարհ բացելով աստվածային շնորհների համար: «Ճաշոց»-ում ընդգրկված աղոթքների այս ժողովածուն՝ արեւելահայրեն փոխադրությամբ «Աղոթագիրք»-ը, Հայոց Եկեղեցու զավակներին է փոխանցում ինչպես հայազգի սուրբ հայրերի՝ Եղիշեի, Զաքա-

րիա Ձագեցու, Ներսես Շնորհալու, Ներսես Կամբրոնացու եւ Հովհաննես Երզնկացու, այնպես էլ ընդհանրական հայրերի՝ համաքրիստոնեական սրբեր Բարսեղ Կեսարացու, Հովհան Ոսկեբերանի, Կյուրեղ Երուսաղեմացու եւ Եփրեմ Ասորու մատենագրական ժառանգության գոհարները:

2. «Վրձնյալ շարականներ» նկարագարդ գրքույկ (հրատարակության պատրաստեց Տ. Փառեն Բահանա Առաքելյանը):

Գրքույկը ներկայացնում է տասներկու շարական-պատկեր: Նկարների հեղինակները Աշտարակի Գուլամբերյան Հայորդյաց տան սաներն են, որոնք, ընթերցելով սուրբ հայրերի շարականները, բառերն ու մեղեդին վերածել են պատկերների: Աստվածաշնչի բոլոր գլխավոր իրադարձությունները վաղուց են նկարների փոխակերպվել, ուստի պատանիները ցանկացան պատկերների վերածել նաեւ հոգեւոր երգերը: Սաների նպատակը շարականներն ընթերցելը, հասկանալը, վերլուծելն ու նկարի փոխակերպելն է:

Հայորդյաց տան աշակերտները վրձնել են հինգ Տաղավար տոների շարականները, իսկ մնացյալ յոթ նկարները Հայ Եկեղեցու կարեւոր տոների երգերն են պատկերում: Շապիկը թանկարժեք քարերի շարան է, որը պարզապես «շարական» բառը ներկայացնում է գույներով:

3. Տ. Շահե ծ. վրդ. Անանյան, Քրիստոնյան եւ ընկնախոր. Հոգեմտավոր առողջություն եւ հոգեւոր կյանք:

Հոգեմտավոր առողջության եւ քրիստոնեական հոգեւոր կյանքի փոխհարաբերությունները միշտ էլ եղել են Եկեղեցու հայրերի եւ ուսուցիչների ուշադրության կենտրոնում: Արդի ժամանակաշրջանում նույնպես հոգեւոր կյանքի սկզբունքների հիման վրա հոգեմտավոր առողջության վերականգնումը հրամայական է հավատացյալի եւ Եկեղեցու համար: Հեղինակը ներկայացնում է հոգեմտավոր առողջության խանգարման ամենատարածված երեւույթի՝ ընկճախտի հաղթահարման ճանապարհները քրիստոնեական հոգեւորության տեսանկյունից:

Գրքույկը լույս է տեսել Ս. Էջմիածնի Հրատարակչության՝ «Քրիստոնյայի գրադարան» մատենաշարի ներքո: Նշված մատենաշարի շրջանակներում լույս են տեսնում քարոզչական, կրթագաստիարակչական եւ ծիսատոնական բնույթի հանրամատչելի գրքույկներ, որոնց նպատակը հա-

վատացյալների շրջանում քարոզչությունը խթանելը եւ հոգեւոր գիտելիքները հարստացնելն է:

4. Ավագ Հարությունյան, Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունը Խորհրդային Հայաստանում 1920–1930-ական թվականներին:

1920–1930-ական թվականները Հայոց պատմության դժվարին ու ծանրագույն շրջաններից էին: Այս ժամանակահատվածը հատկանշվում էր քաղաքական բռնաճնշումներով, համայնավարության եւ անաստվածության գաղափարախոսության տարածմամբ, հայ հոգեւորականների հալածանքներով... Գրքում ներկայացվում եւ վերլուծվում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քննադատական վերաբերմունքը եւ դիրքորոշումը, խորհրդային իշխանության հետ հարաբերությունը, ինչպես նաեւ հայ հոգեւորականների դիմադրությունն ու եկեղեցանվեր գործունեությունը:

Հեղինակն անդրադառնում է հայ պատմագիտության ոլորտում քիչ ուսումնասիրված «Մարտնչող անաստվածների միություն» կազմակերպությանը, բացահայտում 1920–1930-ական թվականների հակաեկեղեցական քաղաքականության պատմության՝ գրեթե մոռացության մատնված բազմաթիվ իրողություններ: Վերլուծվում են սույն կազմակերպության ստեղծման նախադրյալները, դրդապատճառները, կազմակերպչական կառույցը, կազմը, գաղափարախոսական հիմնադրույթները, հակակրոնական ու հակաեկեղեցական հրատարակչական եւ քարոզչական գործունեությունը:

Աշխատությունը շարադրվել է արխիվային վավերագրերի, ժամանակի պարբերական մամուլի նյութերի եւ մասնագիտական գրականության հիմամբ, որոնց գերակշիռ մասը առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դրվում:

Գիրքն ունի նաեւ հավելված, որտեղ առանձին ներկայացվում են ուշագրավ փաստաթղթեր, որոնք նորովի են լուսաբանում խորհրդային իշխանությունների հակաեկեղեցական քաղաքականությունը:

5. Կարեն Մաթեոսյան, Թամարա Մինասյան, Արցախ. վանքեր, եկեղեցիներ եւ ձեռագրեր, նկարազարդ ուսումնասիրություն:

Գրքում ներկայացվում են Արցախի վանքերն ու եկեղեցիները՝ որպես հայ ձեռագրական մշակույթի կարեւոր կենտրոններ: Տեղի վանական

գրչատներում ստեղծված ձեռագրերից բացի, այս երկրամասի վանքերում ու բնակավայրերում պահպանվելու շնորհիվ մեզ են հասել հայկական հնագույն ամբողջական մատյան «Վեհամոր Ավետարան»-ը (Է. դ.), «Հռոմկլայի Ավետարան»-ը (1166 թ.), Անիի մանրանկարչության եզակի նմուշ՝ «Հաղբատի Ավետարան»-ը (1211 թ.), բացառիկ նկարազարդամբ՝ «Թարգմանչաց Ավետարան»-ը (1232 թ.), Գանձասարի «Կարմիր Ավետարան»-ը (1237 թ.) եւ այլն:

6. Վալերի Թունյան, Տ. Տ. Մակար Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց (1813–1885–1891), ուսուերէն:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Մակար Ա. Տեր-Պետրոսյանի գործունեության մասին քիչ է գրվել, հատկապես օտար լեզուներով: Գիրքն ընթերցողին ներկայացնում է ԺԹ. դարի երկրորդ կեսի Հայ Եկեղեցու պատմության եւ Մակար Ա. Կաթողիկոսի գործունեության մի շարք կարեւոր հարցեր:

Հեղինակը մեծաքանակ արխիվային նյութերի, մամուլի եւ քննության ենթակա խնդիրներին առնչվող ուսումնասիրությունների օգտագործմամբ, ըստ ամենայնի, ներկայացնում է Հայ Եկեղեցուն՝ 1885–1891 թթ. ժամանակաշրջանի պատմությունը: Հեղինակը, սկսելով Մակար Ա. Կաթողիկոսի ընտրության կազմակերպման գործընթացի ներկայացումից, անդրադառնում է կաթողիկոսական գահի հնարավոր թեկնածուներին՝ ցույց տալով հարցի հետ կապված պաշտոնյաների հետաքրքրությունները:

Ներկայացվող ժամանակաշրջանի ուսումնասիրությունը հետաքրքրական է եւ կարեւոր հատկապես նրանով, որ Մակար կաթողիկոսի գահակալության ժամանակաշրջանը, նախորդելով եւ հաջորդելով իր արժանավոր նախորդ եւ հաջորդ կաթողիկոսների բուռն գործունեությանը, հանիրավի ստվերվել է պատմագիտության կողմից եւ քիչ է ուսումնասիրվել:

Ուսումնասիրությունը նախատեսված է Հայ Եկեղեցու պատմությամբ հետաքրքրվող մասնագետների եւ ընթերցողների լայն շրջանակի համար: Դրանում առկա սկզբնաղբյուրների առատությունն օգտակար կլինի ինչպես Հայ Եկեղեցու պատմության, այնպես էլ հայոց պատմության տվյալ ժամանակաշրջանի ուսումնասիրությամբ զբաղվող յուրաքանչյուր հետազոտողի համար:

7. «Այլակրոնների եւ այլադավանների կրոնական կապերը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ (ԺԹ.–Ի. դդ.)», ուստե՛րեն փաստաթղթերի ժողովածու (կազմող եւ թարգմանիչ՝ Ստեփան Ստեփանյանց):

Աշխատութիւնը նվիրված է այլակրոնների եւ այլադավանների՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանանքն ընդունելու խնդրին: Առաջին անգամ հավաքվել եւ ի մի է բերվել ԺԹ. դարասկզբից մինչեւ Ի. դարասկիզբի արխիվային ողջ փաստավավերագրական նյութը, որը պահվել է Հայաստանի ազգային արխիվի կաթողիկոսական դիվանի, Էջմիածնի Սինդոքի եւ Թեմական առաջնորդարանների, ինչպէս նաեւ Մատենադարանի ֆոնդերում:

Ժողովածուն, որպէս խնդրո առարկա Թեմային վերաբերող արխիվային փաստաթղթերի հավաքածու, հիմնովին ժխտում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից այլակրոնների եւ այլադավանների ճնշման մասին օտար հեղինակների տարատեսակ անհիմն վարկածները: Ժողովածուի նյութերը լուսաբանում են Ռուսական կայսրութեան տարբեր վայրերում ապրող այլակրոնների եւ այլադավանների խնդրագրերը՝ ուղղված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ անձնապէս Հայոց կաթողիկոսներին Հայ եկեղեցու ծեսով մկրտվելու մասին:

Ժողովածուն բաղկացած է Մայր Աթոռին ուղղված Նոր Նախիջեւանի, Աստրախանի, Շամախու, Երեւանի եւ Ղարաբաղի Թեմակալ առաջնորդների եւ հայ քահանաների միջնորդագրերից եւ այլ փաստաթղթերից, ուսւ նահանգապետների եւ հրեա րաբիների համաձայնութիւններից:

Ժողովածուն լույս է սփռում Հայ եկեղեցու պատմութեան եւս մեկ անհայտ եւ սպիտակ էջի վրա:

8. Տ. Իսահակ վարդապետ Պողոսյան, Ուսուցիչը:

«Ուսուցիչը» էսսեն կրոնական հենք ունեցող ստեղծագործութիւն է, որն ընթերցվում է հետաքրքրութեամբ: Մի քանի հատվածներից կազմված «Ուսուցիչը» էսսեն ունի լեզվաոճական բազմապիսի առանձնահատկութիւններ: Ստեղծագործութեան մեջ առկա են թեւավոր խոսքեր հիշեցնող ամփոփ նախադասութիւններ: Ստեղծագործութեան գլխավոր կերպարը՝ Ուսուցիչը, իր կոչմանը հավատարիմ հաճախ քաղաբերում է ընթերցողի միտքը, ներկայացնում արարչութեան եւ փրկութեան գաղափարի համապատկերը, տարաբնույթ հարցեր ուղղում իր ուսանողին՝ ակնկալելով անակնկալ եւ էքսպրոմտ պատասխաններ: Անդրադարձ կա աղան-

դավորությունը, Եկեղեցու, ազգի եւ ընտանիքի հաստատության կարեւորությունը, ազատության ճշգրիտ ընկալմանը, որոնք ուղեկցվում են հայ եւ համաշխարհային դասականների, մարդասերների ու մտածողների ժառանգությանն ապավինելու անուղղակի դիմումներով: Մեկնաբանվում եւ հանդիպադրվում են, այդ թվում՝ իրավունքի եւ պատմության դիտակետից, Եկեղեցու եւ պետության գործառույթների դրսևորումները, կեղծ եւ իրական «աշխարհաքաղաքացիությունը», ինչպես նաեւ համաաշխարհայնացման վնասներն ու վերահաս վտանգները:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանակի համար՝ հատկապես ուսուցիչներին, ուսանողներին եւ ավագ դպրոցի աշակերտներին:

9. *Շնորհք պատրիարք Գալուստյան, Կորնթացիներին ուղղված առաջին թղթի մեկնություն, (փոխադրությունը արեւելահայերենի՝ Մարգարիտա Խաչատրյանի):*

Ուսումնասիրությունը երանաշնորհ հեղինակի ամենահետաքրքիր աշխատանքներից, որը նա գրել էր, երբ դեռ վարդապետ էր: Գիրքն այսօր էլ ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ եւ շատ ուսանելի է ինչպես հավատացյալների, այնպես էլ հոգեւոր դասի ներկայացուցիչների համար: Ս. Պողոս Առաքյալի իմաստուն խոսքի այս ուշագրավ մեկնությունը գրված է պատկերավոր ու կենդանի լեզվով, հարուստ հոգեւոր լիցք ունի եւ յուրօրինակ գրույց է ընթերցողի հետ: Այսօրվա խառնակ օրերում բացառիկ նշանակություն ունեն մարդու ներաշխարհի բացահայտման, մարդ-ԱՍՏՎԱԾ հարաբերությունների ներկայացման փորձերը, իսկ Ս. Պողոս Առաքյալի վարակիչ ու խանդավառ խոսքը ՍԻՐՈ մասին մեր հոգեւոր գրականության եզակի էջերից է:

Գրքի հոգեւոր աշխարհը ներկայացված է արեւելահայերենով, որպեսզի էլ ավելի շատ հավատավոր մարդիկ կարողանան առնչվել այս հարուստ գանձարանին:

10. *Ս. Կիպրիանոս Կարթագենացի, Ընդհանրական Եկեղեցու միասնության մասին (լատիներենից թարգմանությունը՝ Ալվարո Բարխուդարյանի):*

Ս. Կիպրիանոս Կարթագենացին Ընդհանրական Եկեղեցու մեծագույն շատագով հայրերից է, որն ստացել է ժամանակի լավագույն կրթությունը եւ դարձել մեծ հռետոր, պերճախոսության ու փիլիսոփայության ուսուցիչ ու դասավանդել կարթագենյան դպրոցում, իսկ 248 թ., քրիստոնեա-

կան համայնքի խնդրանքով, օծվել Կարթագենի եպիսկոպոս: Նա 258 թ.՝ Վալերիանոս կայսեր հալածանքների ժամանակ, մերժելով զոհ մատուցել կուռքերին, գլխատվել է եւ արժանացել մարտիրոսության սուրբ պսակի: Սբ. Կիպրիանոսը հեղինակ է աստվածաբանական մի շարք աշխատությունների եւ բազմաթիվ հովվական նամակների՝ գրված հալածանքի տարիներին՝ տարբեր առիթներով:

Սույն երկը մեծ արժեք է ներկայացնում հատկապես Եկեղեցու մասին, որն արդի եկեղեցաբանության հիմնական աղբյուրներից մեկն է: Հեղինակը պառակտումները դիտարկում է որպես սատանայի հնարք՝ հավատը տապալելու, ճշմարտությունը աղավաղելու եւ միասնությունը խաթարելու նպատակով: Միասնությունը հատկապես պետք է պահեն եւ պաշտպանեն եպիսկոպոսները: Եկեղեցին հավատացյալների Մայրն է, որից նրանք ծնվում են: Քրիստոնյաները սնվում են նրա կաթով, ուստի «Ով Եկեղեցին իբրեւ Մայր չի ճանաչում, չի կարող Աստծուն՝ իրեն իբրեւ Հայր ունենալ»: Միասնությունը Եկեղեցու ամենահիմնավոր հատկությունն է: Այս երկում Ս. Կիպրիանոսը խոսում է եկեղեցական պառակտումների աղետալի հետեւանքների մասին: Հերետիկոսներն ու պառակտողները գործում են ուղիղ Աստծու կամքին հակառակ, ուստի «Հարկ է երես դարձնել եւ խուսափել Եկեղեցուց հեռացած յուրաքանչյուրից»: Հեղինակը նշում է, որ պառակտողների կողմից կատարված խորհուրդներն անվավեր են եւ կոչ է անում հավատացյալներին խուսափել նրանց հետ հաղորդակցությունից, քանզի որեւէ մեկը «տրվելով երկպառակության մոլուցքին՝ մասնատում է Եկեղեցին, քայքայում է հավատը, խախտում է խաղաղությունը, արմատախիլ է անում բարեսիրությունը, պղծում է խորհուրդը»:

11. Արարատ քահանա Պողոսյան, Սուրբ Էջմիածնի դերը ժԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում, իմբազիր՝ ակադեմիկոս Աշոտ Մելինյան:

Մենագրությունն իր բովանդակությամբ եւ գիտական կառուցվածքով արժեքավոր ներդրում է հայագիտության եւ հատկապես եկեղեցու պատմական դերի ուսումնասիրության բնագավառում: Աշխատության մեջ համակարգված կերպով բացահայտվել եւ վերլուծվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսության հոգեւոր կենտրոնի՝ Սուրբ Էջմիածնի դերակատարությունը հայ ազատագրական պայքարի գաղափարական, քաղաքական եւ դիվանագիտական գործընթացներում՝ ընդգծելով ինչպես հո-

գեւոր առաջնորդների, այնպես էլ ազգային գործիչների փոխկապակցվածությունը:

Ուսումնասիրության կարեւոր արժանիքներից մեկն այն է, որ այն վերահիմաստավորում է եկեղեցու ոչ միայն հոգեւոր, այլեւ ազգային-քաղաքական առաքելությունը: Սուրբ Էջմիածինը վերարժեւորվում է որպէս ազգային ինքնագիտակցության պահպանման, դիվանագիտական հարաբերությունների ձեւավորման եւ հայության համախմբման կենտրոն՝ օտար տիրապետությունների եւ պատմական փորձությունների պայմաններում: Գրքում հիմնավորվում է պատմական այն իրողությունը, որ եկեղեցու գործունեությունը հայ ազատագրական շարժումների գաղափարական հենքն էր եւ ազգային դիմադրողականության ու ոգու պահպանման առանցքը:

Ուսումնասիրության կառուցվածքը բխում է աշխատության բովանդակությունից: Պատմական թեմայի մեկնաբանությունը զերծ է միակողմանիությունից, պահպանված է հավասարակշռությունը իրականության եւ գաղափարական մեկնության միջեւ: Գրքի արժեքը հատկապէս նրա գիտական նորարարությունն է, այն համակողմանի ուսումնասիրում է Սուրբ Էջմիածնի՝ որպէս համահայկական կենտրոնի եւ հոգեւոր-քաղաքական իշխանության միասնության խորհրդանիշի ներգրավվածությունը հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարի ձեւավորման եւ իրականացման պատմական գործընթացում: Գրքում ներկայացված փաստերն ու վերլուծությունները նոր լույս են սփռում խնդրո առարկա ժամանակաշրջանի բարդ իրողությունների վրա՝ հնարավորություն տալով վերարժեւորելու եկեղեցու դերը մեր ժողովրդի պատմության մեջ:

Աշխատությունն ունի սկզբնաղբյուրային ստվարածավալ հենք՝ արխիվային վավերագրեր, հայրաբանական գրականություն, հայ եւ օտար պատմագրություն եւ այլն: Ուսումնասիրությունն ընդգրկում է նաեւ օգտագործված աղբյուրների եւ գրականության, անձնանունների եւ տեղանունների ցանկեր:

12. Արմինե Տիգրանյան, Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման եւ բուժաբանական Ադրբեյջանի փաղափականությունը (2020–2025 թթ.):

Սույն ուսումնասիրությամբ հեղինակն անդրադարձել է 2020–2025 թթ. Ադրբեյջանի սանձազերծած պատերազմների, էթնիկ զտման եւ ռասայական խտրականության հետեւանքով Արցախի պատմական հայկական

մշակութային ժառանգության համակարգված ոչնչացման եւ յուրացման քաղաքականությանը, մշակութային ժառանգության միջազգային պաշտպանության գործիքակազմին:

Մենագրության մեջ քննվում են զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության միջազգային համակարգը, Ադրբեջանի կողմից 44-օրյա պատերազմի ընթացքում եւ դրանից հետո Արցախի հայկական մշակութային ժառանգության՝ միջազգային սկզբունքների դիտանկյունից անօրինական թիրախավորման դեպքերը, դրա ոչնչացման եւ յուրացման միջոցները: Ներկայացվում են մշակութային արժեքների պաշտպանության միջազգային կանոնակարգերը, իրավական եւ հումանիտար գործիքակազմը (միջազգային կոնվենցիաներ, հռչակագրեր, բանաձեւեր, կանոնադրություններ, սովորույթային նորմեր)՝ ի պաշտպանություն Ադրբեջանի կողմից վանդալիզմի ենթարկված Արցախի հայկական մշակութային ժառանգության: Ակադեմիական հոդվածների, գրքերի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ՄԱԿ-ի, ԻԿՕՄՕՍ-ի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական խորհրդարանի բանաձեւերի, ՀՈՒՄԻ կանոնադրության, տեսական եւ իրավական համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրությունը հնարավորություն է տվել գտնելու Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության ուղիները՝ համամարդկային արժեքների պահպանության կարեւորության, անկախ քաղաքական իրավիճակից միջազգային հումանիտար իրավունքի գործարկման, մշակույթի իրավունքի հարգման շարակարգում:

Նախատեսված է մշակութային ժառանգության պահպանությամբ զբաղվող մասնագետների, պետական կառույցների, գիտական հաստատությունների, ուսանողների եւ արցախահայության մշակութային ժառանգության պաշտպանությամբ ու պահպանությամբ մտահոգ ընթերցողների լայն շրջանակի համար:

13. Ավետիս Հարությունյան, Հայ գաղթականությունն Առաջին աշխարհամարտի տարիներին եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին (1914–1917):

Հետազոտության մեջ սկզբնաղբյուրների համակողմանի ուսումնասիրման եւ համադրման միջոցով պատմաքննական եւ պատմահամեմատական վերլուծությամբ ներկայացվում է Առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքական կառավարության հակահայ քաղաքականու-

թյան արդյունքում առաջացած հայ գաղթականության պատմությունը եւ հայ գաղթականության ու Հայ Առաքելական Եկեղեցու փոխկապակցված հիմնահարցի համալիր վերլուծությունը: Մարդկության ողջ պատմության առաջին ցեղասպանության, ինչպես նաեւ Առաջին համաշխարհային պատերազմի կովկասյան ռազմաճակատի ռազմական գործունեությունների գիտական ուսումնասիրումը միշտ էլ եղել է եւ մնում է պատմաբանների եւ այդ հարցով զբաղվող այլ հեղինակների ուշադրության կենտրոնում: Այդ հարցերի վերաբերյալ, սկսած առաջին համաշխարհային պատերազմի տարիներից, ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում, ստեղծվել է բավականին ստվար գրականություն: Մինչդեռ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ գաղթականության պատմության ամբողջական լուսաբանումը դուրս է մնացել հայ պատմագրության ուշադրությունից եւ հատուկ ուսումնասիրման առարկա չի դարձել:

Հեղինակը, հետազոտելով գրեթե չուսումնասիրված հիմնախնդիրը աղբյուրների համակողմանի վերլուծման եւ համադրման միջոցով իր առջեւ խնդիր է դրել Հայոց ցեղասպանության եւ հայ գաղթականության փոխկապակցվածության հիմնահարցի պատմաքննական վերլուծությանը եւ գիտական անաչառ լուսաբանմամբ՝

ա) ներկայացնել 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերյան, 1915 թ. հուլիսյան, 1916 թ. հուլիս-օգոստոսյան եւ 1916 թ. նոյեմբերյան գաղթների պատմությունը,

բ) բացահայտել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գաղթների եւ հատկապես 1915 թ. հուլիսյան աղետալի գաղթի միտումնավոր կազմակերպման գործում ցարիզմի գաղութային քաղաքականության էությունը եւ շարժառիթները,

գ) ցույց է տալ, թե ինչպես էր կազմակերպվում եւ իրականացվում հայ գաղթականների պետական օգնության գործառույթը,

դ) լուսաբանել գաղթականական կոմիտեաների եւ բարեգործական հիմնարկների գործունեությունը,

ե) ներկայացնել գաղթականների ծանր վիճակը, տեղաբաշխումը եւ օգնության կազմակերպումն Արեւմտյան եւ Արեւելյան Հայաստանի տարբեր շրջաններում,

զ) արժեւորել Հայ Առաքելական Եկեղեցու անմնացորդ դերակատարումը հայ գաղթականների փրկության գործում,

է) պարզաբանել հայ գաղթականների օգնության կազմակերպման հայանպաստ շարժման օգտավետությունը:

14. Վաերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, Գիրք ԻԶ, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը ԺԷ.—ԻԱ. դդ., փաստաթղթերի ժողովածու (ըստ Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի, Հայաստանի ազգային արխիվի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվի նիւթերի, կազմողներ՝ Տ. Ասողիկ արքյ. Կարապետեան եւ Գոհար Մուրադեան):

Փաստաթղթերի սույն ժողովածուն ներկայացնում է Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի ԺԷ.—ԻԱ. դարերի ընթացքում վերանորոգումների եւ կատարված շինարարական աշխատանքների հարուստ փաստագրությունը: Այն ընդգրկում է բազմաթիվ արխիվային նյութեր, նամակներ, պաշտոնական գրություններ, ճարտարապետական հաշվետվություններ, տեխնիկական բնութագրեր, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու տարբեր կաթողիկոսների, թեմակալ առաջնորդների եւ բարերարների միջեւ փոխանակված նամակագրություն՝ կապված Մայր Տաճարի վերանորոգության եւ նյութատեխնիկական հարցերի հետ: Ժողովածուի մեջ մեծ տեղ է հատկացված հատկապես Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տարիներին վերաբերող նյութերին:

Գիրքը յուրահատուկ արժեք ունի՝ որպես աղբյուրագիտական ժողովածու, քանի որ միավորում է մատենագրական, փաստագրական եւ պատմական նյութերի ամբողջական համակարգ՝ հնարավորություն տալով ուսումնասիրել Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի վերակառուցման, պահպանության եւ մշակութային ժառանգության ընթացքը՝ մի քանի դարերի կտրվածքով:

15. Միքայել Հեզեման, Հայոց Յեղասպանությունը. Առաջին աշխարհամարտի ընթացքում իրագործված մեծագույն հանցագործությունն ըստ Վատիկանի գաղտնի արխիվի անտիպ փաստաթղթերի:

Ուսումնասիրության մեջ հեղինակը Վատիկանի գաղտնի արխիվներում պահպանված պաշտոնական փաստաթղթերի ու անհատականատեսներ, ինչպես նաեւ միսիոներական տարբեր խմբերի ներկայացրած զեկուլցների հիմամբ ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել եւ ներկայացրել է Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած մարդկության պատմության մեծագույն հանցագործության՝ 1915 թ.

Հայոց ցեղասպանությանն առնչվող փաստերն ու դրա սարսափելի հետեանքները:

Գիտական հանրության սեղանին դրված այս կարեւորագույն ուսումնասիրության մեջ Միքայել Հեզեմանը միաժամանակ պատմամշակութային տեսանկյունից դիտարկել է ամբողջացրել է տվյալ ժամանակահատվածում Օսմանյան կայսրության մեջ տիրող կրոնաքաղաքական ողջ պատկերն ու Հայոց Մեծ Եղեռնի կազմակերպման հիմնական դրդապատճառները: Նյութի հետազոտման համար ընտրված առանձնահատուկ մեթոդով է պայմանավորված նաև աշխատության յուրահատուկ կառուցվածքն ու դրանում արտահայտված շեշտադրումները: Ուսումնասիրությունն օժտված է սկզբնաղբյուրների եւ գրականության ցանկերով, ինչպես նաև տեխնիկական այլ բաժիններով:


16. «Օրացոյց. 2025» պաշտոնական:

Ներկայացնում է ողջ տարվա ծիսատոնական համակարգը՝ ներառելով եկեղեցական բոլոր տոները, սրբոց հիշատակության օրերը: Բացի նշվածներից ներառում է նաև տեղեկություններ Ամենայն Հայոց կաթողիկոսության միաբանների, տարբեր խորհուրդների եւ հանձնաժողովների անդամների, ինչպես նաև Մայր Աթոռի պաշտոնեության մասին:

17. «Սեղանի օրացոյց. 2025»:

Ներկայացնում է ողջ տարվա ծիսատոնական համակարգը՝ ներառելով եկեղեցական բոլոր տոները, սրբոց հիշատակության օրերը եւ սրբերի համառոտ վարքը:

ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ
Ս. Էջմիածնի Մատենադարանի եւ հրատարակչության տնօրեն



ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
«Քրիստոնյա Հայաստան»-ի գլխավոր խմբագիր

ՎՅ ԱԶՎԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՍԱՆ ԽՆԴԻՐԸ ՓԻԹԵՐ ԲԱԼԱՔՅԱՆԻ «ՃԱԿԱՏԱԳՐԻ ՍԵՒ ՇՈՒՆԸ» ԵՐԿՈՒՄ՝

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտնի է, սփյուռքահայ գրականության սկզբնավորման պատմաքաղաքական նախադրյալները՝ արեւմտահայության ցեղասպանությունը, բռնագաղթն ու հայրենագրկումը, կանխորոշեցին նրա զարգացման հիմնական ուղղությունները՝ նահանջի գրականություն, կարոտի գրականություն եւ ոգու գրականություն, որոնք, գաղափարաբանական ու գոյափիլիսոփայական ընդհանրություններով եւ առանձնահատկություններով հանդերձ, ամբողջացնում էին այն ոգեղեն տարածությունը, ինչը տարագիր հայ սերունդների համար պետք է դառնար ազգային ինքնության պահպանման, գոյության հիմքերի վերագտնման խարիսխ: Այս երեք հիմնական ուղղվածությունից բացի՝ մանավանդ օտարագիր հայ գրականության մեջ նշանավորվում է մի այլ ուղղություն եւս՝ որոնումի գրականությունը:

Եթե նահանջի գրականությունը նպատակամիտված էր ահազանգելու ու ծացման սպառնալիքները, ազգային սայթաքումների, այլասերության հրապույրի մատնանշմամբ սթափեցնելու եւ վերադաստիարակելու մնացորդաց սերնդին, կանխելու ինքնության կորուստը, եթե կարոտի կամ հայրենաբաղձության գրականությունը կորուսյալ ծննդավայրի կարոտատիտի եւ ցեղասպանված ժողովրդի ոգեկոչման գրականություն էր, որ առարկայացնում էր հայրենիքի տեսիլքը, միավորում, միագոյություն դարձնում ոգեղենն ու հողեղենը՝ ամրագրելով հիշողությունն ու տունդարձի ճանապարհը, եթե ոգու գրականությունը ցեղային ոգու վերարթնացումի, ցեղային նկարագրի վերհանումի գրականություն էր՝ վերհրակալի ու բացարձակի հայտնաբերմամբ ու վերահռչակմամբ, ապա որոնումի

*Ստացվել է՝ 26.12.2026, գրախոսվել է՝ 4.03.2026: Էլ. հասցե՝ nare-luys@mail.ru:

մի գրականությունը նպատակամիտված էր՝ վերագտնելու արդեն կորուսյալ ազգային ինքնությունը, անցյալի հետքերով հասնելու ինքնաճանաչողության եւ ինքնագիտակցության: Պատահական չէ, որ գեղարվեստական այս ուղղվածությունը ձեւավորվեց օտարագիր հայ գրողների ստեղծագործություններում:

Որոնումի գրական ճանապարհը նշանավորվեց նաեւ Փիթեր Բալաքյանի «Ճակատագրի սեւ շունը» ստեղծագործությամբ: Փիթեր Բալաքյանի այս երկը համաշխարհային եւ ազգային մշակույթների բախումից ի հայտ եկած գեղարվեստական նոր որակ է, գեղագիտական համադրության նոր երեւույթ:

«Ճակատագրի սեւ շունը» գրված է հուշագրության ժանրով: Իսկ ինչո՞ւ հուշագրություն: Ինքնության վերագտնումի հոգեւոր ճանապարհն անհրաժեշտաբար պարտադրում էր ազգային պատմության եւ մոտ անցյալի ճանաչողություն՝ միայն այդպես հնարավոր դարձնելով հասնել ինքնագիտակցության: Արյան ներքին կանչի կամ ազգային դարձի ենթագիտակցական մղումը պետք է փոխլրացվեր գիտակցական մակարդակով՝ ամբողջացնելու անհատի կեսգոյությունը, լիարժեք դարձնելու այն՝ վերացնելով երկվությունը կամ հակասական մտքերի ներքին բախումը: Հուշագրությունը՝ որպես գեղարվեստավերագրական ժանր, հնարավորություն էր՝ համադրելու գեղարվեստն ու վավերագրությունը, պատմությունն ու հոգեբանությունը, փաստի տարրն ու ոգին: Փիթեր Բալաքյանի երկը պարունակում է ինքնակենսագրական վեպին բնորոշ որոշ հատկություններ, բայց չի նույնանում նրան՝ անհատականից համընդհանրականի, մի կյանքի տարածությունից պատմական մի ողջ շրջանի, անհատական կենսագրությունից մի ամբողջ ժողովրդի պատմության հասնելու առումով: Բացի այդ՝ ինչպես գրում է Բալաքյանը. «Հիշատակությունը էական գործընթաց է ծանր կորուստ ունեցողների եւ ցեղասպանության փորձառությունը ժառանգած սերունդների համար: Դրա միջոցով կարելի է իմաստավորել աներեւակայելի սարսափներն ու կորուստները: Քանզի ցեղասպանությունից հետո մեռյալները բառացիորեն կամ զգացմունքայնորեն չեն թաղվել, հիշատակությունը նաեւ նրանց հողին հանձնելու ծիսակատարություն է՝ քաղաքակրթության առաջին ձեռնարկումը»²:

² Փ. ԲԱՎԱՔՅԱՆ, Ճակատագրի սեւ շունը, Ե., 2002, «Տիգրան Մեծ» հրատ., էջ 336–337: Այսուհետ սույն գրքից մեջբերումները կհղվեն շարադրանքում փակագծերում նշելով էջը:

Ինքնին խորախորհուրդ է նաեւ ստեղծագործութեան վերնագիրը, թերեւս հուշագրութեան ժանրից եւ վերհուշի հոգեբանութեան ենթախորքից բխող: «Ճակատագրի սեւ շունը», այսինքն՝ ճակատագրի սեւ ուրվականը, ողբերգութեան հետապնդող ստվերը, մարդու կյանքը հսկող, մարդուց անբաժան գոյութիւն-իրողութիւնը, այլ կերպ ասած՝ ցեղասպանութեան հիշողութիւն-տեսիլը կամ հոգեբանական մտասեւեռումը: Վեպի վերնագրի վերաբերյալ այլ դիտարկում ունի գրականագետ Դ. Գասպարյանը. «Ճակատագրի սեւ շունը թուրքն է, որ մտավ մեր ճակատագրի մեջ, մեր պատմական հայրենիքի, մեր լեզվի, մեր ժողովրդի, մեր գոյաբանութեան մեջ»³: Խորագրի ընտրութիւնն ունի նաեւ նախապատմութիւն, որ ճակատագրի վերաբերյալ տատից լսած մի հին ավանդութիւն է:

«Ճակատագրի սեւ շունը» անգլերէն լույս է տեսել 1997 թվականին՝ ճանաչվելով «Տարվա լավագույն գիրք» (1998): Հայերէն լույս է տեսել 2002 թ. Երեւանում՝ Արտեմ Հարութիւնյանի թարգմանութեամբ: Փիթեր Բալաքյանը Հայոց ցեղասպանութեան եւ կորուսյալ հայրենիքի թեմայով գրել է բարձրարժեք այլ ստեղծագործութիւններ եւս՝ «Այրվող Տիգրիս. Հայոց ցեղասպանութիւնը եւ Ամերիկայի պատասխանատվութիւնը», «Լույսի թախծոտ օրեր», «Օզոնի հանդես» եւ այլն: «Օզոնի հանդես» բանաստեղծական ժողովածուի համար 2016 թ. «Պոեզիա» անվանակարգում նա արժանացել է Պուլիցերյան մրցանակի⁴: Փ. Բալաքյանը նաեւ Արիս Սեւակի հետ անգլերէն թարգմանել ու հրատարակել է իր պապի եղբոր՝ Գրիգորիս եպիսկոպոս Բալաքյանի «Հայ Գողգոթան» հուշագրութիւնը: Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործում նշանակալի ավանդի համար 2015 թ. Փիթեր Բալաքյանին շնորհվել է ՀՀ նախագահի մրցանակ:

1. ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՐԴԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Փիթեր Բալաքյանի «Ճակատագրի սեւ շունը» ստեղծագործութեան մեջ տեսանելի է երկու դիմադարձ աշխարհ՝ արտաքինն ու ներքինը, առարկայականն ու ոգեղենը, ամերիկյան կլանող-ուծացնող միջավայրն ու հայ-

³ Տե՛ս <https://www.irates.am/hy/1431411392>:

⁴ Տե՛ս <https://www.pulitzer.org/winners/peter-balakian>:

կական ժառանգորդական հիշողությունը, որոնց միջեւ առկա ճեղքվածքում անհատն է՝ գոյություն իմաստի նշանավորման փնտրտուքներով կամ երկփեղկված կյանքի վերամիավորման գիտակցական մղումով. «Երբ տատիս հետ էի, հաղորդակից էի լինում ինչ-որ այլ աշխարհի, լույսի ու մութի, բայց դեպի իրեն քաշող աշխարհի, գորություն մի տարօրինակ դրսեւորման, որն անտեսանելի ուժի նման Հայաստան կոչվող հնագույն երկրից հոսում-հասնում էր իմ աշխարհը՝ Նյու Ջերսի: Ինչ-որ հնագույն մի բան էր՝ կապված երկրի, բառերի, արյան ու երկնքի հետ» (20):

Սա դեռեւս իր ծագումնաբանությունն անճանաչ գլխավոր հերոսի ոգեղեն անհայտ հաղորդակցության, ժառանգորդական թանկ զգացողության կամ արյան կանչի պահն է, որ այդուհետ պիտի նրան տանի ինքնության որոնման անծանոթ ուղիներով, մինչեւ հասնի ինքնաճանաչողության եւ ինքնավերագտնումի: Ազգային դարձի հոգեբանությունը կամ ինքնաորոնումի գիտակցական պահանջը ձեւավորվում-հասունանում է անհատի կենսագրությանը համընթաց. «Այժմ ես հասկանում եմ, որ տատիս պատմությունները ձմեռնաքուն էին մտել իմ ուղեղում, մինչեւ ես պատրաստ կլինեի դրանք ամբողջությամբ ըմբռնել... Ես ի վերջո հասկացա, որ տատիս պատմությունները ժամանակի մի մասնիկն էին եւ, հընթացս, ժամանակից դուրս էին, տարածության մի հատված էին եւ տարածությունից դուրս, ուղեղի մեղրամոմի մեջ պաշարած նեկտար» (20—21):

Փիթեր Բալաքյանը հույժ կարեւորում է, որ սփյուռքահայության ձուլման սպառնալիքին դիմագրավելու հիմքը դրվի ընտանիքում՝ նախնի—ծնող—զավակ ժառանգորդական շղթայում հիշողությունը շրջահատելով: Պատահական չէ, որ գիրքը բացվում է խորհրդանշական երկու պատկերով՝ Հայաստանի քարտեզով եւ գրողի տոհմածառի ուրվանկարով:

Պատանեկության տարիքում բախվելով իր լինելության՝ ո՞վ եւ որտեղից խնդրին, հերոսն ընդվզում է լռության պատնեշի դեմ, որ ապահովության պատրանքով ստեղծվել է շուրջն՝ ընտանիքում: Իր ծագումնաբանությանն անտեղյակ հերոսի՝ թմբիրից արթնանալու ազդակը նախ տատի ընդհատ, անավարտ պատմություններն են, որ երբեմն խախտում էին լռության դրությունը: Տատը դառնում է հերոսի ինքնության փրկության խորհրդանիշ՝ կենդանի թե մեռած իր մեջ մարմնավորելով ոգեղեն Հայաստանը. «Եւ նշանակություն չունեի, թե որքան էի խորասուզված մերձքաղաքային այդ կյանքի ու Թենըֆլայի դեռահասների ուրախ հասարակության մեջ, տատիս հիշատակը մի տարօրինակ ստվերի նման անընդհատ

հայտնվում էր այս ու այն տեղ՝ կարծես ինձ հիշեցնելու, որ էլի ինչ-որ բաներ կային, որ ես պարտավոր էի իմանալ... Նա դարձել էր իմ բախտը, ճակատագրի ուժը, որ այցելում էր ինձ՝ առանց հարցնելու՝ պատրաստ էի նրան ընդունելու, թե՛ ոչ...» (34):

2. ԼՈՒԹՅՈՒՆ – «ՏՈՒՆ» ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Լուսթյունը՝ պայքար ինքն իր դեմ, յուրայինների անվտանգության թվացյալ պատենեշ: Ցեղասպանության եւ բռնազավթված հայրենիքի մասին չխոսելը՝ ինքնապաշտպանական միջոց, ինքնափախուստ, սեփական էության վերաձեւման փորձ, տառապանքից կարծրացած հոգու հիշողության բեռ: Լուսթյունը դառնում է «տուն», ուր բնակվում-պատսպարվում են հուշագրության վերապրող հերոսներն ու նրանց ժառանգները՝ ծանր վարագույրներ իջեցնելով անցյալի ու ներկայի միջեւ: Սա գիտակցական քայլ է Բալաքյանի՝ ցեղասպանության փրկված հերոսների կողմից, որ կարող է տեղի տալ թերեւս անգիտակցական մակարդակում: Հոգեկան շիկացումը, որն այս դեպքում անգիտակցականի սահմանն է, ճեղքում է հուշագրության հերոսներից մեկի լուսթյան պատը. Նաֆինա մորատատը, որ ցեղասպանության հետո լուել էր ամբողջ երկու տասնամյակ, հոգեկան խանգարման ընթացքում զառանցում է՝ անցյալի դեպքերն ու դեմքերը ենթագիտակցական հոսքով դուրս մղելով ներքին զսպված տարածությունից: Իսկ հոգեկան խանգարման պատճառը 1941 թ. Փերլ Հարբորի վրա ճապոնացիների ռազմական հարձակման ու ռմբահարման եւ Հայոց ցեղասպանության զուգորդությունն է: Եւ երբ հերոսի գիտակցությունը վերականգնվում է, նա դարձյալ ինքնապաշարվում է լուսթյան քողով. «...Մեր ընտանիքում,– հիշում է գրողը,– ոչ մեկը Հայաստանի մղձավանջային իրադարձություններն այնպիսի իրողություն չէր համարում, որի շուրջ կարելի էր զրուցել, կամ ինչն անհրաժեշտ էր իրապես իմանալ: Ցեղասպանության այրող փաստերը խորը թաղված էին, հանձնված գիտակցության ամենածածուկ շերտերին...» (344–345):

Լուսթյան թմբիրն այս պարագայում հոգեկան ամոքման ճանապարհ է, հիշողության խարանը ջնջելու, հոգեկան բաց վերքը փակելու ներքին ճիգ ու ջանք, գոյատևելու անհրաժեշտ պարտադրանք: Բայց արդյո՞ք տեղի է ունենում ամոքումը. անշուշտ՝ ո՛չ, որովհետեւ շարունակվում է անհատի ներքին հիշողությունը, ավելի խորանում՝ ներհայեցողությունը:

«Որքան ծանր էր վերապրող լինել, նախքան ստեղծումը հոգեբանության ու ախտաբուժության հանրային ավանդույթի, որի նպատակն էր լինելու օգնել զոհերին՝ իրենց վերքի ու ցնցման բարոյական նշանակությունը հաստատելու խիզախություն եւ արտահայտվելու կարողություն ձեռք բերելու համար...» (347),— գրում է Բալաքյանը՝ ակնարկելով լռության մի այլ հատկանիշի՝ հոգեկան ախտաբանության մասին: Այն, լռությունը Բալաքյանի վերապրող հերոսների դեպքում ե՛լ գիտակցական վահան է՝ էությունը խոշտանգող հիշողությունների եւ իրողության հետահայաց ընկալումների դեմ, ե՛լ հոգեկան ախտաբանական վիճակ, ե՛լ օտար միջավայրում չհասկացվածության ու մենության դրամատիկ դրսևորում:

Դիտարկենք լռության հոգեբանական դրսևորումները Բալաքյանի հուշագրության մեջ.

- Լուրջումը՝ «տուն», որտեղից սկսվում է ներհայեցողական կյանքը. «1920-ականներին, 30-ականներին ու 40-ականներին, եթե հայ էիր, պարզապես քշված էիր տանիցդ ու երկրիցդ, նետված այն երկիրը, ուր ժամանել էիր: Կավագույն դեպքում վերադառնում էիր տուն՝ քո հայկական ընտանիքը, որտեղ տիրում էր անարտահայտելի գաղտնիքի համընդհանուր ըմբռնման մթնոլորտ» (347):

- Լուրջումը՝ չհասկացվածության հոգեբանական պատճառ. «Այն միջավայրում, որը չէր ճանաչում կամ գոնե արտահայտում ցեղասպանության բարոյական նշանակությունը, տատս ստիպված էր ներամփոփվել, ճիշտ այնպես, ինչպես Առաջին համաշխարհային պատերազմի կոնտոգիահար զինվորները, որ տուն վերադառնալուց հետո կծում էին լեզուները, երբեմն հատելու աստիճանի, ու շարունակում գոյատևելը» (347):

- Լուրջումը՝ ապահովության միջոց. «Երբ խորհում եմ ծնողներիս ու նրանց՝ հաջորդ սերնդի լռության շուրջ, նույնն է, թե մտածեմ ապահով վայրի առկայության մասին... Գիտակցության ինչ-որ մութ վայրում ծնողներս, հավանաբար, գտել էին այն իրական պատճառները, որոնք հայ լինելը դարձնում էին անչափ դժվար, խիստ ցավագին ու անասելի անհեթեթ (348—349):

- Լուրջումը՝ տառապանքի ու ցավի իմֆնազպման դրսևորում. «Սակայն անցյալը դեռեւս գալարվող ստվերի նման իր խավար շուրջն էր սփռում բոլորիս վրա: Երկիր: Հիմա եմ հասկանում, որ այն ծածկագրված արտահայտություն էր, նախատեսված չէր երեխաների համար: Այն արտաբերում էր միայն հայերի՝ թմբիրի մեջ ապրող լուռ սերունդը: Այն նշանա-

կում էր կորուսյալ աշխարհ, վայր, որ թողնվել էր մխալու սեփական մոխրի մեջ» (349):

3. ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԳՏՆՈՒՄԸ ԵՒ ՎԵՐԱՀՌՉԱԿՈՒՄԸ ԿԱՄ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՐՁԸ

Փիթեր Բալաքյանի հուշագրության վիպական ընթացքը կառուցված է ճանապարհ դեպի ինքնություն սկզբունքով: Ամերիկյան կյանք, պատանեկան աշխարհայացք ու հետաքրքրություններ, եւ այդ ամենի մեջ՝ ժառանգորդական կապի անորոշ զգացողություն, որ աստիճանաբար պիտի որոշակիանա ու հասունանա՝ ամերիկացի հերոսին հասցնելով ազգային ինքնաճանաչողության եւ ինքնագիտակցության:

Հայաստանի պատմության համառ որոնումները՝ դպրոցական անարդյունք փնտրտուքներից մինչեւ պատմական արխիվների ու գրքերի ուսումնասիրություն, տեւական մի ընթացք է դեպի ազգային ճանաչողություն: Հուշագրության մեջ Հայաստանը մեծ աշխարհի առաջ բացվում է իբրեւ քաղաքակրթության հնագույն օրրան եւ ցեղասպանության զոհ: Հայաստանի նորագույն պատմությունը բացահայտվում է Հայոց ցեղասպանության ականատես դիվանագետների, միսիոներների, ճանապարհորդների, փրկված արեւմտահայերի, ցեղասպանության ոճրագործների վկայությունների, արխիվային այլ նյութերի ու պատմությունների միջոցով: Հեղինակը դրանցից որոշակի մեջբերումներ է կատարում՝ իր խոսքին ձայնակից ու վկայություն ունենալով այդ փաստաթղթերն ու վավերագրությունները, եւ ամենից շատ՝ «Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը եւ հայկական եղեռնի գաղտնիքները» գրքից: Բալաքյանն այստեղ այլեւս ոչ թե վերհիշող, այլ վերապատմող ու վկայակոչող է: Պատումի այդ եղանակը ցեղասպանության ու նրա հետեւանքների միջազգայնացման խնդրից անդին պետք է օգնեք նաեւ գրողի բախտակիցներին՝ վերագտնելու հայկական կորուսյալ արմատները, ձեռք բերելու ազգային ինքնագիտակցություն եւ դառնալու մեծ պահանջատիրության մի մասնակից:

Հուշագրության մեջ մինչ այդ գերիշխող ամերիկյան կյանքի պատկերները տեղի են տալիս, ինքնակենսագրական առանցքի շուրջ ընթացող վիպական պատմությունը հետին գիծ է մղվում՝ դառնալով երկրորդական: Ցեղասպանության պատմությունը, որի մի բեկորն է օտարագիր

գրողի կյանքը, դառնում է գրքի հիմնաշերտ: «Ֆաշիստներից էլ առաջ» գլխից սկսած՝ հայկական իրականության մինչ այդ ընդհատվող շղթան անընդհատական է դառնում, եւ հասկացվում է, որ ամբրիկյան կենցաղի ու ապրելու մշակույթի պատկերումն ընդամենը գեղարվեստական նախադուռ էր մեծ իրադարձությունների քողազերծման եւ ստեղծագործական գաղափարի արտահայտման համար:

ա) Ամերիկյան կենցաղում բացվող ազգային գաղանփներ

Հայոց ցեղասպանության գաղտնագերծումը «Ճակատագրի սեւ շունը» երկում սկիզբ է առնում ընտանեկան կենցաղի ու հոգեբանության ընկալումներից: Դա կարող է լինել եւ տատի խոսքի պատառիկը, եւ հոր ինքնագուսպ կեցվածքը, եւ ճաշելու ընտանեկան սովորույթը, եւ մի այլ երեւույթ. «Մնունդը մեզ համար մշակութային բարդ խորհրդանիշ էր, մերձավորարեւելյան մշակույթի հարուստ պատմությունն ու հավաքական հիշողությունը մարմնավորող ծածկագրված ձեռագիր մատյան: Ես անտեղյակ էի, թե սնվելը նույնպես դրամա էր, որի իմաստը միահյուսված էր հայոց դառը պատմության հետ: 1960-ին անգամ չէի լսել «սովյալ հայեր» արտահայտությունը. նաեւ չգիտեի, որ նախնիներս երկու միլիոնից ավելի հայերի մեջ էին եղել, որոնք 1915-ին եթե անմիջապես չէին սպանվել, ապա քշվել էին Թուրքիայի անապատները եւ սովի մատնվել.... 1960-ին ինձ անծանոթ էր ճաշի սեղանի բարոյականության հանդեսը, սակայն տեղյակ էի, թե ծնողներս որքան ուժգին էին հուզվում, երբ խոսք էր բացվում ճաշելու պատշաճության ու ծիսականության շուրջ» (58):

Տատի մի քանի կիսատ, պահի մեջ արտաբերված պատմությունների միջից նույնպես աղոտ երեւակվում են Հայոց ցեղասպանության պատկերներ: Ահավասիկ մի դրվագ վերապրող հերոսի անցած Գողգոթայից. «Ամենուր նեխածության հոտ էր: Հակոբը գետնին էր: Ես ցնցեցի նրան: Դիմացս ինչ-որ բան էր նշմարվում: Հակոբը սառած էր: Հետո նկատեցի, որ սրունքիցս արյուն էր հոսում, ու կարող էի զգալ ոտքիս մեջ խրված մետաղադրամները: Ալիսը քնած էր մեջքիս ամրացված կախոցի մեջ: Զինյալ ոստիկաններն սկսեցին ինձ ապտակել: Նրանցից մեկը նաեւ մտրակում էր: Միասին ծորում էին արյունն ու կաթը: Ալիսը լաց էր լինում: Թուրքի ձեռքին կացին էր ու սաղափե կոթով փոքրիկ դանակ.... Ես նրան ճանաչում էի Դիարբեքիրից....» (38—39):

Բալաբլյանի հուշագրության մեջ՝ ամերիկահայ նիստ ու կացի եւ մանավանդ ցեղասպանության դրվագներում, առկա է ուշագրավ մի երեւոյթ. պատումի ոճն աչքի է ընկնում քրիստոնեական հատկանիշներով՝ բառ ու բանի, պատկերի ու գույնի տարողության առումով՝ ներքուստ ասես զուգահեռականութուն տանելով Գողգոթայի եւ հայոց ճանապարհների միջեւ: Ահավասիկ մի պատկեր արքայի ճանապարհին լիկված ու վերապրող տատի հիշողությունից. «Տեսնում էի, թե ինչպես էին մեռած փետուրները բարձրանում դեպի կապույտ երկինքը, ուր թռչում էր իմ զատկական օդապարիկը: Ինձ թվաց, թե թուրքական բաղնիքի մարմարապատ հատակին ընկած կապույտ ուլունքի շարք եմ: Տեսա կապտազգեստ կնոջը: Սիրելի մայր Աստվածածին: Ես տեսա կապտազգեստ կնոջը: Տէր, ողորմյա, Տէր, ողորմյա, Տէր, ողորմյա»: Այս ասելով՝ տատս խաշակնքում է» (39):

Ընտանեկան պատկերների, երեւոյթների, անունների միջից հոգեբանական նրբանկատությամբ առաջ է տարվում Հայաստանի պատմությունը: Բալաբլյանը խոսքի գեղագիտություն եւ հոգեբանական զգուշավորություն է դրսեւորում Հայոց ցեղասպանության ու դրա հետեւանքների բացահայտման ընթացքում: Պատումն առավելապես տալիս է գիտակցություն եւ ոչ՝ հուզականություն, բանականություն եւ ոչ՝ զգացականություն: Օրինակ՝ պատմության բացահայտման առիթ է դառնում անունազգանունը. «Արաքս Արուսյան: Մորս անուն-ազգանունն է... Արաքս՝ անուն արեւելյան Անատոլիայի ու հարավային Կովկասի, ուր Արաքս գետը հոսում է Արարատյան դաշտից դեպի արեւելք ու մի սահման գծում, որն իրար է կապում Հայաստանը, Թուրքիան ու Իրանը: Անուն, որ նշանակում է խռովք, որ հոմանիշն է գետի: Արուսյան... Անուն հարավարեւելյան Անատոլիայի՝ Նինվեի հյուսիսի, ուր Տիգրիսը օղակի մեջ է առնում Դիարբեքիր հնագույն քարապարիսպ քաղաքը... Դիարբեքիր, սպանդի քաղաք, ուր թուրքական կառավարությունը 1915-ին հարյուր հազարից ավելի հայ է կոտորել...» (72—73):

Ահա մի այլ դրվագ, ուր պատմության շերտը բացվում է ընտանեկան հոգեբանության մեջ. «Իմ նախնիների ու նաեւ ծնողներիս սերնդի համար աշխարհը գուցե մի վայր էր, ուր դավադրաբար ուզում են քեզ սպանել: Եղեռնից հետո մահվան սարսափը տարբերվում էր մահկանացու լինելու մտահոգությունից: Խոր մտատանջությունների այս մթնոլորտի պատճառով մեր ընտանիքը շատ էր հեռու արվարձանի լավատեսական տրամադրություններից» (106—107):

Ի վերջո գաղափարանշական է, որ տեւական լուսթյունից հետո հայրը որդուն գրած նամակում խոսում է Հայաստանի պատմության մասին՝ հույս հայտնելով, որ այն «խորհելու հարուստ նյութ կտա եւ, ամենայն հավանականութեամբ, ցանկութիւն կառաջացնի» (140) այցելելու Հայաստան, ճանաչելու այն:

բ) Վավերագրություններով բացահայտվող ազգային պատմություն

Հայոց ցեղասպանության հետաքննական պատմությունը «Ճակատագրի սեւ շունը» հուշագրության մեջ հետեւողականորեն առաջ է ընթանում «Արյունոտ լուրեր» մասում՝ ընդգրկելով 1890–1920-ական թթ. Հայոց ցեղասպանության պատմական ենթափուլերը: Պատմության ընկալումը կայանում է վավերագրերի, ականատեսների՝ պատմական հավաստիություն ունեցող հուշագրությունների ուսումնասիրության եւ վերապրող հերոսների պատմությունների վերջնարդյունքում՝ միաժամանակ երեւան բերելով պանթուրքիզմի քաղաքականության հետեւանքները, ցեղասպանության ամբողջ ընթացքը՝ հայերի մահմեդականացումը, մասսայական ջարդերն ու տեղահանությունը. «Ինչ է նշանակում, երբ մի ամբողջ ժողովուրդ, որ սիրում էր, աշխատում, մշակույթ ստեղծում այն երկրի վրա, ուր ապրել էր երեք հազարամյակ, բնաջնջվում էր... Երբ որեւէ քաղաքակրթություն ջնջվում է, երկրի վրա մի նոր խավար է իջել: Զգում էի, թե ինչպես էր փոշին բարձրանում պապակ հողի վրա, ուր այժմ արյունը մասնիկն է ժայռերի, որտեղ այլեւս երբեք անաղարտ ջուր չի հոսելու» (303):

Հայոց ցեղասպանության վերապատումն ու հեղինակային դատողությունները Բալաքյանի հուշագրության մեջ միջարկվում են ամերիկացի դեսպան Մորգենթաուի անմիջական հիշողություններով ու վկայություններով: Ահա վասիկ Մորգենթաուի հիշողություններից մի դրվագ, որ ներկայացնում է հայ հոգեւորականության սպանդը, եկեղեցիների պղծումն ու կրոնական ատելության բորբոքումը. «Պահուած գէնքեր փնտռելու պատրուակին տակ՝ անոնք կողոպտեցին եկեղեցիները, ամենածայրայեղ սրբապղծութիւններու ենթարկեցին խորանները եւ նուիրական առարկաները. եւ նոյնիսկ քրիստոնէական խորհուրդներու նմանողութիւնով ծաղրական արարողութիւններ կատարեցին: Քահանաները կը գանակոծէին զգայագուրկ ընելու աստիճան, այն պատրուակով, թէ անոնք խոռ-

վուրթեան օճախն էին: Երբ եկեղեցիներու մէջ զէնք չգտնէին, ատեն-ատեն հրացաններով, ատրճանակներով եւ սուրերով կը զինէին եպիսկոպոսները եւ քահանաները, զանոնք կը քաշէին պատերազմական ատեաններու առջեւ՝ իբր օրէնքի հակառակ զէնք կրողներ, եւ զինուած ձեւով փողոցներուն մէջ կը պտտցնէին...» (193—194):

Մորգենթաուր՝ որպէս ականես-վկայի ընտրութեան հարցում Բալաքյանը, ըստ երեւույթին, հաշվի է առել նրա հուշերի համընդգրկունութունն ու բազմապատկերայնութունը, որոնց միջոցով պատմական դարձ կատարելով՝ շարժանկարի պէս ցուցադրում է Հայոց ցեղասպանութեան ընթացքը, դրվագ առ դրվագ բացահայտում արեւմտահայ ժողովրդի շարժարանքներն ու նահատակութունը, որոնք երեւան են բերում թուրքի ցեղային տիպարը եւ զոհին լլկելու՝ միմիայն թուրքերին ներհատուկ հաճույքի բնագոյր:

գ) Պայքար Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ

Փիթեր Բալաքյանի «Ճակատագրի սեւ շունը» երկում պատմութեան եւ արդիականութեան զուգահեռականութունը գրեթէ մշտառկա երեւույթ է: Ներկայի եւ անցյալի միախառն ընթացքը նպատակամիտված է ապագային, որ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումն ու դատապարտումն է՝ իրավաքաղաքական համարժեք հանգուցալուծումներով: Ինքնութեան հետքերով ընթացող, պատմութեան ճանաչողութեամբ խորացող հայացքով՝ գլխավոր հերոսը, որ ինքը՝ գրողն է, դառնում է Հայոց ցեղասպանութեան պահանջատեր՝ պայքար մղելով թուրքական ժխտողականութեան դեմ: Պատմութեան խեղաթյուրումն ու ոչնչացումը թուրքիայի կողմից պետական հետեւողական քաղաքականութուն են, որ ամենուրեք քողարկում կամ վերացնում է իր ոճրագործութեան հետքերը. «...թուրքիայի վերաբերյալ կարդացածս գրքերում գեթ մեկ անգամ չէի հանդիպել Հայաստանին վերաբերող որեւէ ակնարկի,— գրում է Բալաքյանը,— ...Նախնիներս դուրս են մղվել այն երկրից, որտեղ ապրել են քսանհինգ դար. մեկը մյուսի հետեւից սպանվել են, եւ այն ամենը, ինչ ավանդաբար, դարերի ընթացքում մեծագույն խնամքով ստեղծել են, կամ բռնագրավվել, կամ ոչնչացվել է» (113, 319): Քարտեզի վրայից եւ պատմութեան ընթացքից թուրքիան շարունակում է ջնջել Հայաստանը՝ գործադրելով դիվանագիտական

բոլոր հնարքներն ու ճնշման մեխանիզմները, ցեղասպանությունից հետո կրկնակի սպանելով մարդկային բարոյականությունը: Բալաքյանը թուրքական քաղաքականությունը վեր է հանում առանձին իրողությունների ու երեւոյթների փաստարկումով. Թուրքիայի հանդեպ թշնամական վերաբերմունքի անվան տակ՝ սպառնալիքներով կասեցվում են Հայոց ցեղասպանության վերաբերյալ գիտաժողովը, «Մուսա լեռան քառասուն օրը» ֆիլմի նկարահանումը, դասագրքի հրատարակությունը եւ այլն:

Պատմության եւ արդիականության զուգահեռականությունը «Ճակատագրի սեւ շունը» երկում երեւան է բերում նաեւ Թուրքիայի վարած քաղաքականությունը ժամանակակից Հայաստանի նկատմամբ: Բալաքյանը խոսում է սառը պատերազմի, Հայաստանի շրջափակման, ցուրտ ու մութ տարիների, Ղարաբաղի հիմնախնդրի ու հայության պայքարի, ինչպես նաեւ երկրաշարժի մասին. «Ես կապ եմ տեսնում 1915-ին թուրքական կառավարության կազմակերպած ցեղասպանության եւ հայերի դեմ այսօր շարունակվող հարձակումների միջեւ: Տեսնում եմ, թե ինչպես է բացվում զոհերին ատելու կծիկը: Զգում եմ ահագնացող անօգնականությունը, հուսախաբույթությունը, կատաղությունը, եւ ինքս ինձ հարցնում եմ՝ մի՞թե հայերն ընդմիշտ պետք է որսի դեր կատարեն ոճրագործ կառավարության համար» (334):

Հուշագրության վերջում հեղինակային խոհերն ու դատողությունները հասնում են փիլիսոփայական եւ հոգեվերլուծական ընդհանրացումների: Զոհեր են ոչ միայն ցեղասպանության նահատակները, այլեւ վերապրողներն ու նրանց սերունդները. «Ժխտման միջոցով պատժից խուսափելու ոճրագործի ջանքերը շարունակում են չարաշահել զոհերին՝ խոչընդոտելով վերապրողների եւ նրանց ժառանգների ապաքինմանը: Մերժելով կատարած հանցանքը՝ ոճրագործը փորձում է կողոպտել զոհի բարոյականությունը: Ստուգապես, ցեղասպանության ժխտումը ճանապարհ է հարթում դեպի ապագա նոր ցեղասպանություն, քանզի աշխարհին ցուցադրում է, որ որեւէ կառավարություն կարող է անպատժելիորեն զանգվածային կոտորածներ իրականացնել: 1939-ին Հիտլերը ոգեշնչված էր Հայոց ցեղասպանության կոլեկտիվ մոռացությունով» (336):

Փիթեր Բալաքյանի վերլուծաբանական եզրահանգումները ճշգրիտ բանաձեւումներ են, որ վերագնահատում են Հայոց ցեղասպանության ոչ միայն պատմաքաղաքական, այլեւ բարոյահոգեբանական հետեւանքները, եւ այդ հետեւանքները շարունակում են կրել սերունդները. «Զոհի նե-

րուժը,— գրում է Բալաքյանը,— պատանդ է՝ պահված ցավի ու կատաղության ամայի վայրերում, եւ հեռացված է պատմության մեջ իր գրաված բարոյական տեղից» (337):

Գաղափարանշական են հուշագրության «Ազգի մը սպանումը», «Բաց վերք», «Տան իրողությունը» խորագրերը, որոնք ինքնությունը գտած անհատի ճանապարհից նշանավորում են ազգային ընթացք ու գաղափարական վերջնակետ:

4. ՎԵՐԱՊՐՈՂ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԿԵՆՍԱՊԱՏՈՒՄՈՎ ԵՒ ԴԻՄԱՆԿԱՐԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՑԱՀԱՅՏՎՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փիթեր Բալաքյանի հուշագրության մեջ ներկայացված է ժամանակային մի քանի սերունդ՝ նախնի-ծնող-զավակ ժառանգորդական մի շղթա՝ պատմահոգեբանական ու գաղափարական առանձնահատկություններով: Անցյալի ու ներկայի ժամանակային կտրվածքները պայմանավորում են հերոսների կերպավորման եղանակները՝ հուշի եւ հիշատակության, ապրումի եւ վերապրումի, խոհի եւ խորհրդածության նրբերանգներով:

Դիմանկարայնության միտումով առանձնանշելի է առաջին երեք մասերի վերնագրումը՝ «Տատս», «Մայրս», «Հայրս»: Հայրը եւ մայրը կերպավորվում են լռության հոգեբանությամբ եւ ամերիկյան կյանքի ընթացքի մեջ, նրանք վերապրողների սերունդ են եւ չեն հատկանշվում ազգային ընդգծված հոգեբանությամբ ու մտահայացքով: Լռող հերոսներ են նաեւ հորաքույրերն ու մորաքույրերը: Հորաքույրերից մեկը նույնիսկ, որ գրող-քննադատ է, սառը հայացքով է դատում ազգային հոգեբանության եւ պատմության մասին՝ ներքին ընդվզում ու անհաշտություն դրսևորելով հայկական իրականության հանդեպ. «...Բոլոր հայերը ի ծնե երազողներ են: Երկրի փոխարեն երազ ունենք... Եւ որքան մեր աշխարհագրությունը նեղանում է, այնքան ընդլայնվում է մեր երեւակայությունը, այնքան նմանվում ենք խավարի մեջ թեւածող բուերի» (168):

Ուրիշ են վերապրող հերոսները, ուրիշ է նաեւ նրանց լռությունը՝ երազի եւ հիշողության զսպված էությունը. նրանք ավելի շատ պատմության կրողներ են, քան ներկայի:

ա) Տատի դիմանկարը

Տատը հայկական էություն, հիշողության եւ պատմության կրողն է, որ խոր հետք է թողել գրողի հոգեբանության եւ ազգային գիտակցության ձեւավորման վրա. «Ինչ որ էր այդ երկիրը, ուրեմն՝ հենց տատս էր: Ինչ էլ որ տատս էր, ուրեմն՝ հենց երկիրն էր» (19): Տատի կերպարը բացահայտվում է նաեւ գրողի քնարական վերապրումներով, որ տեղ-տեղ ընդհատում են հուշագրության վիպական ընթացքը՝ «կանգնեցնելով ժամանակը եւ սառեցնելով հիշողությունը» (171):

Երբ գրկեցիր գլուխս
եւ համբուրեցիր մազերս,
ինչպես միշտ, հայացքս հառեցի
ձեռքերիդ մաշկին,
որ դեռես գունաթափ էր
թուրֆական պապակ հարթավայրում (171):

Տատը հայկական դիմագրողական ոգու մարմնացում է, որն ապրել է ցեղասպանության եւ բռնագաղթի շարժարանքներն ու սարսափները, երկու մանկահասակ աղջիկների հետ անցել մահվան երկար երթը Տիգրանակերտ-Դիարբեքրից մինչեւ Հալեպ՝ չկորցնելով հավատը, կյանքի համար պայքարելու կամքը. «Նա անբնականորեն հակազդեցություն էր ցուցաբերել, երբ հարցը վերաբերել էր մահվանը, տանջանքներին ու ցեղասպանությանը, այն ամենին, ինչի միջով անցել էր: Հալեպում, ուր ապրել էր փախստականների մահախեղդ թաղամասում, փնտրել էր ճշմարտության մի փոքրիկ խորհրդանիշ... Նա օրինական գործընթաց էր սկսել՝ դատի տալով թուրքական կառավարությանը իր կրած վնասների համար. ընտանիքի սպանված անդամներ, գողացված կամ ոչնչացված ունեցվածք, ազգի բնաջնջման մանրակերտ: Խիզախ եւ անձնվեր քայլ էր քառսի ու մղձավանջի ժամանակներում» (339):

Հալեպում, ուր հարյուրհազարավոր անապաստան գաղթականությանն սպառնում էին սովն ու համաճարակ հիվանդությունները, հարյուրավոր դռներ է բախել, դերձակություն արել, մի օր էլ հարուստներից մեկի տանը պատահաբար գտել Դիարբեքրի իր տան՝ թուրքերի կողմից ավարտված եւ վաճառված գորգը, պահանջել ու դատական կարգով վերադարձրել այն, դրա շնորհիվ տոմսեր գնել ու հասել Ամերիկա: Արեւմտահայ վերապրողների հետեղեռնյան հոգեբանական տառապանքի ու անքնության

ընդհանրացումն է տատի այս խոսքը. «Եթե աչք փակենք, առաստաղը կբացվի, ու ամպերի միջից դիակներ վար կընկնեն» (222):

Մեծ ողբերգություններ ապրած ու իր մեջ տասնամյակներ շարունակ ցավն ու անպաշտպանությունն զսպած տատը կյանքի վերջին տարիներին ինքնաբերաբար բացում է իր կողպած ներաշխարհը՝ մահից առաջ չկայացած Հայ դատի պահանջատիրությունն անբարբառ հանձնելով թուռանը. «Հուշերի փշուրներն ու քողազերծ պատմությունները սառած ներքին ծովից պոկված սառցաբեկորներ էին, ծով, որ դանդաղ սկսել էր հալչել նրա կյանքի մայրամուտի մեջ: Տարօրինակ, մեկուսացման պահերին, պահեր, որ ժամանակից դուրս էին թվում, ես վկա էի լինում նրա ցնցող զգացական պատկերներին, հեռազգացական հիշողություններին, ցեղասպանության վերապրումներին» (350):

բ) Պապի դիմանկարը

Բալաբջանի պապն իր կենսապատումով բացահայտում է ցեղասպանության մի ուրիշ ողբերգություն: Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում սովորած եւ Լայպցիգի բժշկական համալսարանն ավարտած Տիրան Բալաբջանը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ պարտադրված էր ծառայելու թուրքական բանակում՝ որպէս բժիշկ, հակառակ դեպքում կգնդակահարվեր ընտանիքով՝ իբրեւ դավաճան: Պապն ընտանիքը փրկելու համար կատարում է բժշկի իր պարտականությունները՝ մտատանջվելով, որ կարող է փրկել իր ժողովրդին ու հարազատներին ցեղասպանած ու դեռ ցեղասպանող ենիշերիների: Իր խնամքի տակ եղած եւ մահացած թուրք զինվորականի գրպանում Տիրան Բալաբջանը գտնում է սպանված հայի ոսկե ժամացույցը՝ հայերեն մակագրությամբ:

Գրողը պապի կենսագրության ճանապարհով հիշատակում է նաեւ 1909-ի հայկական ջարդերը Կիլիկիայում: Ամիսներ շարունակ պապը, առանց հիվանդանոցային պայմանների, աշխատել է Ադանայում եւ հարեւան քաղաքներում ու գյուղերում՝ խնամելով թուրքական ջարդերից վիրավոր եւ հաշմված հազարավոր հայերի, օգնելով թաղել սպանվածներին: Այդ դժոխային պատկերների մասին նա նամակով հայտնում էր ընտանիքին, եւ այդ նամակները հիմք դարձան նրա ընկերոջ՝ Սիամանթոյի «Կարմիր լուրեր բարեկամես» բանաստեղծական շարքի համար, որից Բալաբջանը հուշագրության մեջ ներկայացնում է «Պարը» բանաստեղծությունը:

Պապի ընտանիքը՝ քույրը, ծնողները, զոհ է դարձել 1915-ի ցեղասպանությանը:

Գրողը մեկ առ մեկ հիշում է վերապրող ու փրկված յուրայիններին ու ծանոթներին, որոնցից ամեն մեկի կյանքը մի ցնցող հիշողություն-դրվագ է ցեղասպանությանը եւ դեպքերումների ընթացքից:

գ) Գրիգոր Եպիսկոպոսի դիմանկարը

Գրիգոր Բալաքյանը՝ Փիթեր Բալաքյանի պապի եղբայրը, արեւմտահայ գործիչների ու մտավորականների հետ 1915-ի ապրիլի 24-ին ձերբակալվել ու մահվան է աքսորվել, ճակատագիրն անհայտ էր երկար ժամանակ: Չորս տարի նա գոյատևել է մահվան անապատներում եւ ի վերջո որպես ծպտյալ գերմանացի զինվորական՝ փրկվել:

«Նա համոզմունքի մարդ էր, անկասկած, ներշնչված Աստծո հոգով, իրապես կերտված էր Արարատի օբսիդիանից»,— սա հուշագրության մեջ գետեղված՝ Գրիգոր Եպիսկոպոսի մասին հրատարակված օտարագիր հոդվածից մի պատառիկ է, որ բնորոշում-քանդակում է նրա՝ հայ եկեղեցականի դասական գաղափարատիրը:

Գրիգոր Բալաքյանը 1930-ականներին եղել է Ֆրանսիայի հայոց հոգևոր առաջնորդը, եկեղեցիներ ու հայկական դպրոցներ է կառուցել՝ կազմակերպելով ինքնության պահպանման գործը սփյուռքահայ համայնքներում: Ժամանակին Նիկողայոս Մառի արշավախմբում եղբոր՝ Տիրան Բալաքյանի հետ մասնակցել է Անիի հնագիտական պեղումներին, գիրք հրատարակել Անիի եկեղեցիների մասին: Նա հեղինակել է «Հայ Գողգոթան» հուշագրությունը, որ մահվան աքսորը հաղթահարածի եւ ցեղասպանության ականատեսի անմիջական վկայությունների գիրք է: «Ճակատագրի սեւ շունը» երկում Փիթեր Բալաքյանը ներկայացնում է «Հայ Գողգոթայի» բովանդակության ցանկը, որտեղ արդեն իսկ տեսանելի են աշխատության արժեքը եւ ցեղասպանության հետեւողական ընթացքի վավերագրումը:

Գրիգոր Եպիսկոպոս Բալաքյանը՝ որպես ցեղասպանության անմիջական վկա, Բեռլինում մասնակցել է նաեւ Սողոմոն Թեհլերյանի դատավարությանը: Անհատական կենսապատումի այս հատվածում Փիթեր Բալաքյանը ներկայացնում է Թալեաթ փաշային սպանած հայ վրիժառուի դիմանկարը՝ նրա միջոցով պատկերելով Հայ դատի պատմության մի դրվա-

գր: Գրիգոր Եպիսկոպոսի դատական վկայությունները հրատարակված են «Սողոմոն Թեհերյանի դատավարությունը» գրքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փիթեր Բալաքյանի «Ճակատագրի սեւ շունը» հուշագրությունը հատկանշվում է պատմահոգեբանական բազմաշերտությունամբ, խոսքի գեղագիտական բարձր մակարդակով, փաստի ու երեւակայության ներդաշնակ զուգակցումով: Այն, հիրավի, որոնումի գրականության նվաճումներից է, ազգային հոգեւոր կամրջակապ անցալի, ներկայի ու ապագայի միջեւ: Հայոց ցեղասպանության եւ ինքնության հարցերը սերտորեն փոխկապակցված են Բալաքյանի հուշագրության մեջ, եւ որոնումը հանգուցալուծվում է երկուսի՝ պատճառի եւ հետեւանքի ճանաչողությամբ:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայոց ցեղասպանություն, լուրջություն, ինքնության կորուստ, պատմության ճանաչողություն, ինքնագիտակցություն, պահանջատիրություն:

РЕЗЮМЕ

В статье рассматривается проблема поиска национальной идентичности в мемуарах армянского писателя Питера Балакяна, создавшего произведения на иностранном языке, «Черный пес судьбы». Исследование проводилось в следующих направлениях: американская среда и армянская наследственная память: в центре столкновения внешнего и внутреннего миров, молчание — «дом», психологическое состояние в его разных проявлениях; молчание — убежище, откуда начинается интроспективная жизнь, психологическая причина непонимания, средство обеспечения, проявление сдерживания при страдании и боли, приобретение и провозглашение идентичности или познание происхождения и национальное обращение, события, раскрываемые жизненными историями и портретностью выживших героев. Развитие национального самосознания проходит через этапы борьбы с тайнами, раскрываемыми в американской повседневной жизни, историей, раскрываемой документальными материалами, и отрицанием Геноцида армян.

Произведение Питера Балакяна «Черный пес судьбы» отличается историко-психологической многослойностью, высоким эстетическим уровнем речи и гармоничным сочетанием факта и воображения. Оно по праву является одним из достижений литературы поиска, духовным национальным мостом между прошлым, настоящим и будущим. В мемуарах Балакяна вопросы Геноцида армян и идентичности тесно взаимосвязаны, и поиск разрешается познанием обоих — причины и следствия.

SUMMARY

This article examines the search for national identity in the memoir “The Black Dog of Destiny” by the Armenian writer Peter Balakian. The study was conducted in the following areas: the American environment and Armenian hereditary memory; at the intersection of the external and internal worlds; silence - “home”, psychological states in their various manifestations; silence - a refuge, from which the introspective life begins, a psychological cause of misunderstanding, a means of security, a manifestation of self-restraint of suffering and pain, the rediscovery and re-proclaiming of identity or the recognition of genealogy and national conversion, events revealed by the biographies and portraits of surviving heroes. The development of national self-consciousness proceeds through the stages of the secrets revealed in American life, the history revealed by documentaries, and the struggle against the denial of the Armenian Genocide.

Peter Balakian’s work “The Black Dog of Destiny” is characterized by its historical and psychological multi-layered nature, its highly refined prose, and its harmonious blend of fact and imagination. It is rightly regarded as one of the great achievements of exploratory literature, serving as a spiritual and national bridge between the past, present, and future. In Balakian’s memoir, the issues of the Armenian Genocide and identity are closely intertwined, and the quest is resolved through an understanding of both the causes and the consequences.



ՑԱՆԿ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ-ՅԱՅՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐՈՒՄ
2025 Թ. ՏՊԱԳՐՈՒՄԸ ՆԻԻԹԵՐԻ

Ա. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊՕՂՈՍԵԱՆ ԱՐԱՐԱՏ ՔՀՆՅ — Իբրեւ խմբագրական, ԺԱ. 5

ՊՕՂՈՍԵԱՆ ԱՐԱՐԱՏ ՔՀՆՅ — Խմբագրականի փոխարէն, Ը. 5

Բ. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ պատգամը Մեր Տէր Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի առիթով, Ա. 5

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ուղերձը Մեծ պահքի առիթով, Գ. 5

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ պատգամը Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնի առիթով, Դ. 5

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը Հայոց ցեղասպանութեան սուրբ Նահատակների յիշատակութեան օրուայ առիթով, Դ. 9

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ուղերձը Յաղթանակի եւ խաղաղութեան տօնի առիթով, Ե. 5

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ուղերձը Հանրապետութեան տօնի առիթով, Ե. 7

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ օրհնութեան խօսքը Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միութեան հիմնադրման 25-ամեակի առիթով, Ե. 5

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը Կաթողիկոսական դամբարանի եւ մոմավառութեան աղօթասրահի բացման առիթով, Ե. 8

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը Հ.Մ.Ը.Մ. 12-րդ մարզախաղերի մասնակիցների հետ հանդիպմանը, Ե. 11

- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը կրթության մշակների օրհնության արարողությանը, Թ. 5
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը «Ապրել հաւատամքը այսօր» խորագրով համաժողովին, Թ. 8
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը Մարսելի Սրբոց Թարգմանչաց եկեղեցում հրաշափառի արարողության ընթացքում, ԺԲ. 5
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը «Հայ մշակոյթի գանձերը 1511—1828 թթ.» ցուցահանդէսի բացման հանդիսաւոր արարողությանը, ԺԲ. 8
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը Մարսելում Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիների բարեկամությանը նուիրում յուշակոթողի օրհնության առիթով, ԺԲ. 10
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ պատգամը ուխտաւորներին, ԺԲ. 13
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ուղերձը Ամանորի առիթով, ԺԲ. 16

Գ. ՊԱՇՏՏՕՆԱԿԱՆՔ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիւանապետ **ԳԵՐՇ. Տ. ԱՐՇԱԿ ԱՐՔ. ԽԱԶԱՏՐԵԱՆԻ** տեղեկագիրը՝ ներկայացուած Գերագոյն հոգեւոր խորհրդի ժողովում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2024 թ. գործունէութեան մասին, Գ. 6

Դ. ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

ՄԻՆԱՍԵԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՔՂՅ — Քարոզ՝ խօսում Ս. Գրիգոր Լուսաւորչի Մուտնի վիրապի տօնին Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Իջման Ս. Սեղանին մատուցուած Ս. Պատարագին, Դ. 12, Քարոզ՝ խօսում Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցուած Ս. Պատարագին, Զ. 5

Ե. ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՔՐԱՀԱՄԵԱՆ ՅԱՍՄԻԿ — Ծոմը Հայոց տօնաժխական մշակոյթում (նախնական դիտարկումներ), Ա. 23, Բ. 17

ԹՈՐԳՈՄԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲՂՅ – Սիմէօն Երեւանցի կաթողիկոսի կեանքն ու մատենագրութիւնը, Է. 14

ՀԱԽՈՒԵՐԳԵԱՆ ՄԻՆԱՍ ԱԲՂՅ – Մարդկային արժանապատուութեան ու հանրային դերի գաղափարը Ծննդոց գրքի առաջին էջերում, Ե. 8, Աշխատանքը որպէս արարչական պարգև ու մարդու առաքելութիւն, Չ. 10

ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ՇԱՀԷ ՔՀՆՅ – Մովսէս Գ. Տաթևացի կաթողիկոսը եւ Ղազար գրիչը (նուիրուած Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանի Հ^{օր} 1278 ձեռագրի գրչութեան 400-ամեակին), Ժ. 32, ԺԱ. 31, ԺԲ. 50

ՄԱԼՈՅԵԱՆ ԱՐՄԱՆ – Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եկեղեցաշէն գործունէութիւնը, Ը. 35, Թ. 46

ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԳԱՊԵՏ ՉՈՒՂԱՅԵՅԻ – Քարոզ «Ես եմ քաջ հովիւր» խօսքին մասին, Ե. 35, Քարոզ՝ «Մարդը պատիւ ունէր՝ եւ չհասկցաւ, անբան անասուններուն հաւասարեցաւ ու անոնց նմանեցաւ» խօսքին մասին, Գ. 45, Քարոզ Աղօրհնէքի՝ «Պատուէ՛ Տէրը Արդար Վաստակէդ եւ քու արդար բերքէդ պտո՛ւղ յատկացուր Անոր» խօսքին մասին, Ժ. 17, Քարոզ Տիրոջ Կոյսէն ծնունդին, այն խօսքին մասին, որ կ'ըսէ. «Բանը մարմին եղաւ», ԺԱ. 8 (թարգմ. գրաբ.՝ Վարանդ (Յակոբ) Քորթմոսեան)

ՄԿՐՏՉԵԱՆ ՎԱԶԷ ԱԲՂՅ – Քրիստոնէական հանդուրժողականութեան պատկերացումները Միխիթար Գոշի «Թուղթ առ վրացիսն» երկում եւ դրանց արդիականութիւնը մեր ժամանակներում, Չ. 50, Հերետիկոսութիւնից Ընդհանրական եկեղեցի դարձի եկածների ընդունման կարգը եւ դրա արտացոլումը Միխիթար Վարդապետ Գոշի «Թուղթ առ վրացիսն՝ Յաղագս ուղղափառութեան հաւատոյ» երկում, Գ. 34, Դ. 26

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԱՒԱԳ Ա. – Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հայոց ցեղասպանութեան հիմնահարցը 1999–2024 թուականներին (ըստ «Էջմիածին» ամսագրի հրատարակումների), Ը. 16, Թ. 32

ՇԻՐԻՆԵԱՆ ԱՐՈՒՍԵԱԿ – Ժամանակի ընկալումը Ը.–Ժ. դարերի հայ եկեղեցական մատենագրութեան մէջ, Ժ. 5

ՈՒՉՈՒՆԵԱՆ ՏՐԳԱՏ ԱԲ. ՔՀՆՅ – Սուրբ Գրոց կարեւորութիւնը բարոյական անկման արդի ժամանակաշրջանի մէջ, Ա. 43

ՊՕՂՈՍԵԱՆ ԱՐԱՐԱՏ ՔՀՆՅ – Տ. Տ. Գեւորգ Ե. Սուրենեանց կաթողիկոսի կանոնական կոնդակը ազգակցական աստիճանների վերաբերեալ, Դ. 39, «Ազատ Եկեղեցի» հակաեկեղեցական շարժման վախճանը, Ը. 7, Կանանց ընտրական

իրաւունքի ամրագրումը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում. պատմագիտական վերլուծութիւն, ԺԱ. 55

ՍԱՀԱԿԵԱՆ ԱԼԲԵՐՏ ՍՐԿ. — Մատթէոսի ԻԳ. 13–32 (վայեր) համարների մեկնողական քննութիւն, Թ. 12

ՍԱՀԱԿԵԱՆ ՄՈՎՍԷՍ ՔՀՆՅ (ԴԱԲԻԹ) — Հայոց Եկեղեցու քրիստոսաբանութիւնը Ե. դարում. մարդացած Աստուած, Ա. 9, Բ. 5, Որդի Աստծու մասին պատկերացումները Ե. դարի հայկական ինքնուրոյն գրականութեան մէջ. աստուածաբանական վերլուծութիւն, Ե. 18, Չ. 42

ՍԱՐԳՍԵԱՆ ՄՈՎՍԷՍ ՎՐԳ. — Հայոց բանակի զինուորական արժէքները քրիստոնէական առաքինութիւնների համապատկերում, ԺԲ. 19

ՔԷՕՍԷԵԱՆ ՅԱԿՈԲ — Դաւիթ Քոբայրեցու՝ Եսայու մեկնութեան աղբիւրները, Բ. 23, Լեռան խորհրդաբանութիւնը (աստուածաբանական դիտարկում), Չ. 24

ՔԷՃԻՃԵԱՆ ԷԳՈՒԱՐԳ ՍՐԿ. — Միրոյ տեղը Յովհաննէսի Ա. թղթի աստուածաբանական համակարգում, Գ. 18, Դ. 16

ՖԸՆՏԸԳԵԱՆ ԴԱՆԻԷԼ ԵՊՍ — «Փակ» կամ «Գոց» Պատարագ. *Մեծ պահոց փակ վարագոյրի հարցը Հայ Առաքելական Եկեղեցում* (թարգմ. անգլերենից՝ Արշակ Մադոյան), ԺԲ. 34

2. ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՍԻՍ, (հեղինակակից՝ **ԽՈՒԴԱՎԵՐԳԵԱՆ ԱՆԻ**) — Բարեկական Յոբի քերթումը, ԺԱ. 72

ԱԲԱԳԵԱՆ ՎԱԶԱԳԱՆ — Հայ արուեստի եւ մշակոյթի քարոզն ու գնահատումը վերածնունդ «Անահիտ» հանդէսում (1929–1949), Ա. 95

ԱԲԵՏԻՍԵԱՆ ԼԻԱՆԱ — Ս. Ստեփանոս Նախավկայի մասունքների պաշտամունքի ձեւաւորումը, ԺԱ. 100

ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ՌԱՖԻԿ — Չէյթունը որպէս դարաւանդային բնակավայր, Ե. 68

ԵԱՐԱՄԻՃԵԱՆ ԼՈՒՍԻՆԷ — Դրուագներ Շուշիի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցու պատմութիւնից, Ը. 55, Շուշիի Սուրբ Ամենափրկիչ (Դաւանչեցոց) եկեղեցին (անդրադարձ), Դ. 51

ԹՈՒՄԱՍԵԱՆՅ ԻՆԵՍԱ — Ռումինիայի Հայ Կարմիր խաչ, Ը. 94

ԽԱՉԱՏՐԵԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ — Հայոց ժողովրդական իմաստութեան վերացարկումները գրական մշակումներում, Գ. 91

- ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԱՍՈՂԻԿ ԱՐԳՅ** — Հայրենական մեծ պատերազմից յետոյ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Վատիկանի առնչությունները (1945—1954 թթ.), ԺԲ. 91
- ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՌՈՒԲԷՆ**, (հեղինակակիցներ՝ **ՄԵԶԼՈՒՄԵԱՆ ՄԱՐԹԱ, ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՄԱՐԻԱՄ**) — Կրօնական կառոյցները եւ էթնիկ տարածքի նշագրումը (Հայ Առաքելական Եկեղեցու օրինակով), Չ. 101
- ԿՈՆԻՆԵԱՆ ՄԱՆԷ** — Արեւմտահայութեան զանգուածային կոտորածների վերաբերեալ առաքելական նուիրակ Անջելօ Մարիա Դոլչիի 1915 թ. հաշուետուությունները, Ժ. 67, Արեւմտահայութեան զանգուածային կոտորածների վերաբերեալ առաքելական նուիրակ Անջելօ Մարիա Դոլչիի 1916 թ. հաշուետուությունները, ԺԲ. 71, Կիլիկիահայութեան վերադարձի խնդիրը եւ ՀԲԸՄ-ի գործունեությունը 1919—1920 թթ., Չ. 82, ՀԲԸՄ-Ի Կահիրէի կառոյցի ցուցաբերած օգնությունը Պորտ Սայիդում ապաստանած արեւմտահայ գաղթականութանը 1915—1918 թթ., Դ. 70
- ՀՆԶԱՑԵԱՆ ԳԷՈՐԳ**, (հեղինակակից՝ **ԽՈՒԴԱՎԵՐԳԵԱՆ ԱՆԻ**) — Ընդունելի եւ խոտելի-մաքուր եւ անմաքուր սնունդը տարբեր աւանդոյթներում եւ դրա ներկայիս շահարկումները, Է. 79
- ՂԱՐՍԼԵԱՆ ԱՆՆԱ** — Միջնադարեան հայ քրեական իրաւունքին վերագրուող օրէնքների եւ կանոնների բառապաշարի պատմահամեմատական քննություն, ԺԱ. 114
- ՄԱԹԵՒՈՍԵԱՆ ԿԱՐԷՆ** — Հէթում Նդիրցու չափածոն Բարիքարուկ բերդում Ս. Նիկողայոս եկեղեցու հիմնանդրման առթիւ (1326 թ.), Է. 49
- ՄԱԼՈՅԵԱՆ ԱՐՄԱՆ** — Հայերը եւ հայեցի կրթութեան գործը Ծոցի արաբական երկրներում, Է. 94
- ՄԱՆՈՒԿԵԱՆ ՏԱԹԵՒԻԿ**, (հեղինակակից՝ **ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՔՆԱՐ**) — Մոկսի Փոլթկու Սուրբ Գէորգ վանքի նորայայտ կոնդակը, Է. 66, Չ. 70
- ՄԻՆԱՍԵԱՆ ԹԱՄԱՐԱ** — Սուլթանիայի գրչութեան կենտրոնը, Է. 29
- ՅԱԿՈԲԵԱՆ ԱՍՏՂԻԿ** — Մարիամ Աստուածածնի հրաշքների հայերէն ժողովածուները եւ դրանց տարածումը ուշ միջնադարում (վաղ արդի/նոր շրջան), Ժ. 46
- ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԱՄԱԳ Ա.** — Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործունեությունը նորայայտ փաստաթղթերի համաձայն (1958—1989), Բ. 79, Գ. 78, Դ. 84
- ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԱԲԵՏԻՍ** — Վանի նահանգի ռազմակուսակցական գործիչների, մտաւորականութեան եւ հոգեւորականութեան ոչնչացման հարցը 1914—1915 թթ., Ը. 75, Թ. 95

ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ ՎԱՀԱԳՆ – Կիլիկիոյ (Սսի) կաթողիկոսութիւնը ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարասկզբին (պատմաեկեղեցագիտական ակնարկ), Ե. 86

ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ ՔՆԱՐ – Անանիա Սանահնեցու «Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պօղոսի առաքելոյն» գործի մի նոր ձեռագիր (ԺԳ. դար), Ե. 50

ՅՈՎՀԱՆՆԻՍՆԵԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ – Յովհաննէս Թումանեանը Հայաստանի Առաջին Հանրապետութեան հռչակման օրերին, Ա. 77

ՊԵՏՐՈՍՆԵԱՆ ՎԱՐԳԱՆ – Գրաբարեան հայերէնի Է (ե) ձայնաւորի հնչոյթաբանական բնութագրերը, Բ. 43

ՊԵՏՐՈՍՆԵԱՆ ՔՆԱՐԻԿ – Հայ Առաքելական Եկեղեցու դերը հայրենիք–սփիւռք ընկերային-տնտեսական կապերի ամրապնդման գործում (1988–1991 թթ.), Ը. 109, Թ. 103

ՍԱՀԱԿՆԵԱՆ ՎԵՐԱ – Բուլանըք գաւառի Կոփ գիւղի բնակիչների խնդրագրերը՝ ուղղուած Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսին (1892–1907 թթ.), Թ. 76

ՍԱՐԳՍՆԵԱՆ ՎԱՀԷ – Ազգային ինքնութեան, Արցախին օժանդակելու, Հայոց ցեղասպանութեան, եկեղեցիների պահպանութեան վերաբերեալ հարցերի արծարծումը ջաւախահայ հասարակական կեանքում ԽՍՀՄ փլուզման շրջանում. «Չաւախք» թերթի ծնունդը, Գ. 62

ՍՏԵՓԱՆՆԵԱՆ ԼԷՅԼԱ – Բնիկ հայերէն «ոչ» բառի ծագումնաբանական քննութիւն՝ ըստ ռապանուերէն–հայերէն բառային ընդհանրութիւնների, Թ. 63

ՎԱՐԴՈՒՄՆԵԱՆ ԱՐՓԻ – Կոմիտաս Վարդապետը եւ «Արարատ» ամսագիրը, Ա. 58

ՏԷՐ-ՄԻՆԱՍՆԵԱՆ ԱՇՈՏ – Աստիճանաւորումը Մուրացանի «Գեւորգ Մարգարետունի» պատմավեպի խօսքարուեստում, Բ. 59

Է. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՌԱՔԵԼՆԵԱՆ ԿԱՐԻՆԷ – Ջրի եւ ոռոգման գեղարուեստական պատկերը Միսաք Մեծարենցի լեզուով, Թ. 120

ԴԱԻԻԴՈՎԱ ԳԱԼԵԱ – Եկեղեցական բնօրինակ փաստաթղթերի եւ հազուագիւտ գրքերի հաւաքածու Հայոց ազգագրութեան թանգարանում, Բ. 110

ԴՕԼՈՒԽԱՆՆԵԱՆ ԱԷԼԻՏԱ – Ուիլեամ Մարոյեանի առաջին պիեսը՝ «Իմ սիրտը լեռներում է», Գ. 122, (հեղինակակից՝ **ԳԱԼՍՏԵԱՆ ԱՇՈՏ**) – Լազարեան ցեղասպանը որպէս փայլուն օրինակ հայ-ռուսական մշակութային երկխօսութեան:

Մոսկուայի Լազարեան ինստիտուտը որպէս ռուս եւ հայ ժողովուրդների մշակոյթի, գրականութեան, լեզուների, փոխադարձ նուիրումստեան խորհրդանիշ, Ը. 119

ԵՐԿԱՆԵԱՆ ԱՆՆԱ — Հայրենասիրական արձակի լեզուաոճական առանձնայատկութիւններ (հայր եւ որդի Դերիկեանների օրինակով), Բ. 129

ԷՄՄ. ՎՐԴ., (հեղինակակիցներ՝ **ՄԵԼԻՔ-ՔԱՂՂԱՍԱՐԵԱՆ ԳԷՈՐԳ, ՍԱՐԵԱՆ ԱՍԱՏՈՒՐ**) — Ամենայն բան տգեղ ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ (հայոյութեան մասին), Է. 113

ԹԱՉԱՐԵԱՆ ԻՎԷԹ — Մայր Աթոռ Սբ Էջմիածնի տաճարը եւ յարակից շինութիւնները՝ ըստ ԺԹ. դարի լուսանկարիչ Մատթէոս Փափագեանցի լուսանկարների եւ յուշագրութիւնների, Չ. 118, (հեղինակակից՝ **ՄԽԻԹԱՐԵԱՆ ԱՆԻ**) — Եղեռնից մազապուրծ գաղթականութեան նորայայտ լուսապատկերների եւ գեղանկարչական աշխատանքների ընդհանրութիւնները, Դ. 99

ԹՈՒԱԹԵԱՆ ԿԱՐԷՆ — Ժայռապատկերների առաջին յայտնաբերումների անդրադարձները «Արարատ» ամսագրում, Բ. 99

ԽԱՉԱՏՐԵԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ — Համաստեղը Ռուբէն Դարբինեանի մասին, Ժ. 98

ՄԱԴՈՅԵԱՆ ԳԵՒՈՐԳ, (հեղինակակից՝ **ՄԱԴՈՅԵԱՆ ԱՐՇԱԿ**) — Նոյ նահապետը կրօնական եւ բանահիւսական տեսանկիւններից, Է. 126

ՄԱԴՈՅԵԱՆ ԱՐՇԱԿ — Դիւանագիտութիւնը Աստուածաշնչում Ա. (գիրք Ծննդոց ԻԳ.), Ժ. 88

ՄԱՆՈՅԵԱՆ ԱՐՄԱՆ — Վայոց ձորի մարզի նորակառոյց եկեղեցիները (2000–2021), Դ. 110

ՄԱՄԵԱՆ ԼԻԻՍԻՆ — Հայկական պատմամշակութային ժառանգութեան ներկայութիւնը Իտալիայի հիւսիսում. Միլանի Հայ Առաքելական Սբ Քառասուն մանկանց եկեղեցու ճարտարապետական ձեւագոյացումը Ի. դարում, Ա. 116

ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆ ԱՇՈՏ — Մեղրու Ս. Աստուածածին եկեղեցու որմնանկարների պատուիրատուն եւ կատարողները, ԺԲ. 114

ՄԵԼԻՔ-ՔԱՂՂԱՍԱՐԵԱՆ ԳԷՈՐԳ, (հեղինակակից՝ **ԱԲԱԳԵԱՆ ՎԱՉԱԳԱՆ**) — Յորի գրքի հայկական աղերսները, ԺԱ. 128

ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ ԵԻԱ — Մեսրոպ Մաշտոցի կերպարը Ե. դարի հայ պատմագրութեան մէջ, Ե. 105

ՍԱՆԹՐԵԱՆ ԼԻԱՆԱ — Թուրքական քաղաքականութեան պատկերումը Վիկտոր Գարդոնի «Չմրուխտավառ ասպետը» վէպում, Ժ. 110

ՔՈՍԵԱՆ ԼԻԼԻԹ — Արեւմտահայ գաղթականությունը Երեւան նահանգում 1894—1897 թթ.՝ ըստ «Մշակ» թերթի, Գ. 110

Ը. ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

«Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ Ռուսիան» գրքի շնորհանդէսը, ԺԱ. 140

ԳԱԼՍՏԵԱՆ ԱՐՇԱԼՈՅՍ — Նշանակալից ներդրում չոպանեանագիտութեան ասպարեզում, Ժ. 128

ԹԱԶԱՐԵԱՆ ԻՎԷԹ — Հայր Ասողիկ Կարապետեանի «Սուրբ Էջմիածին. Քրիստոնէական աշխարհի առաջին տանարը» խորագրով աշխատութեան մասին, Ժ. 121

ԿԱՐԻՆԵԱՆ ՍԱՐԳԻՍ, (հեղինակակիցներ՝ **ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԱՐՄԷՆ, ԱԲԱԳԵԱՆ ՎԱԶԱԳԱՆ**) — Արժեւորելի նախաձեռնություն, Թ. 129

ՀՆԶԱՑԵԱՆ ԳԷՈՐԳ, (հեղինակակիցներ՝ **ՍԱՐԵԱՆ ԱՍԱՏՈՒՐ, ՖԱԼԱԲԵԱՆ ՄԱՆՈՒԿ**) — ԼԷ. տարի ուշացմամբ, ԺԱ. 144

ՀՆԶԱՑԵԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ — Եւս մէկ քայլ դէպի ժամանակակից գիտություն, Բ. 140, Մկրտիչ Սարգսեանի Գրիգոր Նարեկացին, Է. 138

ՄԱԴՈՅԵԱՆ ԱՐՇԱԿ — Անկարելի է լռութեան մատնել ճշմարտությունը, Ե. 120, Հրատարակություն չսպիացող վերքերի մասին, Գ. 132

ՄԱՐԳԱՐԵԱՆ ՍԻՐԱՆՈՒԾ — Ծանրակշիռ գիտական ուսումնասիրություն թումանեանագիտութեան բնագաւառում, Գ. 129

ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՆԱՐԻՆԷ — Հայ ազգային ինքնութեան որոնման խնդիրը Փիթեր Բալաքեանի «Ճակատագրի սեւ շունը» երկում, ԺԲ. 136

ՊՕՂՈՍԵԱՆ ԱՐԱՐԱՏ ՔՀՆՅ — Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին նուիրուած գրքերը, Ը. 131, Ծիսամատեանի արժէքաւոր հրատարակություն, Ա. 128, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակութեան 2025 թ. հրատարակությունները, ԺԲ. 124

ՍԱՆԹՐԵԱՆ ԼԻԱՆԱ — Մեզ նուազ ծանօթ, աշխարհին քաջայայտ (անդրադարձ «Զմրուխտավառ ասպետը» վէպին), Զ. 131

ՍԱՐԳՍԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ — Հայ-ռուսական գրական կապերին նուիրուած նոր ուսումնասիրություն, Զ. 146

Կազմեց Գոռ Գրիգորեանը

СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , во время церемонии приветствия под песнопением «Всеславный Бог» в церкви Србоц Таргманчац города Марселя	5
Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , во время торжественного открытия выставки «Сокровища армянской культуры 1511-1828 гг.»	8
Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю освящения памятника, посвященного дружбе армянской и католической церкви в Марселе	10
Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , паломникам	13
Новогоднее послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН	16

РЕЛИГИОВЕДЕНИЕ

АРХИМАНДРИТ МОВСЕС САРГСЯН — Воинские ценности Армянской армии в контексте христианских добродетелей	19
ЕПИСКОП ДАНИЕЛ ФИНДИКЯН — «Закрытая» Литургия: <i>Вопрос о завесе алтаря в Великий пост в Армянской Апостольской Церкви</i>	34
ИЕРЕЙ ШАГЕ АЙРАПЕТЯН — Католикос Мовсес III Татеваци и писарь Казар (посвященная 400-летию рукописи № 1278 Матенадарана им. Месропа Маштоца)	50

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ


- МАНЕ КОНИНЯН** — Доклады апостольского нунция Анджело Марии Дольчи о массовых убийствах западных армян (1916 год) 71
- ИЕРОМОНАХ АСОГИК КАРАПЕТЯН** — Отношения Первопрестольного Святого Эчмиадзина и Ватикана после Великой Отечественной войны (1945—1954 гг.) 91

СООБЩЕНИЯ

- АШОТ МАНУЧАРЯН** — Заказчик и художники фресок церкви Святой Богородицы в Мегри 114

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

- ИЕРЕЙ АРАРАТ ПОГОСЯН** — Издания Первопрестольного Святого Эчмиадзина за 2025 г. 124
- НАРИНЭ ОВАННИСЯН** — Проблема поиска национальной идентичности в произведении Петра Балакяна «Черный пес судьбы» 136
- Список напечатанных в религиозно-арменоведческом журнале «Эчмиадзин» материалов за 2025 г. 154



CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

- Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, during the welcoming ceremony at the Church of the Holy Translators in Marseille 5
- Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, at the opening ceremony of the exhibition “Treasures of the Armenian Culture, 1511–1828” 8
- Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, on the occasion of the blessing of the monument dedicated to the friendship between the Armenian and Catholic Churches in Marseille 10
- Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, addressed to the pilgrims. 13
- Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, on the occasion of the New Year. 16

RELIGIOUS STUDIES

- ARCHIMANDRITE MOVSES SARGSYAN** – Military values of the Armenian Army in the context of Christian virtues 19
- BISHOP DANIEL FINDIKIAN** – “Closed” or “Veiled” Liturgy: *the question of the altar curtain during Great Lent in the Armenian Church* 34
- FR. SHAHE HAYRAPETYAN** – Catholicos Movses III of Tatev and scribe Ghazar (dedicated to the 400th anniversary of the writing of manuscript No. 1278 of the Yerevan Matenadaran after Mashtots) 50

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES


- MANE KONINYAN** — Apostolic Nuncio Angelo Maria Dolci’s reports
on the massacres of Western Armenians (1916) 71
- HIEROMONK ASOGHIK KARAPETYAN** — Relations between
the Mother See of Holy Etchmiadzin and the Vatican after the Great Patriotic War
(1945–1954) 91

ESSAYS

- ASHOT MANUCHARYAN** — The customer and the fresco artists of the Holy Mother
of God Church in Meghri. 114

LITERARY REVIEW

- FR. ARARAT POGHOSYAN** — Publications of the Publishing House
of the Mother See of Holy Etchmiadzin in 2025 124
- NARINE HOVHANNISYAN** — The search for national identity in Peter Balakian’s
“The Black Dog of Destiny” 136
- Table of contents of the materials published in “Etchmiadzin” Religious-Armenological
Magazine in 2025 154



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը
Մարսելի Սրբոց Թարգմանչաց եկեղեցում հրաշափառի արարողության
ընթացքում. 5

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը
«Հայ մշակոյթի գանձերը 1511–1828 թթ.» ցուցահանդէսի բացման
հանդիսաւոր արարողութեանը 8

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը
Մարսելում Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիների բարեկամութեանը նուիրուած
յուշակոթողի օրհնութեան առիթով 10

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ պատգամը
ուխտաւորներին. 13

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ուղերձը
Ամանորի առիթով. 16

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՄՈՎՍԷՍ ՎՐԳ. ՍԱՐԳՍԵԱՆ – Հայոց բանակի զինուորական արժէքները
քրիստոնէական առաքինութիւնների համապատկերում 19

ԴԱՆԻԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՖԸՆՏԸԳԵԱՆ – «Փակ» կամ «Գոց» Պատարագ.
Մեծ պահոց փակ վարագոյրի հարցը Հայ Առաքելական Եկեղեցում 34

Տ. ՇԱՀԷ ԲՀՆՅ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ – Մովսէս Գ. Տաթևացի կաթողիկոսը եւ
Ղազար գրիչը (նուիրուած Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանի
Հ^{օր} 1278 ձեռագրի գրչութեան 400-ամեակին). 50

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆԷ ԿՈՆԻՆԵԱՆ – Արեւմտահայութեան զանգուածային կոտորածների վերաբերեալ առաքելական նուիրակ Անջելօ Մարիա Դոլչիի 1916 թ. հաշուետւութիւնները 71

ԱՍՈՂԻԿ ԱԲՂՅ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ – Հայրենական մեծ պատերազմից յետոյ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Վատիկանի առնչութիւնները (1945–1954 թթ.) 91

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ


ԱՇՈՏ ՄԱՆՈՒԶԱՐԵԱՆ – Մեղրու Ս. Աստուածածին եկեղեցու որմնանկարների պատուիրատուն եւ կատարողները 114

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԱՏ ԹՀՆՅ ՊՕՂՈՍԵԱՆ – Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչութեան 2025 թ. հրատարակութիւնները 124

ՆԱՐԻՆԷ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ – Հայ ազգային ինքնութեան որոնման խնդիրը Փիթեր Բալաքեանի «Ճակատագրի սեւ շունը» երկում 136

Յանկ «Էջմիածին» կրօնագիտական-հայագիտական ամսագրում 2025 թ. տպագրուած նիւթերի 154



ISSN 1829-4243
eISSN 2953-7843

Հրատարակում է
Գեորգեան հոգեւոր նեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխաւորութեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱԿԱՐՇԱԿԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
«ԷԶՄԻԱԾԻՆ»

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com

Հեռ. (+374 10) 517 276

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.03.2026 թ.



ՄԵՏՐ ԱՇԽԱՏ ՄԻՐԲ
ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ